թվայնացրել է 1915.info կայքը

ՌՈՒԲԵՆ
ՄԱՂԱՅԱՆ

ՍԵՐԹԵՐՀԵՄ՝
ԲՈՒՆՏԻ
ԿԱՊԻՏԱՆԸ

թվայնացրել է 1915.info կայքը

ԻԳՈՐ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ

ՄԵԹՈՒՐՀԵՐ ԲՆԻՏ ԿԱԼՈՒՆԱՎՈՐԸ

ՎԻՊԱԿ



ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿ»
1989

թվայնացրել է 1915.info կայքը

Մամյան Ի. Հ.

Մ 226 Մեթեռնեմ բանտի կալանավորը: Վիպակ: [Դպր. բարձր տարիքի համար] / Իգնատ Մամյան: [Նկ.՝ Հ. Ա. Մամյան].— Եր.: Արևիկ, 1989 — 336 էջ: Նկ.:

Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից, գիմնատար Ֆիդայի Սարգիս Ծովանյանը (Սևքարեցի Սաքո) մեկն էր այն խիզախ կամավորներից, ովքեր անցան Արաքսը, գնացին խառնվելու Արաբոյի և Անդրանիկի, Աղբյուր Սերոբի ու Սպաղանաց հայդուկախմբերին՝ պայքարելու հայրենիքի և ժողովրդ. փրկության համար: Գիրքը պատմում է նրա անվեհեր գործունեության, թուրքական դատարանի կողմից դատապարտման և բանտում ցուցաբերած կամքի ու ոգու մասին:

4805080201 (80)
Մ ——————— 11—89
707 (01) 89

ISBN 5-8077-0172-

© «Արևիկ» հրատարակչություն, 1989

Վերծանվել է 1915.info կայքը

ՈՐՊԵՍ ԱՌԱՋԱԲԱՆ

1908 թվականի նոյեմբեր: Մահր փաթիլներով ձյուն է թափվում խոլերայից տճմացող կավաշեն Երևանի վրա: Մահվան հոտ է, կոռուստների անմխիթար ցավ: Գորշ ցեխը, մշուշի ֆոլաներն ու մերկ ծառերից կոնչացող ագռավներն ամբողջացնում են հիվանդ քաղաքի ողբերգությունը: Վշտահար թափորների երթը սովորական է դարձել քաղաքում: Ապրողների և մեռնողների արանքում տարածություն գրեթե չի մնացել, ձմեռնամուտի պղտոր երկնքի տակ խոլերան ասպատակում է աջ ու ձախ՝ սփռելով կյանքի ու մահվան մղձավանջային խառնաշփոթ:

Անգլիական այգու մոտով գլխահակ իջնում է սև դագաղակիր մի թափոր: Տեղացիներ գրեթե չկան, հուղարկավորները եկել են տարբեր վայրերից՝ զենքերի մեջ կորած, կրակե հայացքով ու խռոխռո դեմքերով մարդիկ են, եվրոպական հագուստով մի քանի ազգային գործիչներ, հոգևորականներ, երկուերեք սևազգեստ կին: Աղետյալ քաղաքի հատուկենտ անցորդները մի պահ կանգնում, նայում են անծանոթ հանգուցյալի հետևից:

— Ո՞վ է...

թվայնացրել է 1915.info կայքը

— Ասում են՝ ինչ-որ հաջարի հայդուկ: Մահացել է հին վերի բորբոքումից:

Ուրիշ ոչինչ: Ձյունը թափվո՞ւմ, թափվում է հիվանդ հաղարի վրա, և պատերի տակ հեծկլտում է դատարկ փողոցների անկարեկից համին: Ձյան ու համու միջով, ասես հավերժական երթով, գնում է մեռած հայդուկի գլխահակ թափորը: Նույնիսկ մեռած էլ՝ ուժն ու առնականությունը չեն լրել մահվան տանջալի ցավերն արհամարհած դեմքը: Փոքր-ինչ բաց աչքերով հայում է խոխվ երկնքին, կարծես հրաշալի մի պատկեր է փնտրում ձյունաթափի մշուշոտ խորհերում...

Այդ ողբերգական-մահաշունչ օրից ութ տասնամյակ անց, հուղարկավորների հետևից հայող հին երևանցու թոռնորդին, բացելով հայկական հանրագիտարանի տասներորդ հատորի 329 էջը, կարդալու է. Սևհարեցի Սահո (Ծովանյան Սարգիս Սարիբեկի), հայ ազգային-ազատագրական շարժման մասնակից, ֆիդայի: 1890-ին անցել է Արևմտյան Հայաստան, կռվել Մուշում, Սասունում, Վանում, Էրզրումում և այլուր: 1898-ին ձերբակալվել է և թուրքական դատարանի կողմից դատապարտվել 101 տարվա բանտարկության, իսկ 1900-ին՝ մահվան: Սակայն ռուսական իշխանությունների միջամտությամբ ազատվել է Ռուսաստան: Անդրկովկասում բռնկված ազգամիջյան կռիվների ժամանակ Հ. Թումանյանի հետ շրջագայել է հայկական ու ադրբեջանական գյուղերը: 1908-ին իր հավաքագրած ջոկատներով պետք է մեկներ Իրան՝ մասնակցելու այնտեղ սկսված հեղափոխությանը, բայց վախճանվել է...

* * *

Քեմիա ծաղիկը հատուկենտ աճում է վայրի, դժվար լեռնածերպերում: Ոչ գեղեցկությամբ, ոչ էլ բուրմունքով չի իշխում

վայնացրել է 1915.info կայքը

հազարավոր մյուս ծաղիկներին, բայց ունի մոգական մի հատկություն, որով առանձնանում է բոլորից. ճեմիա ծաղիկը գիշերը լույս է առկայծում: Եվ նման է պատմության գեղեցիկ ու մոռացված փաստի, որ անցյալ ժամանակի խավարից կայծկըլտում է ի տես եկող սերունդների: Մեր պատմության հողմահար կիրճերում ազգային նակատագրով դատապարտված բազում ճեմիաներ կան մեր անցյալն ամբողջացնելու հույսով ծփացող, սակայն չէր կարելի մղվել դեպի նրանց խորհրդավոր լույսը, մեզ մոռացում էր պարտադրված: Անցյալ դարավերջի և այս դարասկզբի ալեկոծ իրադարձությունները մեր աշխարհը պատեցին խառնաշփոթ ամպերով, շատ դեպքեր ու դեմքեր եթե ոչ հավիտյանս, ապա տասնամյակներ շարունակ պիտի մնային հանիրավի չգնահատված՝ կասկածների մշուշի մեջ: Պատմությունը տճում է Արևմտահայաստանում ազգային-ազատագրական շարժման հերոսական ու արյունոտ օրերի հիշողությունից: Դա ոչ միայն ֆիզիկական ցավի զգացողություն է, այլև բարոյականության կորստի, ճշմարտության խեղաթյուրման: Համազգային պայքարը, ցավոք, չփրկեց երկրի այդ առնական ու աղեխյալ կեսը, բայց մեծ ու սրբազան նահատակներով, ժողովրդի սրտից ժայթքած վրիժառության կրակով մնալու է որպես ազգային ոգու ճզոր շառաչի վեհացնող հիշողություն: Ողբերգական ու պանծալի այդ օրերից հիմա մեզ են նայում բանի՜-բանի՜ ուժեղ ու տխուր դեմքեր, և ասես շշնջում են իրենց ժամանակի խորից. «Ինչո՞ւ, ինչո՞ւ եք ուզում մեզ հավիտյան մոռանալ, ի՞նչ եք արել...»: Եվ ճչում է բարոյականության կորստի ցավը, և հառաչում է խեղաթյուրված ճշմարտությունը...

Իսկ տասնամյակների հեռվից այսպես տխրորեն շշնջացողներն այն մարդիկ են, որոնց մասին մեր ազնիվ երախտավոր Խաչիկ Դաշտենցը գրել է. «Այդպիսի սերունդ եղավ, այդպի-

թվայնացրել է 1915.info կայքը

սի սերունդ դժվար թե կրկնվի»: Կար աղետի մեջ գտնվող երկիր, կործանման սարսափից ազատվող ժողովուրդ, և կար երկրի ու ժողովրդի փրկության համար մարտնչող զինվոր. ահա պարզ ու ճշմարիտ ձևակերպումը: Մնացածն անհեթեթություն է: Լինել-չլինելու ծանր ժամանակում ինչ-ինչ գործիչների հաղթական դրսևորումները, հերոսական բախումները հնթակա են ա՛յլ հնության, կապ չունեն վեհ գործերի, սրբազան նահատակությամբ ավարտված խոխոտ կենսագրությունների հետ: Այդ հնությամբ թող որոշվի այսպես ասած գաղափարական գործիչների սխալն ու ճիշտը: Իսկ նրանք, ովքեր զենքը ձեռքին, մահն աչքերի առաջ մարտնչում էին վայրագ թշնամու դեմ, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին հայրենիքի ազատագրությանը, արժանի են հավիտյանս զարդարելու մեր հիշողությունն ու ազգային հպարտությունը: Կա մի նսեմ զգացում, որը, թերևս, կոչվում է գաղափարական վախ: Այդ վախն էր պատճառը, որ մինչև Խաչիկ Դաշտենցը մենք կարգին չգիտեինք, թե ովքեր են եղել ֆիդայիները և ինչ գործ են արել: Չգիտեինք, թե Թալինի գյուղերում ի՞նչ ցավից էին տնքալով խելագարվում սասունցի ու մշեցի ծերունիները: Այդ վախն էր պատճառը, որ Մեծն Անդրանիկի մահվան առթիվ Հայաստանից գոնե մի հեռագիր չհղվեց նրա տարագրության ափը: Եվ այդ վախն է պատճառը, որ մինչև այսօր զգուշանում ենք բարձրաձայն արտահայտվել Սփյուռքի մեր մի շարք գործիչների կյանքի ու սխրանքի մասին:

Նահատակները չունեն հաղթական հայացքներ: Այնպես, ինչպես սրբերը: Մենք նրանց պարտավոր ենք միայն հիշել: Եվ նրանց մասին գրավոր ու բանավոր պատմել սերունդներին: Այս գրքի հերոս Սարգիս Ծովանյանի անունն ու գործն էլ շուրջ ութսուն տարի մնացել է գաղափարական վախ կոչվածի պարտադրած մշուշում: Եվ ահա եկել է ժամանակ, երբ կարելի է

թվայնացրել է 1915.info կայքը

շրխկոցով հետ փաշել ծանրուփոշոտ վարագույրները և ազատ նայել աճյալի խորքը, ուր առկայծում են մեր Քեմիա ծաղիկ-նահատակները: Եկել է հիշատակների վեհացման ու սրբացման ժամանակը: Բառյականության հին կորուստները վերականգնելու, ճշմարտությունը խեղաթյուրումներից փրկելու ժամանակը: Մեր շուրջը ծավալվածը նաև այն հզոր երևույթն է, որը կոչվում է ծովի իմիճամարում: Պատմությա՛ն իմիճամարում: Առժամանակ մի կողմ հրեցի բանաստեղծությունը, որն ինձ համար ամեն ինչ է, և նստեցի վիպակ գրելու Սևհարեցի Սաֆո զինատար հայդուկի մասին՝ նրա սխրալից կյանքն ու գործը ներկա սերնդի իմացությանը հանձնելու մղումով: Չգիտեմ ինչպես ստացվեց, բայց երբ ավարտեցի, մեծ թեթևություն իջավ հոգուս ու միաժամանակ կորստի, որբացածության ցավ ունեցա. կարծես հենց նոր էի վերադարձել թաղումից՝ գորշ, ձյունոտ երկնքի տակ թողնելով մեռած հայդուկի միայնակ շիրիմը: Երևի գիրքը գրելու իմաստը նա՛և սրանում է — թարմացնել մեր կորցրածի, մեզնից խլվածի մասին սերունդների հիշողությունը, որպես դաս նրանց մատուցել ազատագրական պայքարի ելած ֆիդայիների սխրանքը, և, եթե կարող եմ, այնպես մատուցել, որ հոգիները լցվեն Կարոտյալ Երկրի մորմոքուն կանչով: Այն ժամանակ զարկվողն էր դավաճան, հիմա մոռացողն է դավաճան...

Ո՞վ է Սևհարեցի Սաֆոն: Իրական անձնավորություն, խիզախ ոգի, որ ամբողջ կյանքը նվիրաբերեց Արևմտահայաստանի ազատագրությանը: Միաժամանակ ներկայացնում է այն կամավորներին, ովքեր Ղարաբաղից, Լոռուց, Ջավախքից, Գյումրիից, Արաբոի այս ափի մյուս վայրերից անցան քուրմական սահմանը դեպի փոթորկահարվող Սասուն ու Մուշ, դեպի իմացյալ մահ: Սարգիս Կուկունյան, Թուման Թումանյան, Լևոն Քալանթարյան, Նիկոլ Դուման, Մովսես Իշխան... Շատ-շատ էին

թվայնացրել է 1915.info կայքը

նրանք և, ցավոք, բոլորն էլ՝ իրենց արժանի ճնշեղությամբ առայժմ չարտաբերված անուններ: Յարակառ ու թուրքական սահմանապահ զորերի արանքում չարդվեցին Կարսի ու Կաղզվանի մոտ, ում էլ որ հաջողվեց հասնել Ավետյաց երկիր, մինչև վերջին օրը եղավ արդար կռվի մեջ կամ նահատակվեց խիզախաբար: Մենք իրավունք չունենք մոռանալու նրանց անունները: Պատարկված երկրի լեռներում ճախրող նրանց ոգիները գուցե ներեն մեզ, բայց պատմությունը չի ների...

Խոստովանում եմ, որ Սևբարեցի Սաֆոյի կյանքի ու գործունեության մասին ինձ չափազանց քիչ բան էր հայտնի. մի քանի ժլատ տեղեկություն հայկական հանրագիտարանից, մի քանի արտահայտություն Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վիպասից, և մեկ-երկու ժողովրդական պատմություն: Ուրիշ ոչինչ: Եվ ահա աշխատավայրս՝ «Գրական թերթի» խմբագրություն է գալիս մի մարդ, թևի տակ ինչ-որ թղթապանակներ:

— Յանոթանանք, ես Սևբարեցի Սաֆոյի եղբորորդին եմ, Աղաբեկ Յովանյանը: Խնդրեմ, որ հետաքրքրվում եք Սաֆոյի կյանքով ու գործով: Այս թղթապանակներում կգտնեք նրան վերաբերող բոլոր տվյալները:

Աղաբեկ Յովանյան: Արժանի է, որ առանձին մի բան գրվի այդ ևվիրվածության մասին, որով նա իր ամբողջ գիտակցական կյանքում գրաղվել է Սևբարեցի Սաֆոյի անունն ու հիշատակը հանիրավի մոռացումից փրկելով: Այն տարիներին, երբ ֆիդայի բառն անգամ դժվար էր արտաբերել, նա հայրենի Սևբար գյուղի գերեզմանոցում իր ընտանեկան խնայողություններով կանգնեցրել է անվանի հայդուկի բրոնզե կիսանդրին: Տարբեր ժամանակների հայկական տարբեր թերթերից, հուշագրություններից բան-բան հավաքել է Սաֆոյի մասին պատմող ամեն ինչ, իսկ տան նրա փոքրիկ աշխատասենյակը եզակի նմուշներով

Վերծանվել է 1915.info կայքը

թանգարան է, ուր առնչվում ես ֆիդայական շարժման ամբողջ հերոսական պատմությանը:

Գրքի փաստերը համալրվել են նաև մի շարք այլ աղբյուրներից, բայց հիմնականում, ամենից առաջ երախտապարտ եմ մեծ սիրո ու հավատի տեր այդ տարեց մարդուն: Երախտապարտ եմ գրքի ստեղծմանը ցուցաբերած օգնության համար՝ որպես հեղինակ, և մեր պատմության թանկ մասունքներին նվիրաբերվելու համար՝ որպես հայ մարդ:

Ի՞նչ է այս գիրքը, պատմական վիպա՞կ, թե գեղարվեստական ստեղծագործություն: Երևի հիշտ կլինի օգտագործել պատմա-գեղարվեստական անվանումը: Առանցքային փաստերն ստույգ են, հիմնական կերպարներն այս աշխարհում ապրած կոնկրետ մարդիկ են: Հանրածանոթ դեպքերը չվերապատմելու համար շրջանցել եմ գրքի հերոսի կենսագրության հետ առնչվող մի շարք հայտնի իրադարձություններ, չեմ խորացել այն դեպքերի ներկայացության մեջ, որոնք վաղուց հայտնի են մեզ: Եղել է նաև միջամտության փորձ: Այսպես՝ վաղուց այն կարծիքն է իշխում, թե Հովհաննես Թումանյանն ու Անդրանիկ Զորավարը առաջին անգամ (1904 թ.) հանդիպել են Թիֆլիսում: Բայց ուշադիր կարդում ես Անդրանիկի հուշերը և տեսնում որ՝ ոչ, Թիֆլիսո՛ւմ չի եղել այդ հանդիպումը: Անտրամաբանական է, որ զորավարը հյուրընկալվեր բանաստեղծի թիֆլիսյան տանը և այդ մասին ոչինչ չհիշելով, մանրամասն նկարագրեր Դսեղի նրանց նահապետական տան նիստուկացը: Այնինչ Ամենայն հայոց բանաստեղծի և Ամենայն հայոց զորավարի առաջին հանդիպումը արժանի էր խոր ուսումնասիրման, որպես մեր պատմության անմոռանալի պահերից մեկը:

Ավետիք Իսահակյանը բանաստեղծություն է նոնել Սևֆարեցի Սաֆոյի հիշատակին, Չիվանին՝ հուզիչ մի երգ, որոնք,

թվայնացրել է 1915.info կայքը

ցավոմ, լայն տարածում չեն գտել ժողովրդի մեջ: Պատճառը նույնն է եղել՝ գաղափարական վախը: Տա աստված, որ այսուհետև աճցյալի մասին մեր ամեն խոսք ինչի ազատ ու անկաշկանդ, ամենայն ճշմարտությամբ: Քանզի ամեն ժողովրդի կենաց ծառ բարձրանում է նրա պատմությունից:

ՀԵՂԻՆԱԿ

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍՆ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ

ՀԵՆՐԻ ԵՎ ԱՆՈՒՆ



Լուսավորյալ ժողովուրդների իսկական քաջությունը հանուն հայրենիքի ինքնազոհաբերման պատրաստակամության մեջ է:

ՀԵԳԵԼ

թվայնացրել է 1915.info կայքը

Մարդուն շնորհված ամենաթանկ բանը երևակայության օրհնյալ ուժն է: Աչքերը փակ, ականջները գերեզմանային լռությամբ խցանված, մենախցի խավարի միջից նա տեսնում էր լեռների վրա հուրհրատող լուսաբացներ, թռչուններով ծիածանող երկինք, ծովեր ու անտառներ՝ այն ամենը, ինչ կա այս կանաչ-կարմիր աշխարհում: Ջրերի դոփյուն ու խրխինջ էր լսում, ամպերի որոտ ու ջրվեժների ձայն, և հասկովում էր, որ շնորհիվ երևակայության աքանչելի ուժի, մարդուն իր ամեն ինչով հնարավոր չէ ներփակել աշխարհի ոչ մի բանտում: Կարողացիր արհամարհել մարմնական ցավի իշխանությունը, և նույնիսկ շղթաների մեջ՝ դու քո ազատության տերն ես: Կյանքի լավագույն օրերի վերապրումով, հիշողության մեջ թանկ պատկերների արտացոլումով դիմացիր բոլոր տանջանքներին, և կհաղթես: Անկախ այս պատմության ֆիզիկական ավարտից՝ դու կհաղթես, քո ճշմարտությունը կմնա բարձր ու մաքուր, նողկալի կտտանքներից ու կախաղանից վեր: Նրանք, իհարկե, չեն հասկանա քո սիրո և գաղափարի վեհությունը, նրանց այդպիսի բաներ հարկավոր չեն: Թալանի, սպանության ու ավերմունքի համար հազար-հազար վայրենաբարո զավակներ ծնած այդ ցեղը դժվար թե հասկանա ոգու հանճարն ու մտքի աստվածային ճախրանքը: Նրանք չգիտեն այն ուժի անունը, որը մարդուն մղում է սրբազան նահատակության: Եվ քո՞

թվայնացրել է 1915.info կայքը

ինչին է պետք, որ նրանք հասկանան այդ ամենը: Դու պատասխանատու ես քո ժողովրդի, քո խղճի առաջ, եկել է փորձության ժամը և պիտի կարողանաս արժանի մնալ այն սուրբ գործին, որին տրվել ես կյանքով ու ճակատագրով: Ուրիշ գաղտնիք չկա:

... Խոնավ մենախցի սառը պատին թիկնած, աչքերը փակ և ականջները գերեզմանային լռությամբ խցանված, խորհում էր այսպես Սարգիս Ծովանյանը՝ Մեթերնեմ բանտի քսանութամյա կալանավոր Սևքարեցի Սաքոն: Ե՛րբ էր, որ ծանր դուռը, թիկունքին շրխկալով, նրան թաղեց այս մգլահոտ խավարում: Գուցե մեկ ժամ է անցել, գուցե՝ մի ամբողջ հավերժություն: Նա կորցրել էր ժամանակի զգացումը:

— Ո՞վ ես դու:

Դողդոջ, գերեզմանային ձայնը ինչեց խցի անկյունից: Սաքոն չէր տեսնում նրա դեմքը, մթան միջից աչքերն էին երևում ինչ-որ աղոտ, ողբերգական փայլով:

— Այս միջոցը շատ է մաշված, քո տերերը կարող էին ինձ ստուգելու համար ավելի խելոք բան մտածել:— Ասաց ու հասկացավ, որ վրիպել է: Չէ՞ որ խուզարկության ժամանակ հայտարարեց՝ թուրքերեն ոչ մի բառ չգիտե: Խորհրդավոր անծանոթը փոքր ինչ լռելուց հետո կրկնեց հարցը:

— Իսկ դո՞ւ ով ես:

Նա կարծես երանությամբ էր սպասում հարցի փոխադարձմանը: Հազաց, դիրքը հարմարեցրեց պատի ու հատակի անկյունում և սկսեց մի շողշողուն ճառ.

— Ես ասորական բանակների գլխավոր հրամանատարն եմ: Ես գեներալ Արմասն եմ...

Միայն սա էր պակաս՝ խելագարի հետ բանտարկվել նույն խցում...

թվայնացրել է 1915.info կայքը

— Երեք հազար տարի իմ բանակները արևելքի ու արևմուտքի արահետով խրոխտաձայն գնում են դեպի հավերժություն: Նրանք հարյուր անգամ նվաճել են աշխարհն ու դարձյալ հատված առ հատված նվիրել պարտված տերերին...

— Եղավ, գեներալ: Երանի մեկն էլ գտնվեր՝ ձե՛ր երկիրը ձեզ վերադարձներ: Վերջ տուր ցնդաբանությանդ, ես ուզում եմ քնել:

— Քեզ հետ խոսում է ասորական բանակների գլխավոր հրամանատար գեներալ Արմասը...

— Գեներալ Արմաս, հիմա մոութդ կջարդեմ և կշպրտեմ հեծելազորիդ սմբակների տակ: Ջայնդ կտրիր և ինձ մի խանգարիր:

Գեներալը դժգոհ քրթմնջոցով շրջվեց ու այլևս չխոսեց:

Սարգիսը երևի հազարերորդ անգամ էր վերհիշում ձերբակալման մանրամասները: Որտե՞ղ, ինչո՞ւմ վրիպեցին: Մատնությո՞ւն էր, թե պատահական փորձանք: Բարձրավանդակում գիտե՞ն, որ ինքը բանտարկված է, թե՞ դեռ սպասում են հաշտություն բերող նրա առաքելությանը: Սաքոն կրկին զննեց խուցն ու մի ավելորդ անգամ հավաստիացավ, որ անհնար է այնտեղից փախչելը: Բանտարկվելուց առաջ ոստիկանների հայհոյալից հարցուփորձը պաշտոնական հարցաքննություն չէր: Ո՞վ ես, ի՞նչ ազգության, ո՞ւր էիր գնում, ո՞վ է քեզ ուղարկել և այլ հարցերին միայն պատասխանել էր՝ Ռուսահայաստանի Սևքար գյուղացի եմ, ուխտի էի գնում ս. Կարապետ: Նույնը կկրկնի նաև պաշտոնական հարցաքննության ժամանակ: Չեն հավատա, բայց ո՞ւ չի՞ կարող ասել՝ զինատար խմբի ղեկավար, ֆիդայական պայքարի գործիչ Սարգիս Ծովանյան — Սևքարեցի Սաքոն եմ, գնում էի Սասուն, որ ազգի պահանջն ու իմ եղբայրական խնդրանքը հաղորդեմ հայդուկներին՝ հաշտ լինել միմ-

թվայնացրել է 1915.info կայքը

յանց հետ, գործել միասնական ծրագրով ու միասնական ուժով: Կպահանջի, որ հարցաքննությանը ներկա լինի իր երկրի հյուպատոսը: Այդ իրավունքը նրան տալիս է միջազգային օրենքը. հանցագործը կամ հանցագործության մեջ կասկածվողը, եթե այլ տերության հպատակ է, պետք է հարցաքննության ենթարկվի հյուպատոսի կամ նրա կողմից երաշխավորված անձի ներկայությամբ: Օրենքը շեշտում է՝ հատկապես, եթե ներկայացվող մեղադրանքը քաղաքական բնույթ ունի:

Միտքն ընդհատվեց քնի՞ց, թե ուղեղային ընդարմացումից արթնացող ծերունու աղեկտուր ոռնոցով:

— Ի՞նչ պատահեց, գեներալ:

— Իմ բանակները ջարդվեցին: Ասորեստանի վրա ծանր ու սև ամպեր են կուտակված...

Սաքոն վերադարձավ իր խոհերին: Իսկ եթե նրանք արհամարհեն միջազգային օրենքն ու ամեն ինչ և հարցաքննությունը վարեն իրենց ցեղին հատուկ վայրագությա՞մբ: Կդիմանա՞մ, արդյոք, կտտանքներին: Կմեռնեմ որպես ֆիդայի, կովելով անկախ պայմանների աննհավասարությունից: Կստիպեմ, որ նրանք ինձ գնդակահարեն հենց հարցաքննության սենյակում, իրենցից մեկին ծվատելու ժամանակ: Ես ուժեղ եմ, կարող եմ նրանցից մի քանիսի դեմ միայնակ կռվել: Իմ ուժն ու համարձակությունը ինձ կօգնեն մեռնելու լեռնային վրիժառուին արժանի մահով: Ոչինչ, թե իմ վերջն աննայտ կմնա իմ ժողովրդին: Կարևորն այն է, որ մինչև վերջին պահը արյան ձայնը չլռի մարդու երակների մեջ...

— Ո՞վ ես դու,— նորից հարցրեց գեներալը,— ինչպե՞ս ես ընկել այստեղ...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

— Ո՞վ ես դու, քեզ ի՞նչ է հարկավոր այս վաղ ժամին, զավակս:

Գոշավանքի գմբեթը դեռ սուզված էր վաղորդայնի մեջ: Աղստևի հովտի խոր լռությունից բարձրանում էր ջրերի գիշերային ճվաքը: Քնաթաթախ քահանան կանգնել էր վանքի բաց դռան շեմին, տարակուսանքով զննում էր եկվորին:

— Սևքարեցի ռանչպար Սարիբեկի տղան եմ, հայր սուրբ, գնում եմ Արևմտահայաստան՝ խառնվելու Արաբոյի հայդուկներին: Եկել եմ, որ օրհնես ճանապարհս:

— Արաբոն քամուն հակառակ թռչող արծիվ է, դու որտե՞ղ կգտնես նրան...

— Կգտնեմ, հայր սուրբ, դու խաչը բեր և սկսիր պահպանիչ աղոթքը:

Օրհնության պահին խաչի եզրը կպավ սրին, և լուռ վանքը լցվեց մեղմ զնգոցով: Դա խաչի և սրի խորհրդավոր առնչության ձայնն էր, որ սևքարեցի տղան պիտի հիշեր ամբողջ կյանքում:

— Իսկ հիմա երդվիր տիրոջ պատկերի առաջ,— քահանան նրան ուղեկցեց խորան:

Նայելով խաչված Քրիստոսի թախծոտ աչքերի մեջ, տղան շշնջաց.

— Եթե զորու ես, ինձ Արաբոյի հայդուկը դարձրու: Արժանի արա նպատակիս, որն է՝ մինչև կյանքիս վերջը կուվել Ավետյաց Երկրի ազատության համար: Անձիս պահպանություն չեմ խնդրում քեզնից, տեր: Թող մեռնեմ, եթե դա հարկավոր է, միայն թե ինձ չդարձնես պարզապես մեռել, ես նա-

թվայնացրել է 1915.info կայքը

հատակ եմ ուզում դառնալ, թող որ հավիտյանս բոլորին անհայտ, բայց ճահճատակ: Օգնիր ինձ կյանքս մատաղ անելու իմ ժողովրդին...

Քրիստոսի տառապյալ դեմքին լույս թրթռաց: Բացվող այգի ցոլքն էր դա, սակայն հույժ պահին, ուստի խորհրդավոր:

— Տերը լսում է քեզ, նա օրհնում է քո առաքելությունը, զավակս:— Քահանան հոր գորովանքով վերստին աղոթք մրմնջաց նրա համար և մի քանի կաթիլ մեռոն կաթեցրեց սրին:

— Մեր վանքի այս առավոտվա զանգահարությունը թող սրբազան ճանապարհի մաղթանք լինի քեզ...

Մնաս բարով, Աղստևի հարազատ հովիտ: Ընդունիր ինձ, Արաքոյի մարտնչող լեռնաշխարհ...

* * *

Աշնան թաց լուսնի տակ Արաքսը թվում էր ավելի պղտոր ու ծանրահոս: Արաքսը... Մարդ հասկանար ջրերի լեզուն և լսեր, թե ի՞նչ են խոսում մթամած լեռներից եկող նրա տխուր կոհակները, ի՞նչ են պատմում այսպես տնքալով ու հառաչելով: Սաքոն առաջին անգամ էր տեսնում մայր գետը, որի մասին միայն թախծոտ, ողբերգական երգեր էր լսել: Եղեգների արանքով նայում էր նրա խռիվ ջրերին և դողում ցավոտ հուզմունքից. այո, քանի դեռ ալեկոծ ու խառն է ժողովրդի բախտը, Արաքսը պիտի հոսի պղտոր ալիքների ծանր հառաչանքով: Եվ միայն տխուր երգեր պիտի գրվեն նրա մասին, մինչև ժողովրդի հոգին մաքրվի կործանման տագնապներից և մաքրվի ու կարկաչի այդ հոգու խորհուրդը կրող գետը:

— Գնացինք:— Ղարաբաղցի Արշոն, հայացքն ամպի տակ սուզվող լուսնին, վեր կացավ: Երկուսս էին, երկուսս էլ վայրին անծանոթ: Գյումրիում ընդգրկվել էին Սալմաստ մեկ-

թվայնացրել է 1915.info կայքը

ճող կամավորական խմբի մեջ, բայց խմբի մեկնումը անորոշ ժամանակով հետաձգվեց, և նրանք որոշեցին այսպես՝ երկուսով, առանց ուղեկցի, ինքնագլուխ անցնել Արաքսը, հասնել ս. Ստեփանոս Նախավկայի վանք: Գիտեին, որ ռուս սահմանապահները կրակում են առանց նախազգուշացման, գիտեին, որ Արաքսը որոգայթներ ունի, սակայն նպատակը շատ էր ուժեղ և չվարանեցին: Փամփշտակալները հրացանների խզակոթերին փաթաթած և հրացանները գլխներից վեր պահած, լայծուն քարերի վրա գայթելով, ջրի հոսանքից երերալով անցնում էին գետը: Մյուս ափին, խավարի մեջ, նշմարվում էին խառնիխուռն թփուտներ, մերկ բլուրներ: Առջևից գնում էր Արշոն: Երբ հասել էին գետի մեջտեղը, ինչ-որ սև բան ուժեղ հոսանքի հետ խփվեց նրա կողին, և Արշոն, ձեռքերը թափահարելով, փովեց ջրի մեջ: Սաքոն մղվեց ընկերոջն օգնելու, բայց Թարթառի ջրերում մեծացած տղան դարձյալ ոտքի վրա էր: Ուրիշ անակնկալներ չեղան:

— Հրացանս ու փամփուշտներս թրջվեցին: Եթե թշնամի հանդիպի, մենակ ես կռվելու,— ափսոսանքով շշնջաց Արշոն, երբ նրանք ոտքից գլուխ թրջված, ցրտից դողալով պառկել էին թփերի մեջ:

Սաքոյի մարմինը դողում էր ու հոգին չէր զգում ցուրտը: Վիճակը որքան էլ անմխիթար, պահը նվիրական էր. ահա և անցել ես Արաքսը, ահա և քո առաջ այն երկիրն է, որի ազատագրության համար պայքարելն ու նահատակվելը դարձրել ես կյանքի երազանք: Թաց լուսինը կրկին հայտնվել էր թխպոտ երկնքում: Սաքոն չոր փամփուշտներ տվեց Արշոյին, և թփուտների արանքով նրանք շարժվեցին այն ուղղությամբ, ուր պիտի լիներ Ստեփանոս Նախավկայի վանքը: Պաղ, դատարկ բլուրների վրա գիշերաթխպի քուլաներ էին թափառում, ձորերի խավարից բարձրանում էր գայլի ողբաձիգ ոռնոց: Վանքը,

թվայնացրել է 1915.info կայքը

երևի, դեռ շատ էր հեռու, իսկ գագաթներն սկսել էին նշմարվել: Եթե լուսաբացից առաջ վանք չհասնեին, հարկադրված կլինեին թաքնված սպասել մինչև երեկո: Դա էր պահանջում թե՛ իրենց, թե՛ վանքի անվտանգությունը: Սահմանն անցնող բոլոր կամավորներին խիստ հրահանգված էր իրենց գործողություններով կասկածներ չկուտակել վանքի գլխին: Թշնամուց հետապնդվողը չպետք է գնար դեպի վանք, մոլորվածը չպետք է հարցներ վանքի տեղը: Ներկա իրադրության մեջ նրա գոյությունն ավելի կարևոր էր, քան թեկուզ մի ամբողջ խումբ կամավորների հայրենասիրական առաքելությունը: Աստծո այդ օջախն էր ընդունում Արևելյան Հայաստանից բերվող զենքն ու զինամթերքը, հրահանգներն ու կամավորներին: Դերիկի վանքը հետո էր դառնալու այդ ամենի կենտրոնական հավաքակայան, երբ մի քանի գործիչների անզգուշությամբ Ստեփանոս Նահապետյան իր շրջանակով նշվեր Վանի կուսակալի քարտեզի վրա...

Անցան էլի մի քանի բլուրներ, և փարատվող ադամամոթի խորքից առկայծեց վանքի միայնակ լույսը:

— Դուրս գանք այս կածանից, վանքին պիտի մոտենանք ձորի կողմից, այդպես էր հրահանգված Գյումրիի խմբին...

Արշոն չհասցրեց ավարտել խոսքը. գիհու թփից, որի մոտով անցնում էր, հրացան որոտաց, ու նա մի պահ երերալով՝ բերանքսիվայր փովեց արահետին: Հաջորդ ակնթարթին որոտաց Սաքոյի մոսինը: Կրակողը, որ մոսինի գնդակը ճակատին առած ջղաձգվում էր թփի մեջ, հավանաբար միայնակ ավազակ էր, կրակել էր վախից, երբ նրանք թեքվեցին դեպի գիհու թուփը:

Ընկերոջը շրջեց մեջքի, բացեց կուրծքը: Լայն ու խոր վերքից արյուն էր հորդում: Նա դեռ ողջ էր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի չարչարվիր,— շշնջաց անդունդներից բարձրացող խուլ ձայնով,— իմը վերջացած է: Երդվիր, որ իմ փոխարեն էլ կհամբուրես Արաքոյի ճակատը և կասես՝ շա՛տ էր ուզում քո զինվորը լինել...

— Երդվում եմ...

— Մեծ կռիվներից հետո... կգնաս Ղարաբաղ... մեր գյուղը...

Բերանի անկյունից արյուն ծորաց, անկենդան գլուխը թեքվեց Սաքոյի կրծքին: Վերջ: Սաքոն դաշույնը խրեց բլրալանջի քարքարոտ հողի մեջ: Կես ժամ հետո փոսն այնքան մեծ էր, որ կարող էր ամփոփել Արշոյի մարմինը: Գիշերավերջի գունատ լուսինը խնկահոտ ցոլք էր թափում միայնակ շիրմի վրա:

... Վարդան քահանան երկար ու մտախոհ զննում էր վանքի ծառայի ուղեկցությամբ ներս եկած պատանուն: Ո՞վ է զույգ հրացանների ու փամփշտակալների մեջ կորած այդ ցածրահասակ տղան, ի՞նչ է ուզում:

— Սևքար գյուղից եմ, հայր սուրբ, Արաքսն անցել եմ, որ միանամ ֆիդայիների կռվին: Երկուսով էինք, ընկերս խփվեց...

— Հիմա բոլորն են այդպիսի խոսքեր ասում, զավակս, բոլորն են ուզում խառնվել ֆիդայիների արդար կռվին: Բայց ուզեցյալը քիչ է, պետք է դրան արժանի լինել: Ինչպես հայրենիքի համար ապրելուն, այնպես էլ նրա համար նահատակվելուն, պետք է արժանի լինել...

— Ես սրբազան երդում եմ տվել:

— Որտե՞ղ:

— Գոշավանքում: Գարեգին քահանան ընդունել է երդումս և օրհնել իմ նպատակը:

— Դա քիչ է: Միայն նպատակ ունենալը քիչ է: Պետք է նաև ուժ լինի մեջդ նպատակն իրագործելու համար: Ո՞վ է քեզ խորհուրդ տվել գալ Ստեփանոս Նախարկա:

թվայնացրել է 1915.info կայքը

— «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին...

Սաքոն մանրամասն պատմեց, թե ինչպես է մեկ տարի առաջ Գանձակից գնացել Թիֆլիս և համերկրացի մի աղջկա՝ Մարո Ղարաքեշիշյանի օգնությամբ գտել «Մշակի» խմբագրատունը, կամավորական ջոկատ մտնելու խնդրանքով ներկայացել Գրիգոր Արծրունուն: Լսել էր սևքարեցի տղային, ուրախացել նրա ցանկությամբ և խոստացել, որ նա կընդգրկվի Արևմտահայաստան մեկնող առաջին իսկ խմբում: Սաքոն երկու ամիս մնացել էր Թիֆլիսում, Մարոյի հետ մասնակցել մի շարք երիտասարդական հավաքույթների՝ ներշնչված ֆիդայական շարժմանն օգնելու խնդիրներին, հստակվել էր այդ պայքարի մասին նրա իմացությունը, և նա որոշել էր չսպասել կամավորական խմբի կազմավորմանը: Արծրունին ասել էր՝ այդ դեպքում մեկնիր Գյումրի, այնտեղից ավելի հաճախ են անցնում սահմանը, իսկ եթե բանը հասնի ինքնագլխության, աշխատիր ընկնել Սալմաստ գավառի ս. Ստեփանոս Նախավկայի վանք:

Վարդան քահանան ուշադիր լսում էր նրա պատմությունը: Հետո հարցրեց վանքի ճանապարհին սպանված ընկերոջ մասին՝ ո՞վ էր, ո՞րտեղացի:

— Մարմինը թաղեցի՞ր:

— Թաղեցի, հայր սուրբ: Դաշույնով փոս փորեցի և թաղեցի:

Քահանայի տառապյալ դեմքին գոհունակության լույս դողաց:

— Իսկ նրան սպանողի՞ն...

— Սպանեցի: Լեշն ընկած է գիհու թփի մեջ:

Քահանան կանչեց սպասավորին:

— Կերակրիր սրան և թող քնի, հանգստանա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ծառաների սենյակում նրան տվեցին մի քանի խաշած կարտոֆիլ ու հաց:

— Ուրիշ բան չունենք, այսքանն է աստծո պարգևածը...

Երեկոյան նորից Վարդան քահանայի խցում էր:

— Հակոբ սպասավորը ծեր է ու վատառողջ, գնում է Թավրիզ՝ ընտանիքի մոտ: Վաղվանից դու նրա փոխարեն սպասավոր կլինես վանքում:

Ասես ծանր մի բռունցք իջավ Սաքոյի գլխին: Վիրավորանքից աչքերը մթնեցին, սիրտն ուժգին բաբախեց:

— Հայր սուրբ, իմ նպատակը վանքի սպասավոր դառնալը չէ...

— Գիտեմ: Թե որ լավ ծառայեցիր, կրոնավորի հանդերձ կտամ և աբեղա կկարգեմ:

— Ախր ինձնից ի՞նչ սպասավոր կամ ի՞նչ աբեղա, հայր սուրբ, իմը զենքն է, ես կռվելու եմ եկել...

— Խաղաղվիր, զավակս, ամեն ինչ իր ժամանակն ունի:

Սաքոն ուզում էր դարձյալ ընդդիմանալ, բայց հզոր և արդար մի խորհուրդ զգաց քահանայի ձայնի մեջ ու շփոթված լռեց:

Անցել էր երեք ամիս: Պատանի աբեղան ընդունում էր ուխտավորներին, նրանց խունկ ու մոմ էր բաշխում, հետևում վանքի կարգուկանոնին: Վարդան քահանան գոհ էր աբեղայի ծառայությունից, և վերջին անընդհատ սպասում էր, որ քահանան կկանչի իրեն ու կասի՝ բավ է, դու արդեն արժանի ես նպատակիդ, առ զենքերդ ու լեռները գնա: Կանչեց, բայց ուրիշ բան ասաց.

— Կհագնես քրդի շորեր ու երբ գիշերը լավ թանձրանա, կգնաս այն արահետով, որով այստեղ ես եկել երեք ամիս առաջ: Արաքսի ափին կսպասես այնքան, մինչև գիշերահավի կանչ լսես: Կանչը երրորդվելուց հետո կգնաս նրա ուղղու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյամբ և ում կհանդիպես, կուղեկցես այստեղ: Ձմռուանաս հրացանդ վերցնել:

Ձմեռն սկսվել էր առանց ձյան, շարունակվում էր չոր ցրտերով ու քաղցած գայլեր հալածող քամիներով: Քահանան ասում էր՝ Ատրպատականը չի հիշում այսպիսի անձյունդաժան ձմեռ: Ցուրտ գիշերվա լուսինը պայծառ է լինում, և Սաքոն գնում էր՝ շրջանցելով բաց տեղանքները, բլուրների ստվերներով, մերկ թփերի արանքներով: Ահա և Արաքսը՝ դարձյալ պղտոր ու մռայլահոս, ինչպես երեք ամիս առաջ: Ինչպես երեք հարյուր տարի առաջ: Ինչպես մեր գոյության ամբողջ ընթացքում: Երկար չսպասեց, անցել էր հազիվ մեկ ժամ, երբ լսեց գիշերահավի առաջին կանչը: Մացառաթփերից դուրս եկան ծանր բեռների տակ կքած չորս մարդ: Նրանք մինչև թևատակերը թրջված էին գետի սառցաջրով: Անխոս ընդունեցին Սաքոյի տարած շորերը, բեռներն իջեցնելով՝ հանեցին ու հագնվեցին, Սաքոն շալակեց նրանցից մեկի բեռը, ճանապարհ ընկան: Եկվորները շշուկով բառեր էին փոխանակում: Սաքոյին թվաց՝ ծանոթ ձայն լսեց: Պայծառ լուսնի տակ հետ նայեց և, այո, չէր սխալվել, ծանոթ էր նաև դեմքը: Հիշեց. տեսել էր Գրիգոր Արծրունու աշխատասենյակում: Այն ժամանակ նրանք անհանգստանում էին ինչ-որ մարդկանց համար, ովքեր գնացել էին Տուլա՝ զենքի մասեր բերելու, և անհասկանալի պատճառներով ուշանում էին: Չորսից մեկը, բարձրահասակ ու մորուքավոր, երևի խմբի ղեկավարն էր:

— Հարկավոր է ուրիշ բան մտածել, այս սառնամանիքին Արաքսն անցնելով բոլորս շարքից դուրս կգանք,— ցածրաձայն ասաց ընկերներին:

Սաքոն հասկացավ. սրանք այն մարդկանցից են, որոնց թիֆլիսյան հավաքույթներում կոչում են զինատարներ, սրանց գործը սահմանից զենք ու զինամթերք անցկացնելն է: Պարզ է,

թվայնացրել է 1915.info կայքը

թե ինչ են պարունակում նրանց ծանր, աճուկի ուսապարկերը: Վարդան քահանան սպասում էր: Ողջագուրվեց բոլորի հետ և նրանց ուղեկցելով լավ տաքացված մի սենյակ, Սաքոյին կարգադրեց բեռները տեղափոխել վանքի պահեստ և այնտեղ սպասել իրեն:

Հատակին, նավթավառի աղոտ լույսի տակ, շարված էին Տուլայի զինագործարանի մասնատված հրացաններ, վառոդով լեցուն կաշվե տոպրակներ, երկու արկղ փամփուշտ և տաստասներկու մաուզեր: Քահանայի դեմքը շողում էր ուրախությունից:

— Ահա կռիվը, ահա հայրենասիրությունը, հասկանո՞ւմ ես, աբեղա, թե ի՞նչ սխրանք են գործում այս մարդիկ...

Դա հասկանում էր, բայց չէր հասկանում, թե քահանան ի՞նչ է անելու այդքան զենքն ու զինամթերքը, ինչպե՞ս է հասցնելու այնտեղ, որտեղ դրանց սպասում են:

— Ես ու դու պիտի նստենք և չոր շորով մաքրենք այս ամենը, որպեսզի չժանգոտվեն: Սավաններ փոիր հատակին և փամփուշտի արկղերը շրջիր, ցորեն չորացրած չկա՞ս, փամփուշտները մատնընտիր ցորենի պես համաչափ բաշխիր սավանի վրա, որ չորանան: Ի՞նչ արած, զավակս, մենք մեղավոր չենք, մեր աստվածն է կամենում, որ իր քահանան հավասարապես օրհնի գնդակն ու ցորենը: Գնդակն՝ ավելի շատ...

Հաջորդ օրը պատանի աբեղան վանքի ճերմակ ձիով գնում էր Դերիկ՝ Բագրատ վարդապետին հաղորդելու, որ Մայր աթոռը նրանց համար խունկ ու մոմ է ուղարկել: Երբ վերադարձավ, գիշերային եկվորների հետքն էլ չկար Նախավկայում: Ե՞րբ գնացին, ո՞ւր գնացին: Հաջորդ երեկոյան ուխտավորներ եկան վանք: Ութ հոգի էին, յոթ տղամարդ և մի գեղեցկադեմ, հիվանդ աղջիկ:

— Այս էլ քանի անգամ յոթ եղբորով ուխտի են բերում

թվայնացրել է 1915.info կայքը

իրենց հիվանդ քրոջն ու աստված դեռ չի ուզում ապաքինել նրան,— ասաց ծեր ժամհարն ու, չգիտես ինչու, աչքով արեց աբեղային:

Հիվանդ աղջկա եղբայրները հողմահար դեմքերով ջլապինդ տղերք էին և, քահանայից բացի, ոչ մեկի հետ բառ չէին փոխանակում:

— Այս մարդիկ մեր վանքի ամենաերդվյալ ուխտավորներն են,— ասաց քահանան:— Հույս ունեն, որ Ստեփանոս Նախավկայի զորությունը կփրկի իրենց քրոջը:

— Նրանց քույրը հիվանդ չէ, հայր սուրբ, նրանց հայրենիքն է հիվանդ:

— Ի՞նչ ես ուզում ասել...

— Ուզում եմ ասել՝ թող առնեմ զենքերս ու գիշերը գնամ նրանց հետ:

— Ո՞ւր...

— Թուրքական սահմանից այն կողմ: Լեռները: Ուր պատանքները մեջքներին կյանքի ու մահվան կռիվ են մղում փիդայիները: Որտեղ Արաբոն է:

— Հանգիստ, զավակս, հանգիստ: Այդ հարցը ես չեմ որոշում: Խմբի ղեկավարը գիտե քո մասին, ուզում է խոսել քեզ հետ:

Ուժեղ ու բարի հայացքով, առնական դեմքով, ուխտավորի խաղաղ հանդերձի մեջ չտեղավորվող զորեղ մարմնով տղամարդ էր խմբի ղեկավարը:

— Դժգո՞հ ես, որ ծառայում ես աստծուն, աբեղա:

— Ես գործ չունեմ աստծո հետ, ուզում եմ ծառայել իմ զենքին ու իմ նպատակին: Երդում եմ տվել, ուզում եմ կատարել երդումս:

— Միշտ ես անում: Գիտե՞ս, թե ինչ մարդիկ են զինատարները:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գիտեմ: Նրանք են, ովքեր զենք են անցկացնում Արաքսից այս կողմ:

— Այստեղից էլ հասցնում ալեկոծ լեռնաշխարհ, կովող ֆիդայիներին: Չափազանց դժվար է այդ մարդկանց գործը: Ամեն պահ բռնվելու վտանգի տակ, գիշերային ուղիներում մոլորվելով, անդունդների, թշնամու, գել ու գազանի վախը հաղթահարելով զենք են հասցնում կովողներին: Հաճախ նրանք հերոսաբար նահատակվում են որևէ կիրճում, և նրանց անունն ու սխրանքը անհայտ է մնում ժողովրդին: Զինատար կարող է լինել նա, ով կռվի է ելել ոչ թե անձնական փառքի, այլ հայրենիքի ազատության համար: Եվ այս պահին զինատարի կարիքը մեծ է, ամբողջ լեռնաշխարհը ոտքի ելած կռվում է, իսկ զենքը քիչ է, չի բավարարում: Քո մասին ինձ պատմել են, ջահել ես, ուժեղ ու համարձակ: Կուզենայի, որ մի քանի ուրիշ մարդկանց հետ Թիֆլիսից զենք տեղափոխեիր Արաքսի այս ափը: Կարծում եմ՝ այդպես կուզենար նաև Մարո Ղարաբեշիշյանը...

Սաքոն ցնցվեց:

— Դուք ճանաչո՞ւմ եք Մարոյին...

— Այո, նա մեզ շատ է օգնում զենք հայթայթելու գործում: Վաղը դու պիտի մեկնես Թիֆլիս՝ կազմակերպելու ձեռք բերված զինամթերքի տեղափոխումը: Սա հանձնարարություն է:

— Ո՞ւմ կողմից:

— Իմ: Զինատար խմբերի ընդհանուր ղեկավար Արտակ Դարբինյանի:

Ե՞րբ են կանչելու հարցաքննության: Որտե՞ղ է իր ուղեկիցը, գուցե նա արդեն ամեն ինչ ասե՞լ է: Բայց շատ բան չէր կարող ասել, նա գիտե միայն իմ անունը և այն, որ ս. Կարապետ հասնելով չէր վերջանալու իմ «ուխտագնացությունը»: Այդքանը բավակա՞ն է ինձ այս մղձավանջային խցում վըս-

թվայնացրել է 1915.info կայքը

տանորեն փակելու համար: Կամ ի՞նչ նպատակ է հետապնդում խելագար ասորու պարտադրյալ ընկերակցությունը: Սարգիս Ծովանյանի աչքերը վաղուց վարժվել էին խավարին, և նա պարզ տեսնում էր խցի անկյունում քրջերի մեջ կծկված ծերունուն, դռան փոքրիկ պատուհանից ո՛վ գիտե երբ ներս մղված թառը, առաստաղի անկյունից ասորու գլխի վրա ճոճվող սարդին և պատերը՝ գորշ, պաղ, դաժան: Ասորին գլուխը խցկել էր ծնկների արանքը, անշարժացել:

— Ինչպե՞ս է զգում իրեն ասորական բանակների առաջնորդը:

Ոչ, նա այլևս խրոխտ հրամաններ արձակող գեներալը չէր: Տնքոցով հետ նստեց, բութ հայացքով նայեց դռան կողմը և դարձյալ սուզվեց հիվանդ ուղեղի հարափոփոխ տեսիլքների մեջ: Ինչո՞ւ են բանտարկել այս թշվառին, ի՞նչ կարող էր անել նա Թուրքիայի դեմ: Սաքոն չգիտեր, որ նման բարոյական հարցադրումները Մեթերհեմ բանտի համար չեն, արևելքի այդ հոչակված տաժանավայրում բարոյական օրենքները ավելորդ են, անընդունելի:

— Ես Եվրոպայի ամենահարուստ ակնավաճառ էդիլն եմ: Մարմարայում իմ նավը հրդեհեցին, ամբարների շուայլ հարընտությամբ նա սուզվեց Միջերկրականի հատակը: Հիմա ինչպե՞ս եմ հասնելու Ճերմակ Մարգարիտների կղզին:

Ասորին լաց էր լինում: Պատահական մի համբակ, խելամիտ, թե ցնորված, չէր կարող այսպիսի բաներ խոսել: Տեսնես ո՞վ է եղել մի ժամանակ այս մարդը:

— Գեներալությունը լավ գործ էր, իզուր թողեցիր:

— Ես ուզում եմ գնալ Ճերմակ Մարգարիտների կղզի, այնտեղ վաղո՜ւց ինձ սպասում են:

— Ո՞վ է սպասում:

— Շարեն: Դու նրան չես տեսել, աշխարհում ոչ ոք նրան

թվայնացրել է 1915.info կայքը

չի տեսել: Միայնակ ապրում է իր հեռավոր կղզում: Առավոտյան աղոթում է արևին, մինչև երեկո ճերմակ մարգարիտներ է հավաքում կապույտ ավազների մեջ, իրիկնային երգեր է երգում ծովահեռաբների համար և քնում ծաղկած արմավենու տակ, լիանայի տերևներից հյուսած բուրավետ անկողնում: Ես կարոտել եմ Շարեին, ես ուզում եմ Մարգարիտների կղզի՛ գնալ...

— Դու ոչ գեներալ ես, ոչ ակնավառաո: Դու բանաստեղծ ես, եղբայր:

Ասորին շրջվեց դեպի պատն ու երկար հեկեկում էր ծանր, զարհուրելի կարոտից: Բանալին չրխկաց երկաթե դռան փականքի մեջ:

— Դուրս արի, գյավուր, քեզ կանչում են հարցաքննության: Ջեռքերդ մեջքիդ, գլուխդ ցածր: Ավելորդ շարժում արեցիր՝ գնդակը ծոծրակդ կխրեմ:

Ութի մգլաձոտ խավարից հետո միջանցքի աղոտ լույսը Սաքոյին թվաց արևային պայծառություն: Ընդարմացած ոտքերը դժվար էին ենթարկվում: Ովքե՞ր են քննելու իրեն, դարձյալ նույն մարդի՞կ, թե ուրիշ զինվորականներ: Նախորդ հարցաքննության ժամանակ իր ծոցում գտնված թույնի սրվակը տվեցին կրետացի բժշկին՝ որոշելու բաղադրությունը: Էրզախ կոմիսարն ասաց. «Հարցաքննությունը չենք վերջացնում, ընդհատում ենք, որպեսզի դու փոքր-ինչ ծանոթանաս Մեթերհեմին և մտածես մեր տված հարցերի շուրջ: Հիշիր՝ ես իմ խոսքի տերն եմ, ես հարգում եմ մարդկանց ազնիվ խոստովանությունը և գնահատում մարդկային վերաբերմունքով»: Ես դարձյալ պիտի իմ հարցաքննությունը համարեմ անօրինական, պահանջեմ ռուսական հյուպատոսին: Գոնե ժամանակ կշահեմ դեպքերի ընթացքի հետ հարմարվելու համար: Իսկ եթե նրանք ապահովե՞ն հյուպատոսի ներկայությունը: Դժվար թե վերջինս ինձ ընդունի հարազատի գորովանքով...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Ամեն կալանավորի համար իր բանտն աշխարհի ամենադաժան տանջավայրն է: Բայց ինչ էլ անեն, ես պետք է դիմանամ: Իմ ֆիզիկական կործանումը նախ և առաջ կործանումն է այն մեծ նպատակի, որին ծառայեցնում եմ կյանքս: Ես իրավունք չունեմ մեռնելու. խորհում էր Սարգիս Ծովականյանը ոստիկանատան աստիճաններով հարցաքննության գնալիս:

Ոստիկանապետը, անատոլիացի մի շեղաչ թուրք, հոնքերի տակից սուր, ծակող հայացքով երկար գննում էր Ծովականյանին:

— Դո՞ւ ես սուրբ Կարապետի ուխտավորը:

Անկյունի սեղանին հակված ոստիկանական պաշտոնյան հայերեն կրկնեց հարցը:

— Ես եմ, փաշա, և չգիտեի, որ ուխտագնացությունն արգելված է այս երկրում, կամ դրա համար հատուկ անցագիր է պահանջվում:

— Սուրբ Կարապետ գնալու համար՝ ոչ, բայց պետական սահմանն անցնելիս դա պարտադիր փաստաթուղթ է: Ինչ-որ շատ ես միամիտ: Իսկ ես չեմ հավատում քո ոչ մի խոսքին և անխախտ ենթադրում եմ, թե ինչ ուխտ է քեզ բերել այս կողմերը: Աղբյուր Սերոբին ճանաչո՞ւմ ես:

— Ոչ, փաշա, մեր կողմերում այդպիսի մարդ չկա:

Ոստիկանապետի դեմքը գայրույթից կարմրեց:

— Լավ: Իսկ որևէ բան լսե՞լ ես այն բանտի մասին, որտեղ գտնվում ես:

— Ոչինչ չեմ լսել: Ես հավատավոր շինական եմ, փաշա, բանտերին անծանոթ մարդ: Բայց ենթադրում եմ, որ աշխարհի բոլոր բանտերը մեկ են,— շարունակեց սեփական ձևակերպումը... — և ամեն կալանավորի համար իր բանտն աշխարհի ամենադաժան տանջավայրն է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ցավ չէ, կիմաճաս: Եվ ուրի՛շը չի պատմի քեզ Մհթեռհեմ բանտի մասին, ի՛նքդ կհամոզվես, որ խորամանկությունն ու թեթև սուտը այնտեղ միայն գլխացավանք են բերում մարդուն:

— Ես հիմա էլ ուժեղ գլխացավ ունեմ, բայց կարծում եմ, որ դա բանտախցի խոնավությունից ու գարշահոտությունից է: Այն ձեր ասորին է՞լ է անցաթուղթ չունենալու համար ձերբակալված, փաշա:

Մատների գայթալի դողը թաքցնելու համար ոստիկանապետը բռունցք արեց ու խփեց սեղանին: Հետո նրա դեմքի բարբարոսական գայրույթը փոխվեց նենգ մեղմության.

— Տեսնում եմ, որ դու հանցավոր աշխարհից հեռու մարդ ես: Միշտ պատասխանիր իմ հարցերին և խաղաղությամբ վերադարձիր քո երկիրը: Ո՞վ է քեզ հետ կալանավորված մարդը, որտեղի՞ց ես ճանաչում նրան, ո՞ւմ համար էիք տանում սրվակով թույնը:

— Այդ մարդը Եփրատի ափերի հայ է, մեկը նրանցից, ովքեր ուխտավորներին վարձով ուղեկցում են սուրբ Կարապետ: Իսկ սրվակի միջինը թույն չէ, հոդացավի դեղ է:

Ոստիկանապետը թափահարեց զանգակը, դռնապահ ասկյարին հրամայեց կանչել բանտի բժշկին: Հախճապակե սրվակը ձեռքին ներս մտավ շիկահեր կրետացին:

— Դուք պարզեցի՞ք, թե ինչ է սրվակի պարունակությունը:

— Թույն է, փաշա, մահացու թույն:

— Ի՞նչ կասես, ուխտավոր:

— Այն ինձ տվել են որպես հոդացավի դեղ, գնել եմ Գանձակի շուկայից ու դեռ չեմ օգտագործել:

— Արևելքի շուկաներում հաճախ են պատահում նման պտոր խաբեություններ,— խոսակցությանը խառնվեց կրետացին:

— Դուք ազատ եք, բժիշկ, ձեր կարծիքը բնավ կարևոր չէ: Գնացեք:

թվայնացրել է 1915.info կայքը

Բժիշկը դուրս եկավ: Զգուշորեն, ասես օձի գլուխ բռնած լիներ, ոստիկանապետը հախճապակե սրվակը դրեց սեղանին: Սարգիսը շարունակում էր խոսել.

— Եթե դեղ չէ, նշանակում է ինձ խաբել են, փաշա, ես մեղք չունեմ:

— Չգիտեմ՝ քեզ խաբել են, թե ոչ, բայց դու ինձ չես կարող խաբել: Մենք հարգում ենք ռուսաց երկիրն ու նրա հպատակներին, սակայն հանցագործը մնում է հանցագործ: Այստեղ դու պարտավոր ես ենթարկվել երկրիս օրենքներին և երդվում եմ ալլահով, որ այդ օրենքները քո միջից կկորզեն ճշմարտությունը:

— Ես արդեն ասել եմ ամեն ինչ, փաշա, իսկ եթե ինձ լուրջ հանցագործ եք համարում, որի համար հիմք չունեք, և սա լուրջ հարցաքննություն է, պարտավոր եք ապահովել իմ երկրի հյուպատոսի ներկայությունը:

— Հյուպատոս է պահանջում: Միամիտ ուխտավորի՛ս տեսեք: Տարեք սրան, Մեհմեդ էֆենդի: Գործը կշարունակեք դուք, Էրզախ կոմիսարը և Դարվիշը՝ կոմիսարի ղեկավարությամբ: Դուք եք սկսել, դուք էլ պիտի ավարտեք:

Երբ դուրս եկան, Մեհմեդը հասցրեց մի քանի բառ շշնջալ Սարգիս Ծովանյանի ականջին, որից նրա մարմինը տաքուպաղ արեց.

— Ապրես, շարունակիր պահանջել ռուսական հյուպատոսին: Ոչ մի սպառնալիքից չվախենաս...

Մեթերեմ: Կամ Մուշի կեդրոնական բանտ: Հում աղյուսով կառուցված այդ տանջավայրի սարսափը տարածված էր ամենուր: Նրա մութ, գարշահոտ խցերում, անձի և իրավունքի պաշտպանության բոլոր միջոցներից զրկված, խոշտանգվել ու նահատակվել են հազարավոր հայեր, հույներ, ասորիներ, քրդեր, նույնիսկ՝ թուրքեր: Ջարդարար կառավարության դեմ հա-

Հայնացրել է 1915.info կայքը

յերի ազգային-ազատագրական պայքարն սկսվելուց ի վեր նրանց նկատմամբ դաժանությունը Մեթերհեմում հարյուրապատկվել էր: Բանտում ու նրա սահմաններից դուրս պատմություններ էին շրջում դահիճ Մրհեի բարբարոսական ոճրագործությունների մասին: Իր ցեղի բոլոր վայրագ գծերով օժտված այդ տականքը վարձված էր հատկապես «դժվար» կալանավորներին խոստովանեցնելու համար: Նա հրաշալի տիրապետում էր միջնադարյան տանջահարության բոլոր մեթոդներին՝ նախնական սպառնալիքից մինչև շիկացած երկաթով խարանելն ու մարմինը մաս-մաս կտրտելը: Նրա շեկ աչքերի ոլորիմ փայլը, ճահճացեխի նման սև, ծաղկի հետքերից բորբոսնած դեմքի նողկալի քմծիծաղը, անասնային հաստ շուրթերից թափվող լորձունքն ու փշոցը իրար լրացնելով ներկայացնում էին Մեթերհեմի ամենաստոկալի պատկերը: Սարգիս Ծովանյանն արդեն որոշ բան գիտեր նրա մասին: Մտածում էր, որ, երևի, առաջիկա հարցաքննություններից հետո իրեն էլ կհանձնեն Մրհեի «խնամակալությանը», և գիտեր, թե ինչ կկատարվի նրա դժոխային զնդանում. կսատկացնի այդ արյունարբու շանը և կճոճվի թուրքական կախաղանից:

Երկու ասկյարների ուղեկցությամբ վերադառնում էր բանտախուց: Նեղ միջանցքում բվվում էր չդատված մարդասպանների, ազգությունը կորցրած թալանչիների, մերձավորներին բռնաբարողների, պղծելու և ոչնչացնելու համար ծնված այդ թափթփուկների մի վայրի խառնամբոխ: Հարցաքննությունից վերադարձող ամեն ոք հարկադրված էր անցնել այդ բարբարոսանոցի միջով, և նրան ոչ ոք չէր պաշտպանում թքից, հայհոյանքից, քաշքշվելուց ու բռունցքներից: Ստահակների ամբոխը մոլեգնում էր հատկապես ֆիդայության մեջ մեղադրվող հայ տեսնելիս: Ու հենց որ Սևքարեցի Սաքոն մտավ միջանցք, մեկը «ջանֆիդա» գոռաց, և դաժան խառնախումբը հորձանք տվեց

թվայնացրել է 1915.info կայքը

դեպի եկվորը: Հաղթանդամ մի քուրդ ցեղապետ, որը դատված էր մարդասպանության համար և կաշառքով բանտի միջանցքում շրջելու իրավունք էր ձեռք բերել, կանգնեց ամբոխի դեմ: Միջանցքը դժգոհ, անբավարար մղտաց, սակայն ցեղապետ Սլոն մեծ հեղինակություն էր, և նրա կամքն էր իշխող:

— Ճանապարհ տվեք հեռուներից եկած ուխտավորին: Դեմքից չի՞ երևում, որ նա բարեպաշտ հավատացյալ է և ո՛չ կատաղի ջանիֆիդա:

Միջանցքում կատարվածն այդպես էլ չհասավ Սարգիս Ծովաձյանի գիտակցությանը: Նրա ուղեղն այլ մտքով էր զբաղված. ո՛վ է հավատափոխ ոստիկան Մեհմեդ չաուշը: Ի՞նչ էր ասում, ինչո՞ւ էր ասում: Խելագար ասորին տանջանքով վեր կացավ, մոտեցավ Սաքոյին: Ցնորված հայացքով երկար նայեց նրան և ինքն իրեն շշնջաց. «Չէ, կարծես չեն խոշտանգել»: Այլևս որևէ ուշադրություն չդարձնելով փոփոխական տեսիլքներին տրված խեղճ ասորու զառանցանքներին, Ծովաձյանն ինքն իր մեջ ներփակված քննում էր իրադրությունը: Սխալ չարե՞ց, արդյոք, պարզամիտ ուխտավորի դիրքից ներկայացնելով հարցաքննության հյուպատոսին մասնակից դարձնելու օրինագիտական պահանջը: Ոչ: Նրանք, միևնույնն է, չեն հավատում իրեն և դրա կարիքը լինելու էր: Մինչև վերջ մնալով վանքի ուխտավոր, ինքը պետք է ցուցաբերի բնական խելք և իմացություն, աշխարհի գործերի, ժողովուրդների փոխհարաբերության մասին պատկերացում: Դժվար ու անիմաստ կլինի չափից դուրս միամիտ ձևանալը: Դժոխք Հրայրը, որ իրեն պիտի սպասեր Ղզլաղաջում, չնախատեսված անհրաժեշտությամբ լեռներն է բարձրացել: Ե՞րբ կվերադառնա, որ իմանա իր բանտարկության մասին և լուրը հասցնի Սերոբին ու Անդրանիկին: Այսինքն՝ առայժմ դրսից որևէ օգնություն չի կարող հուսալ: Թիֆլիսում կիմանան շատ ավելի ուշ: Մնում է ինքը՝

թվայնացրել է 1915.info նախը

Մեթերհեմ դաժան բանտում մեն-մենակ իր ճակատագրի հետ: Հիշել ֆիդայական կյանքի անցած ութ տարվա բոլոր անցքերը, բոլոր բարեկամներին ու թշնամիներին. արթուն պահել ցպատակի ուժը, հոգու սերն ու ատելությունը: Ահա միակ զենքը մեթերհեմյան մղձավանջի դեմ: Փակեց աչքերն ու հայտնվեց հեռավոր այն լուսաբացի մեջ, երբ Արտակ Դարբինյանի հանձնարարությամբ հանեց աբեղայի սբեմն ու մեկնեց Թիֆլիս՝ գինատարական առաջին բարդ քննության...

* * *

Արծաթե հնագույն իրերի երիտասարդ վաճառականը պարսկական քարավանի հետ հասավ Ջուլֆա և փոստային կառքով ճանապարհը շարունակեց դեպի Երևան: Երկու օր անց, ճմռթված ու հոգնահար, փայտե ճամպրուկը քարշ տալով իջավ Թիֆլիսի երկաթուղային կայարանում: Թիֆլիս՝ դուդուկի մեղմ նվագ և Քոր ձկնորսների տանջահար երգ, մեծահարուստ տների շքեղություն և սիրահարված կինտոների թեթև թախիծ: Քաղաք, որ փորձում է ողբերգականը թաքցնել ներսում, ուրախալին հանել արևերես և ապրել որքան հնարավոր է անհոգ կյանքով: Մի խոսքով՝ Թիֆլիս: Սանդրո Ղարաքեշիշյանը դպրոցների տեսուչ եղբոր հորդորանքով թողեց Բարանայի գավառը, տեղափոխվեց Թիֆլիս: Հավլաբարի հաջողակ արհեստավորներից էր: Նրա փոքր ընտանիքը որևէ բանի կարիք չէր զգում, աղջկան՝ Մարոյին, կրթության տվեց երաժշտության լավագույն ուսուցիչներից մեկի մոտ, ուղարկեց Պետերբուրգ՝ իրավունք և պատմություն ուսանելու: Աշնանը դարձյալ Կախեթի գինի առավ, բայց Մարոն առաջվա պես ոչինչ չէր ուզում լսել ամուսնության մասին: Խնամախոսների փոխարեն մի գիշեր նրանց տուն եկան երեք ոստիկան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մեզ հայտնել են, որ ձեր տանը հակակառավարական թռուցիկներ են բազմացվում: Հանձնարարված է տունը խուզարկել:

— Դուք ինչ-որ բան շփոթում եք, պարոններ, այս տանը ոչ ոք չի զբաղվում քաղաքական խառնակչությամբ:— Սանդրոն ցնցված էր գիշերային այցելուների լկտիությունից և, միաժամանակ, ներքին անորոշ կասկածանքով նայեց Մարոյին:

— Մենք պարտավոր ենք կատարել մեզ տրված հանձնարարությունը: Խնդրում եմ նստել և մեզ չխանգարել:

— Մենք պատճառ չունենք անհանգստանալու, պարոն ոստիկան, բայց լավ կլիներ, որ այս ամենի մասին տեղյակ պահեիք եղբորս՝ ցարական բանակի գնդապետ Գեորգի Ղարաքեշիշյանին:— Ազնվական ինքնավստահությամբ, մեղմ արհամարհանքով Մարոն վայելում էր ոստիկանների շփոթմունքը:

— Կայազորի պետի տեղակալը Ձեր եղբա՞յրն է...

— Ավելի ճշգրիտ՝ հորեղբորս որդին:

— Ներեցեք, օրիորդ, հավանաբար ինչ-որ թյուրիմացություն կա: Ոստիկանությունում կպարզենք: Բարի գիշեր:

Սանդրոն ապշած էր ու հիացած: Սակայն զարմանքն ավելի զորեղ էր:

— Մարո՛, ի՛նչ է կատարվում այս տանը, ոստիկանությունն ի՞նչ գործ ունի մեզ հետ:

— Մի վախեցա, հայրիկ, նրանք ասացին չէ՞, որ մեր դուռը թյուրիմացաբար են բախել:

— Իսկ եթե քո այդ գնդապետը նրանց ասի, որ ինքը ոչ մի հորեղբայր չունի՞:

— Նրանք չեն համարձակվի դիմել գնդապետին:

— Դու պիտի ամուսնանաս, Մարո...

Նրանց տանը հակակառավարական ոչինչ չկար, թյուրիմացությունը մատնիչից էր գալիս, որը Մարոյի և նրա մի խումբ ըն-

թվայնացրել է 1915.info կայքը

կերների՝ Հայրենասիրաց միության զուտ ազգային գործունեությունը շփոթել էր խառնակչության հետ: Բայց խուզարկության ժամանակ կարող էին ի հայտ գալ կամավորական խմբերի ցուցակներ, Տուլայի զինագործների հասցեներ (որոնցից Հայրենասիրաց միությունը զենք էր գնում), հանգանակության և այլ թղթեր, ու կստացվեր ոչ պակաս հետաքրքիր դատական գործ: Նույն գիշեր, երբ ծնողները քնել էին, Մարոն այդ ամենը տեղափոխեց Քոի վրա կախված մոտակա ժայռի թաքստոցը: Քնեց լուսադեմին: Արթնացավ դռան թակոցից, նրան խոսակցության պատառիկներ հասան, ու լսեց մոր ձայնը.

— Ներիր, որ չճանաչեցի, տղաս, ախր դու շատ ես փոխվել...

— Այս մորուքով ու թիթեռնիկ փողկապով հարազատ մայրըս էլ ինձ չէր ճանաչի: Մարոն տա՞նն է:

Աղջիկն այդ ձայնը կճանաչեր, եթե նույնիսկ վերջին անգամ լսած լիներ հարյուր տարի առաջ: Ասես մի ամբողջ հավերժություն էր անցել այն երեկոյից, երբ աշնանային սարսուռներով խշշացող լորենու տակ նրան հաջող առաքելություն էր մաղթում դեպի Ավետյաց Երկիր: Այդպես է, հեռավորներին ավելի շուտ ես կարոտում, մանավանդ երբ գիտես, որ նա այնտեղ ապրում է կյանքի ու մահվան բախումների մեջ, միշտ ենթակա նահատակության:

— Դու լեռնային հայդո՞ւկ ես, թե՞ գյուղական վարժապետ,— Սաքոյի հանդերձին նայելով, Մարոն չկարողացավ զսպել ծիծաղը:

— Ոչ առաջինը, ոչ էլ երկրորդը: Այս պահին ես ապծաթե ինագույն իրերի վաճառական եմ: Չե՞ս հավատում: Խնդրեմ:— Նա առաջ հրեց փայտե ճամպրուկը, որը սեփական խաչի պես

թվայնացրել է 1915.info կայքը

օրեր շարունակ քարշ էր տվել դժվար, վտանգավոր ճամփաներով:— Ատրպատականի հայկական գյուղերից է հավաքվել Սաթենիկ Մատինյանի կազմակերպած հանգանակությամբ: Արծաթե զարդեր ու սպասքներ են, հանձնվում է ի տնօրինություն՝ պարզ է ինչ նպատակով:

— Դու եկել ես...

— Դարբինյանի հանձնարարությամբ: Որքան գիտեմ, քեզ եմ պարտական իմ հանդեպ ցուցաբերած վստահության համար:

— Դժգո՞հ ես:

— Իմ նպատակը Արաքոյի հայդուկ դառնալն էր:

— Ուրեմն հասել ես նպատակիդ: Արաքոյի հայդուկն ես ու զենք ես տանում նրա համար: Իսկ կռիվներ դեռ շատ են լինելու, կհասցնես մասնակցել:

Մարոյի մայրը նախաճաշի սեղանը գցել, նրանց էր սպասում:

— Գնանք թեյ խմենք: Հետո դու կհանգստանաս, մինչև ես վերադառնամ:

— Ժամանակ չկա հանգստանալու, պետք է հանդիպեմ Գրիգոր Արծրունուն:

— Նրա սրտից արյուն է կաթում, մեղադրում են Կուկունյանի խմբին իր ավելորդ ոգևորությամբ ապակողմնորոշելու մեջ:

— Սարգիս Կուկունյանի՞... իսկ ի՞նչ է պատահել նրա խմբին...

Այո, Սաքոն ոչինչ չգիտեր Կուկունյանի կամավորական խմբի ողբերգական կործանման մասին: Լուրը չէր հասել Ատրպատականի նրա կղզիացած վանքը, որի «ուխտավորները» չափազանց քչախոս մարդիկ են: Խումբը կործանվել էր նույն 1890 թվի աշնանը, երբ Սաքոն ղարաբաղցի ընկերոջ հետ

թվայնացրել է 1915.info կայքը

անցավ Արաքսը: Այդ տարվա օգոստոսին Սարգիս Կուկունյանը իր կազմավորած հարյուր հոգիանոց խմբով Թիֆլիսում նախապատրաստվում էր մեկնելու Արևմտյան Հայաստան: Դա այն խումբն էր, որի մեջ Արծրունին խոստացել էր ընդգրկել նաև Սևքարեցի Սաքոյին: Բայց Կուկունյանը զենքի պակասը լրացնելու նպատակով մեկնել էր Տուլա, և Սաքոն այդպես էլ չհանդիպեց հայրենասեր ուսանողին:

Ավելի ճիշտ, նրանք հանդիպել էին: Սակայն թռուցիկ, առանց միմյանց իմանալու: Գանձակի անտառային հիմնարկում ծառայելու ժամանակ, Համբարձում աղայի ճաշարանում Սաքոյին մոտեցավ մի բարձրահասակ, անծանոթ երիտասարդ, նստեց նույն սեղանին: Ծամացույցին նայելով շտապ-շտապ ճաշեց և դուրս եկավ՝ սեղանին մոռանալով ինչ-որ բրոշյուրներ: Հետո հևիհև ներս ընկավ փոստատուն ծառայող մի հայ ծանոթ:

— Սարգիս Կուկունյանը մտե՞լ է այստեղ:

— Ո՛վ...— պատառաքաղն ընկավ Սաքոյի ձեռքից: Նա դուրս թռավ ճաշարանից, վազեց շուկա տանող բանուկ ճանապարհով: Քիչ էր մնում բախվեր փողոցը հատող կառքին: Բարձրացրեց գլուխը և կառքի փոքրիկ պատուհանում մի պահ, միայն մի ակնթարթ տեսավ իր փնտրած մարդու արդեն ծանոթ դեմքը: Կառքը փոշի հանելով գնաց, կորավ գավառական քաղաքի շոգ թաղամասերում:

Առաջին ու վերջին հանդիպումն էր Սարգիս Կուկունյանի հետ: Ամիսներ անց Ծովանյանը Գանձակից հեռանում էր՝ ճաշարանի սեղանին նրա թողած բրոշյուրները ծոցում, որոնք ազատագրական պայքարի դասեր էին բուլղար հայդուկների կյանքից: Կուկունյանն էր իր նախաձեռնությամբ դրանք թարգմանել ու հրատարակել Պետերբուրգում:

թվայնացրել է 1915.info կայքը

Թերթերն անընդհատ գրում էին այդ հայրենասեր ուսանողի գործունեության մասին: Սարգիս Ծովականն արդեն աբեղա էր Դերիկի վանքում, երբ նույն տարվա ուշ աշնանը՝ նրանից մի քանի ամիս հետո, Կուկունյանի խումբը Թիֆլիսից շարժվում էր դեպի Ավետյաց Երկիր: «Մշակի» խմբագրատան առջև միտինգ եղավ, ուր ներկա էր քաղաքի ամբողջ հայ մտավորականությունը: Կրակոտ ճառով կամավորներին բարեհաջող առաքելություն մաղթեց «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին: Եղան մարդիկ, որոնք դեմ էին խմբի մեկնելուն, գտնում էին, որ խումբը լավ չի պատկերացնում իր խնդիրը, Արևմտահայաստանում տիրող իրավիճակը, առաջնորդվում է զուտ ազնիվ հայրենասիրությամբ՝ առանց ռազմավարական պլանի, և խոհեմ չէ նման պատրաստությամբ ճանապարհվելը: Քննադատում էին Գրիգոր Արծրունուն՝ երիտասարդ հայրենասերներին շողշողուն խոսքերով ոգևորելու համար: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ ճշմարիտ էր այդ քննադատությունը: Բայց «Մշակի» խմբագրատան առջև խանդավառությունն այնքան մեծ էր, որ ճշմարիտ խոսքն արձագանք չգտավ, ջարդուփշուր արվեց ոգևորված հոետորների կողմից:

Սակայն «Մշակը», որ փայլուն հոդվածով լուսաբանել էր Կուկունյանի խմբի առաքելությանը նվիրված հանդեսը, քսանքսաներկու օր անց ստիպված էր իր նույն էջերում գետեղել չափազանց տխուր մի հաղորդագրություն:

Կարսի ուղղությամբ անցնելով սահմանը, Կուկունյանի խումբը դեմ առավ չեթեների ուժեղ կրակին: Փորձեց նահանջել՝ թիկունքից խփեց ռուսական սահմանապահ կայազորը: Խումբը ցաքուցրիվ եղավ երկու կրակի արանքում, կորցրեց գլուխը: Դա հենց այն էր, ինչից զգուշանում էին...

Խումբը ջախջախելուց հետո ցարական զինվորները ձերբակալեցին կենդանի մնացած քսանհինգ կամավորներին: Սարգիս

թվայնացրել է 1915.info կայքը

Կուկունյանին իր խմբի մնացորդների հետ շղթայակապ աքսորեցին Հեռավոր Արևելք: Ահա թե ինչու էր քննադատվում «Մշակի» խմբագիրը:

— Սարգիս, ոստիկանությունն սկսել է հետաքրքրվել մեր տան անցուդարձով: Նրանց մտատանջողը Հայրենասիրաց միությունը չէ, բայց կհավատա՞ն արդյոք, որ մեր կողմից հայթայթվող զենքը չի ուղղվելու ցարական միապետության դեմ: Հայրս անհանգստանում է իմ ճակատագրով, պահանջում է ամուսնանալ...

— Ո՞ւմ հետ:

— Առայժմ հայտնի չէ:

Քոի ափով նրանք գնում էին դեպի հանդիպավայր: Տաք, փափուկ ձյուն էր թափվում քաղաքի վրա: Սաքոյի համար ավելի հեշտ էր գիշերով հաղթահարել Արաքսի որոգայթները, քան Թիֆլիսի մեղմ ձյան տակ նայել աղջկա աչքերի մեջ և ասել մտքինը:

— Մարո...

— Լսում եմ, աբեյա:

— Քանի դեռ ցարական դատարանը քեզ չի աքսորել Սիբիր և Սալմաստի ձորերում ինձ չեն սպանել, ուզում եմ մի բան ասել...

— Ոչինչ պետք չէ ասել, հայդուկ: Միայն թե վախենում եմ՝ գուշակությունդ ճիշտ դուրս գա, համազգային ցավի, հույսի ու կործանման այս թոհուբոհի մեջ մենք այդպես էլ չարժանանանք իրար:

— Սերը ոչնչից չպետք է վախենա, Մարո:

— Գեղեցիկ է ու ճշմարիտ: Ուրեմն այս օրը՝ 1891 թվի փետրվարի 24-ը, թող հիշվի մեր ապրելիք բոլոր տարիների մեջ: Այսուհետև ես ու դու ավելի հզոր ենք. մենք նաև սեր ունեցանք հայրենիքի համար զոհաբերելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Հանդիպավայրում նրանց սպասում էին Հայրենասիրաց միության երկու տղաներ՝ Արամը և Գրիգորը:

— Մենք ուրախ ենք քեզ հետ ծանոթանալու համար, Սևքարեցի Սաքո: Մեկս որպես հարսնեղբայր, մյուսս՝ հարսանիքի քավոր, վաղը երեկոյան քեզ պիտի ուղեկցենք մինչև Աղստև:

— Ի՞նչ հարսանիք...

— Ինձ մի նայիր, հարսնացուն առայժմ ես չեմ,— Մարոյի ծիծաղն ադամանդի պես շաղ եկավ ձյան վրա:— Տղաները հետաքրքիր միջոց են գտել քեզ քո բեռով անվտանգ ճանապարհելու համար: Կայարանում ոստիկանության շները հոտոտում են ամենքին ու ամեն ինչ, և նրանք մտածել են գնացք բարձրանալ հարսանեկան նվագով, ուրախության բաժակ մատուցելով մարդկանց:

— Հետաքրքիր է մտածված: Իսկ հարսնացո՞ւն ով է...

— Հայրենասիրաց միության աղջիկներից մեկը: Աղստևում իջնելուց հետո նա Գրիգորի և Արամի հետ գնալու է Գանձակի հայկական գյուղերը՝ հանգանակություն հավաքելու: Այնտեղ դուք իրար չեք ճանաչի, քեզ կդիմավորեն ուրիշ մարդիկ:

... Թիֆլիսի երկաթուղային կայարանում փոքրիկ տոնախմբություն էր: Հավլաբարցի կինտոն գինու գավն ու բաժակը ձեռքին մոտենում էր մարդկանց, պահանջում երջանկություն մաղթել նորապսակներին: Դուդուկի նվագի տակ մեկը Սայաթ-Նովա էր երգում: Գնացքը ժամանեց ու երգը կիսատ մնաց: Դուդուկը փոխեց մեղեդին, ավանդական հնչյունների ներքո բեռնակիրները վագոն բարձրացրին հարսնացուի օժիտը՝ կարմիր ժապավենի վարդակապով երեք ծանր ճամպրուկներ: Հետո լացախառն ուրախությամբ հարազատները հրաժեշտ էին տալիս իրենց նորապսակ աղջկան: Աղստևում նրանց սպասում էր Նիոյի կառքը: Հարսը հանեց քողը, քավորն ու փեսան

թվայնացրել է 1915.info կայքը

պոկեցին կրծքերին ամրացված վարդերը, արձակեցին ճամպրուկների կարմիր ժապավենները:

— Մեր ճանապարհները բաժանվում են, Սաքո,— ասաց Արամը:— Քեռի Նահապետը կասի, թե ինչ պիտի անես այսուհետ:

Կառատեր Նահապետը տխուր բան ասաց. ևս, ով պիտի Սաքոյին ուղեկցեր մինչև Քարվանսարա, ջերմախտով անկողին է ընկել: Ինքը կուղեկցեր, բայց Ղազախի զինվորական հսկիչ կետում իրեն կասկածում են, կարող է ամեն ինչ տապալվել:

Երեք ճամպրուկ ծանր ու վտանգավոր բեռան հետ Սաքոն միայնակ էր ցուրտ ու մղձավանջային ճանապարհի, ճակատագրական դիպվածների առաջ: Ի՛նքը պիտի վճռեր ամեն ինչ: Բեռը թողնելով Նահապետի տանը, դուրս եկավ փողոց: Զինվորներով ու ռազմամթերքով բարձված փուրգոններ էին անցնում Աղստևով: Որտեղի՞ց էին գալիս, ո՞ւր էին գնում: Թաց շինելների մեջ կծկված զինվորները իրար հպված ննջում էին հոգնությունից, երևի ամբողջ գիշեր ձյունոտ քամու ներքո այսպես ցնցվել են փուրգոններում: Շուկայի մոտ շարասյունը կանգ առավ նախաճաշելու: Ջիավոր սպաներից մեկը մոտեցավ Սաքոյին:

— Ճաշարան կա՞ այս կողմերում:

Պորուչիկի դեմքը ծանոթ էր, որտե՞ղ է տեսել:

— Ես քեզ բան հարցրեցի, խուլ ե՞ս, թե համր:

Հիշեց. համագյուղացի է, ծխական դպրոցում միասին էին սովորել, հետո նա գնացել էր զինվորության:

— Ոչ խուլ եմ, ոչ էլ համր, պորուչիկ Սարիբեկով, ուղղակի ինքս էլ չգիտեմ ճաշարանի տեղը:

Պորուչիկը երկար, ուշադիր նայեց նրան ու թռավ ձիուց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սաքո՞, դու ե՞ս, այ տղա, իսկ ես լսել էի, թե անցել ես Արևմտահայաստան: Լսել էի ու ճախանձում էի քեզ, Սաքո, իմ արև...

Նստել էին շուկայի փոքրիկ խորովածանոցում, կարմիր գինու շիշը սեղանին: Պորուչիկը հետաքրքրությունից վառվելով անընդհատ հարցեր էր տալիս Արևմտահայաստանի, ֆիդայական կռիվների մասին: Ո՞վ է հիմա ծխական դպրոցի իմ այս երբեմնի դասընկերը, արժե՞ հավատ ընծայել նրա զգացմունքներին, խորհում էր Սաքոն:

— Իսկ Արաբոյին տեսե՞լ ես, խոսե՞լ ես հետը:

— Լսիր,— Սաքոն վճռակամորեն մի կողմ հրեց բաժակը,— դու կկամենայի՞ր որևէ բանով օգտակար լինել ֆիդայական շարժմանը:

Պորուչիկի դեմքը լարվեց: Նա նույնպես ցած դրեց կիսատ բաժակը:

— Նույնիսկ կյանքի՛ գնով: Եթե որոշ հանգամանքներ չխանգարեին, ես էլ վաղուց այնտեղ կլինեի: Ի՞նչ կարող եմ անել:

— Ո՞ւր է գնում ձեր զորախումբը:

— Դիլիջան:

— Կարո՞ղ ես ինձ իմ բեռի հետ հասցնել այնտեղ:

— Ի՞նչ բեռ է:

— Այդ մեկը չպետք է հարցնեիր: Լավ, հոգս չեմ դառնա քեզ համար:

— Մի նեղանա, սպասիր, ինձ հետաքրքրում է բեռան ծավալը:

— Երեք մեծ ճամպրուկ:

— Ես մի քանի րոպեից կգամ:

Պորուչիկը վերադարձավ միջին տարիքի մի ռուս կապիտանի հետ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ահա նա, պարոն կապիտան, իմ կաթնեղբայրը, որ զինվորական գործը թողած՝ զբաղվում է մետաքսի առևտրով:

Պորուչիկի հյուրասիրած երկու շիշ կարմիր գինին նրա «կաթնեղբոր» ու կապիտանի ծանոթությունը վերափոխեց վաղահաս մտերմության: Քիչ հետո Սարգիս Ծովականյանը զինվորների արանքում օրորվում էր ճոճոացող ֆուրգոնի մեջ:

— Ես քո մասին կպատմեմ այնտեղ, պորուչիկ Սարիբեկով,— Դիլիջանի զորակայանում որպես շնորհակալություն խոստացավ Սաքոն:

— Իսկ դու ինչպե՞ս ես անցնելու լեռնանցքը: Կազակական հսկիչ կետում քո ճամպրուկներն անպայման կբացեն: Ի՞նչ անենք, ին՞չ:

— Մի վախենա, եթե բռնվեմ, քեզ չեմ մատնի:

— Ինչո՞ւ է քեզ թվում, թե իմ մեջ միայն վախի՛ զգացում կա...

Մոտեցավ կապիտանը:

— Կաթնեղբայրները հրաժե՞շտ են տալիս:

— Այո, պարոն կապիտան, բայց չգիտեմ, թե սա միայնակ ինչպե՞ս է իր ծանր բեռը քարշ տալու մինչև Ախտայի գյուղերը:

— Ժամը քանի՞սն է, պորուչիկ:

— Երեկոյան չորսը, պարոն կապիտան:

— Հանուն կաթնեղբորդ հետ ծանոթության, թույլ եմ տալիս նրան ուղեկցել մինչև Ախտա: Վերցրու ֆուրգոններից մեկը և, համեձայնդեպս, երկու զինվոր:

Լեռնանցքի հսկիչ կետում գիտեին պորուչիկ Սարիբեկովին:

— Կայազորի պետի հրամանով Երևան եմ ուղեկցում գընդապետ Արիստովի որդուն: Նա ճամփորդում է այն վայրերով, որտեղ կռվել է իր հայրը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Անցեք, պորուչիկ,— պատվի առավ հսկիչ կետի սպան,— մենք պարտավոր ենք հիշել ու փառաբանել գնդապետի հերոսական սխրանքը:

— Լսիր, ո՞վ է Արիստովը, սա ի՞նչ թատրոն էր,— Սաքոն չէր կարողանում զսպել ծիծաղը:

— Ռուս-թուրքականում զոհված մի հրամանատար: Նրա մասին դեռևս լեգենդներ են պատմում:

— Իսկ ի՞նչ կապ ունի ռուս-թուրքական պատերազմը այս վայրերի հետ:

— Չգիտեմ: Բայց ուրախ եմ, որ այդ հարցը չտվեցին հսկիչ կետում:

... Դարավագյազում նրան սպասում էին: Երկու ասորիներ էին, հայր ու որդի: Առատ վարձատրությունը նրանց դարձրել էր վստահելի, ճվիրյալ մարդիկ:

— Մենք քեզ պիտի ուղեկցենք մինչև Արաքսի շամբուտ՝ սահմանային միջանկյալ գոտի,— ասաց հայրը:

— Հետո՞:

— Հետո չգիտեմ, աղա, մենք վալադներ ենք, մեր գործը քեզ այնտեղ հասցնելն է:

— Ես մենակ չեմ կարող տանել այսքան բեռը, դուք ինձ հետ պիտի անցնեք Արաքսի մյուս ափը:

— Ջուղայի հայոց եկեղեցու քահանան պիտի մարդիկ ուղարկեր, որ օգնեին բեռը տեղափոխելու Սալմաստ: Գուցե սպասե՞ք մեկ-երկու օր:

— Ոչ, վալադ, սպասելու ժամանակ չկա:

— Ախր հիմա ձմեռ է, ջուրը շատ է պաղ...

— Լավ վարձը կտաքացնի ջուրը, վալադ:

Ճամպրուկների պարունակությունը՝ հիմնականում փամփուշտ և մաուզերներ, տեղափոխեցին կաշվե ուսապարկերի մեջ: Մութն ընկնելու հետ դուրս եկան վալադի այգետնակից: Ծանր

թվայնացրել է 1915.info կայքը

բեռների տակ կքած, շամբուտներով անընդհատ գնում էին վար, ասես հետևելով Արաքսի ընթացքին: Առջևից քայլում էր հայր վալադը: Երբեմն-երբեմն հետ էր նայում, երկնքին էր նայում՝ իր համար ինչ-ինչ բաներ ճշտելով, և շարունակում ընթացքը:

— Մենք երեք վտանգավոր թշնամի ունենք այս շամբուտներում, սահմանապահը, դահիճը և օձը: Այս ցրտերին օձի վտանգ չկա, պիտի զգուշանանք սահմանապահից և ճահճից:— Առաջնորդ վալադն ամեն քայլի հետ ուշադիր զննում էր շրջակայքը: Օձի վտանգը Սաքոն զգալու էր հաջորդ անգամ այս շամբուտով անցնելիս, երբ առանց ուղեկցի, մենակ ու բեռնավոր, ամառվա մի շոգ գիշեր մոտենար սահմանին: Նրա ոտքերի առաջ դարչնագույն մարմնի վրա սև պուտերով վիթխարի օձ էր հայտնվելու, որ հաջորդ պահին ձեռնափայտի հարվածից ողնաշարը ջարդված, հունիսի շեկ աստղերի տակ հրեշային գեղեցկությամբ հուրհրատելով թույն էր շաղ տալու շուրջը: Եղեգների մութից նայող նրա դեղին աչքերի մոլեգին թշշոցամանքը Սարգիս Ծովանյանը հիշելու էր տարիներ հետո, Մուշի քաղաքային դատարանում նայելով դատախազ Ահմեդ Օլանի թունավառ դեմքին...

... Հարդագողի ճանապարհը երկնային ծղրիդների ևվագ էր մաղում ցուրտ ու վախվորած աշխարհի վրա: Գիշերը շատ էր պայծառ, և դա անհանգստացնում էր զինատարներին:

— Դեռ շա՞տ ենք իջնելու, վալադ:

— Այնքան, մինչև հասնենք անցումի վայրը: Զգույշ, այստեղ ճահճափոս է:

Սաքոն հիշում էր այն տեղը, ուր ամիսներ առաջ (ասես դարեր էին անցել) ղարաբաղցի Արշոյի հետ մոտեցան Արաքսին: Բայց ծանր բեռների տակ հնարավոր չէր նույն տեղով անցնել գետը: Վալադն անսխալ էր իր գործի մեջ, նրա ամեն շարժում

թվայնացրել է 1915.info կայքը

ճշգրիտ էր ու տրամաբանված: Մոտ մեկ ժամ անց վալադը հետ շրջվեց.

— Հասնում ենք: Վանքն արդեն այնքան էլ հեռու չէ: Սակայն չխոսենք: Այսպիսի գիշերվա մեջ ամենաթույլ ջրնկն անգամ վտանգավոր է:

Նրանք դուրս եկան լայն ու խաղաղաշունչ մի հովիտ: Արաքսի ալեկոծ ջրերն այստեղ մոռանում էին ամեն շաչ ու շառաչ, ահրեուն լռությամբ սփռվում հովտով մեկ:

— Անցնելու ամենահարմար տեղն է,— ձեռքի շարժումով բացատրեց հայր վալադը, ու հետ նայելով, երկնքին նայելով քայլեց առաջ: Կես ժամ հետո Արաքսի պարսկական ափին, ժայռի ետևում, զինատարները քամում էին թրջված շորերը: Վալադը ծոցից տափաշիշ հանեց, սկսեց թունդ օղիով եռանդագին շփել Սաքոյի փայտացած ոտքերը: Փորձված միջոց էր: Երեքն էլ դրսից ու ներսից օղու բարերար ազդեցությամբ ջերմացած՝ ժայռի անձյուն հովանու տակ փովեցին հանգստանալու:

— Մենք քո ցանկությունը կատարեցինք, ջանֆիդա, հավատա, որ ոչ մի վարձ չէր կարող տաքացնել Արաքսի սառցե ջուրը: Ձեր պայքարի արդարությանը ենթարկվելո՛վ՝ մենք քո պահանջը կատարեցինք: Հիմա թույլ տուր հետ վերադառնալ, քանի դեռ լուսածեգը չի ընկել շամբուտին: Երեք ուսապարկ դու չես կարող տանել, երկուսը պահիր ժայռի խոռոչում, երրորդը շալակիր ու գնա դեպի հարավ-արևելք, դեպի սարերի անտառոտ լանջերը: Այդպես գնալով կգտնես քո վանքը:

Հայրն ու որդին հանեցին հետևները բերած չոր տաբատները, արդեն մի անգամ թրջվածները հագան, որպեսզի գետի մյուս ափին նորից փոխեն: Իսկ արևելքն սկսում էր շառագունել: Սաքոն մոտակա ժայռերից մեկի տակ չոր քարանձավ գտավ, ուսապարկերը քարշ տվեց այնտեղ, և կրակի պատրաստ մասուզերը գլխի տակ՝ սուզվեց անհանգիստ քնի տեսիլքների մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

... Սևքարի Արջաձորում է։ Մարոյի հետ նստած են մեծ կաղնու տակ և ինքը Մարոյին ցույց է տալիս մոսինի պղնձե գնդակը, որի վրա դաշույնի ծայրով փորագրել է իրենց անունների սկզբնատառերը։ Հիմա, ասում է, այս գնդակը կկրակեմ կաղնու բնի մեջ և հազար տարի՝ մինչև նրա տապալվելն ու փտելը, մեր սերը կապրի։ Մեկը կոպտորեն քաշում է թևից։ Ո՞ւր մնացին Արջաձորը, կաղնին ու Մարոն։ Մեկը դանակ է խրում թևի մեջ՝ վեր կաց։

Մաուզերը որոտում է գալլի կարմիր երախում...

* * *

Բանալին չոր աղմկեց դռան փականքում, և դուռը ճռինչով բացվեց։

— Հարցաքննության։

Այսօր 1898 թվի հունիսի քսանն է, խորհում էր Սարգիս Ծովանյանը։ Հավանաբար ինձ տանում են, գոնե իրենց կարծիքով, վերջնական-ջախջախիչ հարցաքննության։ Նրանց, ովքեր այսօր քննելու են, փոքրիշատե ծանոթ եմ բանտարկության առաջին օրվա հանդիպումից։ Մեկը Մեհմեդ չաուշն է։ Չգիտեմ ով է, բայց լավ է, որ մեկը նա է։ Հայ է, թեկուզ հավատը փոխած՝ հայ է։ Այդպիսիներն ավելի վտանգավոր են լինում, բայց սա կարծես նրանցից չէ...

Սենյակում կիսաշրջանաձև նստել էին երեք քննիչները։ Կենտրոնում թուրքացած վրացի Էրզախ կոմիսարն էր, աջ կողմի սեղանին՝ դարսեցի թուրք Դավրիշ օնբաշին, իսկ ձախ կողմում, պատուհանի մոտ, մտազբաղ թղթերն էր դասավորում Մեհմեդ չաուշը։ Կոմիսար Էրզախ էֆենդին կալանավորին ընդունեց «հայրենակցի» շողոմքոր ժպիտով, հերթապահ ասկյարին հրամայեց նրան տանկական սուրճ մատուցել «զրույցից»

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ: Դարսեցի թուրքը ի սկզբանե հույս հայտնեց, որ Ծովանյանը՝ ուրիշների պատճառով բանտ ընկած անմեղ մարդը, կխոստովանի, թե ինչպես են մոլորեցրել իրեն, և գործն այս քննությամբ էլ կվերջանա: Միայն Մեհմեդ քննիչն էր, որ հոգքերի տակից մռայլ ու համառ նայում էր կալանավորին:

— Դե, հայրենակից, ասա տեսնենք ով ես, ո՞ւր էիր գնում, ի՞նչ նպատակով,— չափից դուրս կեղծ մտերմությամբ հարցրեց կոմիսարը:

— Այդ հարցերին պատասխանել եմ հենց առաջին օրը: Ավելացնելու բան չունեմ:

— Մեզ հայտնի է, որ դու Գանձակ գավառի Սևքար գյուղացի Սարգիս Ծովանյանն ես: Դու ես ասել, և մենք ճշտել ենք դա: Բայց նաև պետք է ասես, թե ի՞նչ առնչություններ ունես այս կողմերի հետ և ո՞ւմ ես ճանաչում այստեղ:

— Դա էլ եմ ասել: Այս երկրում օտար մարդ եմ, ոչ մեկին չեմ ճանաչում:

Դավրիշ օնբաշին, որ մինչ այդ պատուհանի մոտ կանգնած նայում էր Մշո դաշտի կանաչ հեռուներին, կտրուկ շրջվեց, մոտեցավ Ծովանյանին.

— Չե՞ս կարծում, որ թե՛ դու, թե՛ մենք չափազանց հասուն ենք տապկնոցի խաղալու համար: Ի՞նչ ուխտավոր, ի՞նչ սուրբ Կարապետ: Մոռանում ես, որ քեզ հետ ձերբակալվել է նաև քեզ ճանաչող մեկ ուրիշը: Նա ասել է ամեն ինչ, քեզ մնում է ներման աղերսագիր հղել սուլթանին: Բայց դրա իրավո՛ւնքն էլ պետք է վաստակես:

— Ինչպե՞ս:— Սարգիսը քմծիծաղում էր Դավրիշի պարզունակ խաղի վրա: Մխիթարը կոիվներում պղնձացած հայդուկ էր, նա երբեք ոչինչ չէր ասի:

— Անկեղծ խոստովանությամբ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Անկեղծ խոստովանում եմ, որ ոչ մի հանցանք չեմ գործել և որևէ մեկից ներում աղերսելու միտք չունեմ:

Էրզախ կոմիսարը դժգոհ հազաց, աղմուկով հետ քաշեց աթոռը: Դավրիշը հարցաքննությունը մտցրել էր փակուղի: Ներս մտավ մի տասնապետ.

— Կոմիսար էֆենդի, Դավրիշ էֆենդի, ոստիկանապետը կանչում է ձեզ:

Նրանք դուրս եկան: Թարգմանիչ Մեհմեդը խրախուսանքով նայում էր Սաքոյին:

— Ամեն ինչ լավ է գնում: Հյուպատոսին երբեք մի մոռացիր: Դու օտարերկրյա հպատակ ես, մինչև դատը իրավունք չունեն քեզ մենախուց նետելու: Ուստի պահանջիր առանձնացնել խելագարից և կրնկնես ընդհանուր բանտասենյակ:

Կոմիսարն ու Դավրիշը վերադարձան: Երևում էր, որ նրանց միջև ինչ-որ անախորժ բան է եղել ոստիկանապետի մոտ:

— Մեհմեդ էֆենդի, այս կալանավորի գործը ձնակերպեցեք որպես հատուկ կարևորագույն: Անկախ իր ուխտավորական միամտությունից, նա մեղադրվում է Թուրքիայի իշխանության դեմ տեռորիստական գործունեության մեջ, այսօրվանից քաղաքի դատախազի ցուցումով համարվում է Մեթերհեմի ամենավտանգավոր բանտարկյալը: Առանց իմ և դատախազի գիտության ոչ ոք իրավունք չունի նրա հետ առնչվելու:

Կոմիսարը ճիշտ էր ասում, դա քաղաքապետարանի պահանջն էր, որը հաղորդելու համար ոստիկանապետը կանչել էր նրան ու Դավրիշին: Վերջինս ակնհայտ թշնամանքով մի հայացք նետեց Էրզախին և դուրս եկավ քննչասենյակից:

— Կալանավոր, տրամաբանությունը պահանջում է ավելի խոհեմ լինել: Ձեր վիճակում խաղեր ու կատակներ չեն անում:

թվայնացրել է 1915.info կայքը

Ես հակված չեմ ձեզ կախաղանի դատապարտելու, բայց նաև դյուրաթեք խամաճիկ չեմ: Ուրեմն հրաժարվենք միևչայժմյան ձեր միամիտ ցուցմունքներից, և միմյանց հարգելով ու գնահատելով անցնենք լուրջ գործի:

— Շնորհակալ եմ անկեղծության համար, բայց ես այն կալանավորը չեմ, որն արժանի լիներ նման առանձնահատուկ վերաբերմունքի: Դա շքեղություն է մի հասարակ ուխտավորի համար, որը երբեք չի երազել խճճվել քաղաքականության որոգայթներում:

— Դուք գտնում եք, որ խոսքի նման ձևակերպում կարող էր անել ամեն մի հասարակ ուխտավո՞ր:

— Ինչպես քննիչների, այնպես էլ ուխտավորների մեջ կան խելոքներ և ոչ խելոքներ...

— Ուրիշ ի՞նչ կասեք: Ձե՛ր մասին: Քննիչների մակարդակն առայժմ չի որոշվում կալանավորների գնահատանքով:— Կոմիսարը կարողանում էր պահպանել սառնասրտությունը:

— Ես բանտարկված եմ մի խելագարի հետ և դա համարում եմ հոգեբանական շանտաժ: Ինձ տեղափոխեք:

— Ուրի՞շ:

— Քանի որ մինչև այժմ ասածներիս ավելացնելու ոչինչ չունեմ, հետագա հարցաքննություններս համարում եմ կատանք և միջազգային օրենքով պահանջում, որ դրանց ներկա լինի ռուսական հյուպատոսը:

— Ցավում եմ, որ մենք իրար լավ չենք ճանաչում:

— Ես էլ եմ ցավում, կոմիսար էֆենդի...

Սարգիսը վերադառնում էր բանտախուց: Միջանցքի խուժանը, ցեղապետ Սլոյից երկյուղելով, բավարարվեց նրա հետևվից հայհոյանքներ նետելով:

— Աչ թեքվիր,— թիկունքից լսեց հսկիչ ասկյարի ձայնը: Մնաս բարով, ասորական բանակների գեներալ և համաշխար-

թվայնացրել է 1915.info կայքը

հային ակնավաճառ: Բայց ո՞ւր են տանում: Դեմից գալիս է հաղթանդամ ցեղապետ Սլոն:

— Կանգնիր,— հրահանգում է հսկիչը:— Ցեղապետ, այս մարդուն կընդունե՞ս քո բանտախուց:— Հսկիչի ձայնում հարազատ ու խորհրդավոր մի երանգ կա:

— Ուխտավո՞րն է: Սիրով: Հարգում եմ այս տեսակ մարդկանց: Երբ նրանց տեսնում եմ, լեռներից երգի ձայն եմ լսում: Դու է՞լ ես լսում, հսկիչ Մուրադ:

Սաքոյի հետևից հսկիչը ծածկում էր դուռը: Սաքոն շրջվեց, նրանց հայացքները մի ակնթարթ հանդիպեցին իրար, և Մուրադը թույլ ժպտաց: Մուրադի աչքերում գորովանք կար: Գիշերը ցեղապետ Սլոն ջուր պահանջեց: Հսկիչը դռան փոքրիկ պատուհանից ներս պարզեց թասը:

— Վերցրու ջուրը, Սաքո,— խնդրեց իր կողքի խսիրին տեղավորված Ծովանյանին:

— Թիֆլիսում գիտեն: Քեզ ամուր պահիր և վստահիր ցեղապետին:— Հայերեն շշուկներն ավարտվեցին դռնակի ուժեղ չրխկոցով և հայհոյանքով: Սարգիսը կարկամել էր: Ծանո՞ւծ է: Բայց փոխարենը ոչինչ չպահանջվեց: Դա, գուցե, հետո կլինի: Ո՞վ է Մեհմեդ չաուշը: Ո՞վ է հսկիչ Մուրադը, որն, անկասկած, նույնպես հավատափոխ է: Ինչո՞ւ պետք է ինքը վստահի մարդասպան ցեղապետին: Հարցեր ու հարցեր, որոնց պատասխանը չափազանց դժվար էր գտնել Մեթերհեմի զարհուրելի խավարում:

Մոտ ու հեռու խցերից լսվող ճիչերը, տնքոցներն ու ցավագար հառաչանքները կամաց-կամաց սովորական էին դառնում: Դա Մեթերհեմ բանտի առօրյան էր: Մեկ շաբաթ քաղաքական բանտարկյալ Սարգիս Ծովանյանի գոյությունը ոչ ոք չէր հիշում: Հաջորդ հերթապահության ժամանակ Մուրադը դարձյալ մի քանի բառ շշնջաց. «Գլուխդ չկորցնես, քո մասին

թվայնացրել է 1915.info կայքը

մտածում են»: Ծանր խոհերով նա սուզվել էր Մեթերհեմի ցավաշունչ գիշերվա մեջ:

... Տաճար էր, մարմարե ճերմակ տաճար՝ ներսում լույս ու մեղեդի, որ բխում էին թխակապույտ խորաններից: Վայրենի դեմքով մեկը ձին ծառս էր արել տաճարի առաջ և լուսնի եղջյուրի պես կեռ յաթաղանը գլխից վեր թափահարելով՝ ոռնում էր: Քանդակազարդ դռները կրնկի վրա բաց էին, ուզում էր ներս մտնել, սակայն տաճարից հորդացող լույսի և մեղեդու ներդաշնակ հորձանքը հետ էր մղում ձիուն ու ձիավորին: Ու ոռնում էր յաթաղանը թափահարելով: Նրա փոքր ու մռայլ ուղեղը չէր կարողանում մեկնել լույսի, մեղեդու աստվածային իմաստը, նրանց ներդաշնակ ուժի խորհուրդը: Ու ոռնում էր՝ յաթաղանակերպ լուսնի տակ թափահարելով լուսնակերպ յաթաղանը:

Սաքոն արթնացել էր և չէր կարողանում թոթափվել մղձավանջային երազից: Բանտային պատուհանի աղոտ անկյունից սառն ու դաժան փայլում էր լուսնի եղջյուրը՝ որպես երազից մնացած չար խորհրդանշան: Մարմարե տաճարը մեր ոգու տունըն է, վայրենին, պարզ է, պատմության ավազակ թուրքը,— արձոտ լուսնեղջյուրին նայելով խորհում էր Սաքոն:— Ոռնոցի միջից բառերը չէին զանազանվում, բայց դժվար չէ ենթադրել, թե ինչ էր ասում: Տաճարին նայելով ասում էր՝ դու չպետք է լինես, ես կամ, դու չպետք է լինես. ժամանակի դաշտում իմ ցանած որոմնի մեջ պիտի խեղդվեն քո մասին հիշողության բոլոր ծաղիկները: Ո՛չ: Սաքոյի բռունցքն այնպես ուժգին խփվեց պատին, որ կողքի խսիրին քնած քուրդ ցեղապետը վեր թռավ:

— Ի՞նչ է պատահել:

— Ոչինչ, քնիր:

Սակայն բանտի խորքից՝ Մըրճե չաուշի տանջարանից ել-

թվայնացրել է 1915.info կայքը

ճող զարհուրելի մի ճիչ արթնացրեց Մեթերհեմի երևի թե բոլոր կալանավորներին:

— Տեսնես էլի ո՛ւմ է խոշտանգում շունը,— ցեղապետը հայհոյեց իր լեզվով:— Հայ է, բայց տեսնես ո՛վ է, ի՛նչ է արել: Դժվար թե լեռնցի ֆիդայի լինի: Նրանք տնքում են, հառաչում, ու դիմանում են, չեն գոռում այսպես:

— Իսկ ինչի՞ց իմացար, որ հայ է:

— Հայ է և դեռահաս պատանի: Ամեն ազգ ուրախության և տառապանքի իր ձայնն ունի: Այստեղ տանջում են քրդերին կամ հայերին: Քրդի ձայնը ճանաչում եմ, քուրդ չէր: Ուրեմն հայ է:

Մըհեն չաուշի ճիրաններից մի հայ փրկելու ինքնախաբ հույսով Սաքոն փորձեց վիճարկել ձայների տարբերակման այս տեսությունը, սակայն ճիչը երկրորդվեց, և ճիչ չէր, ցավագին բառերի բույլ էր՝ վա՜յ, մարե ջան...

— Դու ճիշտ ես, ցեղապետ: Բայց քրդերի՞ն ինչու են տանջում: Քրդերը չէի՞ն, որ Գարահիսար լեռան լանջին կոտորեցին Վանի խաբված ու անզեն պաշտպաններին: Նրանք չէի՞ն, որ պատարագի ժամանակ փակեցին սուրբ Բարդուղիմեոս եկեղեցու դռներն ու եկեղեցին վառեցին...

Ոչ, քուրդ ցեղապետն այս ամենի մեջ որևէ մեղք չունի, իզուր է վիրավորում նրան: Ավելին. չէ՞ որ հսկիչ Մուրադը Սաքոյին գլխի գցեց, որ ցեղապետ Սլոյի հարևանությամբ նույն խցում լինելը ուրախալի պատահականություն է: Ինչո՞վ է ուրախալի՝ առայժմ հայտնի չէ, բայց Մուրադը, երևի, մի բան գիտեր:

— Ճիշտ ես ասում, նրանք էին:— Ցեղապետը նստել էր խսիրե անկողնում, խոհուն հայացքը հառել գիշերային խավարով պատված լուսամուտին:— Նրանք էին, այո, և էլի շատ ու շատ ոճիրներ են գործել: Բայց ի՞նչ կասես այն մասին, որ ես՝

թվայնացրել է 1915.info կայքը

քուրդ ցեղապետ, ահա քեզ հետ միասին նստած եմ նույն բանտախցում: Ինչո՞վ կբացատրես այն, որ քո մասին ինձ ամեն ինչ հայտնի է, հրաշալի գիտեմ ով լինելդ և մտքովս էլ չի անցնում մատնել քեզ: Ինչո՞ւ չեմ մատնում, չէ՞ որ դա ինձ համար ազատություն է, գուցե նաև՝ շռայլ վարձ...

Սարգիս Ծովանյանի մարմինը պատվեց սառը քրտինքով: Բիբերը լայնացան: Ազնիվ մարդու խոսակցությո՞ւն է սա, թե՞ Մըհե չաուշի տանջարանի թաքցված հրավեր: Ո՞վ է քուրդ ցեղապետը...

— Ես գաղտնիք չունեմ, իմ մասին այստեղ բոլորն ամեն ինչ գիտեն, ցեղապետ, հարցաքննությունների ժամանակ ես ամեն ինչ ասել եմ...

— Ամեն ինչ՝ բացի ճշմարտությունից: Բայց ես չեմ ավարտել խոսքս: Մոտեցիր, մոտ նստիր, որ մեզ չլսեն: Իմ ժողովուրդը երբևէ խաղաղ դաշտ է եղել, հայդուկ: Եկել է թուրք-սև հեղեղը, և այդ դաշտը կտրտել, բաժան-բաժան արել: Մի մասին դարձրել է իր պես թալանչի, մի մասին մատնել է խեղճության ու խեղճությունից բխող մոլուցքների, մի մասն էլ, որի մեջ ես եմ ու հազարավոր ինձ նմանները, մնացել են նույնը՝ հին դաշտի հիշողությամբ: Ինձ բանտարկել են երկու մարդ սպանելու համար: Մեկը թուրք էր՝ օնբաշի, մյուսը քուրդ էր, լեռնական մի աշիրեթի ցեղապետ: Սպանել եմ Եփրատի շամբուտում, ուր կապկպել, բռնաբարում էին ինը տարեկան մի հույն աղջկա: Հավատա կամ մի հավատա, քո գործն է: Ներսից քեզ այրում է մի հարց. ի՞նչ գիտե այս ցեղապետն իմ մասին: Ամեն ինչ գիտեմ, ախպերս, իմ աշիրեթի տղերքը, որ քո լեռնցի բարեկամների ընկերներն են, հաղորդել են ամեն ինչ: Դու նա ես, ով ընդամենը մեկ տարի առաջ՝ Խաճասորի արշավանքի ժամանակ, գլխավորում էր հեծյալ ջոկատը: Դու կրկնակի վրեժով էիր լցված մազրիկ ցեղի ու նրա ցեղապետ Շարաֆի հանդեպ:

թվայնացրել է 1915.info կայքը

Առաջին վրեժը մեջդ մնացել էր Դերիկի վանքի կովից, երբ Շարաֆը Վանի կուսակալին խոստացել էր վանքը ավերել և այնտեղ հանգրվանած ֆիդայիներին գլխատել, իսկ երկրորդը Գարահիսարի լանջերին անգեն ու դավադրաբար նահատակվածների վրեժն էր: Առավել խոր, առավել մարտաշունչ: Էլի՞ ասեմ, թե ով ես դու: Պետք չէ: Եվ քեզնից՝ քո բերանից, ոչինչ չեմ ուզում իմանալ: Մենք այստեղից այնքան էլ շուտ չենք դուրս գա, հայդուկ, կհասցնենք ճանաչել իրար և մի օր, առանց իմ խնդրանքի, դու ինքդ կպատմես ամեն ինչի մասին: Կպատմես, ինչպես եղբայրը եղբորը, բախտակիցը՝ բախտակցին: Իսկ հիմա փորձիր քնել, մի գիշերվա համար այսքանը շատ էր:

Ցեղապետին հայտնի է իր անձի գաղտնիքը: Համենայնդեպս, սխալ չէր ժխտող քմծիծաղով նրան բարի գիշեր մաղթելը: Ծամանակ է պետք, մտածել է պետք: Այս գիշերից հետո ո՞վ է լինելու իր համար բուրդ ցեղապետը, կամ որքանո՞վ է ճիշտ բանտարկման հետ կապված նրա պատմությունը: Լուսաբացի գունատ ցոլքերի հետ խցի դուռը ճռնչալով բացվեց.

— Ծովանյան Սարգիս, հարցաքննության:

Դուրս գալով միջանցք, նա, ինչպես միշտ, ձեռքերը դրեց մեջքին, ուղղվեց դեպի ելքը:

— Ա՛յս կողմ:— Առջևի ատամները թափված տարեց ասկյարը, ուսից բռնելով նրան, կոպտորեն հետ շրջեց: Հետ՝ դեպի միջանցքի խորքը: Հայց այնտեղ քննասենյակ չկա: Կա՛: Ասես ուղեղի մեջ հալած արճիճ կաթեցրին: Մրճե չաուշի դժոխային տանջարանը: Մի՞թե: Երևի կփորձեն ձեռնաշղթաներ հագցնել: Ոչ, չեն համարձակվում: Ասկյարներից մեկը բախում է դուռը: Ներսից բացում են: Մրճե չաուշն է և կարսեցի քննիչ Դավրիշը: Խուլ, կիսամութ սենյակի մի անկյունում, քրջերով ծածկված, ընկած է ինչ-որ մեկի խոշտանգված մարմինը: Բաց-

թվայնացրել է 1915.info կայքը

վող դռնից ներս ընկած քամու ալիքը շոյեց ճակատի մազափունջը ու հանգավ խիտ գանգուրներում: Հիշեց գիշերվա սոսկալի ճիչերն ու ցավագին բառերի բույլը՝ վա՜յ, մարե ջան: Տեսնես ասկյարները ներսում կմնա՞ն: Ոչ, Դավրիշը գլխի շարժումով նրանց հրամայում է դուրս գալ: Ներսում չեն՝ դռան ետևում են: Ոչինչ, ձեռնաշղթաներ չեն հագցրել: Մրնե չաուշն զբաղված է, իրեն չի նկատում: Նա փետուրները կարգին չմաքրած աղավնու մարմինը երկու մասի է բաժանել, աղ ցանել, թեժ բուխարու միջից ունելիով հանում է շիկացած խոփի մի կտոր և աղավնու մի կեսը գցում վրան: Այրվող մսի ծուխ ու հոտ է բարձրանում խոփից: Շրջում է միսը: Դարձյալ ծուխ ու հոտ, և Մհեի նախաճաշը պատրաստ է: Նույնիսկ Դավրիշն է զգվանքով թեքում հայացքը: Դավրիշն ի՞նչ գործ ունի իր հետ: Չէ՞ որ կոմիսարը նրան արգելել է զբաղվել Մեթերհեմի ամենավտանգավոր հանցագործով: Բայց դա իրեն չի վերաբերում, միևնույնը պետք է լինի, թե ով է փորձության ենթարկում իրեն: Սարգիսը մոտենում է քրջերով ծածկված դիակին, բացում դեմքը: «Վա՜յ, մարե ջան»: Մի աչքի տեղը սև, մակարդված արյունով լեցուն փոս է: Դեմքը խարանված է, երևի նույն խոփի կտորով: Ջարդված ծնոտը թեքվել է մի կողմ: Սևքարեցի Սաքոն կալանավոր չէ, Մեթերհեմ բանտում չէ, ազատ ֆիդայի է ազատության համար մարտնչող լեռներում: Սակայն ճշգրիտ պահին ներսից հնչում է բանականության ձայնը. «Զգույշ, այս ամենը սարքովի խաղ է, ենթագ հարցաքննություն՝ զգացմունքների ալեկոծությամբ, միակ ու անսխալ պատասխանի սպասումով: Նրանք որոշել են քո դեմ պայքարել քո սեփական նյարդերով: Մրնե չաուշ անասունին գուցե սատկացնես, բայց դրանով կմատնես ինքդ քեզ: Հետո՛, այս ամենի համար հետո՛ վրեժ կլուծես: Հիմա նորից ծածկիր խոշտանգված պատանու

թվայնացրել է 1915.info կայքը

դեմքը և անայլայլ, սառնասրտորեն նայիր Դավրիշ քննիչի աչքերին»:

Մըրճեն նույն վայրենաբարո եղանակով խորովեց ու կերավ աղավնու մարմնի մյուս կեսը: Սաքոն սառն ու անտարբեր նայում էր քննիչին: Թևքով լորձունքոտ մոութը սրբելով, Մըրճե չաուշը երկաթե սեղանի վրա դասավորում էր իր զարհուրելի գործիքները՝ աքցան, ունելի, մկրատանման սղոց, մոմած պարան, փայտե կոթով ասեղներ, տանջանքի ուրիշ իրեր: Այո, այս ամենը խաղ է, բայց ո՞ւմ սարքած խաղը: Դավրիշը ներսից բախում է դուռը, իրար հրելով ներկայանում են ասկյարները:

— Տարեք:— Հրամայում է բուխարու շեկ բոցերին նայելով:

Ասկյարները չգիտեն ում տանեն, մեռած պատանո՞ւն, թե՞ կալանավորին:

— Տարեք:— Հայացքով ցույց է տալիս կալանավորին:

* * *

— Հաղորդեցեք պարոն նահանգապետին, որ Թիֆլիսից նրան այցելության է եկել իշխանադուստր Մարո Ղարաքեշիշյանը:— Ընտիր ռուսերենով ներթապահ սպային դիմելով, Մարոն իր կոչմանն արժանի ինքնավստահությամբ ընկողմանեց ընդունարանի փափուկ բազմոցին:

— Պարոն նահանգապետն զբաղված է, հրամայել է ոչ ոքի չընդունել:

— Ինչ արած, եթե ձեր քաջությունը չի բավարարում, ստիպված եմ միանգամից ինքս ներկայանալ նահանգապետին:— Եվ մինչ սպան որևէ նոր բան կասեր, Մարոն նահանգապետի առանձնասենյակում էր:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես ձեզ մոտ եմ եկել ձեր բարեկամի և իմ եղբոր՝ գրիգորապետ Գեորգի Ղարաքեշիշյանի անունով: Մարո Ղարաքեշիշյան...

— Նստեցեք, խնդրեմ:

— Պարոն նահանգապետ, դուք խոստացել եք իմ փեսացուի՝ Թուրքիայում թյուրիմացաբար կալանավորված Սարգիս Ծովանյանի ազատման համար անձնական միջնորդությամբ դիմել Մուշի քաղաքագլխին...

— Եվ պաշտոնական միջամտության առաջարկով՝ Պետերբուրգի գինվորական բարձրագույն ատյանին: Ես կատարել եմ իմ խոստումը, իշխանուհի, թեև կարգին չեմ հասկանում՝ ի՞նչ փեսացու կարող է լինել ձեզ համար սևքարեցի այդ գեղջուկ տղան: Հեռագրել եմ և՛ Մուշ, և՛ Պետերբուրգ: Մուշից պատասխանել են, որ Ծովանյանը մեղադրվում է քաղաքական հանցագործության մեջ, և մինչև հանգամանքների լրիվ բացահայտումը ոչնչով չեն կարող ընդառաջել: Սակայն գինվորական բարձրագույն ատյանը հանձնարարական է ուղարկելու Կարինի ռուսական հյուպատոսին՝ անձամբ զբաղվելու ձեր փեսացուի գործով: Տա աստված, նրան վերագրվող հանցանքը չհաստատվի:

— Աստծո վրա հույս դնելն անիմաստ է, պարոն նահանգապետ: Եկել եմ խնդրելու, որ ձեր անձնական հեղինակությունն ու պաշտոնական իրավունքներն օգտագործելով դիմեք հենց իր՝ նորին մեծության կայսրի օգնությանը:

— Ի՞նչ: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ասում, օրիորդ: Մի՞թե ես կարող եմ դիմել անձամբ կայսրին, կամ մի՞թե կայսրը ժամանակ կունենա զբաղվելու իր ամեն մի հպատակի ճակատագրով:

թվայնացրել է 1915.info կայքը

Մարոն դեմքին իջեցրեց սև պուտերով թափանցիկ շղարշն ու խոովահուշզ վեր կացավ:

— Ներեցեք, պարոն նահանգապետ: Ինձ թվում էր, թե դուք ավելի գթասիրտ եք և... ավելի համարձակ: Ցտեսություն:

— Սպասեք:— Նահանգապետը զուրկ չէր արժանապատվությունից: Հիմա ձեզ հետ միասին կշարադրենք հեռագրի տեքստը՝ ուղղված Ռուսաստանի փոխարքային: Հավատացնում եմ, որ դա ձեզ օգնելու իմ վերջին հնարավորությունն է:

«Պետերբուրգ, նորին մեծություն փոխարքային: Այս տարվա հունիսի 14-ին Թուրքիայում ահիմն կասկածանքով ձերբակալվել է նահանգիս Սևքար գյուղի բնակիչ Սարգիս Ծովանյանը: Ստույգ համոզված ենք, որ նա ընդամենը ուխտի է գնացել և միակ մեղքը անցաթուղթ չունենալն է: Խնդրում եմ, ձերդ մեծության բարձրագույն միջնորդությունը թուրքական կառավարությանը՝ ռուսահպատակ Ծովանյանին բանտից ազատելու և հայրենիք տեղափոխելու համար: Գանձակի նահանգապետ՝ Օգարյով»:

— Ճնորհակալ եմ, պարոն նահանգապետ, վստահ եմ, որ այս հեռագիրը կօգնի գործին: Ձեր այս մեծահոգության մասին ես կհայտնեմ եղբորս:

Նույն օրվա երեկոյան, ազնվական օրիորդի շքեղ պահվածքից հոգնած, Թիֆլիսի զինապահեստներից մեկի բանվորուհի Մարո Ղարաքեշիշյանը խարխուլ կառքով Գանձակից ճանապարհ ընկավ դեպի Քարվանսարա: Դեպի Սևքար՝ նահանգապետի միջամտության մասին հայտնելու փեսացուի ծնողներին:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Էրզախ կոմիսարը Պոլսից վերադարձավ ուղիղ ոստիկանատուն: Նրա քաղաքական ապագան այժմ կախված էր այն բանից, թե ինչ հաջողությամբ կբացահայտի Մեթերհեմի բանտարկյալ Սարգիս Ծովանյանի գործը: Գլխավոր դատախազն այդպես էլ ասաց. «Եթե դուք կարողանաք հաստատել, որ այդ ոխտավորը Աղբյուր Սերոբի և Անդրանիկի մարդկանցից է և Թուրքիա է անցել կառավարության դեմ տեռոր կազմակերպելու առաքելությամբ, ձեզ կներկայացնենք շքանշանի և ուրիշ թեկնածու չենք փնտրի Մուշ քաղաքի դատախազի պաշտոնի համար»: Սառը, անողորմ հայացքով նայելով Էրզախին, գլխավոր դատախազը նաև չթաքցրեց, որ ռուսահպատակ կալանավորի գործում ձախողվողը իրավունք չի ունենա մնալու նույն պաշտոնում: Կոմիսարին անվիճելիորեն ձեռնտու էր առաջին տարբերակը: Եվ Ծովանյանին կանչեց հարցաքննության:

— Ես ձեզ չէի անհանգստացնում, որպեսզի հնարավորություն ունենաք լրջորեն խորհելու ձեր վիճակի մասին:

— Սա պաշտոնական հարցաքննությո՞ւն է, պարոն էֆենդի:

— Իհարկե, չէ՞ որ որոշեցինք թողնել խաղերն ու կատակները:

— Բայց ես չեմ տեսնում ռուսական հյուպատոսին...

— Նրա ներկայությունն առանձնապես բան չի փոխի, կալանավոր:

— Պարտավոր ենք հարգել օրինականությունը, ինձ համար դա շատ կարևոր է: Մանավանդ Դավրիշ օնբաշու հյուրասիրությունից հետո, առանց իմ երկրի ներկայացուցչի ես ոչինչ չեմ կարող ասել՝ եթե նույնիսկ բան լինի ասելու:

— Ի՞նչ հյուրասիրություն...

թվայնացրել է 1915.info կայքը

— Դավրիշ օճբաշին ինձ հրավիրեց Մըհե չաուշի հետ ճախաճաշելու նրա զնդանում, մի խոշտանգված պատանու դիակի մոտ:

— Չեմ հասկանում...— Էրզախը զայրույթից դողում էր:— Մեհմեդ էֆենդի, չէ՞ որ ես հրահանգել էի, որ ինձնից և քաղաքի դատախազից բացի որևէ մեկը չխառնվի քաղաքական բանտարկյալի գործին:

— Ես չգիտեմ, թե ինչ հյուրասիրության մասին է խոսքը: Կալանավորին այստեղ ոչ ոք չի հարցաքննել: Գուցե քաղաքի դատախա՞զն է օճբաշուն ինչ-որ բան հանձնարարել, կոմիսար:

— Հանգստացեք,— ճեռախոսագծի մյուս ծայրից լսվեց դատախազի չոր ձայնը:— Ես տեղյակ եմ դրան: Դավրիշ օճբաշին ինձ հայտնել է իր մտահղացումը և իմ թույլտվությամբ է իրականացվել քաղաքական հանցագործին հոգեբանորեն պաշարելու այդ փորձը: Դա ավելի արդյունավետ կլինի, քան տաճկական սուրճով նրան հյուրասիրելը: Կա ընդհանուր շահ հասկացողություն, կոմիսար, առաջնորդվեցեք այդ հասկացողությամբ, և կմոռանաք անձնական հարաբերությունների մասին: Նկատի ունեցեք, որ շուտով լրանում է նախնական կալանքի ժամկետը, առաջիկայում գործը պետք է իշնի դատարան:

Լսափողը դնելուց հետո կոմիսարը պաղ ջրով թրջված թաշկինակով սրբեց դեմքը, մի գավաթ սուրճ խմեց և նյարդային ցնցումներից փոքր-ինչ խաղաղվելով՝ կարգադրեց ներս բերել նախասենյակում սպասող կալանավորին:

— Ուշադիր լսեցեք, թե ինչ եմ ասում: Այսօր ես վերադարձել եմ Պոլսից: Այնտեղ մի շարք հարցերի հետ քննարկվում էր նաև Թուրքիայի տարածքում ֆիդայական գործունեությամբ զբաղված կալանավորներին ընդհանուր ներում շնորհելու հար-

թվայնացրել է 1915.info կայքը

ցը: Խոստովանեցեք ամեն ինչ, և ձերման հրամանագիրը կտարածվի նաև ձեզ վրա:

— Շնորհակալ եմ խորհրդի համար, կոմիսար էֆենդի, բայց իմաստ չեմ տեսնում նույն բանը հազար անգամ կրկնելու մեջ: Եվ ամեն պարագայում ինձ շատ է նեղում ռուսական հյուպատոսի բացակայությունը...

— Նա, ով ձեր գլուխն է մտցրել այդ գաղափարը, մի բան պիտի լավ իմանար. հյուպատոսի ներկայությունը պարտադիր է դատարանում, ոչ թե նախաքննության ժամանակ: Իսկ դուք խոսելո՛ւ եք, կալանավոր, դուք ինձ պատմելո՛ւ եք ամեն ինչ: Մտածեցեք: Լա՛վ մտածեցեք:

* * *

Գործը դատարան մտավ առանց Էրզախ կոմիսարի մեղադրական եզրակացության: Նրան կանչեցին Պոլիս և ուղարկեցին Ադանա՝ որպես պետական մեղադրող մասնակցելու մի խումբ խռովարարների դատավարությանը: Կոմիսարը գոհ էր դեպքերի ընթացքից: Գործում նախնական ցուցմունքներից բացի ոչ մի լուրջ ապացույց չէր գոյացել քաղաքական հանցագործի դեմ, դատարանը հետ կուղարկեր այն և կկայանար Էրզախ կոմիսարի անկումը՝ ըստ գլխավոր դատախազի խոստումի: Այժմ, սակայն, նրան չէին կարող մեղադրել, ինչ էլ որ դատարանը որոշեր: Իսկ հետագայի մասին կմտածենք,— Ադանայի խուլ հյուրանոցում կոնյակի շիշը գրեթե դատարկելուց հետո թեթև անհոգությամբ խորհում էր Էրզախը:

... Բանտախուց մտան Իզիթ ոստիկանապետը, Մեհմեդ չաուշը և մի անծանոթ օնբաշի:

— Կալանավոր Ծովանյան, վաղը Մշո դատարանը լսելու է ձեր գործը: Գիտեք, թե ինչ մեղադրանք է հարուցված:

թվայնացրել է 1915.info կայքը

Դատից առաջ ի՞նչ խնդրանք ունեք Թուրքիայի կառավարությանը:

— Խնդրանք չունեմ: Պահանջ ունեմ ապահովել ռուսական հյուպատոսի ներկայությունը: Եթե դուք այն չեք ընդունում, ճնարավորություն տվեք ինձ դիմելու ռուսական կայսրությանը:

— Այդ հարցերը կվճռի դատարանը: Ջազիր էֆենդին Թուրքիայի ճանաչված փաստաբաններից է: Նա մեծահոգաբար ստանձնում է դատարանում ձեր պաշտպանության գործը, որի համար դուք կամ ձեր բարեկամները ըրան պետք է վճարեք հարյուր ոսկի: Կարո՞ղ եք:

— Ես ոչ ոսկի ունեմ, ոչ բարեկամներ: Եվ ինձ հարկավոր չէ ոչ մի դատապաշտպան:

— Գյավուր, գյավուրի տղա,— հարգանքի կեղծ տոնը մաշված լաթի պես դեմքից շպրտելով, ոստիկանապետը դուրս եկավ բանտախցից: Նրան հետևեցին Մեհմեդ չաուշը ու Թուրքիայի ճանաչված փաստաբանը:

1898 թվի նոյեմբերի 15-ին, բանտարկվելուց ուղիղ հինգ ամիս անց, սկսվեց Սարգիս Ծովանյանի դատավարությունը: Նա մեղադրվում էր հայդուկային շարժմանը ակտիվորեն մասնակցելու, Թուրքիայի կառավարության դեմ տեռոր կազմակերպելու փորձի մեջ: Ապացույցներ գրեթե չկան: Մեղադրանքը հարուցված էր պետական սահմանը խախտելու և խուզարկության ժամանակ ի հայտ եկած մահացու թույնի փաստի վրա: Ապացույցներ չկային, բայց կար դատարանի ներքին համոզվածությունը, կար դատախազի հաստատուն կարծիքը, որ մեղադրվողը վտանգավոր անձ է, և դա կապացուցվի խիստ հարցաքննությամբ, դատավարման ընթացքում: Սարգիս Ծովանյանը նստած էր քաղաքական մեղադրյալի աթոռին և շարունակում էր իրեն պահել սուրբ Կարապետի ուխտավորի չքմեղությամբ: Թուրք դատախազի արնակոխ աչքերում վճիռն ի սկզբանե

թվայնացրել է 1915.info կայքը

կար. այդ դեղին աչքերն ասես օձերի գլուխներ էին, որ պահ առ պահ բիբ-երախներից ներսուդուրս էին անում երկճյուղ սև լեզուները: Նա փորձում էր Ծովանյանին ենթարկել իրադրության տիրակալի իր մոգական իշխանությանն ու չէր կարողանում: Նրա և մոլեգին հայդուկի հայացքները ահեղ ցուլերի պես ճակատ ճակատի տված հրում էին իրար, հետո դատախազի բիբերում թրթռացող սև լեզուները հոգնած կախվեցին ցած: Ռուսահպատակ մեղադրյալը պահանջում էր Կարինի հյուպատոսին: Դատարանի նախագահ Վեզար բեյը սկզբունքորեն գլուխ չէր հանում այդ ամենից և վիճակից դուրս գալու մի ելք գտավ՝ գործն ուղարկել Կարին, թող այնտեղ քննվի ռուսական հյուպատոսի մասնակցությամբ: Դատախազը բողոքեց. Թուրքիայի օրենսդրությամբ նման դեպքերում գործը ենթակա է հյուպատոսական քաղաք փոխադրվելու, երբ ճանապարհի տևողությունը չի անցնում ինը ժամից: Իսկ Մուշից մինչև Կարին 35 ժամվա ճանապարհ էր:

... Թուրքական դատարանը Սարգիս Ծովանյանին դատապարտեց 101 տարվա բանտարկության: Մխիթարին, որպես վտանգավոր հանցագործին ուղեկցողի, պատժեց հինգ տարվա ազատազրկմամբ:

Անցնում էին օրեր՝ բանտային խոնավ գարշահոտությամբ, Մըշեն չաուշի նկուղային տանջարանից լսվող զարհուրելի ճիչերով, վայրենաբարո կալանավորների արյունոտ կռիվներով: Ավելի քան ութ ամիս Սարգիս Ծովանյանը կտրված էր դրսի աշխարհից: Չգիտեր ինչ դրություն է Բարձրավանդակում, շարունակվո՞ւմ է, արդյոք, Արաքսի այն ափից զենքի փոխադրումը, թե՞ Ռուսաստանի ցարական կառավարությունը հայտնաբերել ու փակել է սահմանային բոլոր անցումները:

Մի գիշեր, երբ Արաբոյի աստղը (դա մի պայծառ աստղ էր Ծովասարի կողմերում, որ Սաքոն նկատել էր բանտարկու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյան առաջին գիշերներին և կոչել Արաբոյի աստղ) դարձյալ շողում էր Ծովասարի վրա, բանտախցի դռան դիտանցքից մեկը կանչեց Սաքոյին: Հսկիչն էր, Մուրադը:

— Պարզվում է, որ աշխարհում քեզ դեռ հիշող կա: Վերցրու, հաց են ուղարկել,— ասաց թուրքերեն և շշուկով հայերեն ավելացրեց.— հացի մեջ նամակ կա, պատասխանին կսպասեմ...

«Սիրելի Անմեղ: Ահավասիկ մի քանի օր է, որ ելած ենք տեղս: Քո մասին գրած ենք Մեծ քաղաք: Գրաբերին վստահիր: Տիգրանը մեզ մոտ է: Աղբյուր և Գուրգեն: Բարձրավանդակ, 16 դեկտեմբերի»: Վերջապե՛ս: Տիգրանը և Գուրգենը, երկուսն էլ անվեհեր ռազմավարներ, իր նման ճանաչված անուններ էին հայդուկային լեռնաշխարհում: Սաքոն ցեղապետ Սլոյի օգնությամբ թուղթ ճարեց, պատասխանեց նամակին: Հետո նույն գրաբերի միջոցով նոր նամակներ ստացավ Անդրանիկից, Հրայրից և Սերոբից: Նրանք պատմում էին վերջին դեպքերի մասին, իրազեկ դարձնում առաջիկա գործողություններին, խորհրդակցում իրենց անելիքների շուրջը: Վատ լուրեր կային: Առաջվա պես շարունակվում էր Անդրանիկի, Աղբյուրի և Մակարի անհամերաշխությունը: Դժոխք Հրայրը, ինչ-որ բանից ներաշված, այդ օրերին պահպանողական դիրք էր բռնել և փորձում էր նամակներով Սաքոյին ապացուցել իր իրավացիությունը: Նա մեծ հեղինակություն էր հայդուկային աշխարհում, նա շատ բան կարող էր անել, և Սաքոն պատասխան նամակներով խնդրում, համոզում էր վերադառնալ ակտիվ ֆիդայական գործունեության:

Սաքոն Մեհմեդ չաուշի մասին նամակով հարցում էր անել Բարձրավանդակ, բայց սպառիչ պատասխան չէր ստացել, ռուտիկանական այդ հավատափոխ պաշտոնյայի ով լինելը նրա համար մնում էր առեղծված: Հետո՛, շատ հետո՛ պիտի իմա-

թվայնացրել է 1915.info կայքը

ևար, որ Մեհմեդ չաուշը նույն ինքը՝ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ Ավետիս Մարտիկյանն է: Սարգիսը մտածում էր Մարոյի մասին: Գիտեր, որ նա ամեն ինչ մոռացած՝ զբաղվում է միայն իր գործով: Որտե՞ղ է հիմա:

* * *

Հազարամյա ձյուներով բիբլիական լեռը շքեղ հրավառվում էր լուսաբացի մեջ: Արևի ցոլքերը եղնիկների պես վազում էին նրա արծաթե լանջերով, խմբվում կիրճերում, ցրիվ գալիս դեպի մանր ձորակների սոխակաձայն աղբյուրները: Լեռն ասես ամեն գիշեր նորից է ծնվում՝ առավել վեհ ու առավել գեղեցիկ,— խորհում էր վեհափառը ծանր թախծի միջից: Դու հավերժական ես, լեռ, քո շքեղությամբ դու միշտ մնալու ես աշխարհում: Բայց ովքե՞ր են հիանալու քեզնով հազար տարի հետո, ո՞ւր է մնալու այն ժողովուրդը, որ արարչական ժամանակներում խմբվեց քո շուրջը և քո մեջ տեսավ իր գոյության հրաշալի առասպելը...

Տաճկահայաստանից ստացվող լուրերը խոր տխրությամբ էին համակել Ամենայն հայոց կաթողիկոսին: Աղետավոր երկիրը ծածկվեց նահատակների շիրիմներով, ի՞նչ է լինելու վերջը: Նահատակվելով վեհանում են ու սրբանում, բայց չեն հաղթում: Թուրքիան այն երկիրը չէ, որտեղ հերոսական մահը կարող է հատուցվել ապրելու վսեմ իրավունքով: Վարդապետին մորթել են զոհասեղանի վրա և սուրբ գրքերի հետ այրել: Քանդել ու պղծել են մեռած հոգևորականների շիրիմները: Պատարագի ժամանակ փակել են դռներն ու վանքը հրդեհել: Մահ է ամեն տեղ, դավ, արյուն...

Դուռը կամացուկ բացվեց: Հայրապետը շրջվեց պատուհանից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Վեհափառ, Թիֆլիսից եկած մի օրիորդ տեսակցություն է խնդրում:

— Ի՞նչ է ուզում:

— Չգիտեմ, ինձ չի ասում:

— Թող ներս գա:

Մարոն համբուրեց վեհափառի աջը, նրա անխոս ցուցումով նստեց բազմոցին:

— Ո՞վ ես, զավակս, քեզ ի՞նչն է բերել այստեղ:

— Վեհափառ, ինձ Ձեզ մոտ է բերել հայ քրիստոնյաներից մեկի ճակատագիրը:

— Ո՞վ է, ի՞նչ աղետ է սպառնում նրան:

— Իմ նշանածն է, Վեհափառ: Թուրքական դատարանի անիրավ մեղադրանքով փակված է Մուշի Մեթերհեմ բանտում: Նրան, առանց որևէ հիմքի, դատապարտել են 101 տարվա ազատազրկման:

Կաթողիկոսը շտկվեց տեղում, ճակատի կնճիռները խտացան:

— Ինչպե՞ս է ընկել Մուշ...

— Ուխտի է գնացել սուրբ Կարապետ, բայց տեղ չհասած՝ ձերբակալել են և տարել Մուշ: Ամիսներ շարունակ ստիպում էին խոստովանել, թե ինքը հայդուկային շարժման գործիչ է և Թուրքիա է անցել հատուկ հանձնարարությամբ:

Կաթողիկոսի դեմքն ավելի լարվեց:

— Իսկ դա հեռո՞ւ է ճշմարտությունից...

Մարոն կախեց գլուխը: Վեհափառին բացեիբաց ասե՞լ ամեն ինչ: Բայց նա կարող է հրաժարվել քաղաքականության հետ առնչվելուց:

— Նրանք ոչ մի ապացույց չունեն, առաջնորդվում են կույր ենթադրությամբ և այն փաստով, որ մեղադրվողը չի ունեցել սահմանային անցաթուղթ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նրանք ապացույց չունեն, իսկ դո՞ւք: Չէ՞ որ սուրբ Էջմիածինն էլ կարող էր ընդունել նրա հավատավոր հոգու շշուկը, ի՞նչ կարիք կար թուրքական սահմանի վրայով մղվել դեպի ուրիշ սրբավայր, մանավանդ՝ առանց անցաթղթի:

Մարոն կարմրեց: Ոչ, հարկավոր է վեհափառին ասել ճշմարիտը, նա մեծ ազգասեր է, չի կարող անտարբեր մնալ:

— Այդ ուխտավորը զինատար հայդուկ է, ազատագրական շարժման գործիչ: Սուրբ Կարապետում անելիք չուներ, պիտի բարձրանար Սասուն՝ հանդիպելու Անդրանիկին և մյուս հայդուկապետերին, փորձեր Թիֆլիսի խնդրանքով և իր անձնական մտերմությամբ հաշտեցնել այդ հզոր մարդկանց...

— Ինչպե՞ս է նրա անունը:

— Սարգիս Ծովանյան, կամ՝ Սևքարեցի Սաքո: Ժամանակին աբեղա է եղել Ստեփանոս Նախավկայի և Դերիկի վանքերում...

— Սպասիր, սպասիր...— հայրապետը փորձում էր ինչ-որ բան հիշել: Սևքարեցի Սաքո: Իր ականջին հնչել է այդ անունը: Ե՞րբ, որտե՞ղ: Ծպտյալ աբեղա, Դերիկի վանք: Հիշեց, Բագրատ Վարդապետ Թավաքալյանն է ասել: Այն ժամանակ, երբ նա սխալմամբ հետ էր կանչվել Մայր աթոռ: Սխալը պարզվեց, բայց շատ ուշ էր ուղղելու համար: Բագրատ Թավաքալյանն ասաց.

— Այս պահին վանքի ճակատագիրը տնօրինում է աբեղայի զգեստով մի ջահել հայդուկ: Սևքարեցի Սաքոն: Ծուրջը թուրք ու քուրդ անթիվ վտանգներ՝ թողել եմ ու եկել...

Հետո վեհափառին հաղորդեցին Դերիկի վանքի հերոսական կռվի պատմությունը: Այդ կռիվը ղեկավարել էր Սևքարեցի Սաքոն:

— Ես լսել եմ քո նշանածի մասին, աղջիկս: Ուրեմն նա ձերբակալվա՞ծ է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո, վեհափառ, և դատապարտված 101 տարվա բանտարկության:

— Ի՞նչ կարող ենք անել նրա համար:

— Կարող եք դիմել Պոլսի պատրիարքարանին, պահանջել, որ նա միջնորդի կառավարությանը՝ վերաքննելու Մարգիս Ծովականյանի գործը: Կալանավորը ռուսահպատակ է, մեր իշխանությունը իրավունք ունի և պարտավոր է հետաքրքրվել նրա ապօրինի դատավարությամբ: Գանձակի նահանգապետն ինձ խոստացել է օգնել: Բայց Մայր աթոռի դիմումը, կարծում եմ, ավելի անմիջական կլինի:

— Տա աստված՝ այդպես լինի: Մայր աթոռը կներկայացնի իր պահանջը, զավակս: Սակայն դրանով մի հանգստացիր, շարունակիր բախել իշխանության դռները:

— Ընորհակալ եմ, Վեհափառ...

— Իսկ երբ քո ուխտավորն ազատվի Մուշի Մեթերհեմ բանտից, վերադառնա հայրենիք, թող գա ինձ մոտ: Ես ուզում եմ տեսնել իմ վանքի երբեմնի աբեղային:

— Կգա, կհամբուրի ձեր ձեռքը և իր մարդկային երախտագիտությունը կհայտնի ձեզ:

— Գնա խաղաղությամբ, զավակս:

* * *

Արջաձորի կաղնիների վրա երկինքը ջարդուփշուր էր լինում: Թնդում էր, ճչում-ճարճատում, վայրի մոլուցքով կայծակներ թափում հին ծառերի վրա:

— Մեկն էլ ինձ ուղարկիր՝ պրծնեմ էս կյանքից, իբր սա էլ ապրե՞լ է, որ ես ապրում եմ:

Ռաճչպար Սարիբեկը նստել էր դաշտի եզրին, շառաչող անձրևի տակ, նայում էր ակոսում ջղաձգվող եզանը: Լուծը հա-

թվայնացրել է 1915.info կայքը

Ընկել էր վզից, որ անասունն ազատ սատկի: Միջնակի մեհավոր տանձենու տակից Սարիբեկը տեսավ Մարալ եզան շանթահարվելը: Մսագործի անսխալ կացնի պես կայծակը մխրճվել էր եղջյուրների արանքը: Եզը չոքեց, մզզալով տարուբերեց շանթահար գլուխը, ճիգով երկինք նայեց ու կողքի ընկավ ակոսում: Սարիբեկը վազեց՝ գոտուց արձակելով ոսկրե կոթով ինքնաշեն դանակը: Ոչ, եզն ախպեր է, եզան միսը չեն ուտի: Մարալի ոռնգերից սև, գոլորշի արձակող արյուն հորդեց: Վերջ: Եզն իրենը չէր, հարևանինն էր: Իր խեղճուկրակ մի կենտ եզը կայծակի հուոից շշմած՝ լուծն ուսին դեռ օրորվում է ակոսում կանգնած: Սա էլ չսատկի՞: Հարևանն իր սարաչափ Մարալի տեղ կընդունի՞ այս խեղճ ոսկրակույտը: Չի ընդունի: Ի՞նչ եմ անելու, տեր աստված, իբր դարդուցավս քիչ էր, հիմա էլ էս փորձանքը: Մարդու տեղն էլ այսքան նեղ լինի՞...

Անձրևը ծեծում էր Սևքարի տափակ կտուրները. ո՞վ էր քնած, որ ուզում էր արթնացնել:

— Կայծակը Մարալին խփեց, Հակոբ:

Անձրևաջուրը շորերից ծլլալով՝ Սարիբեկը վիզը ծուռ կանգնել էր հարևանի շեմին: Հակոբը մռայլ ու դաժան նայում էր հարևանին:

— Գոնե բուկը ծակեցի՞ր:

— Չէ, եզն ախպեր է, եզան միսը չեն ուտի: Իմ կենտ եզը մի սայլ խոտի հետ քեզ տամ, Մարալի կաշին էլ հանեմ տամ, պրծնենք...

— Չէ, չի լինի: Քո կենտ եզը, մի սայլ խոտը, Մարալի կաշին ծախիր, գնա Ղազախի շուկայից Մարալի չափ մի եզ առ, բեր:

Անձրևը հուժկու ծեծում էր Սևքարի տափակ կտուրները: Երևի դառն աշխարհի քնած խիղճն էր ուզում արթնացնել: Կես-

թվայնացրել է 1915.info կայքը

գիշերին Առաքելը վերադարձավ Թիֆլիսից: Հուսադրող լուր էր բերել:

— Մարոն գնացել է Վաղարշապատ, հանդիպել Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին: Պատմել է ամեն ինչ, վեհափառը լսած է եղել Սաքոյի մասին: Խոստացել է Պոլսի պատրիարքարանի միջոցով պահանջել, որ Սաքոյի դատը վերանայվի:

— Հետո՞,— Սարիբեկը չէր ուրախանում:

— Ի՞նչ հետո, հայր:

— Ասենք, դատը վերանայվեց ու արտացավ եղան, պատիժը կիսեցին: Հիսուն տարի պետք է նստի՞ Մուշի բանտում:

— Եթե վերանայեցին ու արտացավ եղան, նրա դեմ հարուցված մեղադրանքը սուտ կհամարեն, կազատեն բանտից:

— Հետո էլ ներողություն կխնդրեն, որ մի տարի անմեղ տեղը պահել են բանտում: Ո՜նց չէ: Ախր նա մեր գյուղի մատուռի տեղը կարգին չգիտե, այդ ե՞րբ էր հավատացյալ դարձել, ի՞նչ ուխտի էր գնում Թուրքիա:

— Դա արբազան ուխտ է, հայր: Չէ՞ որ շատ ենք խոսել այդ մասին:

— Հերիք է, Սարիբեկ,— չհամբերեց կինը,— իբր նրա տեղը քիչ է նեղ, դու էլ այսպես հեռվից հեռու ես քարկոծում: Ի՞նչ ես ուզում: Նա մեղավոր է՞, որ Հակոբի եզան գլխին կայծակը խփել է: Մեր ամեն անհաջողությունը Սաքոյի հետ մի կապիր:

— Նրա տեղը նեղ է, իմը լե՜ն, լեն: Այստեղ կլիներ, մի ցավի մասին էլ ինքը կմտածեր: Հակոբի տղայի պես մի խանութ էլ ինքը կբացեր Ղազախում, կիրակի օրերը կառքը բարձած կգար, ընկերներին առած կգար Արջաձորում տնով-տեղով քեֆ կաներ: Մենք էլ մարդ ենք, մեր ապրածից մի բան կհասկանայինք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հայր, Սաքոյին մի համեմատիր շուկայի այդ լպիրշ խաբեբայի հետ: Սաքոն մեծ մարդ է և մեծ գործ է անում: Դու պետք է հպարտանաս, որ այդպիսի զավակ ունես, քեզ շատերն են երանի տալիս:

Հայրական հպարտությունը, ինչպես միշտ էր լինում նման խոսակցությունների ժամանակ, հաղթանակեց մյուս բոլոր զգացումներին:

— Տեր Ղևոնդն էլ է այդպես ասում, ուսուցիչ Մուշեղ Գևորգյանն էլ է այդպես ասում, Բաքվի նավթահորերում կյանքըն անցկացրած Հարությունն էլ է այդպես ասում: Հպարտանում եմ, ո՛վ ասաց չեմ հպարտանում: Բայց որ տեղս նեղ է, ընտանիքս մեծ է ու քեզնից բացի օգնող չունեմ...

— Ոչինչ, կապրենք: Թող Սաքոն բանտից ազատվի, այս կենտ եզն էլ ես եմ մորթելու: Հակոբը Մարալի համար ինչքա՞ն փող է ուզում:

— Փող չի ուզում, Մարալի պես եզ է ուզում:

— Թող տղային Ղազախի շուկայից կանչի, նրանից հարմարը դժվար թե գտնվի: Վաղը ես նրա բերանը կփակեմ, դու գործ չունես:

— Չէ, Առաքել, ես այդ պայմանով չեմ Մարալ եզը վարի տարել: Դու գործ չունես մեր հաշիվների հետ: Իսկ Մարոն չասա՞ց, թե Սաքոյի դատի վերանայումը մոտավորապես երբ կլինի:

— Չգիտեմ, հայր, երկու օր հետո գալու է այստեղ, իրենից կհարցնես,— Առաքելը հոգնած էր:

... Երկու օր հետո Մարոն եկավ Սևքար: Սաքոյի բանտարկության ընթացքում մի քանի անգամ այցելել էր նրա հարազատներին, հուսադրել, թե ամեն ինչ լավ կլինի, հայտնել էր, որ մի շարք հեղինակավոր մարդիկ զբաղվում են Սաքոյի ազատման հարցով: Մարոյի այցելությամբ կարիքի մեջ թաղված

թվայնացրել է 1915.info կայքը

բազմանդամ տունը լցվում էր հավատով ու ուրախությունով: Գնալուց հետո նրա կաշվե բաճկոնի, նուրբ օծանելիքի հաճելի բույրը մի քանի օր մնում էր տան մեջ: Սարիբեկը դրան քաղաքի հոտ էր ասում: Այս անգամ էլ ներս մտավ ասել-խոսելով, ուրախ բառերի ծափ ու ծիծաղով, ողջագուրվեց բոլորի հետ, ասաց՝ քիչ է մնացել, շուտով Սաքոն կազատվի-կգա և ընտանիքի ապրած բազում դառն օրերը կհատուցվեն երջանկությամբ:

— Առաքել, ես պետք է հանդիպեմ գյուղի առաջադեմ մարդկանց: Սևքարն իր բոլոր հասուն բնակիչներով պետք է նամակ գրի Կովկասի փոխարքային: Նամակի տեքստը կա, մնում է, որ մարդիկ այն համարեն իրենց խոսքն ու կարծիքը և ստորագրեն, և գյուղապետը պաշտոնապես հաստատի նրանց ստորագրությունները:

— Այստեղ ոմանք նույնիսկ պատկերացում չունեն, թե Սաքոն ինչ գործ կարող էր ունենալ Տաճկահայաստանում և ինչ հանցանքի համար կլինի թուրքական դատարանի կողմից դատապարտված:

— Կբացատրենք, կիմանան: Գնանք քահանայի տուն:

Տեր Ղևոնդը ճանապարհ էր Մարոյին, ինչ-որ բան գիտեր նրա գործունեության մասին, և ի սկզբանե հարգանքով էր համակվել այդ գեղեցիկ ու կրակոտ աղջկա նկատմամբ: Սիրով տուն հրավիրեց հյուրերին, երեցկնոջն աչքունքով հասկացրեց սեղան գցել:

— Շնորհակալ ենք, տեր հայր, օջախիդ հացն անպակաս լինի, մենք շտապ ու կարևոր գործով ենք եկել քեզ մոտ:

— Ի՞նչ գործով, աղջիկս, պատրաստ եմ կատարելու քո ամեն խոսքը:

Մարոն բացատրեց գործի էությունը, ասաց, որ այդ նամակին սպասում են մի կարևոր պաշտոնավայրում և Սաքոյի հա-

թվայնացրել է 1915.info կայքը

մագյուղացիների միջնորդություն-խնդրանքը կարող է նրա համար բախտորոշ դեր խաղալ:

— Հենց հիմա նստենք ու գրենք,— ոգևորվեց տեր Դևոնդը:

— Գրված է: Մնում է հավաքվել, կարդալ ու ստորագրել:

Երեկոյան ժամասացության ընթացքում անխղճորեն քիչ ուշադրություն հատկացվեց աստծո և նրա օրենքների երկրպագմանը: Քահանան հավատացյալներին պատմեց Սաքոյի «ուխտագնացության» և թյուրիմացաբար բանտարկվելու մասին, ասաց, որ թուրքերը նրան բանտ են նստեցրել նախ և առաջ հայ քրիստոնյայի նկատմամբ ունեցած ատելության թելադրանքով, առաջարկեց նամակ գրել ռուսական իշխանությանը՝ իր միջնորդությամբ դաժան բանտից ազատելու քրիստոնյա հպատակին: Գյուղը, իհարկե, անտեղյակ չէր Սաքոյի հետ կատարվածին: Ով ճիշտ հանգամանքը գիտեր՝ հպարտությամբ, ով քահանայի ասածի չափ՝ խղճալով ու ափսոսանքով, պատրաստ էին ստորագրելու նամակը: Ուսուցիչ Մուշեղ Գևորգյանը կարդաց այն: «Գանձակի նահանգի Սևքար գյուղի բնակիչներս խիստ անհանգստացած ենք մեր համագյուղացի Սարգիս Ծովանյանի ճակատագրով, որը...»: Շարադրված էին նրա անմեղ ուխտագնացության և ձերբակալվելու մանրամասները, քրիստոնեական զայրույթ էր արտահայտված ապօրինի դատավարության դեմ, վկայում էին, որ Ծովանյանը երբեք չի զբաղվել քաղաքական խառնակչությամբ: Նամակն ավարտվում էր խընդրանքով ու հավատով, որ ռուսական իշխանությունը տեր կկանգնի Մուշի բանտում տանջահարվող իր անմեղ հպատակին: Տառաճանաչներն ստորագրեցին, անգրագետները խաչ դրեցին կամ բութ մատի կնիքը, և գյուղապետի կողմից հաստատված նամակը հանձնվեց Թիֆլիսից եկած աղջկան:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ Մարոն վերադառնում էր Թիֆլիս: Դարձյալ ի՞նչ կարող էր անել նրա փրկության համար: Գնդապետ Գեորգի Ղարաքեշիշյանը մի քանի օր առաջ ասաց.

— Թուրքական բանտում նրա կյանքն ամեն պահ վտանգի տակ է: Օրենքի իշխանավորները, նախազգալով, որ Ծովանյանի հարցում իրենց խոփը քարի է դեմ առնում, պարտված չճանաչվելու, սեփական կառավարության աչքից չընկնելու համար հարցը կվճռեն առանց քաղաքական քաշքշուկների, առանց դատ ու դատաստանի՝ ուշ գիշերին մի վարձու ստահակի նետելով նրա բանտախուցը: Նման բանտերում կալանավորների մեջ հաճախ են արյունալի կռիվներ լինում, ոչ ոք չի զարմանա, որ այդպիսի մի բախում լինի նաև Ծովանյանի բանտախցում:

Գնդապետին նույնիսկ մտահոգում էր այն, որ մինչև այժմ նման փորձ չի արվել.

— Նշանակում է, նրանք մեղադրական փաստ են հայտնաբերել և վստահ են, որ կհաղթեն նոր դատավարության ժամանակ: Համենայնդեպս,— ասում էր նա,— պետք է արագ արվի ամեն ինչ:

Մարոյի մեկ ուրիշ ազգակից, դարձյալ Գեորգի Ղարաքեշիշյան անուն-ազգանունով, որը Միջին Ասիայում դարձել էր Գեորգ Կարաքեշիշով, նամակ էր գրել, թե ատլասի թոփերը պատրաստ են, կարող են գալ տանել: Նա մեծ վաճառատուն ուներ Տաշքենդում, բազմիցս կլորիկ գումարներ էր հատկացրել ազատագրական շարժման նպատակին և մեկ տարի առաջ, Թիֆլիս գալով, խոստացել էր իր հաշվին մի քանի տասնյակ հրացաններ հայթայթել:

— Պայմանով,— ասել էր,— որ բեռն ինձնից ընդունեք Տաշքենդում, ես վատառողջ մարդ եմ, չեմ կարող այստեղ հասցնել: Եվ ահա նամակ է գրել՝ ատլասի թոփերը պատրաստ են: Ձենքը

թվայնացրել է 1915.info կայքը

Ցաշքենդից անապատներով պետք է տեղափոխվի Աստրախան, այնտեղից ծովով՝ Բաքու: Անհայտ վտանգներով անծանոթ վայրեր. ինչպե՞ս պիտի իրականացվեր ծրագիրը: Վերջերս Թիֆլիս տեղափոխված բաքվեցի Սարգիս Կարոյանը խոստացավ մի ընկերոջ հետ մեկնել Բաքու, նավային ընկերությունում ծառայող բարեկամի միջոցով ապահովել զենքն Աստրախանից տեղափոխելու հարցը: Իսկ մինչ ա՞յդ: Իրենցից ոչ ոք չէր անցել միջինասիական անապատով և պատկերացում չուներ նման ճամփորդության դժվարությունների մասին: Մեկը Մարոն էր լինելու, իսկ մյուսը կամ մյուսնե՞րը:

— Ես կգնամ Մարոյի հետ,— ասաց Գրիգորը: Ուրիշ արձագանքողներ չեղան:

— Կգնանք երկուսով,— վճռեց Մարոն:— Կգնանք որպես վաճառատան ներկայացուցիչներ, որոնց հանձնարարված է Ցաշքենդից ապրանք ստանալ, տեղափոխել Թիֆլիս: Ես երկու օրով մեկնում եմ Սևքար, հոգացեք տոմսերի ու փաստաթղթերի մասին, մինչև վերադառնամ:

Գնդապետը խորհուրդ էր տալիս համարձակության չդիմել:

— Անհնար է այդպիսի բեռով կտրել-անցնել ամբողջ մղձավանջային անապատը և կործանարար վտանգի չենթարկվել: Արժե՞ մի քանի հրացանի համար սպանվել կամ ընկնել միջինասիական բանտերը:

Մարոն չընդունեց գնդապետի խորհուրդը: Նախ՝ հրացանները մի քանիսը չէին, և երկրորդը, որ ավելի կարևոր էր. Մարոն հույս ուներ Միջին Ասիայում ապահովել զենքի հայթայթման նոր աղբյուր, ուղիներ գտնել Աստրախան հասցնելու համար: Տուլայից, Ռյազանից և Ռուսաստանի մյուս քաղաքներից զենքի տեղափոխումը օրեցօր դժվարանում էր, կայարաններում և գնացքներում ոստիկանությունը հատուկ վերաբերմունք էր

թվայնացրել է 1915.info կայքը

ցուցաբերում իրերով ճամփորդող հայերի նկատմամբ: Թիֆլիսի կայազորի զինապահեստը առատության եղջյուր չէր, վաղ թե ուշ նրա դռները փակվելու էին իրենց առաջ: Եվ գտնում էր, որ տաշքենդյան առիթը չպետք է ձեռքից բաց թողնել՝ անկախ վտանգի չափից ու բնույթից: Վաղը, հենց վաղը պետք է ճանապարհվել:

— Մեկնում եմ Տաշքենդ, մեր ազգականին տեսության,— ասաց հորը:

— Դու նրան երբևէ չես կարոտել, զգացմունքի այդ ի՞նչ պոռթկում է...

— Անհրաժեշտ է, հայրիկ:

* * *

Մերերհեմի վրա հարձակում եղավ: Գիշերվա ամենալուր պահին, երբ խաղաղ էր նույնիսկ Մըհե չաուշի տանջարանը, ինչ-որ ստվերներ խուխվ կրակոցներով ներխուժեցին միջանցք: Սակայն ճանդիպեցին զինված հսկիչների ուժեղ դիմադրությանը, կրակոցներ լսեցին թիկունքից՝ ոստիկանատան գիշերապահներն էին, և երկուսի արանքում չկոտորվելու համար նույն խուխվ կրակոցներով ցրվեցին, կորան գիշերվա մեջ: Քուրդ ցեղապետը ականջը պատին հպած ուշադիր լսում էր կրակոցները: Հետո ձիերի դոփյուններ լսվեցին և դրանք էլ հանգան գիշերվա խորքում: Ցեղապետը, փոքր-ինչ խաղաղված, փովեց խսիրին.

— Հինգ հոգով ուզում են Մերերհեմից կալանավոր փախցնել:

— Ի՞նչ իմացար՝ հինգ:

— Կրակոցների ձայնից: Հինգ ծանոթ հրացանի ձայն լսեցի:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու ամեն ինչ ձայնո՞վ ես որոշում, ցեղապետ...

— Ո՛չ ամեն ինչ, բայց կարող եմ դռփյունի ձայնով ճանաչել ձիուն, խավարից լսվող հնոցով՝ շանը, կրակի ճարճատյունով՝ այրվող ծառի տեսակը: Հարձակվողներն իմ տղաներն էին: Տաքգլուխ շան որդիներ:

Հսկիչ ասկյարներից երկուսը հրաժեշտ էին տվել այս ին ու դատարկ աշխարհին: Բերանները կիսաբաց, ժանգոտ ատամներն ու բութ հայացքները երկնքին հառած, կողք կողքի մեկնվել էին մուտքի աստիճաններին: Քիչ հետո Մեթերհեմը լցվեց ոստիկաններով ու ասկյարներով, սկսվեց վայրի ծեծով ուղեկցվող ընդհանուր հարցաքննություն: Կալանավորներին չէին տանում, իրենք էին խուժում բանտախցերը: Հարցը մեկն էր՝ ովքե՞ր էին, ո՞ւմ էին ուզում փախցնել:

— Ովքե՞ր էին:— Բաց դռան շեմին կանգնած՝ որոտալի ձայնով շարտեց հազարապետը:

— Եթե մի քիչ շուտ գայիք, դա կարող էիք իմանալ իրենցից:

— Պատիվդ պահիր, ցեղապետ...

— Պատիվս տեղն է: Ոչ ես, ոչ էլ այս հայը որևէ տեղեկություն չունենք կատարվածից, միայն կրակոցներ ենք լսել:

101 տարով դատապարտված ցեղապետ Սլոն անձեռնմխելի էր, այստեղ նրա խաղաղ ու ապահով կեցության համար կաշառք էին ստանում հենց իրենք՝ քաղաքի դատախազն ու ոստիկանապետ Իգիթը:

Դուռը շրխկոցով փակվեց: Վաղ առավոտյան Սևքարեցի Սաքոյին բանտի սև կառքով հարցաքննության տարան դատախազի մոտ: Առաջին դատավարությունից հետո դատախազը դեռևս ոչ մի անգամ չէր կանչել նրան: Քաղաքի օրինապահի առանձնասենյակում կալանավորին ընդունեց անծանոթ մի թուրք՝ պաշտոնյա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրեմն դո՞ւք եք քաղաքական հանցանքում մեղադրվող Ծովականյանը: Ծանոթանանք: Ես Կարին հյուպատոսական քաղաքի գլխավոր գինվորական քննիչն եմ, հազարապետ Սուլեյման փաշան: Իմ բարեկամ ռուսական հյուպատոսն ինձ խնդրեց է զբաղվել ձեր գործով: Ճիշտ եք արել, որ բողոքարկել եք դատարանի վճիռը: Հարյուր մե՛կ տարի: Երբ գրեթե հանցանք չունեք:

— Ես բողոքարկել եմ ոչ թե պատժաչափի, այլ ինձ հանցագործ ճանաչելու համար: Ես օրինականություն եմ պահանջում, փաշա:

— Ճիշտ եք արել:— Դժվար էր իմանալ, թե ինչ է թաքնըված ճաղատ գլխով ու դուրս մղված ծնոտով այդ մարդու մոխրագույն աչքերի խորքում:— Ես հյուպատոսին խոստացել եմ ամեն գնով պաշտպանել ձեր իրավունքները: Դրա համար դուք պետք է օգնեք ինձ, կալանավոր, ես պետք է ամեն ինչ իմանամ:

Սարգիսն ուզում էր ասել՝ այդ երգն էլ է վաղուց երգված, սակայն որոշեց առայժմ համբերել:

— Իմ դատական գործը ձեր սեղանին է, փաշա, կարող եք ծանոթանալ:

— Նկատի ունեք այս մանկական թղթաբարությո՞ւնը,— արհամարհանքով մի կողմ հրեց կաշվե դեղին ծրարը:— Այստեղ ոչինչ չի ասված: Չի ճշտված ամենակարևորը՝ ձեր ազգանունը:

— Իմ անձը ներկայացնող բոլոր տվյալները վաղուց ճըշտված են Գանձակի ճահանգապետի պաշտոնական պատասխանով:

— Գանձակի ճահանգապետը ձեզ անձամբ չի ճանաչում: Հնարավոր է կա Սարգիս Ծովականյան ազգանունով մեկը, որը, սակայն, այստեղ չէ, այլ Թիֆլիսում: Իսկ ճա, ով ներկայա-

թվայնացրել է 1915.info կայքը

նում է նրա փոխարեն, ոչ թե Սարգիս Ծովանյան է, այլ՝ Սարգիս Կուկունյան:

Սաքոն չկարողացավ զսպել ծիծաղը:

— Ամբողջ Ռուսաստանը գիտե, որ Սարգիս Կուկունյանը սահմանն անցնելիս ձերբակալվել է և աքսորվել Հեռավոր Արևելք:

— Եվ ամբողջ Թուրքիան գիտե, որ նա փախել է աքսորավայրից՝ երդվելով ամեն գնով անցնել Արևմտահայաստան, միանալ ֆիդայական պայքարին:

Փախուստի մասին առաջին անգամ էր լսում: Փորձեց չմատնել հոգին ողողած ուրախությունը:

— Վկա է աստված, որ ես Սարգիս Կուկունյանը չեմ, ես ուխտավոր եմ...

— Ափսոս, ձեզ ազատելն անհամեմատ հեշտ կլիներ: Իսկ այս հիմար թղթարարությանը չէի՞ք կամենա նոր բան ավելացնել: Որևէ անկեղծ խոստովանություն, որն օգներ ինձ գոնե փոխելու պատժաչափը:

— Ամեն ինչ վաղուց ասված է, փաշա:

— Դարձյալ ափսոս: Ինչ արած, շարունակեք պահանջել ռուսական հյուպատոսին:

— Ես այդ բանն անում էի նաև առանց ձեր խորհրդի:

Սև կառքը դղրդալով կրկին վերադառնում է Մեթերնեմ: Ցեղապետը Սաքոյին դիմավորում է ուրախ տրամադրությամբ:

— Մաղարիչ խոստացիր, շեյթան:

— Ի՞նչ կա:

— Նամակ: Եվ ոչ թե մեկը, այլ երկուսը:— Ցեղապետը ծոցից հանում է ճմռթված թղթի երկու կտոր. ճերմակ և գորշ: Ճերմակը Մարոյից է: Գրում է, որ շուտով ամեն ինչ լավ կլինի, ոգեշնչող բաներ է հաղորդում բանաստեղծ Թումանյանից: Գորշ թղթակտորի վրա Սաքոն ճանաչում է Անդրանիկի խոշոր

թվայնացրել է 1915.info կայքը

տառերը: «Սիրելի Անմեղ, էլի դիմացիր: Մտածում ենք քո մասին: Մեծ երկրում էլ են մտածում: Բոլորս բարևում ենք: Բարձրավանդակ»:

— Նաև տխուր լուր ունեմ հայտնելու,— ասաց ցեղապետ Սլոն:— Միջանցքում հավաքվող բաշիբոզուկների մեջ հայտնվել է քո հին բարեկամ Շարաֆի քրդերից մեկը: Եթե նա մասնակցել է Դերիկի վանքի կռվին, ապա կարող է ճանաչել քեզ:

— Դա ինձ չի վախեցնում, ցեղապետ: Հինգ տարի է անցել, դեմքս կորել է մազմորուքի մեջ: Ճանաչի էլ՝ ոչինչ չի կարող ապացուցել:

— Կապացուցի, զգույշ եղիր:

Մի քանի օր հետո, երբ տանում էին ոստիկանապետի մոտ հարցաքննության, միջանցքում երես առ երես հանդիպեց Շարաֆի քրդին: Հետո՛ իմացավ, որ նա է, Մուրադն ասաց: Քուրդը չճանաչեց Սաքոյին:

Հարցաքննություն չէր: Ոստիկանապետը կանչել էր պաշտոնապես հայտնելու Բ դռանը հասցեագրած նրա բողոքի պատասխանը: Հասկացավ, թե ինչի մասին է խոսքը: Ինքը որևէ բողոք չէր գրել, սակայն ամիսներ առաջ անստորագիր մի երկտող նրան հայտնել էր, որ իրեն Մըհեր չաուշի զինանում ֆիզիկական սարսափ պատճառելու, իրավաբանորեն անընդունելի ազդամիջոցներով բարոյապես ճնշելու համար Դավրիշ օնբաշու դեմ բողոք է հղված Բ դռանը: Ենթադրում էր, որ դա Էրզախ կոմիսարի գործն է:

— Դուք կարող էիք դիմել նաև մեզ, օնբաշին այստեղ էլ իր պատիժը կստանար:

Վերադարձին միջանցքում կրկին հանդիպեց Շարաֆի քրդին: Եվ ինքը հիշեց նրան: Այդ շունն էր, որ բարձրացել էր ժայռին և տիրոջ անունից հրամայում էր անձնատուր լինել:

թվայնացրել է 1915.info կայքը

Դերիկի վանքի կոիվը... Սաքոն բերանքսիվայր փռվել էր խսէրին և փակ աչքերի առաջ զարմանալի պայծառությամբ ղողանջում էին այդ հերոսական օրվա բոլոր դրվագները:

* * *

...Վանի կուսակալ Բահրի փաշան Առաուլի ցեղապետին ընդունեց չափազանց սառն ու չոր, նրա ողջույնին պատասխանելով գլխի հազիվ նկատելի շարժումով: Վիրավորանքի՞ց, թե անորոշ վախից, Շարաֆի մարմնով մրջյուններ վազեցին: Սակայն բնածին լկտիությամբ արհամարհեց իրադրությունը և առանց հրավերի ընկղմվեց փափուկ բազկաթոռի մեջ: Կուսակալը զայրալի հայացքով չափեց նրան ոտից գլուխ: Աչքերը մեխվեցին արծաթե պատյանով սրին:

— Ինչո՞ւ չես հանձնել, ինչո՞ւ ես ընդդիմացել հարյուրապետի հրամանին:

— Ես իմ իշխանության տակ մի քանի այդպիսի հարյուրապետներ ունեմ, փաշա: Իմ սուրն ինձ հետ է աշխարհ եկել, նա իմ մարմնի մասն է, հանձնել այն, նշանակում է՝ կտրել ու հանձնել իմ ձեռքը...

— Իսկ չհանձնել սուրը՝ այստեղի օրենքով նշանակում է հանձնել գլուխը: Ինչ վերաբերում է իշխանություն կոչվածին, ցեղապետ, դա բարձր ու քաղաքակիրթ հասկացողություն է, դու գործ չունես դրա հետ: Եվ օրինական բանակի ուսյալ հարյուրապետներին մի շփոթիր քո ձիագող բաշիբոզուկների հետ:

Արյունը ցեղապետի գլուխը խուժեց, ականջատակի սպին կարմրեց ու թրթռաց: Դավադրության հոտ առավ ու ձեռքն ակամայից մղվեց դեպի սուրը: Բայց հաջորդ պահին հասկացավ ներկա դրության մեջ իր ամբողջ անզորությունը, զսպեց

թվայնացրել է 1915.info կայքը

իրեն համակած փոթորիկը: Փորձեց խուսանավելով դուրս գալ իրավիճակից:

— Ես թուրքահպատակ չեմ, փաշա, և այս վիրավորանքներն այնքան էլ հասկանալի չեն ինձ: Չէ՞ որ Սալմաստից ես այստեղ եմ եկել ձեր խնդրանքով... Եկել եմ որպես բարեկամ:

— Դու վայրենորեն անդաստիարակ ես, ցեղապետ: Մի՞թե չգիտես, որ ես չեմ խնդրում: Ես հրամայում եմ: Իսկ բարեկամությունը, մանավանդ մեր խառը ժամանակներում, հավատարվում է արյան վրիժառությամբ, զենքի ու գաղափարի ծառայություններով:

Առաուլի ցեղապետը, զենք ու արյուն լսելով, շտկվեց բազկաթոռի մեջ:

— Իմ ամբողջ կյանքն այդպիսի գործերում է անցել, փաշա: Ե՞րբ է եղել, որ Շարաֆը սրախեղդ չանի իր բարեկամի թշնամուն, չվառի տունուտեղը...

— Գիտեմ: Այն էլ գիտեմ, թե առաջ ո՛ւմն է եղել քո սրաբական ճերմակախալ հովատակը, և ինչ հանգամանքներում է քոնը դարձել...

Կուսակալը չէր ուզում, որ ցեղապետը թոթափի վախն ու վիրավորանքը: Ճերմակախալ ձին չերքեզ օնբաշունն է եղել, Շեյթանի կիրճում միաչքանի Սմոն թիկունքից գնդակահարեց չերքեզին և ձին ընկեր բերեց իր ցեղապետին: Բայց կուսակալը որտեղի՞ց գիտե այս ամենը:

— Ովքե՞ր են Դերիկի դաշտում սպանել չորս թուրքահպատակ քրդերին:— Դաժան չորությամբ շարունակեց Բահրի փաշան:

— Ջանֆիդաները: Դրանից մեկ օր առաջ մերոնք սպանել էին երկու հայ ուխտավորի...

— Տխմար ես ու վախկոտ, ցեղապետ: Դու չգիտե՞ս, որ Դերիկի վանքում ուխտավորներ չկան, որ այդ վանքը ջանֆի-

թվայնացրել է 1915.info կայքը

դաների որջ է, զինանոց, որտեղից զենքը շեյթանի կածաններով փոխադրում են այստեղ՝ Վան: Գիտես, լավ գիտես, ցեղապետ, բայց քեզ տխմարի տեղ ես դնում: Քոնը ձիու կամ խաճչալի համար անմեղ ճամփորդ սպանելն է, քնած գյուղերը թալանելն ու վառելն է: Բարեկամ ես ներկայանում՝ երբ աչքիդ առաջ հրացան են լցնում բարեկամիդ վրա կրակելու համար, և չտեսնելու ես տալիս: Թալանչի քո ցեղը չի ընդունում ո՛չ պարսկական, ոչ էլ թուրքական իշխանություն: Երկուսի տարածքում էլ հավասար լկտիությամբ ասպատակում եք՝ երբևէ չմտածելով հատուցել ձեզ տրված այդ ազատության համար: Բարեկա՞մ: Ես արհամարհում եմ քո բարեկամությունը, ցեղապետ, և զգուշացնում եմ, որ քո ցեղից յուրաքանչյուրը, ով այսուհետև ոտք կդնի սահմանից այս կողմ, կճոճվի կախաղանի վրա:

Վերջապես Շարաֆը հասկացավ կուսակալի մոլեգնության պատճառը: Ոչ, պետք չէ զրկվել նրա բարեհաճությունից, առավել ևս՝ վաստակել այդ ահեղ մարդու ոխերիմ թշնամությունը: Նա վեր կացավ բազկաթոռից և ձեռքը կրծքին գլխահակ կանգնեց կուսակալի առաջ:

— Ներիր, փաշա, չեմ հասկացել: Մենք միշտ թշնամի ենք եղել այդ վանքի ու նրա բնակիչների հետ, բայց ուշադիր չենք հետևել, թե այնտեղ ինչ է կատարվում: Մի քանի օր ժամանակ տուր, և ես կապացուցեմ, որ արժանի եմ քեզ բարեկամ կոչվելու:

— Ցեղդ քանի՞ զինավոր ունի:

— Մոտ երեք հարյուր, փաշա:

— Քեզ կտրամադրվի նաև լավ զինված ասկյարների մի հարյուրակ: Հինգ օր հետո ամբողջ Թուրքիան և Պարսկաստանը պիտի իմանան Դերիկում հանգրվանած փիդայիների կոտորածի և վանքի ավերման լուրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Վաղ լուսաբացին ցեղապետ Շարաֆն իր թիկնազոր-հրոսակախմբի և թուրք զինջոկատի գլուխն անցած արդեն հասել էր Գարահիսար:

* * *

1893 թիվը ծանր կորուստներ, արյունոտ ողբերգություններ բերեց ֆիդայական կոիվներով բռնկված լեռնաշխարհին: Թուրքական բանտերը լցվել էին ազատագրական շարժման գործիչներով: Որոշ վայրերում հայերի ջարդեր էին եղել: Օրեցօր մոտենում էր համազգային ողբերգությունը՝ սև հեղեղի մեջ կլանելով դեպքեր ու դեմքեր, ամենուր սփռելով աղետալի լուրեր: Գյալի-Սորի ձորում հերոսաբար զոհվեց ֆիդայական վրեժի դրոշակակիր Արաբոն: Ջերբակալվեց և կախաղան հանվեց վարդենիսցի մոլեգին ֆիդայի Մարգար Ամրոյանը՝ Մարգար Վարժապետը, որի խոշտանգված աճյունն ամփոփվեց Բիթլիսի սուրբ Կարմրակ եկեղեցու բակում: Եղան ուրիշ-ուրիշ թանկագին զոհեր ու ցավալի իրադարձություններ: Քուրդ թալանչիների դեմ անհավասար կռվում ընկավ նաև Դերիկի վանքի կառավարիչ ղարաբաղցի Մովսես Իշխան հայրենասերը: Դերիկում՝ միջնադարյան ժամանակներից սեր ու հավատ զանգահարող այդ խաղաղիկ վանքում, դեռևս 1890 թվից կյանքի միօրինակ ընթացքն սկսեց ալեկոծվել աննախադեպ այցելություններով: Թե՛ Արաքսի մյուս ափից, թե՛ թուրքական սահմանի կողմից վանք էին գալիս Արևմտահայաստանում ծավալվող ազատագրական պայքարի գործիչներ՝ իրենց հետ բերելով նորանոր ուրիշ մարդկանց, և վանքի պարիսպները նրանց ներկայությունն ու զբաղմունքը միառժամանակ հուսալիորեն թաքցընում էին դրսի աչքերից: Դերիկի վանքը՝ հայտնի որպես Ջարեվանդ սուրբ Աստվածամոր մենաստան, նշանավոր ուխ-

թվայնացրել է 1915.info կայքը

տատեղի էր ամբողջ Ատրպատականում: Տարբեր վայրերից ուխտավորներ էին գալիս բուժվելու նրա հանքային տաք ջրերում: Գալիս էին գվիրատվություններով ու զոհաբերություններով, որոնք ամրապնդում էին վանքի տնտեսական վիճակը: Կիրակի և տոն օրերին մարդկանց հոսքը Դերիկ ապահովում էր ֆիդայական գործիչների ելումուտն այնտեղ: Ռուսահայաստանից սուրբ Նախավկայի և Դերիկի վանքերն էին տեղափոխվում գենք ու զինամթերք, որ զինատար խմբերն այնուհետև աճուղի դժվարությունների գնով հասցնում էին Վան: 1892 թվի մայիսին, երբ Նախավկայում զանազան պարտականություններ կատարելուց հետո Սարգիս Ծովանյանը որպես աբեղա հաստատվեց այստեղ, Ջարեվանդ Աստվածամոր մենաստանը կատարյալ զինանոց էր: Դուշման-Դարասի ձորում նրա կառավարիչ Մովսես իշխանը զոհվեց, սակայն մեծ հայրենասեր Բագրատ վարդապետ Թավաքալյանը կարողանում էր հմտորեն, քաջաբար ղեկավարել վանքի գործունեությունը: Այնպես ղեկավարել, որ այն միաժամանակ լիներ թե՛ սրբազան ուխտատեղի, թե՛ Արևմտահայաստան անցնող ֆիդայիների հավաքատեղի: Այստեղ էին Արաքսի մյուս ափից եկած կամավորները սրբազան երդում տալիս կյանքի ու մահվան պայքարի մղվելուց առաջ: Դերիկը ռազմակայան էր, ուր հաճախ էին միմյանց հանդիպում սեփական պատանքները մեջքներին կրող կատաղի ֆիդայիներ Շերոն ու Չաթոն, Ջալադն ու Փոխիկը, Սախոն ու Դարմանը, ուրիշ-ուրիշներ: Հեղափոխական ֆիդայիներն այստեղ շատ առիթներ էին ունենում գործի դնելու իրենց զենքերն ու մարտական ունակությունները. վանքի շուրջն անընդհատ թրև էին գալիս թալանչի քրդերի թափառախմբերը, հարձակվում էին անասնոցի վրա, սպանում ու թալանում ուխտավորներին: Նրանց հետ բախումները սովորական էին դարձել: Վանքի բարգավաճմանը զուգընթաց ավելանում էր ասպա-

թվայնացրել է 1915.info կայքը

տակիչների լկտիությունը, ստեղծվեց մի վիճակ, որ Դերիկի պաշտպանությունը դարձավ չափազանց լուրջ հարց: Որոշվեց լրացուցիչ կառուցումներով ամրապնդել վանքի պարիսպները: Այդ բանը չվրիպեց Սալմաստի կենտրոն Դիլմա քաղաքի թուրքական դիվանագիտության ներկայացուցչի ուշադրությունից, որը վաղուց ի վեր լրտեսների միջոցով հետևում էր վանքում կատարվող իրադարձություններին: Նա զեկուցագիր հղեց իր կառավարությանը՝ Դերիկի վանքը ներկայացնելով որպես Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ մշակող ֆիդայական շտաբ: Պարսկական խաղաղաբարո իշխանությունը չէր խառնվում վանքի գործերին: Նա գիտեր, որ Դերիկից իրեն որևէ վտանգ չի սպառնում: Սակայն Թուրքիայի լկտի միջամտությամբ ստիպված եղավ հանձնարարել Ատրպատականի նահանգապետին՝ քանդելու վանքի վերակառուցված պարիսպը: Նահանգի հայոց հոգևոր առաջնորդարանը պաշտպանության խնդրանքով դիմեց Թեհրան և Էջմիածնի Մայր աթոռ: «Վանքն սրբոյ Աստվածածնի Դերեկայ, որ ի Սալմաստ գավառը (Զարեվանդ) գտանի, ի վաղուց թողեալ էր հավեր և անխնամ վիճակի հառաթուր ասպատակութեան քրդաց և այլոց, որք ընդմիշտ անցուդարձ գործեին (և գործեն դեռ) ի վերույ սահմանական ճանապարհի ձորոյն Դիւշմանայ... Հասկ, ուրեմն ձեռնարկեալ է շրջապատել զվանս որմով՝ հասարակ քար ու կավյա: Որպիսին և առավել ևս ունեին ամենայն վանորայք: Սակայն շինութեն պարսպին այսօրիկ յաղս անբարեհաճ դրացի պետութեան ըստ ցուցման ջերմեռանդ գործակալաց, մանավանդ ընկերացված ավարուայցն կարի յոյժ վտանգավոր և միջազգային քաղաքականութեամբ ընդդեմէ... Կամիմ աղերս առկանել խնայիլ ի սրբութիւն: Կխնդրեմ օժանդակութիւն և կարևոր տնօրենութիւն...»:

թվայնացրել է 1915.info կայքը

Իզուր։ Թուրքական պահանջը հաղթեց, վանքի պարիսպները քանդվեցին։ Դերիկի վրա կործանման մռայլ ամպեր կուտակվեցին։ Առժամանակ դադարեց Ռուսաստանից զենքի ընդունման ու առաքման գործը, ֆիդայիները ցրվեցին։ Այս ամենին ավելացավ ևս մի ծանր հարված՝ ինչ-ինչ մարդկանց վարկաբեկչական նամակներով Բագրատ վարդապետ Թավրքալյանը հետ կանչվեց Մայր աթոռ։ Վանքում մնացել էին մի քանի հայդուկներ ու հոգևոր սպասավորներ։ Վարդապետը կանչեց Սաքոյին, երկար զրուցեց հետը։

— Ես հեռանում եմ ու երևի դարձյալ կվերադառնամ։ Քեզ եմ թողնում փոխարինող։ Աստծո հետ առնչվող գործերով կըզբաղվի Հովհաննես քահանան։ Իսկ դու պիտի հսկես վանքի պահպանությունն ասպատակիչներից, Թավրիզում գտնվող մեր ընկերների հետ կապ պահպանելով՝ վերականգնես զենքի ընդունման ու առաքման գործը։

Այնքան էլ հեշտ հանձնարարություն չէր։ Գիշերից հետո, վաղ առավոտյան, հայրենասեր վարդապետը վերջին անգամ էր վայելում Դերիկի վրա թևածող աղավնիների ճախրանքն ու լույսի առաջին ցոլքերով բռնկված խաչի աքանչելի հուրհրատումը։ Բոլորն արթնացել էին ճանապարհելու սիրելի վարդապետին, գուցե և վերջին անգամ լսելու նրա օրհնանքը։ Վարդապետը գնում էր, ու զանգերը սրտամորմոք թախիծով ղողանջում էին նրա հետևից։ Շրջվեց. խաչը դեռ բոցկլտում էր երկնքում։ Եվ ասաց.

— Հետ դարձեք և այնպես արեք, որ տխուր ու արևոտ մի լուսաբացի հուրհրատող այս խաչը չնմանվի գերեզմանից բարձրացող ֆոսֆորաբոցի...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Տղա՛, դու լա՞ց ես լինում: Ի՞նչ է պատահել:— Սլո ցեղապետը ձեռքը կարեկցանքով դրել է խսիրին բերանքսիվայր պառկած Սաքոյի ուսին: Ոչ, ի՞նչ լաց, ինքը ե՞րբ է լաց եղել: Սա վարդապետի հետևից ղողանջող զանգի՝ իր ներսում մնացած հնչյուններն են կաթկթում աչքերից:

— Լաց չեմ լինում, ցեղապետ, գլուխս ցավում է, ուզում եմ մի քիչ քնել: Պիտի ասեր՝ ուզում եմ շարունակել հիշողությունս...

* * *

Վարդապետը գնում էր, ու ոչ ոք չգիտեր, որ Առաուլի ցեղապետ Շարաֆ բեյը իր թիկնազոր-հրոսակախմբի և Վանի կուսակալական զորքի հարյուր ասկյարների հետ Գարահիսարն անցել, գալիս է դեպի Դերիկ: Վերադառնալով վանք, Սաքոն նախ մտավ զինապահեստ: Քսանմեկ հրացան և մի մեծ տակառ վառոդ: Քիչ չէ: Վտանգի անբացատրելի զգացողությամբ, որ ունենում են միայն զինվորները, նա մեկ-մեկ զննեց բոլոր հրացանները, փորձեց վառոդի չորությունը՝ ջորիների վրա Արաքսն անցնող այս տակառները հաճախ էին թրջված լինում, ու գոհ մնաց: Պահեստի մի անկյունում կուտակվել էին մեծ քանակությամբ թիթեղյա տուփեր: Դրանց մեջ փամփուշտներ էին եղել, որ ավելորդ բեռ չանելու համար զինատարները լցրել էին պարկերի մեջ: Սաքոն Արգամ սպասավորին կարգադրեց արճիճ հալել, կարկուտի խոշորությամբ կոտորակներ պատրաստել: Օրվա վերջում սպասավորը կոտորակի էր վերածել պահեստում եղած արճճի կեսը: Այնուհետև կոտորակը վառոդի հետ խառնելով լցրին թիթեղյա տուփերը, մի-մի պատրույգ տեղադրեցին դրանց մեջ և ծայրերը դուրս [illegible] երեսպատեցին եզան կաշվի կտորներով: [illegible]

թվայնացրել է 1915.info կայքը

ռումբ։ Երեկոյան եկած ուսուցիչ Նիկոլը, Սախոն, Շերոն ու Զաթոն։ Սաքոն մտածեց, որ այդ ուժեղ, ավիրյալ հայդուկներին աստված է ուղարկել Դերիկ։ Գիշերը դարպասը բախեցին. եկել էր Պետոն վաճեցի երեք արծվենի տղաների հետ։ Նա տեղյակ չէր Դերիկի վերջին իրադարձություններին, Վանում երկար սպասել էր զինատար խմբի, և անհանգստացած՝ ինքն էր եկել։ Եկել էր ու բերել ևս մի սև լուր. Յոթնադում կախաղան է հանվել «Չելլո» հայդուկախմբի ղեկավար Ժիրայրը։

... Բացվում էր 1894 թվի ապրիլի 27-ի առավոտը։ Վանքի հոտաղ Սմբատը գնացել էր պարսպին կից անասնոց, նախիրն արոտ քշելու։ Վերադարձավ դեմքը վախից կապտած, ու մինչ կկարողանար ինչ-որ բան հասկացնել, առանց զանգերը հնչեցնելու զանգակատնից իջավ գուշատված ժամհարը։

— Վանքը շրջապատված է...

Դիմահայաց բլուրներին խարույկներ էին վառվում։ Վանքը թիկունքից, աջ և ձախ կողմերից անառիկ էր, պաշտպանված Դուշմանա խոր ձորով։ Դիմացի բլուրներին խարույկներ էին վառվում, ու հարյուրավոր հրոսակներ թալանի ու նախճիրի մոլուցքով սպասում էին հարձակման հրամանին։ Պարիսպների վերակառուցված շերտերը քանդել էին, բայց հին եղածին ձեռք չէին տվել։ Կար՝ եթե ոչ պարիսպ, գոնե պաշտպանության պատ։ Սաքոյի հրամանով վանքի բոլոր բնակիչները՝ կին, երեխա, ծառա ու զինվոր, հավաքվեցին մեծ սրահում։

— Վանի Պետո, հարկ է, որ դու կազմակերպես պաշտպանությունը։

— Ես քո կողքին կլինեմ։ Դու ավելի լավ գիտես վանքն ու նրա հնարավորությունները։

Ժամանակ չկար վիճելու, ևս հիշելով Բագրատ վարդապետի պատգամը, Սաքոն ստանձնեց ղեկավարությունը։ Նախ, ժամհարին կարգադրեց սովորական ղողանջով հնչեցնել վան-

թվայնացրել է 1915.info կայքը

քի զանգերը: Երեխաները պետք է մնային աղոթարանի հաստ պատերի ներսում: Իսկ կանա՞յք:

— Մենք ձեզ հետ կլինենք, մենք պարտավոր ենք ձեզ հետ լինել: Դուք չափազանց քիչ եք հարյուրավոր թալանչիների դեմ,— ասաց երեք օր առաջ Թավրիզից Դերիկ ժամանած ուսուցչուհի Սաթենիկ, ֆիդայական անվամբ՝ Ծաղիկ Մատինյանը:

Տասնյոթ տղամարդ և չորս կին: Միացան նաև 13—14 տարեկան մի քանի տղաներ: Հապշտապ ստեղծված տասնյոթ պաշտպանական դիրք: Կանայք փամփուշտներ էին լցնում զինապահեստում, տղա երեխաները փամփուշտ ու ռումբ էին կրում դիրքերը: Կարմիր չալմայով մի քուրդ բարձրացավ դիմացի ժայռին:

— Շարաֆ բեյը չի ուզում, որ հայդուկների պատճառով կոտորվեն նաև կանայք ու երեխաները: Նա հրամայում է, որ հայդուկներն անզեն դուրս գան դարպասներից և խոստանում է, որ վանքի վրա ոչ մի հրացան չի արձակվի:

Շերոն ձշաև էր բռնել քրդին, բայց չկրակեց, բերդանի գնդակը չէր հասնի նրան: Փոխարենը բարձրացավ պարսպին ու որոտաց.

— Այդ ո՛ւմ է հրամայում քո շուն բեյը, նա գիտե՞, թե ովքեր են կանգնած իր բաշիբոզուկների դեմ:

Հարձակումն սկսվեց միանգամից: Հրոսակները վայրենի աղմուկով, հավատ ու աստված հայհոյելով խառնիխուռն, հեղեղի պես մղվում էին դեպի վանքի կիսաքանդ պարիսպները:

— Կրա՛կ:— Անգամ իրեն անծանոթ խոպոտ ու մոլեգին ձայնով գոռաց Սաքոն: Առջևից մոտեցողները թավալվեցին: Պետոյի նետած ռումբը աճապոր դղիրդով պայթեց թուրք հարյուրապետի ոտքերի տակ: Սաքոն ճանաչեց քրդերից մեկին. Դուշման-Դարասիի կովում նրա գնդակը արյունոտեց իր թևը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սակայն մինչ ճշան կբռներ, Չաթոյի բերդանից ծուխ ու բոցի հետ ժայթքած գնդակը քրդին այն աշխարհն ուղարկեց:

Թշնամու շարքերում պայթող ռումբերն ահռելի ավերածություն էին անում: Շարաֆը չէր սպասում այդպիսի կազմակերպված դիմադրության: Հատկապես ռումբերը նրան անակնկալի էին բերել: Պարսպի այն կողմից հայդուկները կատաղի կրակում էին, մոտ երկու տասնյակ հրոսակներ ընկել էին սրանված, կամ վիրավոր՝ թավալվում էին արյան մեջ: Վառոդի ոչ մեծ տակառից Սաքոն պատրաստել էր ամենամեծ ռումբը ամենավճռական պահի համար: Շերոն ու Չաթոն այն դրել էին կացնատաշ տախտակի ծայրին, տախտակի տակ կլոր մի քար դրել և մյուս ծայրին ուժի շեշտակի գործադրումով կարող էին պարսպի վրայով ռումբը նետել հարձակվողների շարքերը: Բայց դեռ ժամանակը չէր: Արյան պես կարմիր մազերով մի քուրդ, առաջ ընկնելով մյուսներից, Շերոյի դիրքի մոտ կառչեց պարսպին: Ամեն զգուշություն մոռացած, զորեղ հայդուկը թողեց հրացանը, երկու ձեռքով բռնեց քրդի կոկորդից, և բոլորը տեսան, թե ինչպես է նա, խեղդվելով, գալարվում օդում: Ղարաբաղցի Նիկոլը գնդակների տարափի տակ նետվում էր դիրքից դիրք, հայտնվում ամենավտանգավոր տեղերում: Սաքոն կրակում էր ու հայացքով փնտրում ցեղապետին: Վանի Պետոյի դիրքի առաջ մեռած ու վիրավոր թշնամիների կույտ էր գոյացել: Փող հնչեց, և ժայռի հետևի ոլորանից հայտնվեց թուրք ասկյարների հեծյալ ջոկատը: Սաքոն սպասում էր դրան: Զիավորների ներկայությունը ոգևորեց հետևակ խառնամբոխին, ու հեղեղը նոր հորձանքով մղվեց դեպի պարիսպը:

— Ռո՛ւմբը, մեծ ռո՛ւմբը,— որոտաց Սաքոն:

Հաջորդ պահին, օդում անկանոն աղեղ գծելով, վառոդի տակառն ընկավ պարսպին հասնող հեծյալ ջոկատի կենտրոնը: Սահեղ պայթյունից հետո մի քանի րոպե լռություն տիրեց: Ծու-

թվայնացրել է 1915.info կայքը

խը պատել էր ամբողջ տարածքը: Ծխապատի հետևում փող փչեցին, և դա նահանջի նշան էր: Շարաֆի հրոսակները հետ քաշվեցին հազիվ գնդակի հասանելիության չափ: Սաքոն տեսնում էր Շարաֆին. օձիքը բաց, վայրենի կատաղությամբ խփում էր աջ ու ձախ, գոռգոռում ու հայհոյում: Պարզ է, նա կրկնելու էր հարձակումը: Իսկ իրենք դեռևս կարո՞ղ են դիմադրել... Վանքում ռազմական խորհուրդ գումարվեց: Արգամ ապաստավորը, ում հանձնարարված էր զինամթերքի հսկողությունը, զեկուցեց.

— Հրացանների կորուստ չենք ունեցել, պահեստում կա մեկ լիքը տակառ վառոդ, տասնչորս ռումբ: Արճիճը սպառվում է, հազիվ կբավարարի 60—70 փամփուշտի:

Հայդուկները մտահոգ իրար նայեցին:

— Իսկ ինչքա՞ն պատրաստի փամփուշտ կա բոլորիս մոտ միասին,— հարցրեց Սաքոն: Պարզվեց՝ մոտ հարյուր:

— Դա այնքան էլ քիչ չէ, մանավանդ որ մենք վառոդ ունենք և կարող ենք ռումբեր պատրաստել: Մահվան բեկորների համար կօգտագործենք մառանի կաղնե տակառների երկաթե գոտեօղերը: Հենց հիմա Արգամը իր օգնական պատանիների հետ կսկսի դրանք մանրացնել:

— Ի դեպ, նրանցից մեկը վիրավորված է, հոտաղի մայրը կապել է վերքը, հիմա տղան պառկած է աղոթարանում,— տեղեկացրեց Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը:

— Սաքո, մենք չենք ձեռնարկում ամենակարևորը,— խոսեց Պետոն:— Այս հրոսակին մենք երկար չենք կարող դիմադրել, հարկավոր է լուր ուղարկել Սալմաստ, օգնություն խնդրել տեղական իշխանությունից:

— Այս մասին մտածել եմ, բայց ո՛ւմ ուղարկենք: Առանց այն էլ մենք այստեղ այնքան քիչ ենք...

— Ինձ:— Խորանի կողմից լսվեց մի ձայն:— Ժամհարի

թվայնացրել է 1915.info կայքը

դուստր Օսիկն էր:— Ինձ ուղարկեք, հայդուկներ: Ես լսել եմ, որ քրդերը կանանց վրա չեն կրակում:

— Քե՞զ...— Սաքոն շփեց գնդակից քերծված քունքը:

— Այո, ինձ,— առաջ եկավ հազիվ տասնվեց տարեկան նրբիրան աղջիկը, որի աչքերից, սակայն, կրակ էր թափվում:

— Գոնե ձի քշել գիտե՞ս,— Պետոն հարազատի հիացմունքով զննում էր աղջկան:

— Ավելի լավ, քան որևէ հայդուկ...

Խորհուրդն ուրիշ ելք չուներ, վճռեց ժամհարի աղջկան ուղարկել Սալմաստ: Բայց ինչպե՞ս: Ելքը դարձյալ մեկն էր. նա պետք է ձիով հարավային ելքից սուրա Կույսի աղբյուր, մոտ երեք հարյուր մետր տարածություն անցնի հրոսակների տեսադաշտով և իջնելով Դերիկ գետակի ծոռումուռ, կտրտված ձորը՝ հոսանքն ի վեր բարձրանա մինչև Խանասորի ստորոտները: Հետո, եթե այլ վտանգներ չհանդիպեն, մինչև մայրամուտ կհասնի Սալմաստ:

Ջին թեթև, գեղեցիկ սլացքով դուրս թռավ դարպասից: Սաքոն, Պետոն, Շերոն և Նիկոլը հրացաններին թեքված հսկում են ձիավորի անվտանգ ընթացքը: Անցավ հարյուր մետր: Հարյուր հիսուն: Հրոսակախմբի մեջ ոռնոց ընկավ: Երկու հոգի թռան ձիերին և լանջն ի վար սլացան աղջկա հետևից: Չորս հրացաններ միանգամից որոտացին: Քրդերից մեկի ձին գայթեց ու գլորվեց՝ իր տակ ճզմելով ձիավորին: Թնդաց հինգերորդ կրակոցը: Մյուս քուրդը մեջքնիվայր ընկավ ձիու գավակին ու նախվեց՝ գլուխը գետնին, ձախ ոտքն ասպանդակում ոլորված: Կրակողն Արգամ սպասավորն էր:

— Ապրես,— ժամհարը համբուրեց տղայի ճակատը:

Ուրիշ հետապնդողներ չեղան, բայց ի պատասխան ֆիդայիների այս փոքրիկ հաղթանակի, աղմուկ-աղաղակով, բուռլն գրոհով սկսվեց հրոսակների երկրորդ հարձակումը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դեպի դիրքերը,— բղավեց Սաքոն և հասնելով պարսպի մոտ՝ հրացանը դատարկեց բաշիբոզուկներին առաջնորդող Շարաֆ բեյի կրծքին: Ոչ: Ակնթարթային արագությամբ Շարաֆը ծառս արեց ձին, որն իր կրծքին ընդունեց բերդպանի ժայթքոցը: Պետոյի ետևած ռումբը, որին Շերոյի և Զաթոյի դիրքերից հետևեցին ուրիշ ռումբեր, վայնասուն ու իրարանցում առաջացրին հարձակվողների առաջին շարքերում: Ֆիդայիները կովում էին զինապաշարի ծայրահեղ խանդողությամբ, ոչ մի գնդակ անտեղի չէր արձակվում: Ծխի ու իրարանցման մեջ Սաքոն տեսավ, թե ինչպես ժամհարի հրացանը փշուր-փշուր եղավ ձեռքի մեջ և ուսը բռնելով ժամհարը կուչ եկավ պարսպի տակ: Այսուհետև ինքը պետք է պաշտպաներ երկու դիրք: Մի թուրք ասկյար Պետոյի և Զաթոյի դիրքերի արանքում ձիուց թռավ պարսպին, և նույն ակնթարթին Զաթոյի դաշույնը խրվեց նրա որովայնը, թուրքը անասնական բառաչով գահավիժեց պարսպից ներս: Նրա զույգ փամփշտակալներն ու հրացանը դարձան ռազմավար: Օդը բռնած վառոդահոտի ու ծխաքուլաների վրա հանկարծ քաղցր ու երանելի ղողանջեց Դերիկի զանգը: Տագնապ չկար, ցավ չկար զանգի ղողանջում: Եվ ո՞վ էր քաշում զանգը: Դիրքերում կասկածավոր լռություն տիրեց, և փարատվող ծխամշուշի մեջ, զանգակատան բարձր սյանը հենված, արյունաշաղախ ու մի կերպ կանգնած, ծիծաղելով զանգերն էր քաշում ժամհարը: Նրակեցին: Առաջին գնդակը ղողանջող զանգին կպավ, և զանգը մի պահ ճչալով, կրկին շարունակեց իր ճվագը: Պետոյի գնդակը ջախջախեց առաջին կրակողի գանգը: Հետո միանգամից տասնյակ գնդակներ թռան դեպի ժամհարը, և նա, պարանից կախվելով, ընկավ գմբեթի ի վար: Զանգերը դեռ ղողանջում էին:

— Մեծ ռումբը,— որոտաց Սաքոն,— ոչ ոք չկրակի:

Արյունաթրբու խառնամբոխը խտանալով՝ մոտենում ու մո-

թվայնացրել է 1915.info կայքը

տեղում էր պարապին: Եվ նույն վաղնջական միջոցով մասնացու պարունակությամբ ծանր տակառը օդ թռավ ու իջավ թշնամու վրա: Թնդյունը տարածվեց լեռնաձորերում:

— Վերջ, հայդուկներ, արձիճն սպառվեց: Ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

Սաքոն հետ շրջվեց ու տեսավ օրիորդ Ծաղիկ Մատինյանին, որ խաղաղ ու հանգիստ նայում էր պարսպից այն կողմ մեծ ռումբի թողած ավերածությանը:

— Դուք Թիֆլիսի բուլվարում չեք, օրիորդ, հեռացեք այստեղից:

— Ես երեք փամփուշտ ունեմ, հայդուկ,— և վերցնելով դիրքի դատարկ հրացաններից մեկը, վարժ մատներով փամփուշտը դնելով նրա մեջ՝ կրակեց թշնամու դեռ ծխախառն զանգվածի վրա: Արգամ սպասավորը նրան ուժով հեռացրեց դիրքերից:

— Մնացել է յոթ ռումբ և ուրիշ ոչինչ:— Սաքոյի ականջին գոռաց հոտաղ Սմբատի տասներեքամյա տղան:

— Մեկը քեր այստեղ, մյուսները բաշխիր դիրքերում, իսկ ամենավերջինը թող մնա: Բոլորին ասա, որ վերջին փամփուշտները չկրակեն և իմ ազդանշանո՛վ նետեն ռումբերը:

Սաքոյի ռումբը պայթեց գրեթե պարսպի տակ, վեր մագլցել փորձող ասկյարների խմբի մեջ: Հետո ռումբեր նետեցին Չաթոն, Շերոն, Նիկոլը, Վանի Պետոն ու նրա հետ եկած տղաները: Խառնամբոխը ոռնաց, խառնամբոխը ընկրկեց: Երբ ծուխը քաշվեց, ելուզակներն իրենց վիրավոր ընկերներին քարշ տալով հեռանում էին վանքից: Մի նոր ձիով, ժայռի մոտ կանգնած, ցեղապետ Շարաֆ բեյը արնակոխ աչքերով դիտում էր իր զորքի հուսահատ ետդարձը: Արևը վաղուց հանգել էր գագաթներին: Իրիկնամութը թանձրանում էր: Կլինի՞ երրորդ հարձակում: Եթե այո, ուրեմն ամեն ինչ կորած է. վանքում

թվայնացրել է 1915.info կայքը

մնացել էր մեկ ռումբ, նրա պաշտպանների մոտ՝ մեկական գնդակ: Եթե ոչ այսօր, վաղը նրանք կրկին կգրոհեն վանքի վրա: Բայց նրանց ուզածը միայն վանքն ավերելը չի, այլ նրա պարիսպների ներսում ապաստանած հայդուկներին ու աստծո սպասավորներին կոտորելը: Պետք է օգտվել գիշերվա խավարից ու թողնել վանքը. ուրիշ վճիռ չի կարող լինել:

— Վանքի անասունը տարա՞ն:— Հոտաղ Սմբատը բարձրացել էր պարսպին, նայում էր հեռացող հրոսակներին: Մութ էր ու ոչինչ չէր կարող տեսնել՝ նախիրի թալանը ենթադրեց կովերի բառաչից, ձիերի խրխինջներից, որոնք հեռանում էին դեպի Խանասոր:

— Շարաֆ, արյունարբու շուն, դու իմ ձեռքով ես սատկելու:— Սպառնալի՞ք էր, թե երդում, որ կիսաքանդ պարսպի վրայով Սաքոն մռնչաց հեռացող թշնամու հետևից:

Ժամհարին թաղեցին վանքի բակում, Մովսես իշխան հայրենասերի մոտ: Արգամ սպասավորը արցունքն աչքերին երկար ճնշեցնում էր թախծոտ զանգերը: Շերոն ու Չաթոն չկային: Նրանք վերադարձան կիսով չափ լիքը մի խուրձ փամփըշտակալներով: Մարտադաշտից էին հավաքել:

— Ժամ չէ երկար խորհելու,— ասաց Վանի Պետոն:— Հարկավոր է կանանց ու երեխաներին տեղափոխել սուրբ Ստեփանոս Նախավկա:

Ռազմավարով փոքր-ինչ զինված, հայդուկների խումբը կանանց ու երեխաներին շղթայի մեջ առնելով հեռացավ վանքից:

— Ես պետք է մնամ,— անդրդվելի էր Արգամ սպասավորը,— ես պետք է այստեղ սպասեմ Օսիկին:

Խումբն անցել էր Դուշման-Դարասին, երբ ետևում, թանձր գիշերվա ցուրտ խավարում, երկար, կարոտալի ղողանջեց Դերիկի զանգը: Պատանի Արգամն էր Մովսես իշխանի ու ժամհարի շիրիմների մոտ հրաժեշտ տալիս հեռացողներին:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

1899 թվի նոյեմբերն է. սառնաշունչ աշուն, և 101 տարով դատապարտված քաղաքական բանտարկյալ Սարգիս Ծովանյանը Մեթերհեմ բանտի իր նեղ պատուհանից լսում է չվող կռունկների ձայնը: Լսում է կռունկների ձայնը և մտորում Արաբոյի պայծառ աստղի հետ, որ աշնանային թխպոտ երկնքին անհարիր շքեղությամբ փայլում է Ծովասարի գագաթին: Կռունկների չուն հետո կանցնի Սևքար գյուղի ու Թիֆլիսի վրայով, և հարազատները կարո՞ղ են նեթադրել, որ երամն իր հետ տանում է նաև Սաքոյի կարոտյալ հայացքը:

Խցի դռան փոքրիկ պատուհանը բացվեց, հսկիչ Մուրադի ձեռքը փութով ներս խոթեց մի փաթեթ: Հաց էր, հացի մեջ՝ նամուսկ Դժոխք Հրայրից: Այջաբացը լցվեց կորստյան գանգերի ցավալի հեկեկոցով: Կռունկները ողբագին ճիչերով թափվեցին լեռների ու ծովերի վրա: «Սիրելի Անմեղ: Արցունքներով հայտնում ենք, որ Տարոնի առյուծ Աղբյուր Սերոբը դավադրաբար սպանված է... Անդրանիկը մահվան վճիռ է կայացրել ձրան սպանող Խալիլի համար...»: Աղբյուրը չկա: Նշանակում է չկա ազատագրական պայքարի երեք հզոր ուժերից մեկը: Ի՞նչ է լինելու այս ազգի վերջը, տեր աստված: Սլո ցեղապետն արթուն է, պարզվում է, որ նա Աղբյուրի սպանության մասին իմացել է դեռ երեք օր առաջ: Նա էլ է հարցնում.

— Ի՞նչ է լինելու ձեր վերջը, մեկը հազարի դեմ այս արդար կռիվը ո՞ւր է տանում ձեզ, դեպի փրկությո՞ւն, թե...

Սաքոն չի պատասխանում: Նա փակել է աչքերը և փորձում է լեռնաշխարհը տեսնել հինսուն տարի հետո: Հարյուր տարի հետո: Ուզում է տեսնել վարդավառի տաք ու զրնգուն օրերի մեջ Վարագա լանջերին պսակներ հյուսող հարս ու աղջիկներ, Առաքելոց վանքի բակում լեռնապար թնդացնող պատանիներ, ուզում է լսել Վանա կապույտ կոհակներից

թվայնացրել է 1915.info կայքը

բարձրացող հայերեն մեղեդիներ, դպրահոցներում մաշտոցյան այբ ու բեն թոթովող ձայներ: Բայց անդունդներից ի՞նչ հողմեր են ոռնոցով բարձրանում: Սև հողմեր են բարձրանում, երկնքի պայծառը խավարեցնելով ծածկում են լեռնաշխարհը, ու երկրի վրա, հայացքը՝ մթնած ու սառած արեգակին, կաղկանձում է ամայության շունը...

Բանտախցի դուռը դղրդում, ցնցվում է բռունցքների հուժկու բախումից:

— Ի՞նչ ես ուզում, գյավուր,— մոտենում է Մուրադին փոխարինված թուրք հսկիչը:

— Հայտնիր բանտապետին, որ ես հացադուլ եմ հայտարարում: Ես պահանջում եմ քաղաքի դատախազին:

— Դատախազը զբաղված է, գուցե Մըրեն չառո՞ւն պահանջես:

— Թող գա՝ ջարդեմ այդ լիրբ շան գանգը: Քոնն էլ հետը, անասուն: Կանչիր բանտապետին:

Կեսօրին երկու ասկյարներ եկան նրա հետևից: Տարան ոչ թե դատախազի մոտ, այլ ոստիկանապետ Իզիթի առանձնասենյակը:

— Սպառնում ես հացադուլո՞վ: Թուրքիայում հացադուլ չկա, կալանավոր, այդ օյինները Մեթերհեմում չեն անցնում: Եվ մեծ հույսեր մի կապիր քո ռուսական հպատակության հետ: Անձամբ ինձ համար դա ոչ մի նշանակություն չունի, ես ամեն րոպե պատրաստ եմ քեզ ճոճելու կախաղանից:

— Գիտեմ, բայց ես դատախազին եմ պահանջել: Նա պետք է ինձ հնարավորություն տա դիմելու իմ երկրի հյուպատոսին:

Ծովանյանի խոսքը, ինչպես միշտ, թարգմանում էր Մեհմեդ չառուշը:

— Դատախազը ժամանակ չունի զբաղվելու մեկի հարցով, որը մտքում աստծուն փառք է տալիս կախաղան չհանվելու

թվայնացրել է 1915.info կայքը

համար, իսկ արտաքուստ ներկայանում է հանիրավի պատժվածի դժգոհությամբ:

— Ես ոչ մեկին փառք չեմ տալիս և ոչ ոքից գութ չեմ աղերսում: Ես արդարություն եմ պահանջում:

Ոստիկանապետը չէր լսում նրան:

— Ձեզանից առաջ Մեթերնեմում այլահպատակ կալանավորներ շատ են եղել, գյավուր, այսպիսի ելույթներից հետո նրանց ձեռնաշղթաներ ենք հագցրել և մեջախուց նետել: Ավելի խելոքներն ինքնասպան են եղել:

— Ինչպես խելագար ասորի՞ն...

Իզիթը վեր կացավ տեղից, զայրույթից հևալով մոտեցավ կալանավորին:

— Այո, ինչպես նա: Շատերին էլ այսպես՝ իմ ձեռքերով եմ խեղդել:— Իզիթը բարձրացրեց աղեղված մատներով սև, խոշոր ձեռքերը: Այդ պահին դուռը թափով բացվեց, ներս մտան երկու բարձրաստիճան զինվորականներ:

— Տարեք,— ափսոսանքով ու հարկադրված հրամայեց ասկյարներին:

Ցեղապետ Սլոն դժգոհ էր:

— Դու քեզ կործանում ես, շեյթան, պայքարելու համար ապրել է պետք, ոչ թե մեռնել: Համբերիր, հասկանո՞ւմ ես, գոնե մի քանի օր...

Այո, Սաքոն ինչ-որ բան հասկանում էր: Արդեն քանի գիշեր խուլ թրխկոցներ էր լսում խցի հատակից:

— Իմ աշիրեթի տղերքը դիմացի այգուց թունել են փորում մինչև խցի հատակը: Կփախչենք ու՝ ոչ Մուշի դատախազ, ոչ ռուսական հյուպատոս: Իմ ջիգիթները քեզ փառք ու պատվով կհասցնեն Բարձրավանդակ...

Բայց ուրբաթը շուտ եկավ, քան շաբաթը: Մատնություն: Կեսգիշերից մեկ ժամ առաջ բանտախցի դուռը դղրդալով բաց-

թվայնացրել է 1915.info կայքը

վեց, հազարապետը բոլորին հրամայեց դուրս գալ: Վեց կանանավոր կային այնտեղ, բոլորն էլ վրեժի, իրենց պատիվն ու ինչքը պահպանելու համար բանտարկված: Ցեղապետը, օգտվելով իր հեղինակությունից, կարողացել էր ժամանակի ընթացքում բանտախուցը «բնակեցնել» այդպիսի մարդկանցով:

Նրանց մեկ-մեկ ներս էին հրում մի նեղ, երկարուկ սենյակ և դուրս բերում ձեռքերն ու ոտքերը շղթայակապ: Հերթը Սաքոյինն էր:

— Հազարապետ փաշա, ես կապ չունեմ այս փախստյանների հետ: Ինչո՞ւ պետք է փախչեմ, երբ գիտեմ, որ իմ անօրինական դատավարությամբ զբաղվում է Ռուսական մեծ կայսրությունը և վաղը-մյուս օրը պետք է ազատ արձակվեմ:

Հազարապետը չէր լսում նրան: Երկու ասկյարներ մոտեցրին շղթաները: Ներսում ասես արծիվ թևաբախեց: Ասկյարները ջարդուփշուր տապալվեցին, նրանց ձեռքից խլված շղթան կատաղի զնգոցով պտտվեց նեղ սենյակում, ծայրը հասավ հազարապետին և դեմքից արյուն ժայթքեց: Այդ պահին ներս մտան Էրզախ կոմիսարն ու երկու ուրիշ պաշտոնյաներ:

— Ի՞նչ է կատարվում, հազարապետ փաշա:

Վերջինս թաշկինակով դեմքի արյունն էր սրբում: Չպատասխանեց Էրզախին:

— Ես քեզ շղթաներ կհագցնեմ, գյավուր: Իմ սեփական ձեռքերո՛վ կհագցնեմ:

— Բայց ոչ հիմա,— ասաց Էրզախը, երբ Սաքոյին դուրս էին տարել սենյակից:— Կարինի ռուսական հյուպատոսը շատ է հետաքրքրվում նրանով, ամեն պահ կարող է Մեթերնեմ այցելել: Պետք չէ քաղաքական աղմուկ ստեղծել, փաշա, մանավանդ որ իրավունք չունենք նրան շղթաներ հագցնելու: Որովհետև դատաբանն անզոր եղավ, չկարողացավ նրա դեմ անբեկանելի վճիռ կայացնել:

թվայնացրել է 1915.info կայքը

Տանում էին մեծախուց։ Շղթայված ցեղապետ Սլոն միջանցքում համբուրեց ճակատը.

— Աֆֆերիմ իգիթ։ Այս բանտի պատմության մեջ առաջին դեպքն է, որ կալանավորը ծեծում է հազարապետին։ Նրանք վախենում են քեզնից։

— Նրանք վախենում են ռուսական կայսրությունից։

Մեհմեդ չաուշից՝ Մուրադից, Մուրադից՝ Սարգիս Շովանյանից ճավաստի տեղեկություններ ճասան, որ ռուսական կայսրությունը նրա գործի շուրջը դիվանագիտական բանակցություններ է սկսել Թուրքիայի հետ։ 1899-ի մայիսի 25-ին Մուշի գատախազը նրան կանչեց հարցաքննության։

— Դուք տեղյա՞կ եք, որ Ռուսաստանի պահանջով անցյալ տարվա նոյեմբերի 15-ի ձեր դատավարությունն ու դատարանի վճիռը չեղյալ են հայտարարված։

— Ոչ, ոչինչ չգիտեմ։

— Ուրեմն, իմացեք։ Դուք պետք է տեղափոխվեք Կարին, որ ռուսական հյուպատոսի և, ի դեպ՝ նաև ի՛մ մասնակցությամբ, տեղի է ունենալու նոր դատավարություն։ Բայց դա ձնարավոր է միայն հանցագործության ճանգամանքների լրիվ բացահայտման դեպքում։ Հանուն ձեր ամեն մի ջանքի, պարտավոր եք ամեն ինչ խոստովանել, այլապես Կարինի դատարանը գործը կհանձնարարի լրացուցիչ քննության, որը կարող է տարիներ տևել։

— Ես ոչինչ չունեմ խոստովանելու։

Շովանյանը բանտ էր վերադառնում։ Նրան ուղեկցում էր թարգմանիչ Մեհմեդ չաուշը։ Շշնջաց.

— Վերջ, դու փրկված ես, Սևքարեցի Սաքո։ Հենց այսօր ընտանիքում կիմանան այդ մասին։

Երեք օր անց կանչեցին բանտապետի մոտ և պաշտոնապես հայտարարեցին, որ Կարինի ռուսական հյուպատոսի հան-

թվայնացրել է 1915.info կայքը

կարծակի մահվան պատճառով նրա տեղափոխումն ու նոր դատավարությունը անորոշ ժամանակով հետաձգվում է:

Էրզախ կոմիսարը նստած էր քաղաքի դատախազի աշխատասենյակում:

— Ուրեմն չե՞ք ընդունում, որ գործը ձե՛ր մեղքով մտավ փակուղի, կոմիսար: Ձեր անճարակության պատճառո՛վ:

— Ինձ հնարավորություն չտվեցիք նրա հետ ինքնուրույն աշխատելու...

— Գլխավոր դատախազը պահանջում է, որ դուք կատարեք ձեր խոստումը: Սարգիս Ծովականյանը քաղաքական հանցագործ է, չպետք է թույլ տանք, որ նա անպատիժ դուրս պրծնի մեր ձեռքից: Հատկապես ես և դուք շատ բան կկորցնենք դրանով:— Դատախազը չասաց, որ ինքը մեղադրական կարևոր նյութեր է հայթայթել Ծովականյանի դեմ և, իր համոզմունքով, մնում է ընդամենը նրան խոստովանեցնել: Այդ բանը կարվի Էրզախի կատարյալ ձախողումից հետո:

* * *

Մուրադը նոր նամակ բերեց Գուրգենից: Գրում էր, որ ինքը Տալվորիկում է, մտադիր է իջնել Մշո դաշտ, ուր երկար ժամանակ ֆիդայական լուրջ գործողություններ չեն եղել, և ծրոնք գյուղում «հրազեն ծխեցնել»՝ հիշեցնելով ֆիդայիների մարտաջունչ գոյությունը: Այդպիսի խելահեղություն միայն Գուրգենը կաներ: Հրազեն ծխեցնել, և այն էլ՝ ծրոնքում, ուր շատերն էին նրան դեմքով ճանաչում: Դաշտի գյուղերում Գուրգենի հայտնվելը գրեթե անխուսափելի կործանում էր նրա համար: Հարկավոր էր կանխել նրա այդ քայլը: Բայց ինչպե՞ս: Մինչև նամակի պատասխանը կգրեր, Մուրադը նոր երկտող հասցրեց: Գուրգենը մի փոքր խմբով արդեն Մշո դաշտում էր:

... Բանտախցի պատուհանից երևում էր գրեթե ամբողջ

թվայնացրել է 1915.info կայքը

Մշո դաշտը: Սաքոն տեսնում էր Ցրոնք գյուղը՝ մի գմբեթ և նրա շուրջը ծվարած հարթ տանիքներով տներ: Տեսավ, թե ոստիկանապետ Իզիթը ասկյարների մի մեծ խմբով ինչպես է արշավում դեպի Ցրոնք: Այո, մատնել էին: Ցրոնքը լցվել էր կրակոցներով, ձիերի կատաղի խրխինջներով: Երկինք բարձրացան հրդեհի լափլիզող բոցեր: Ֆիդայիները թաքնվել էին գյուղի մարագներից մեկում: Ոստիկաններն ու ասկյարները շրջապատել էին մարագը և պահանջում էին անձնատուր լինել: Ամեն անգամ պահանջը կրկնելուց հետո ի պատասխան ներսից մաուզերներ էին ճայթում: Ոստիկանապետի հրամանով ասկյարները խոտ լցրին մարագի շուրջը, քարյուղ թափեցին վրան և հրդեհեցին: Հանձնվելը բացառվում էր, բայց նաև անհնար էր ներսում մնալը: Փրկվելու միայն մի փորձ կարելի էր անել: Գուրգենը հրահանգեց թողնել մարագը, ուժեղ կրակով ճեղքել ոստիկանների ու ասկյարների շղթան: Այրվող շորերով, ծխից խեղդվելով, հայդուկները դուրս էին նետվում մարագից և գրեդակահար ընկնում: Գուրգենին հաջողվեց ճեղքել պաշարման օղակը, հասնել գյուղի դաշտերը: Եթե գիշեր լիներ, գուցե կարողանար փրկվել: Սակայն օրը ցերեկով, բաց դաշտում անհնար էր թաքնվել ձիավոր ոստիկաններից: Մի քանի տեղից վիրավոր, նա դիրք բռնեց մի քարի հետևում: Կռիվը շատ էր անհավասար...

Նահատակներին տեղափոխեցին բանտի բակ: Ոստիկանապետի հրամանով հսկիչները Սաքոյին դուրս բերեցին... առերեսման:

— Սրանցից ո՞ւմ ես ճանաչում,— հարցրեց Իզիթ փաշան:— Նայիր ուշադիր:

— Ոչ մեկին: Ձեր քաղաքակրթությունը նրանց այնպես է այլանդակել, որ չէի ճանաչի, եթե նույնիսկ հարազատ եղբայրներս լինեին...

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱՔՈՅԻ ԱՍՏՂԸ



Զոհվածները մեծ ու փոքր աստղեր են դառնում այն հողի երկնքում, որի համար նահատակվել են։

Ս. Ստեփանոս Նախավկայի
ՎԱՐԴԱՆ քահանա

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Սասունի գլխին կուտակված ամպերը հուժկու դղրդոցով, ամպրոպների ճարճատյունով գահավիժեցին ըմբոստ լեռներն ի վար: Տալվորիկի ձորում սասունցիները հարձակվեցին անհայտ նպատակով հին կամուրջը վերաշորոգող թուրք ոստիկանների ու վարպետների վրա, ստիպեցին հեռանալ Բարձրավանդակի սահմաններից: Ի պատասխան, Բիթլիսի կուսակալը նրանց դեմ ուղարկեց ջարդարարների մի քանի խմբեր, որոնք, սակայն, Տալվորիկի, Գելիգուզանի, Շենիկի ու Սեմալի զինված բնակչության ուժեղ դիմադրությանը հանդիպեցին ու ջարդված, ցաքուցրիվ հետ քաշվեցին: Սասունը պաշարվեց թուրքական զորքերով: Ընդհանուր հրամանատար Զեքի փաշան սուլթանից հրահանգ ստացավ լեռնաշխարհը խեղդել արյան մեջ: Սասունի դեմ արշավեցին Անատոլիական տասներկու հազարանոց բանակը, Դիարբեքիրի երեք հազարանոց հետևակային կորպուսը, հեծելազորային ու հետևակային գնդեր, հրետանային մարտկոցներ, համիդիեկան զորախմբեր, ռազմական այլ միավորումներ: Սրանց միացան նաև շուրջ երեսուն հազար մարդասպան թալանչիներ:

1894 թվի հուլիսին Շենիկի գյուղապետի տանը կայացավ ինքնապաշտպանության ղեկավարների խորհուրդը, ուր ճըշտ-

թվայնացրել է 1915.info կայքը

վեցին ռազմական գործողության ծրագրերը, վճռվեց, որ Սասունը պիտի մնչև իր վերջին լեռնականի մահը պայքարի արյունարբու հեղեղի դեմ: Օգոստոսի սկզբներին ռազմական տեխնիկայով զինված թուրք բանակները հարձակման անցան: Շենիկն ու Սեմալը հրի մատնվեցին, մեծաթիվ զոհերի գնով թուրքերը մտան Գելիգուզան: Ծայրահեղ անհավասար կռիվ մղելով, պաշարվածները նահանջեցին դեպի լեռները: Այդ օրերի վկան հետո գրելու էր. «Օգոստոսի 14-ին, գիշերուան ժամը 2-ին երկնակամարի վրայ լոյս երեւույթ մը տեղի ունեցաւ: Երկնքի գիւղին մէջ երկինքը լուսաւորուեցաւ կէս ժամի չափ: Լոյսը Սասունէն դէպի Խնուսի կողմը կ'երկարէր, և հիւսիսայգի կամ գիսաւոր աստղի մը պես սպիտակաթիռ կուգար երկինքէն: Այդ պահուն էր որ տեղի կ'ունենար Սասունի ջարդը...»:

Համբարձում Պոյաճյանի ընդհանուր ղեկավարությամբ Սասունը շարունակում էր հերոսաբար դիմադրել՝ արդեն հետ քաշված Քեփ լեռան ծերպերն ու Տալվորիկի մթին կիրճերը:

... Ժողովրդական սխրանքի ու նահատակման մասին Սնքարեցի Սաքոն այսպես հիշում էր հայացքն Արաբոյի աստղին, որը բանտի պատուհանից գտել էր նոյեմբերի հեռավոր, թղխպոտ մի գիշեր, անվանակոչել նրան, դարձրել իր կարեկիցն ու պայծառ բարեկամը...

* * *

Հովհաննես քահանան ծաղկախտով հիվանդ պառկած էր Թավրիզում: Բագրատ վարդապետ Թավաքալյանը, որ հետ էր կանչվել ս. Էջմիածին, այլևս չվերադարձավ, և նրա փոխարեն Մայր Աթոռը դեռ ոչ մեկին չէր նշանակել Դերիկի վանքի հոգևոր տնօրեն: Ապրիլի 27-ի ինքնապաշտպանական կռվից հետո ֆիդայիներն ու վանքի ծառայողները հեռացել էին Դե-

թվայնացրել է 1915.info կայքը

րիկից: Սրբավայրն անտիրական թախծում էր կիսաքանդ պարիսպների ներսում՝ դատարկ, լքված ու թալանված: Միայն աղավնիներն էին առաջվա պես թևածում գմբեթի վրա, որպես խորտակվող նավի կայմից օդ բարձրացած ճայեր: Հետո աշնան սառնաշաղ անձրևներն ու մշուշի քուլաները վանքը պատեցին անփարատելի որբությամբ: Դժվար էր մտածել, թե այնտեղ երբևէ նորից խունկ ու պատարագ, աղոթք ու մատաղ կլինի: Վանքն ինքն էր մատաղ դարձել իր ժողովրդի ճակատագրին. աստծուն չհասա՞ծ զոհաբերություն: Ծրտաշունչ գիշերներին հանկարծ անսահման տխրության խորքից հնչում էր նրա զանգը: Անկանոն, ասես վայրիացած հնչյուններով մի քանի անգամ հեծկլտում էր խավարի մեջ և լռում: Պատահական լսողները գիտեին, որ դա Հազրոն է, այդ կողմերում թափառող խելագար քուրդը: Շարաֆ ցեղապետը թալանել-տարել էր վանքի անասնանոցը և աստղաճակատ մի թուխ հովատակ ճանապարհին ինչ-որ տեղից փախել, սարերով հետ էր եկել Դերիկ: Եկել ու ցավոտ խրխինջներով պտտվում էր վանքի շուրջը: Հազրոն ամբողջ ամառ օղապարանն ուսին հետամտում էր ձիուն և արդյունքի չհասավ: Հետո, խելագար էր, մոռացավ ձիուն և հմայվեց ուշ գիշերներին զանգը հնչեցնելով: Խելագարի քրքրքիջն ու զանգի հեծկլտոցն իրար խառնված՝ անողոք ցավով տարածվում էին դեպի աշխարհի առավոտները: Կիսավեր պարիսպների շուրջը տխուր խրխինջացող մի հովատակ, գմբեթին մի քանի աղավնիներ, գիշերվա մեջ երբեմն փղձկացող զանգ և այս ամենի միջից այս ամենի վրա քրքիջը սփռող մի խելագար քուրդ՝ ոչ բարեկամ, ոչ թշնամի: Սա էր Դերիկի վանքը 1894 թվի այդ ողբերգական աշնանը:

Իսկ Ստեփանոս Նախավկայի վանքում կյանքը եռում էր: Այնտեղ կազմավորվել ու դժվարին ճամփորդության էր սպասում զինատար ֆիդայիների այն խումբը, որը պիտի Վան ուղե-

թվայնացրել է 1915.info կայքը

վորվեր դեռևս մայիսին: Իրար հաջորդած մի շարք հանգամանքներ, հատկապես՝ Դերիկի իրադարձությունները, խմբի առաքելությունը հետաձգեցին մինչև աշուն, ու այլևս անհնար էր սպասել: Սասունի հերոսամարտն ավարտվել էր արյունալի կոտորածով: Ֆոֆոքարի անձավներում դեռևս մարտնչող Գևորգ Չաուշը, Մուրադը և մյուս խիզախ ֆիդայիները ձերբակալվել, շղթայակապ տեղափոխվել էին Մուշ: Արհավիրքն սպառնում էր զանգվածաբար տարածվել ամբողջ լեռնաշխարհում: Վառնում գերլարված իրադրություն էր. հարկավոր էր մի չնչին բռնկում, որպեսզի թուրք զինվորներն ու բաշիբոզուկը սկսեին հայերի կոտորածը: Դա կարող էր լինել ամեն պահ: Իսկ զենքն ու զինամթերքը քիչ էր, եղած պաշարով հայերը կարող էին դիմադրել ընդամենը մի քանի օր, հնարավոր չէր լինի իրականացնել ծրագրած, նախապատրաստած ինքնապաշտպանությունը: Ջինատար խմբի առաքելության յուրաքանչյուր օրվա ուշացումը կարող էր դառնալ ավելորդ և անտեղի այցելություն՝ ընդամենը սեփական կյանքի վտանգումով, որից ոչինչ չէր փոխվի...

Հոկտեմբերն էր, լեռնագագաթներին և կիրճերում արդեն վայում էր վաղահաս բուքը: 22-ի լույս 23-ի գիշերը ս. Ստեփանոս Նախավկայի վանքում վերջնականապես ճշտվում էր զինատարների խմբի կազմը: Դա սովորական ճամփորդություն չէր: Խումբը, զենքով ու զինամթերքով բեռնավորված, հողմաշունչ լեռներով պիտի անցներ 150 կիլոմետր ճանապարհ: Սակայն ճանապարհ արտահայտությունն այստեղ սխալ է, նրանք պետք է գնային զուտ վայրի ուղիներով՝ խուսափելու համար ամեն տեսակ հանդիպումներից ու ընդհարումներից: Խմբի կազմում ընդգրկված էին կռիվներում փորձված, ուժեղ ու դիմացկուն ֆիդայիներ: Տաճկաստանից եկած երկու ուղեկիցները՝ Մարտիրոսն ու Ինգոն, նրանց առաջնորդելու էին միայն գազան-

թվայնացրել է 1915.info կայքը

ների ոտնահետքեր կրող կիրճերով ու բարձունքներով, ուր մոլեգնող ձնախառն քամիները բացառում էին անցանկալի հանդիպումները: Բաքվից վերադարձել էր Ալեքսանդր Պետրոսյանը՝ բերելով ութ բերդան, չորս ատրճանակ և երեք հարյուր ռուբլի ոսկեդրամ: Փողն օգտագործվել էր խումբը քրդական տարազով հանդերձավորելու, յոթ օրվա ճանապարհի ուտելիք հայթայթելու համար: Հոկտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերը վերջին ժողովով զինատարների «Դերիկ» անվանակոչված խումբը պետք է լուծեր երկու կարևոր հարց. ընտրեր ղեկավար և որոշեր՝ Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը ընդգրկվո՞ւմ է խմբում, թե՞ ոչ: Սևքարեցի Սաքոյի առաջարկությամբ խմբի ղեկավար ընտրվեց Վանի Պետոն՝ Ալեքսանդր Պետրոսյանը: Նա, ճիշտ է, ռազմագետ չէր, սակայն կարողանում էր ճիշտ կողմնորոշվել ամենաախառն իրավիճակներում, ուներ սառը, տրամաբանված դատողություն և զորու էր իրեն ենթարկելու մյուսներին: Սաքոյի առաջարկությունն անցավ միաձայն:

— Իսկ այժմ որոշենք. Նիկոլը գալի՞ս է մեզ հետ, թե՞ ոչ:

— Ոչ,— անմիջապես արձագանքեց Տաշոն՝ Հովսեփ Արղությանը:

— Ինչո՞ւ...

— Ես վստահ չեմ նրա ուժին ու հավատարմությանը:

— Բայց հիշենք,— տեղից կանգնեց Սաքոն,— թե ինչպես էր նա կռվում վանքի պաշտպանության ժամանակ: Հիշենք, թե քանի անգամ է զինաբեռով անցել սահմանը: Դու, Տաշո, հին անձնական վեճերը մի խառնիր ընդհանուր կարևոր գործին: Կարող ես չկամենալ Նիկոլի ընկերակցությունը, բայց նրա ուժը կասկածի տակ դնելը ծիծաղելի է:

— Ես էլ համաձայն չեմ, որ ղարաբաղցի Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը ընդգրկվի խմբի կազմում:— Օրիորդ Սաթենիկ

թվայնացրել է 1915.info կայքը

Մատինյանն էր: Մյուսները լռում էին: Լռում էր նաև ինքը՝ Նիկոլը: Եվ նրանն այն լռությունն էր, որ սարերի վրա լինում է ուժգնու ամպրոպից առաջ: Սալմաստում ուսուցչությամբ զբաղվող այդ երիտասարդի և նույնպես ուսուցիչ Հովսեփ Արղությանի — Տաշոյի մեջ, այո, ինձ վեճ կար, որը գիտեին բոլորը: Եվ լռում էին ոչ թե նրա հավատարմությանը կասկածելով, այլ խորհելով՝ խմբում այդ երկուսի ներկայությունը, նրանց լուռ թշնամանքը գլխացավանք չի՞ դառնա, արդյոք, բոլորի համար:

Նիկոլը չպայթեց ամպրոպի պես: Ուղղակի ասաց.

— Ես վերցնում եմ հրացանս և գնում խմբի հետ: Տեսնենք ով կարող է ինձ ստիպել, որ չգնամ:

— Իսկ ես ուրիշ առաջարկ ունեմ,— խմբի ղեկավարին դիմեց Սևքարեցի Սաքոն:— Նիկոլը և Տաշոն իրենց այս ողորմելի թշնամանքով արժանի չեն այն գործին, որին ծառայում են: Նրանց առաջարկում եմ հաշտվել մեկընդմիշտ՝ ֆիդայական երդումով անցածը մոռանալով, կամ հենց հիմա հեռանալ վանքից:

Ծանր լռություն տիրեց:

— Մենք ժամանակ չունենք երկար սպասելու,— կանգնեց Վանի Պետոն: Նիկոլը ոտքի տակ տրորեց ծխախոտի մնացորդը, մոտեցավ Տաշոյին:

— Ես մոռանում եմ մեր վեճը, Տաշո: Երդվում եմ իմ հրացանով և Արաքոյի հիշատակով:

— Ես նույնպես մոռանում եմ: Թող ագռավներն իմ պատանքից հեռու իմ աչքերն ուտեն, թե որ այլևս մի կաթիլ թշնամանք ունենամ քո հանդեպ:

Մազմզոտ դեմքերով հպվեցին իրար, ամեն ինչ հարթվեց: Խումբը պատրաստ էր: Վանի Պետոն կարդաց աղոթքները:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ֆարհադ՝ Սարգիս Օհանջանյան, էջմիածնեցի: Տաշո՝ Հովսեփ Արղության, Սանահին գյուղացի: Վարդան՝ Սարգիս Մեհրաբյան, շուշեցի: Ոսկան Ջադե՝ Եղիազար Հովսեփյան, վանեցի: Միհրան՝ Միսակ Էքմեքչյան, ղարսեցի: Սաքո՝ Սարգիս Ծովականյան, Սևքար գյուղացի: Շերո՝ շատախցի: Սախո՝ Մանանանդեցի Սահակ: Նիկոլ Տեր-Հովհաննիսյան, ղարաբաղցի: Եվ ես՝ Ալեքսանդր Պետրոսյան, գյումրեցի: Տասը հոգի: Մեր անձնական զենքերից զատ Վանի համար կրելու ենք քսանչորս հրացան, տասնմեկ ատրճանակ, երեք հազար փամփուշտ, երկու տոպրակ վառոդ: Ճանապարհին հիվանդանալ չկա, ժայռերից գահավիժել չկա, գելուգազանի հետ կռվի մտնել չկա: Միակ նպատակը զենքը Վան հասցնելն է, մնացած ամեն ինչը սխալ է և թշնամություն: Ինչպես միշտ, կգնանք միայն գիշերը: Նախատեսված են հանգստի վեց կայաններ: Յուրաքանչյուր կայան պետք է հասնենք դեռ լույսը չբացված, հանգստանանք մինչև իրիկնամուտ և շարունակենք ճանապարհը: Մեր ուղեկիցները լավ գիտեն լեռնային բոլոր անցումները, մոլորվելու վտանգ չկա: Վան հասնելով՝ ես ու Տաշոն կմնանք այնտեղ, որպեսզի օգնենք ինքնապաշտպանության կազմակերպմանը, իսկ մնացածներդ Բողազքյասանով կվերադառնաք Սալմաստ: Վերադարձին խումբը կղեկավարի Սևքարեցի Սաքոն:

Հոկտեմբերի 23-ի երեկոյան զինատարների բեռնավորված խումբը թողեց Նախավկայի վանքը: Ծաղիկ քահանան յոթ անգամ պահպանիչ կարդաց խմբի հետևից, և ծերունի Բաբիկ սպասավորը յոթ բաժակ ջուր շաղ տվեց մթնշաղն ի վեր: Հեռավոր անտառների չարագուշակ խավարից պահ առ պահ ճչում էր որբ թռչունը:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Ուղեկիցների աճելիքն սկսվում էր թուրքական սահմանից, մինչ այդ խումբը պիտի առաջնորդեր Շերոն: Մթամած ձորի վայրի գետափով ֆիդայիները միաշար գնում էին հոսանքն ի վեր: Ջրի ձայնը խլացնում էր մանր քարերի խշրտոցը նրանց ոտքերի տակ, հատուկենտ բառերը, որ փոխանակում էին շշուկով: Երեք ժամ հետո զինատարները դուրս եկան բաց հովիտ: Գետն այստեղ հոսում էր հանգիստ ու փռված, չուներ քարից քար գահավիժող մանրիկ ջրվեժներ ու աղմկալի հորձանք: Լպրծուն քարերի փոխարեն նրանց ոտքերի տակ այժմ անտեսանելի ճահճափոսեր էին: Զինատարները քայլում էին՝ երբեմն մինչև ծնկները խրվելով այդ նենգ ու ցուրտ փոսերի մեջ: Սաքոն լավ ծանոթ էր տեղանքին. քիչ հետո կսկսվեն մամխի թփուտները՝ մինչև Շեյթան Դարասի, այնուհետև կանցնեն մի քանի բլուր ու կերևա Դերիկի վանքը: Գիշերային խոիվ ամպերի տակից հայտնվեց պաղ լուսինն ու ամբողջ հովիտը մեկեն ողողեց գունատ, մեռելային լույսով: Նրանք կարող էին նկատվել անգամ երեք վերստից, սակայն ուրիշ ելք չունեին: Բաց հովտով լուսնալույսի ներքո նրանց ընթացքը, բարեբախտաբար, կարճ տևեց: Հասան մամխաթփերի խիտ զանգվածին, ու այլևս վտանգ չկար: Խումբը կանգ առավ կարճատև հանգստի:

— Շուտով կհասնենք առաջին կայանը՝ Դերիկի վանք,— ցածրաձայն խոսեց Պետոն,— բայց չգիտենք, թե ինչ վիճակ է տիրում այնտեղ: Հնարավոր է, որ բախվենք վանքում ապաստանած թափառական ավազակախմբի:

— Կույսի աղբյուրի մոտ դուք կսպասեք, ես կմտնեմ վանք ու կգամ,— ասաց Սաքոն:— Եթե նույնիսկ այնտեղ ավազակախումբ լինի, իմ ելումուտը չի կարող նկատել:

թվայնացրել է 1915.info կայքը

Խումբը գնում էր մամխի թփուտների միջով: Թրջված, փայտացած ոտքերը գետինը չէին զգում իրենց տակ: Մամխուտը լիքն էր բներում քնած մանր թռչուններով, որ երբեմն-երբեմն քնաթաթախ ծղրտոցով թպրտում էին փշոտ ճյուղերի խիտ զանգվածում: Ահա և Շեյթան Դարասին: Սաքոյի համար դա պատահական վայր չէր, երկու տարի առաջ այդտեղ սպանվեց Մովսես իշխան հայրենասերը, քրդի գնդակը շանթահարեց իր ծունկը: Չորս ավազակ տապալեց և հրացանի խզակոթին հենվելով՝ մինչև լույս մի կերպ հասավ վանք:

Ջինջատարների շարքը գիշերվա վերջին բլուրն էր բարձրանում: Սաքոյի երակներում արյունը հորդում էր ուժեղ, կարոտով ու տագնապալի: Գիշերամութի մեջ շուտով երևալու էր Դերիկի վանքը՝ իր ֆիդայության օրրանը, որտեղից հեռացավ վեց ամիս առաջ, Շարաֆ ցեղապետի արյունարբու հրոսակներին պարիսպներից հետ մղելու երեկոյան: Սաքոյին թվում էր, թե իրեն տեսնելով՝ վանքը պիտի խորաններից խուլ ճչա, զանգն ալեկոծելով: Եվ ներսում շշնջում էր. «Մեղավոր չեմ, շատ էինք քիչ, տասնյոթ հոգի: Հետո չեմ եկել, որովհետև այստեղ չէի: Թիֆլիսում էի, Տուլայում էի, Բաքվում էի: Ջենք էի հայթայթում քո և մեր բոլոր զոհերի վրեժի համար...»:

Թխպոտ լուսնի տակ աղետյալ ու լքված նավի պես երևաց հնամենի վանքը: Խումբը կանգ առավ: Սաքոն բեռն իջեցրեց մեջքից և իր մոսին հրացանի շնիկը հետ քաշելով՝ մոտեցավ վանքին: Ամայություն էր, մահվան խավար: Մեծ սրահի դուռը կիսաբաց էր, վաղուց չյուղված ծխնիները մեղմ հեծկլտացին հրումից: Սաքոն ծխահոտ առավ ու տեսավ կրակը, որ վերջին կայծերով դեռ մխում էր սրահի անկյունում:

— Ով ես, դուրս արի, շուն:— Նրա ձայնը մութ սրահում հնչեց սարսափելի ու խորհրդավոր:— Դուրս արի,— գոռաց ավելի բարձր: Արձագանք չկար: Ու հանկարծ թիկունքից՝

թվայնացրել է 1915.info կայքը

մուտքի սալահատակին, ձիու դոփյուն լսեց և խրխինջ։ Ծրջվեց, հրացանը դեմքին առած սպասեց խորհրդավոր հեծյալի հայտնության։ Դուռը թեթևակի ցնցվեց ու կրկին ընդունեց նախկին կիսաբաց դիրքը։ Նորից ցնցվեց, այս անգամ ավելի լայն բացվեց և, օդը հոտոտելով, ներս խցկվեց մի ձիու գլուխ։ Բնազդական ինչ-որ զգացումից Սաքոն փշաքաղվեց։ Դարձյալ առաջ մղվելով՝ ձին խրխինջաց ու արդեն սովորական խրխինջ չէր, սիրո, ցավի, կարոտի և ուրախության տխրաձուլ ղողանջ էր։

— Սարի, իմ ազնիվ ձիուկդ...— Սաքոն արտասվում էր ու համբուրում ձիու ռունգերը, պարանոցը, աստղազարդ ճակատը։— Դու դեռ կաս աշխարհում հա՛, կաս ու խռով, ու ձեղացած ես ինձնից, Սարի, իմ հրաշալի բարեկամ։

Սակայն զգացմունքներին տրվելու ժամանակ չկար, ձի է՝ մի տեղից հետ է եկել։ Սաքոն բեմից մի կտոր մոմ գտավ, վառեց ու գնաց դեպի ծխացող կրակի անկյունը։ Տեսավ մի հին, քրքրված բաճկոն, որ կրակի մոտ փռված էր հատակին։ Այստեղ մեկը կա, բայց ինչո՞ւ ինձ չսպանեց, երբ ամեն ինչ մոռացած փաթաթվել էի ձիու պարանոցին,— մտածեց նա։

— Սաքո, կուռո, ինձ չսպանես, մեղք եմ։— Բեմի հետևից դողալով հայտնվեց պատառոտված շորերով, դեմքը մազմորուքի մեջ կորած մի մարդ։

Սաքոն ճանաչեց խելագար քրդին, որին քանի՞-քանի անգամ կերակրել էր և ապաստան տվել վանքում։

— Դու ի՞նչ ես անում այստեղ, Հազրո։

— Սպասում էի, որ դու գաս և ինձ մի կտոր հաց տաս։

— Լավ։ Կրակը թեժացրու, ես գնամ հացը բերեմ։

Զինված մարդկանց մի խումբ տեսնելով՝ խելագարը ձորից սարսափով մտել էր բեմի հետևը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դուրս արի, Հազրո, մի վախեցիր, սրանք լավ մարդիկ են, քեզ չեն սպանի:— Սաքոն ստիպված էի նրան ուժով մոտեցնել կրակին:

Ջինատարները թաց գուլպաները փռել էին կրակի մոտ, տաքացնում էին ցրտից ընդարմացած ոտքերը: Շերոն էլ էր ճանապհում Հազրոյին, և Հազրոն նրանից վախենում էր: Հենց որ Շերոյի հայացքն ուղղվում էր իրեն, հաց ու պանիրը գցում էր ձեռքից և սկսում լացախառն հևալով դողացնել:

— Կեր, մի վախենա,— մտերմիկ ձայնով համոզում էր Շերոն,— կեր և պատմիր, թե ինչպես Ալեն փախցրեց կնոջդ...

Հազրոյի դեմքը տանջալիորեն ջղաձգվեց, խավար աչքերը բոցավառվեցին ինչ-որ հին կրակով, չկարողացավ պատասխանը կուլ տալ: Դողալով վեր կացավ, ձեռքերը երկինք կարկառեց, հրացայտ հայացքը մեխեց գմբեթին և անտիկ աշխարհի ավերակներից հարություն առած ողբերգակի սարսըռալի ձայնով սկսեց.

— Սալմաստի շուկայում հիսուն ոչխար ծախեցի և ոսկերիչ Հովհաննեսից տասնական կարմիր ոսկուց շինած վզնոց ու բիլազուկներ առա Սեյրանիս համար: Ճամփան երկար էր, սարերով եկա, որ շուտ հասնեմ իմ Սեյրանին: Եկա տեսա վրանն դատարկ ու կրակս հանգած է: Ասացին՝ Ալեն Սեյրանին տարավ, կարմիր ձիու ոտքերի տակ օջախիդ կրակը ցաքուցրիվ անելով Սեյրանին առավ ու տարավ: Քառասունհինգ օր հարցուփորձ անելով թափառեցի սարերում: Քառասունվեցերորդ օրը մի ծանոթ թուրք ոսկե վզնոցը վերցնելով ցույց տվեց այն քարանձավը, որտեղ պահվել էին Սեյրան կինս ու իմ նամարդ ցեղակիցը: Սպասեցի լավ մթնեց ու չարքի պես ներս մտա: Քնած էին, իրար փաթաթված քնած էին լրբերը: Արյունս սառեց: Ուրեմն, Սեյրան, դու քո կամքո՞վ ես փախել նրա հետ: Խանչալն Ալենի թիկունքը խրեցի, ծայրը Սեյրանի թիկունքից

թվայնացրել է 1915.info կայքը

դուրս եկավ: Ալենին թողեցի քարանձավում, Սեյրանին ոսկե բիլազուկներ հագցնելով թաղեցի գիհու կանաչ թփի տակ: Ու երգելով սարերից ցած իջա: Աստվա՜ծ, շուն աստված, ինչ էի արել քեզ...

Հազրոյի ձեռքերը ջարդված ճյուղերի պես կախվեցին ուսերից, աչքերը կրկին մշուշոտվեցին: Նիկոլը ցնցված էր.

— Արժե՞ր մի կտոր հացի համար խոշտանգել այս մարդուն...

Քնեցին: Քանի դեռ օրը չէր բացվել, Սաքոն Հազրոյի հետ ցախ բերեց ներս, բորբոքեց կրակը ու մինչև կեսօր արթուն հսկեց ընկերների քունը: Կեսօրին Պետոն արթնացավ, կիսաբաց դռան մոտ փոխարինեց Սաքոյին: Օրը խաղաղ վերջացավ: Միայն Սարի հովատակն էր մեկ-մեկ դոփում մուտքի սալահատակը ու վրնջում: Կրակի վրա հաց տաքացրին, ծառայացնոցից գտած կաթսայով ջուր եռացրին և ըմպեցին որպես թեյ:

Սաքոն հաց, պանիր ու շաքար թողեց Հազրոյի համար: Մյուսներն էլ իրենց ուսապարկերից ինչ-որ բաներ դրեցին կրակի մոտ:

— Հազրո, մենք գնում ենք Սալմաստ,— ասաց Շերոն:— Դու այստեղ կմնաս մինչև մեր վերադարձը, քեզ համար սոլեր ենք բերելու:

— Պետք չի խաբել թշվառին,— քրթմնջաց Տաշոն:

— Ստիպված ենք: Նա կարող է ելնել ճանապարհ և առաջին պատահածին ամեն ինչ պատմել:

Բեռան տակ կքած ֆիդայիները դուրս եկան վանքի դարպասից: Սարի հովատակը հետևում էր նրանց:

— Ի՞նչ անենք...

— Օղակ գցիր առջևի ոտքերը և Հազրոյին ասա, որ ցվիրում ես իրեն,— խորհուրդ տվեց Նիկոլը:— Թող վաղը նստի ու այցի գնա սարերի ձյուներում կորած գերեզմաններին...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Մեթերնեմ բանտի պատուհանից իրիկնամած հեռուներին նայելով Սաքոն փորձում էր վերհիշել այդ ծանր ճամփորդության մանրամասները: Նրա հայացքի դեմ, Ծովասարի վրա, Արաքոյի աստղն էր, որ աղոտվում էր ու պայծառանում՝ վերապրումների մեջ կարգավորելով հիշողության ընթացքը: Ի՞նչ եղավ այնուհետև...

* * *

— Մենք պիտի համարենք, որ մանապարհն այստեղից ենք սկսում,— ասաց Պետոն:— Մինչև այստեղ մեզ ծանոթ վայրեր էին, դժվարը սահմանագլխի ու նրանից այն կողմ ընկած լեռնային անցումներն են:

Ոչ ոք չարձագանքեց, դա բոլորին էր հայտնի: Հաջորդ կայանը Ծերոյի քարանձավն էր: Երեք տարի առաջ սահմանապահ ասկյարների հետ կռվում ծանր վիրավորվելով՝ Ծերոն սողեսող հասել էր այդ ամպոտ անձավը, և, ուրուրների հարևանությամբ, ութ օր մնացել այնտեղ: Չաթոն լեռները տակնուվրա անելով գտել էր վիրավոր ընկերոջը և հասցրել հայ հովիվների վրանները: Բարդուղիմեոս լեռան լանջով զինատարների խումբը քայլ առ քայլ մղվում էր դեպի բարձունքների ձյունե սահմանը: Գնում էր նախապես մշակված ուղիով՝ այն հաշվով, որ չհանդիպեն անասնապահ աշիրեթների, սահմանային դետքերի: Տաշոյի ոտքի տակից մի քար պոկվեց և գլորվելով իջավ լանջն ի վար: Ծունչները պահեցին: Քարը, սակայն, չդղրդաց ձորերում, երևի խրվեց-մնաց մացառաթփերի մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Զգույշ,— խավարի մեջ ասաց հետ շրջված Շերոյի հայացքը:

Նիկոլի և Սաքոյի բեռները մյուսների համեմատությամբ մի փոքր ծանր էին. հրացաններից ու փամփուշտներից բացի նրանք կրում էին նաև մեկական տոպրակ վառոդ: Վարդանը մի քանի անգամ փորձեց Նիկոլից վերցնել այդ «հավելյալ» բեռը, բայց նա չզիջեց: Հոգու խորքում դեռ մխում էր Տաշոյի հասցրած վիրավորանքը, թեև, երդումին հավատարիմ, աշխատում էր դա ոչնչով չարտահայտել:

Երբ հասան ձյունների սահմանին, Պետոն կարգադրեց իջեցնել բեռները: Առանց հանգստանալու այլևս ոչ մի քայլ հնարավոր չէր անել: Կաշեփոկերն արյունոտել էին ֆիդայիների ուսերը, ոտքերի տակ վերքեր էին բացվել, շորերը քրտինքից թրջվել, կպել էին մարմիններին: Եվ ոչ ոք չէր ուզում խոսել ցավի ու հոգնության մասին: Ֆիդայիները հենց նրանք են, ովքեր կարողանում են մարմնի մեջ զսպել հոգեկան ու ֆիզիկական բոլոր տառապանքները, ճակատագրի խաչը պատվով կրել մինչև սեփական շիրմափոսի եզրը: Լեռան գագաթից նրանք տեսնում էին հեռուներում առկայծող հատուկենտ լույսեր, որ խավարում տրոփող վանքեր էին կամ, երևի, գինվորական հսկիչ կետեր:

— Մեր քրտինքը սառույց է դառնում մեր մարմնի վրա, հարկավոր է շարժվել,— հուշեց գինագործ Միհրանը:

Լեռան մյուս երեսն անտառապատ էր, հիմնականում վիթխարի կաղնիներ էին, որոնց ճյուղերին պղձձե թիթեղների պես զնգզնգում էին ցրտից կարծրացած հատուկենտ տերևները: Անտառի միջով խումբը շարժվեց դեպի ձախ՝ դեպի խորունկ կիրճերով ընդհատվող լեռնազանգվածը: Վագրային փափուկ, անլսելի ընթացքով Շերոն դարձյալ գնում էր առջևից: Վայրի, ձյունաճար այդ բարձունքներում դժվար թե մարդկային ուրիշ

թվայնացրել է 1915.info կայքը

շունչ լիներ: Սակայն զինատարները առաջ էին գնում նույն ծայրահեղ զգուշությամբ՝ աշխատելով չջարդել ծառերի չոր ճյուղերը, քար չփախցնել ոտքի տակից: Պարսկական սահմանը մնացել էր հետևում, դիմացն Արևմտյան Հայաստանն էր, Ավետյաց Երկիրը, որ թախծում էր աշնանային խավարում՝ սըրբացած ճահճատակներով, վիրավոր մարմնի հառաչանքով, ճակատագրի անորոշությամբ: Շերոն կանգ առավ:

— Եթե լույս լիներ, մենք այստեղից պարզ կտեսնեինք Վանա ծովակն ու Ախթամար կղզին:

— Վանա ծովա՞կը...

— Այո:

Ոչ ոք, իհարկե, ոչինչ չէր տեսնում, բայց բոլորը հայացքները պարզել էին Շերոյի ցույց տված ուղղությամբ և հուզմունքից քարացել: Կաղնիները շարժող քամու վնգոցին ցածր, խռովահույզ մի ձայն խառնվեց: Սաքոն էր.

Անմեղ տեղ տիրած խորին լռություն,
Կարծես թե մեռած լինի բնություն.
Նստած սգավոր, պանդուխտ միայնակ,
Ոհ, քեզ եմ տեսնում, ով փայլում լուսնյակ...

Երգ չէր, երկրի հոգու ցավ էր, որ քամում խառնված հնչում էր ձյունեղեն բարձունքներից: Եթե աղոթք լիներ, հանուն կարգապահության Վանի Պետոն կընդհատեր աղոթքը, բայց այդ երգը չէր կարելի ընդհատել, ինչպես չի կարելի ընդհատել քամու ձայնը, ծովի շառաչը, ամպերի որոտը: Դումանն իր խուպուտ ձայնով միացավ Սաքոյին: Հետո Միհրանը միացավ, Տաշոն միացավ, Վարդանը միացավ:

Ջայն տուր, ով ծովակ, ինչո՞ւ լռում ես.
Ողբակից լինել չկամի՞ս դժբախտիս.
Շարժեցեք, զեփյուռք, աչքը վետ-վետ,
Խառնեք արտասուքս այս ջրերիս հետ...

թվայնացրել է 1915.info կայքը

Երգում էր ամբողջ խումբը։ Հետո լռեցին, ինչպես երկինքն է լռում աննրևելուց հետո։ Եվ շարունակվեց տատապալի Իրթը։

Անցել էր մեկ ժամ, Շերոն նորից կանգ առավ։ Նեղ ու ձյունոտ մի արահետ ժայռի պռնկով շրջանցում էր խավար անդունդը։ Ուրիշ ճանապարհ չկար, զինատարները պիտի գնային այդ արահետով, ծայրահեղորեն վտանգելով իրենց կյանքը։ Առաջինը Շերոն անցավ։ Ոչ միայն գնում էր, այլև ոտքով մաքրում արահետի ձյունը՝ հեշտացնելով ընկերների ուղին։ Նրան հետևեց Վանի Պետոն։ Հաջողությամբ մյուս ափը հասան նաև Նիկոլը, Սախոն, Վարդանը, Միհրանը, Ոսկանը։ Տանկատանից եկած ուղեկից Ինգոն սայթաքեց, ժայռի ծերպից կառչելով վերականգնեց հավասարակշռությունը, բայց ուսի պարկը քարերին խփվելով ընկավ անդունդ։ Դա գրեթե ողբերգություն էր, Ինգոն այդ պարկի մեջ տանում էր սննդի հիմնական պաշարը։ Սակայն ֆիդայիներն ուրախ էին, որ դա ուտելիքի պարկն էր և ոչ թե փամփուշտների կամ, ասենք, վառոդի։

— Չենք մեռնի,— ասաց Ոսկանը։ Նրա խոսքը հնչեց որպես ընդհանուր կարծիք։

Փարատվող խավարից արդեն նշմարվում էին լեռների աղոտ եզրագծերը։ Հասել էին Շերոյի քարանձավին։ Ժայռալանջից դուրս ցցված ելուստների ձյունը մաքրելով «տանտերը» ճարպկորեն բարձրացավ վեր, սուզվեց լեռան բարձր ու մութ խոռոչը։ Հազիվ էր ծածկվել տեսողությունից, երբ վերևում լսվեց հնչ-որ զարհուրելի մռնչյուն, և նույն ակնթարթին որոտաց բերդանը։ Սաքոն քարանձավ մտավ այն պահին, երբ Շերոն հոգեվարքի մեջ ջղաձգվող լուսանի պարանոցից հանում էր դաշույնը։

— Կներեք, որ կրակեցի, մինչև ձեռքս դաշույնին տանեի՝ կծվատեր։

թվայնացրել է 1915.info կայքը

Կիսախավարում արձակված գնդակը ընդամենը վիրավորել էր լուսանին, կաւեցրել նրա մահացու թռիչքը: Մնացածը ձեռքի ուժով ու սառը զենքով էր արել: Լուսանի վախվորած ձագերը վնգստում էին քարանձավի անկյունում: Վայրենորեն գեղեցիկ, տնային կատուների չափ այդ արարածները շողշողուն աչիկներով նայում էին մարդկանց, մոր անշարժ մարմնին ու ոչինչ չէին հասկանում: Սախոն լուսանի մարմինը տարավ, նետեց անդունդ: Վերադարձավ՝ բերելով մի խուրձ չոր ցախ: Հոգնությունից ջարդուփշուր մարմիններով նրանք թիկնել էին խարույկի մոտ և հերթով սուզվում էին խոր քնի մեջ: Քարանձավի մուտքի մոտ, հրացանը ծնկներին, նրանց հսկում էր «տանտերը»:

— Դու էլ քնիր,— ասաց Սաքոն:— Ջյուն է գալիս և մեր հետքերը վաղուց ծածկել է: Կրակի ծուխն էլ ով գիտե՝ ո՞ր տեղից է ելնում երկինք:

— Իմ քունը չի տանում, եթե կուզես լավություն անել, կապիր այս թելերի ծայրերը:

Քարանձավային մթան մեջ ոչ ոք չէր նկատել Շերոյի ուսի վերքը: Գազանի մագիլները ծվատել էին մաշկ ու մկան, Շերոն քրդի իր կարմիր գոտին հանելով, դրանով մի կերպ փաթաթել էր ուսը:

— Սպասիր, այդպես չի լինի:— Սաքոն հանեց թաշկինակը, բռնեց խարույկի բոցի վրա և, բոի մեջ տրորելով, դրեց վերքին: Գոտու միայն կեսն օգտագործեց, մյուս կեսը դեռևս պարտավոր էր լրացնել Շերոյի քրդական հանդերձանքը:

— Ցավո՞ւմ է:

— Ոչ, քնիր:— Եվ ինքն էլ քնեց՝ հրացանը ծնկներին ու ականջը ձայնի՝ պատրաստ ամեն շշուկի հետ վեր թռչելու:

Ջյուն էր գալիս, ծանրափաթիլ, խաղաղ ձյուն: Ասես երբեք չէր հանդարտվելու, և աշխարհն իր հին ու նոր պատե-

թվայնացրել է 1915.info կայքը

բազմաներով, ապրող ու կործանված քաղաքներով, երկրների ու ժողովուրդների ճակատագրերով մնալու էր ձյան տակ, և բա՛ր-ձրը վերևում, երբ հազար տարի հետո ձյունը, համենայնդեպս, դաղարի, ճերմակ ու արդար տարածության վրա սկսվելու է նոր մարդկանց մի ուրիշ կյանք, և այնտեղ ոչինչ չեն իմանալու ձյան տակ մնացած հին աշխարհի մասին: Այդպես լիներ և հնարավոր լիներ՝ տառապյալ մարդիկ խաղաղ քուն մտնեին իրենց լեռներում և հազար տարի հետո արթնանային արդար ու ճերմակ տարածության վրա, մեջները պահած անցյալ աշխարհի հերոսական ճահատակների հուշը...

* * *

Հսկիչը բացեց բանտախցի դուռն ու հետ քաշվեց: Ներս մտան կարսեցի քննիչ Դարվիշը ու հետ մղված գանգով մի անծանոթ մոութ:

— Դո՞ւ ես պահանջում ռուսական հյուպատոսին:

— Այո:

— Համարիր, որ ես եմ հյուպատոսը, ասա ասելիքդ:— Աքլորային մարտականությամբ անծանոթ թուրքը ցցվել էր Սաքոյի առաջ:

— Դո՞ւք,— Սաքոն ծիծաղեց,— ես ռուս ազգի մասին անհամեմատ բարձր կարծիքի եմ:

— Կալանավոր, քեզ հետ խոսում է Բ-դռան իրավաբանական խորհրդի անդամ Իլիաս էֆենդին,— հանդիսավոր հայտարարեց Դարվիշը:

— Դա չի փոխում ռուս ազգի մասին իմ կարծիքը:— Սաքոն արդեն մեկուկես տարի Մեթերհեմում էր և չէր կարող առաջվա պես թաքցնել թուրքերենի իմացությունը:— Իսկ ի՞նչ է ուզում Բ-դռան հարգելի էֆենդին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես ուզում եմ, որ դու ճիշտ գնահատես քո վիճակը և ճիմարություններ չանես:

— Դուք ինձ վիրավորում եք, էֆենդի:

— Նկատի ունեցեք, որ սա եզակի երևույթ է, ընդհանրապես ես ինձ թույլ չեմ տալիս խոսք փոխանակել նողկալի հանցագործների հետ:

— Ճիշտ այդպես ես եմ ատում ուխտավորին նողկալի հանցագործից չտարբերող քննիչներին:— Սաքոն շրջվեց պատի կողմը: Դուռը շրխկոցով փակվեց: Որտե՞ղ ընդհատեցին հիշողությունը...

* * *

Մեծ դժվարությամբ կարողացան Շերոյին համոզել, որ բեռան մի մասը զիջի ընկերներին: Քաղցը բոլորին տանջում էր, սակայն, հասկանալի պատճառով, ոչ ոք չէր հիշում այդ մասին: Ինգոն ծոցից հանեց մի կտոր քարթու գարեհաց.

— Սա իմ ծոցում էր դեռ այն ժամանակ, երբ հասա Նախավկայի վանք: Տնօրինեցեք,— ասաց գլխիկոր ու հետ քաշվեց: Ուսապարկերից ի հայտ եկան ևս մի կտոր չոր հաց ու մի բուռ շաքար: Պետոն ճշխար-ճշխար բաժանեց զինատարներին: Սաքոն տեսավ, թե ինչպես է Նիկոլն իր բաժին հացը կերցնում լուսանի որբ ձագերին: Ձյունը հազար տարի չշարունակվեց, երեկոյան դադարել էր: Խումբը, փոքր-ինչ կազդուրված, ճամփա ընկավ դեպի հաջորդ կայան՝ Աշակերտաց սար:

Զինատարներին առաջնորդում էին Մարտիրոսն ու Ինգոն: Անտառը վերջացել էր, անտառի հետ վերջացել էր ձյան սահմանը: Խումբն առաջ էր ընթանում թաց, քարքարոտ բլուրներով: Օդից մարդկային բնակավայրերի շունչ էր զգացվում, քամին շների հեռավոր հաչոց բերեց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Պետք չի անհանգստանալ, շատ են հեռու,— առանց հետ շրջվելու ասաց Մարտիրոսը:

Խմբի անդամները առանձին-առանձին՝ ուրիշ խմբերի հետ, շատ անգամ էին անցել սահմանը, զենք հասցրել Վան: Բայց եղել էին 4—5 հոգով, տարել էին 5—6 հրացան: Եվ եկել էին բանուկ ճանապարհներով, առևտրական քարավաններին խառնված: Բոլորն էլ առաջին անգամ էին այդպես մեծ խմբով ու ծանր բեռով անցնում լեռների դժոխային ուղիներով: Չէին խոսում, սակայն քաղցն զգացնել էր տալիս:

— Մենք կարող ենք թափվել այս քարքարուտներում ու ճանճերի պես կոտորվել, գուցե դա մեծ ցավ չէ: Բայց պարտավոր ենք զենքը տեղ հասցնել,— ասաց Պետոն, երբ խումբը, հոգնատանջ ու ցրտահար, կանգ էր առել կարճատև հանգրստի:— Պետք է մի բան մտածել:

— Մինչև կայան հասնելը ոչինչ չենք կարող անել:— Ինգոն մտախոհ նայում էր խավարին:— Մարտիրոս, դու խումբն ուղեկցիր Աշակերտաց սար և այնտեղ սպասեք ինձ: Միայն թե վտանգավոր է այս բեռը հետս քարշ տալը:

Ինգոն գինաթափվեց և ձեռնափայտին հենվելով գնաց այն ուղղությամբ, որտեղից քիչ առաջ շների հեռավոր հաչոցներ էին լսել:

— Գուցե մեզնից մեկը գնա՞ նրա հետ:

— Պետք չի, նա լավ գիտե այս վայրերը և ծանոթներ ունի քրդական գյուղերում: Ինգոն չի կորչի: Իսկ մենք շարժվենք, արդեն լուսաբացի հոտ է փչում:— Մարտիրոսը վեր կացավ:

Թաց քարքարուտներին հաջորդեց սև ճահճացեխով պատված թեք լանջը: Հետո սկսվեց անտանելի մի վերելք, որով գինատարներն առաջ էին մղվում գրեթե չոքեչոք: Վերջապես լույսի առաջին ցոլքերի հետ խումբը հասավ Աշակերտաց սարի գանգուր անտառակը: Զգուշությամբ շրջակայքը զննելով, Մար-

թվայնացրել է 1915.info կայքը

տիրոսը հետ քաշեց հաճարենու բճի մոտ կուտակված չոր խաշամը և տեսան ուռենու ճյուղերից հյուսված մի դուռ:

— Ցածում աստիճան է դրված, ոտքերով շոշափելով իջեք:

Մարտիրոսի ստորգետնյա ապարանքը, ինչպես կոչեց Սաքոն, գիշերային զարհուրելի ճանապարհից հետո իրոք ապարանքի շքեղություն ուներ: Տաք էր, առատ խաշամը՝ փափուկ ներքնակ, և լույս կար: Ոսկեզօծ ջահ չէր, ընդամենը մարխ էր, բայց ինչ լո՛ւյս էր տալիս: Բոլորի ոտքերը քրքրվել էին և ոտնամանները լցված էին արյունով: Կաշեփոկերն ուսերի վրա շերտ-շերտ վերքեր էին բացել: Շերոյի վերքն ուռել էր, ևս ջերմում էր: Մարտիրոսը ինչ-որ սև, փափուկ խեժով շփեց վերքն ու պինդ կապեց: Նա դուրս եկավ գետնափորից և մի քանի րոպե անց այնտեղ հայտնվեց ոչ թե վերևից, այլ պատի միջից: Ջինատարները նոր միայն տեսան, որ գետնափորը երկրորդ ելք ունի:

— Կարող ենք հանգիստ քնել, հիմա սատանան անգամ չի կարող գտնել մեզ:

— Սատանային չենք կարոտել, բայց հարկ է, որ Ինգոն գտնի մեզ,— քրթմնջաց Տաշոն:

— Կգտնի: Միայն թե դատարկաձեռն չվերադառնա:

Գետնափորը լցվեց հոգնած մարդկանց խոր մրափով:

... Դաշույնն ու արծաթե գոտին զոհաբերելով Ինգոն ստացել էր երկու հատ բուչափ գարեհաց, մի տոպրակ քամած մածուն և գառան խաշած ազդր: Այնքան էլ քիչ չէր, գոնե կդիմանային մինչև Վարագ:

Վերջին այդ գիշերվա երթը քայլել չէր, գնալ չէր, շունչը բերանում մի կերպ շարժվել էր: Շեյթան Դարասիի գնդակը Սաքոյի ծնկի մեջ շիկացել, այրում էր ոտքը: Ցավից քրտինքը լցվում էր աչքերը, շունչը կտրվում էր, ուղեղի մեջ մղձավանջային տեսիլքներ էին արթնանում: Ճամփորդության չորրորդ՝

թվայնացրել է 1915.info կայքը

ամենաառաջին գիշերն էր: Խումբը դանդաղ, երերալով, ցավի հառաչները ներսում խեղդած շարունակում էր երթը գորշ բլուրների ստորոտով:

— Այս կողմերում քրդերի հետ բախվելու վտանգ կա,— ուռած լեզվով, դժվարությամբ բառերն արտաբերելով ասաց Մարտիրոսը:

— Կկռվենք:— Ամբողջ ճամփորդության ընթացքում իր հի՛նգ, թե վեցերորդ բառն արտաբերեց վանեցի Ոսկան Զադեն, որը դարձյալ ներկայացրեց ինչպես ընդհանուր կարծիք: Ծատերի հագին կոշիկներ չկային: Բաց վերքերով ոտքերը փաթաթել էին խաշամով ու քրջերով, այդպես ավելի հեշտ էր շարժվելը: Ծարավը դեղին օձի պես գորշ բլուրներից սողալով մտել էր խմբի մեջ ու տանջում էր բոլորին: Միլիոն տարվա պաղ անտարբերությամբ բլուրների վրա փայլում էր մի գունատ, ցրտահար լուսին: Վաղուց արդեն չկար կանոնավոր շարք ու շարժ, գնում էին՝ ով ինչպես կարող էր: Սախոն մի կով տեսավ, որ բլրալանջին թեք ընկած մզզում էր: Մոտեցավ ու հետ եկավ:

— Մոլորված անասուն է, ոտքն ընկել է թփարմատների ցանցի մեջ ու երևի կոտրվել: Հանեց դաշույնն ու սկսեց կտրտել արմատները: Կովի պտուկներից կաթ էր ծորում թաց, գորշ խոտերին: Երբ ոտքն ազատված էր արմատների ոստայնից, անասունը մնչալով վեր կացավ, ճնազանդ կանգնեց փրկարարների առաջ: Սախոն խոշոր ձեռնափերով լայն բուռ արեց, պահեց կովի կրծքի տակ:

— Կթեք: Ինչպես չարությունը, այնպես էլ բարությունը պետք է հատուցում ունենա:

Մեկական կում մարմնատաք կաթը փոքր-ինչ հագեցրեց տանջող ծարավը: Երկու բլուր հետո խումբը տեսավ տխրահեն

թվայնացրել է 1915.info կայքը

վառվող մի խարույկ, չորս կողմը՝ մարդկային մի քանի ստվերներ:

— Ովքե՞ր եք,— հրացանն իջեցնելով հարցրեց Սախոն:

Անծանոթներն անակնկալի եկան: Նրանցից մեկը, դուրձյալ բրդերեն, պատասխանեց.

— Խաղաղ մարդիկ ենք, աղա, թալանելու ոչինչ չունենք: Երեք օր առաջ մեզ արդեն թալանել են...

— Սաքոն թող գա ինձ հետ, մնացածներդ շրջանցեք բլուրը,— այդ վայրերին գիտակ մարդու իրավունքով հրահանգեց Սախոն:

Չորսն էին, մեկը տարիքով, մյուսները գրեթե պատանի:

— Ջահիրիբեկի հոտաղներն ենք,— ասաց տարիքովը,— երեք օր առաջ յոթն էինք: Կարմիր սարի թուրք ղաչաղները վրա տվին, սպանեցին մեզնից երեքին ու հոտը քշեցին-տարան: Ուտելու ոչինչ չունե՞ք, աղա:

— Չէ, մենք էլ ոչինչ չունենք,— փնթփնթաց Սախոն և առանց կրակին մոտենալու, գնացին բլուրը շրջանցող ընկերների հետևից:

— Մոտենում ենք Վարագա սարին,— ասաց Մարտիրոսը:— Բայց գիշերն արդեն վերջանում է, կայան չենք հասնի:

— Ի՞նչ պիտի անենք:

— Մի կերպ հասնենք ձորի թփուտներին, թաքնվենք մինչև երեկո:

... Արթնացան խառնուխռիվ ձայներից: Ձորի ճանապարհով գալիս էին մոտ երեք տասնյակ զինված ձիավորներ:

— Սրանց կռիվը Կարմիր սարի ղաչաղների հետ է,— ասաց Սախոն,— բայց եթե մեզ նկատեն, ընդհարումն անխուսափելի կլինի:

— Պատրաստվել կռվի,— Վանի Պետոն առաջինն իրքը

թվայնացրել է 1915.info կայքը

չխկացրեց հրացանի փականաղակը:— Կկրակենք միայն ամենավերջին պահին, իմ հրահանգով:

Գնդակ արձակելու հարկ չեղավ, քրդերը չնկատեցին նրանց: Մթնեց ևս մեկ տանջալի օր:

Կեսգիշերին զինատարները, շարժվելու ընդունակությունն իսպառ կորցրած, փռվել էին Վարագա սարի ստորոտի աղբյուրի մոտ: Ծարավը հագեցրել էին, և բոլորի մեջ գիշատիչ գազանի նման ոռնում էր քաղցը:

— Եղբայրներ,— ասաց Ինգոն,— Վարագա վանքում ուխտի օրեր են, առավոտ ծեգին ջրի եկողներ կլինեն, մենք պիտի բարձրանանք կայան:

Մեկ ժամ անց տանջահար մարդիկ թփերից կառչելով, չորքթաթ ու սողեսող շարունակեցին երթը: Կայան չկարողացան հասնել, ուղղակի ապաստանեցին անտառի մի թանձր, կուսական անկյունում:

Լույսը բացվեց: Առաջին բանը, որ Ծերոն տեսավ, զկռենու ճյուղերին հասունությունից սևացած խոշոր պտուղներն էին: Արթնացրեց բոլորին: Սաքոն առաջին անգամ համոզվեց, որ վայրի պտուղը կարող է փոխարինել հացին: Սակայն հաց չէր, և նրանով կազդուրված Սախոն հայտարարեց.

— Ես իջնում եմ վանք՝ սնունդ բերելու:

Նա լավ գիտեր տեղանքը, հիանալի խոսում էր քրդերեն, և ոչ ոք չառարկեց: Ինչ արած, գործը պահանջում էր, որ հայ մարդը որպես քուրդ ներկայանա հայոց արբավայր... Վանեցի Ոսկանն ու զինագործ Միհրանը, ովքեր նույնպես լավ խոսում էին քրդերեն, խմբի ղեկավարից հրահանգ ստացան իջնել սարից, իրենց համար որևէ կերպ սնունդ հայթայթել և ճանապարհվել Վան: Նրանք պարտավոր էին հանդիպել ինքնապաշտպանության ղեկավարներին, հայտնել, որ խումբը

թվայնացրել է 1915.info կայքը

հասել է Վարագ: Այնուհետև Մկրտիչ Ավետիսյանը կկազմակերպեր խմբի և բեռների տեղափոխումն Այգեստան:

Սասունի արյունոտ դեպքերից հետո սուլթանի հրամանով տարբեր վայրերում որոշ թվով հայ կալանավորներ էին ազատվել բանտերից, կյանքը փոքր-ինչ խաղաղ էր: Եվ Վան քաղաքից, մոտ ու հեռու հայկական գյուղերից հարյուրավոր ուխտավորներ էին եկել Վարագա վանք: Դհոլ-զուռնայով քեֆ էին անում, պարում ու երգում:

Օրվա տարբեր պահերին աշխարհը տարբեր գեղեցկություն ունի: Զինատարները, որքան էլ քաղցած ու տանջահար, Վարագի բարձր լանջից հմայված դիտում էին իրենց առջև փռված սքանչելի բնապատկերն ու չէին հագենում: Ծովի երկնակապույտ մակերևույթին սփռվել էին արևի ծիրանացող շողերը և միլիոնավոր ոսկե ձկնիկների պես խայտում, վետվետում էին կոհակների մեջ: Սա, թերևս, Վանա ծովի ամենագեղեցիկ ակընթարթն էր, որ լինում է ուշ աշնան թավշե արեգակի տակ: Ծերմակ առագաստավոր նավակները երազային օրորով լրացնում էին պատկերը: Հիբլիական հսկաների պես այդ անկրկնելի գեղեցկությունն էին հսկում Սիփանը, Արտոսը, Զիաթռնուկը, ավելի հեռվում՝ Ռշտունիքի կապտամով լեռները: Մշուշի թափանցիկ շղարշների մեջ երևում էր Վանը՝ միջնաբերդով ու Այգեստանով:

Սախոն չմոտեցավ քեֆ անողներին, նրանց մեջ կարող էր ծանոթների հանդիպել: Մտավ վանքի բակ, որպեսզի մթերք խնդրի վանականներից և... երես առ երես հանդիպեց Չոլախ Դարմոյին: Սախոն ճանաչում էր նրան, գիտեր, որ այդ լրտեսը թափառում է բնակավայրերում և մատնություններ անում: Չոլախ Դարմոն ծանոթ չէր Սախոյին, նույնիսկ եթե ծանոթ լիներ, դժվար թե նրան ճանաչեր քրդի պատառոտված շորերում: Բայց աչքից չվրիպեց նրա հոգնած, տառապած տեսքը և կասկածանքով մոտեցավ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ի՞նչ մարդ ես դու, քեզ ի՞նչ է հարկավոր այստեղ:

— Աղ տանող քուրդ եմ, աղա, երեխեքս ձորի ճամփին սայլի մոտ սպասում են, եկել եմ մի քիչ հաց խնդրեմ:

— Քրդերեն լավ ես խոսում, բայց վայ թե քուրդ չես, ինչ արի ես ինչ գնացիր...

Չոլախ Դարմոն կառավարության ներկայացուցչի պես մի բան էր վանքում և նրա խոսքն օրենք էր: Կարգադրեց Սախոյին բանտարկել ախոռում, մինչև պարզի նրա ով լինելը: Սախոյի համար դա ի՞նչ բանտ էր, առաստաղի մի անկյունը քանդեց, դուրս եկավ ախոռից, անցավ վանքի պարիսպն ու կեսգիշերին բարձրացավ Վարագ: Նրան կորած անասուն փնտրող մի հայ հովիվ պատահեց և գարու թեփից թխած մի քանի կտոր չոր հաց տվեց:

Հաջորդ օրը, մայրամուտից հետո, զինատարներն իրենց ապաստարանից տեսան մի մարդու, որ աղբյուրի ձորից կապոցը ձեռքին բարձրանում էր դեպի անտառ: Գալիս էր ու ստեպ-ստեպ կանգնում, շուրջը նայում: Սաքոն ու Վարդանը հրացանները վերցրին, ծառաբների հետևը թաքնվելով ընդառաջ գնացին եկողին: Մարդը հասավ անտառ, ֆիդայական մի երգ սուլելով խորացավ մայրիների թավուտում: Գալիս էր ուղիղ դեպի Սաքոն: Երբ նրանց մի քանի քայլ էր բաժանում, Սաքոն դուրս եկավ ծառի հետևից և, հրացանը կրակի պատրաստ՝ կանգնեց նրա առաջ:

— Կանգնիր, ո՞վ ես և ո՞ւր ես գնում:

— Ձեզ մոտ եմ գալիս, իջեցրու հրացանը:— Մարդը հանգիստ ցած դրեց կապոցը, նստեց արահետի եզրին:— Երեկ գիշեր ձեր ընկերը դատարկաձեռն վերադարձավ վանքից, մի քիչ ուտելիք եմ բերել:

— Ո՞վ ես դու:

թվայնացրել է 1915.info կայքը

— Արտակ է անունս, վանքի սպասավոր եմ: Գիշերը ձեզ պետք է ուղեկցեմ Ախթամար:

— Ինչո՞ւ:

— Վանի ներկայացուցիչն այնտեղ է սպասում ձեր խմբին: Երեկ Վան ուղևորված ձեր երկու ընկերները նույնպես Ախթամարում են:

Սաքոն ու Վարդանը կասկածանքով նայեցին իրար:

— Իսկ ինչո՞վ համոզվենք, որ դու մի գարշելի լրտես չես:

— Ես խոսքս չավարտեցի: Ձեր տեղափոխումն անհրաժեշտ է նաև այն բանի համար, որ Չոլախ Դարմոն գնացել է Վան՝ ասկյարներ բերելու: Նա վստահ է, որ ախոռից փախչողը ֆիդայի էր և վանքի շրջակայքում ֆիդայիների խումբ է հավաքվանել:

— Հետևիր մեզ:

Վանի Պետոն ուշադիր լսեց անծանոթին և համոզվեց, որ նա լրտես չէ: Մարդը ճանաչում էր Վանի հնքնապաշտպանության կազմակերպողներին, ստույգ տվյալներ ուներ այնտեղ տիրող իրավիճակի մասին:

— Համենայնդեպս, եթե այս ամենի մեջ ստորություն լինի, առաջին գնդակը քո սիրտն է խրվելու,— սպառնաց Վարդանը:

— Պարզ է: Իսկ հիմա հաց կերեք:

Արտակ սպասավորը բացեց կապոցը և խաշամի վրա շարեց հաց, պանիր, խաշած միս: Շերոն ձեռքը պարզեց սեղանին, բայց Սաքոն կանխեց նրան՝ դիմելով սպասավորին:

— Նախ դու ամեն ինչից մի-մի կտոր կեր:

— Տրամաբանական է,— ասաց Արտակը:— Մանավանդ որ ինքս էլ քաղցած եմ:

Գիշերը, երբ Արաբոյի աստղը բարձրացավ ու ցոլաց Ծովասարի վրա, անտառի ներքին փեշերից գիշերաթռչունի ճիչ

թվայնացրել է 1915.info կայքը

խվեց: Արտակ սպասավորը բուի կռինչով պատասխանեց նրան: Կես ժամ հետո ճիչը կրկնվեց ավելի մոտիկից:

— Գնանք ընդառաջ,— ասաց հոգու խորքում դեռևս կասկածներ տարուբերող Սաքոն: Մարտիրոսը, Շերոն, Նիկոլը և Վարդանը, սպասավորին մեջներն առած, դուրս եկան թաքստոցից: Եկողները երեքն էին:

— Չոլախ Դարմոն երկու հարյուր ասկյար է բերել վանք, սպասում են լուսաբացին, որ շղթա կազմած մտնեն անտառ,— հայտնեցին նրանք:

— Ինչո՞ւ Վանի ընկերներից ոչ ոք չկա ձեզ հետ:

— Դուք նրանց կհանդիպեք ծովափին, նավակների մոտ,— Պետոյին հանգստացրեց թավ, ճերմակախառն մորուքով վանականը:

— Իսկ ինչո՞ւ բեռը միանգամից չեք տեղափոխում Վան:

— Այժմ և առաջիկա մի քանի օրերին դա անհնար է: Քաղաք մտնող բոլոր ճամփաներին պահակախմբեր են կարգված, Բահրի փաշան լուր է ստացել, որ Գևորգ Չաուշը ֆիդայիների մեծ ջոկատով հարձակվելու է քաղաքային բանտի վրա:

— Իսկ լուրը հավաստի՞ է:

— Ոչ, Գևորգ Չաուշն այդպիսի անխոհեմ քայլ չի անի: Ուղղակի կալանավորներն են նրա անունով սպառնացել բանտի վերակացուներին, կամ լրտեսներից մեկը փող է վաստակել մտացածին այդ լուրով: Մի քանի օր հետո կհասկանանք, որ սուտ է և հսկողությունը կթուլացվի: Այն ժամանակ էլ գնանք կփոխադրենք Վան:

Խումբը լայն աղեղով շրջանցեց վանքը, մի փոքր հանգիստ առավ Ջիաթռնուկ լեռան ստորոտում և մոտեցավ ծովին: Նավակների մոտ, լուսնի լույսի տակ, Պետոն ճանաչեց վանեցի որմնադիր Հակոյին, որ երկու վանականների հետ նրանց էր սպասում:

թվայնացրել է 1915.info կայքը

Սաքոն առաջին անգամ էր նավակ նստում և մինչև կղզի հասնելը ալիքների օրորումից զարհուրելի տուժելով՝ ինքն իրեն երդվեց հաջողությամբ ափ վերադառնալուց հետո այլևս ոչ մի գնով չհանձնվել այդ «արտխառնուքի տաշտակին»: Վանքի միաբանները նրանց դիմավորեցին մեղմ շարականով: Հոգնածությունից ջարդուփշուր փիդայիները քնեցին մինչև հաջորդ օրվա մայրամուտը: Պետրոս վարդապետը հոգ տարավ, որ զինակիրները լավ հանգստանան: Նրանք յողացան, փոխեցին շորերը՝ վրայից հագնելով մեկական փարաջա և իրար նայելով խեղդվում էին ծիծաղից: Կղզում բժիշկ կար, նա մաքրեց Շերոյի ուսի թարախոտած վերքը, դեղ դրեց ու վիրակապեց: Այստեղ պարզվեց, որ Աշակերտաց սարում Նիկոլի բութ մատը դուրս է ընկել տեղից և մինչ այդ ոչ որ չի իմացել: Բժիշկը տնտղեց ու փաթաթեց նաև ճանապարհի տանջանքներից գինատարների ուռած, վերքոտված ոտքերը: Խումբն Ախթամարում մնաց չորս օր: Տառապալի ճամփորդությանը հաջորդած այդ երանելի օրերը՝ շաղախված լույսով ու խաղաղությամբ, Սաքոն հիշելու էր ամբողջ կյանքում: Այդ ժամանակ նա ընդամենը քսանչորս տարեկան էր: Հիշելու էր հայր Պետրոսի ցույց տված այն կապտավուն քարը, որին կանգնած՝ Րաֆֆին դիտել էր ալիքների ծփանքը և տխրաձայն երգել «Ձայն տուր, ով ծովակ» երգը: Հիշելու էր Արծրունի թագավորների մետաքսագործ դրոշակը՝ վանքում սրբորեն պահպանվող, ուրիշ-ուրիշ բաներ:

— Շարժվելու ժամանակն է,— ասաց երիտասարդ Հակոբ քահանան:— Ծովի ափին կրակը վառվեց:

Երկու նավակներ, զենքով ու զինատարներով, աստղացոլքերի տակ մղվեցին դեպի ափ:

— Տեսնես հայդուկի մեր կյանքում նորից մեկ անգամ արժանի կլինե՞նք այս պուճուր, սիրուն աշխարհին,— հեռացող կղզուն նայելով, շշնջաց Նիկոլը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կարևորն այն է, որ այդ աշխարհն ի՛նքը միշտ լինի և Պետրոս սրբազանի նման մարդիկ տևօրինեն նրա սուրբ գոյությունը,— Սաքոյի ձայնն էլ էր դողում հուզմունքից:

... Գիշերվա ժամը երեքին խումբը հասավ Վան:

— Քաղաքի փողոցներում ձիավոր պարեկներ են շրջում,— զգուշացրեց Հակոն:— Պետք է գնանք այգիների միջով: Հանկարծահաս վտանգի դեպքում կբաժանվենք չորս մասի և ամեն մասը տեղացիներիցս մեկի առաջնորդությամբ կբռնի որևէ ուղղություն: Հետո կհավաքվենք Այգեստանում:

Դատարկ, մութ այգիներով զինատարներն անշշուկ գնում էին դեպի հայոց թաղ: Մկրտիչ Ավետիսյանի ուղարկած մարդիկ նրանց տանում էին ծանոթ տների մոտով, որպեսզի վտանգի հանդիպելիս կարողանան թաքնվել: Եվ այդ պահը եղավ: Դիմացից երևացին մոտ երկու տասնյակ թուրք զինվորներ, որոնք ինչ-որ տեղից վերադառնում էին զորակայան: Այգին նոսր էր, փողոցից նրանք անպայման կնկատեին ծառուրանքներով շարժվող մարդկանց:

— Այս կողմ թեքվեք,— հրահանգեց Հակոն՝ մոտենալով մի տան:— Սրա տերը մատնիչ է, բայց ուրիշ ելք չունենք...

Դուռը բացեց 12—13 տարեկան քնաթաթախ մի տղա:

— Չվախենաս, տղա ջան, հայեր ենք, մի քիչ տաքանանք ու գնանք:

— Ներս եկեք, ջանֆիդաներ,— տարիքին անսովոր լրջությամբ ու համարձակությամբ հրավիրեց տղան: Զինատարները նախամուտքում կարկամել, մնացել էին. ախր Հակոն ասաց, որ տան տերը մատնիչ է: Տղան ասես գուշակեց նրանց մտքինը.

— Ներս եկեք, մի վախեցեք, հերս հինգ օր առաջ մեռել է...

Վան քաղաքի վրա բացվում էր ուշ աշնան կապարագույն առավոտը:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Մահը վաղուց արդեն սարսափելի չէր, նրան տանջում էր անորոշությունը: Զգում էր վերջին: Բայց չէր ուզում դրան հասնել հանցանքի խոստովանությամբ, որը պարտություն կլիներ: Մանավանդ որ իր գործածը հանցանք չէր, ինքը հանցագործ չէր՝ ոչինչ չէր արել իր երկրի ու ժողովրդի դեմ: Թուրքն էլ հայ երեխա, հայ կին, հայ քահանա մորթելով քան իրեն ոչինչ չի անում սեփական երկրի ու ժողովրդի դեմ: Բայց անում է, դրանով նա կործանում է իր հայրենիքի բարոյականությունը, իր ժողովրդի հոգին դարձնում է բուի կռնչավայր: Սակայն այս ինչե՞ր եմ մտածում: Սարգիս Ծովանյանը սթափվեց ըմդարմացնող մտքերից, ի՜նչ հայրենիք, ի՜նչ ժողովուրդ, ի՜նչ բարոյականություն: Սրանց հայրենիքի ուժը Մեթերհեմ բանտն է, ժողովրդի զավակը՝ Մրճե չաուշը, բարոյականության փաստը՝ նրա զնդանում կատարվող ամենօրյա խոշտանգումը: Ծովանյանի ներսում երբեմն ցանկություն էր առաջանում ըմկնել այդ զարհուրելի տանջարանը և Մրճե չաուշին ու նրա տերերին ապացուցել Մեթերհեմի խոշտանգիչ զորության ամբողջ ողորմելիությունը, հասկացնել, որ մարդուն սպանել՝ դեռևս չի նշանակում ծնկի բերել նրա ուժն ու գաղափարը: Ծովանյանը ձգտում էր վերջին և այդ վերջն անտես էր, ինչպես մոայլ ամպերի հետևում մոլորված Արաբոյի աստղը: Մենախուց: Այս էլ քանի՜ անգամ: Սաքոն չէր հասկանում այդ հանճախակի տեղափոխությունների իմաստը: Պարզապես տանջե՞լ են ուզում, թե՞ ծրագրված գործողություն է:

Մեթերհեմի սև կառքը կանգնեց քաղաքային դատախազության շենքի առաջ:

— Բողոքել եք բանտային օրինականության դեմ, գտնում եք, որ մարդկանց այնտեղ հանիրավի տանջանքների են են-

թվայնացրել է 1915.info կայքը

թարկում: Ի՞նչ ապացույցներ ունեք:— Մեհմեդ չաուշը թարգմանեց դատախազի հարցը:

— Բանտային օրինականություն կոչվածը կապ չունի Մեթերհեմի հետ, ես չէի կարող բողոքել մի բանի դեմ, որը գոյություն չունի: Ք դռանը հասցեագրած իմ ճամակը դահիճ Մըհեի գազանությանն է վերաբերում:

— Ինձ չի հետաքրքրում ոչ քո ճամակը, ոչ Մըհեն: Ո՞վ է ձեզ թույլ ու թանաք տրամադրել, ո՞ւմ միջոցով եք կապված դրսի աշխարհին:

Ծովանյանն անակնկալի չեկավ, սպասում էր նման հարցի:

— Թուղթն ու թանաքը խնդրել եմ քուրդ ցեղապետից, որին դուք արտոնել եք որոշ ճնարավորություններ: Բայց նրան չեմ ասել, թե ում և ինչ եմ գրում:

— Նամակն ինչպե՞ս է դուրս եկել Մեթերհեմից:

— Տեսակցության եկած մի քրդի միջոցով, որին չեմ ճանաչում և չգիտեմ, թե ում մոտ էր եկել:

— Ինչպես գիտեք, միամիտ ու անմեղ երևալու ձեր ճիգերը չեն անցնում ինձ մոտ, խորհուրդ կտայի փրկության այլ ճանապարհ որոնել՝ ավելի իրական ու մարդկային: Ես որքան անգիջում եմ իմ երկրի շահերը ոտնահարողի հանդեպ, նույնքան մեղմ եմ ազնվորեն խոստովանողի նկատմամբ: Գութը և սրտացավությունն ինձ մոտ օրենքին ուղեկցող գործոններ են:

— Շնորհակալ եմ բարի խորհրդի համար, բայց ես դրանից օգտվելու ճնարավորություն չունեմ, որովհետև, ցավոք, ինձ հետ կատարվածն ընդամենը թյուրիմացություն է, ես այն անձը չեմ, որի տեղ դուք ինձ ընդունում եք:

— Արդեն հազար անգամ նույն բանն եք կրկնում:

— Իսկ դուք արդեն հազար անգամ նույն հարցն եք տալիս: Մի՞թե կուզենայիք, որ ես ինչ-ինչ սուտ հանցանքներ խոստովանեի, դա կբավարարե՞ր իրավաբանի ձեր պահանջը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոչ, չէր բավարարի: Ուստի հարկադրված կլինեք խոստովանել ոչ թե սուտ բաներ, այլ իսկականը, ճշմարիտը, այն, ինչ արել եք:

Դատախազը թափահարեց սեղանի վրայի փոքրիկ զանգակը: Դռան արանքից մի ասկյար գլուխը ներս խցկեց:

— Բերեք քահանային:

Ահա թե ինչպես են փորձում խոստովանեցնել, Սաքոն հազիվ զսպեց դեմքը պատող քմծիծաղը, ինչ արած, սա ավելի ազնիվ միջոց է, քան Մրիե չաուշի աքցանը: Քահանան, մոտ ութսուն տարեկան մի ծերունի, խաչազարդ Աստվածաշունչը դրեց սեղանին:

— Երդվիր, զավակս, որ հանցանք չունես ընդդեմ օրինացս: Ձեռքդ հպիր Սուրբ գրքին ու երդվիր:

Սարգիսը, արտաքուստ որքան հնազանդավոր է հուզված, ձեռքը դրեց Սուրբ գրքին.

— Թող իմ հոգին տառապի դժոխքի վիհերում, եթե ես որևէ կապ ունենամ ինձ վերագրվող հանցանքների հետ...

Քահանան Աստվածաշունչը վերցրեց, դուրս եկավ: Սաքոն և դատախազը իրար էին նայում: Թույլ միջոց էր, ասում էր Սաքոյի հայացքը: Թույլ էր, բայց միջոց էր, հիմա գիտեմ, որ դու ևսև անհավատ ես, պատասխանում էին դատախազի ձեղ, կատվային աչքերը: Սեղանի զանգակը ներից հնչեց:

— Տարեք սրան: Երեք օր չհանել օդափոխության:

Ի՞նչ հաստություն ունի հում աղյուսով շարած պատը, կարո՞ղ է առանց որևէ գործիքի, մերկ ձեռքերով քանդել այն: Ոչ, չի կարող, ընդարմացած մատները հազիվ են շարժվում, երանք ընդամենը շոշափում են սառն ու կարծր պատը: Սարգիսը գոռավ իր պատմության ճիշտ վերջը: Փախուստ: Եթե հաջողվի՝ ազատություն, եթե ոչ՝ կախաղան: Հարկավոր է Մուրա-

թվայնացրել է 1915.info կայքը

դից դաճակ խնդրել: Ուշ գիշերին Մեհմեդ չաուշը երկու ոստիկանների հետ եկավ ստուգելու բանտախցերը: Օգտվելով մի պահի հնարավորությունից, Սարգիսը նրան հասկացրեց մտադրությունը: Մեհմեդ չաուշը չհասցրեց պատասխանել: Հաջորդ օրը սև գարեհացի մեջ եկավ նրա կարծիքը: «Գրեթե անհնար է: Ինքնակործանում է, որի իրավունքը չունես»: Մարմինը սուզվել էր բութ, ծանր թմբիրի մեջ: Քնա՞ծ է, թե արթուն: Ո՞ւր է գնում մշուշոտ ձորով: Աչքերի առջև գետինը ցնցվում է, ճաք ու ալիս, պատռվածքից բարձրանում է մի մեծ, սև դագաղ: Կափարիչը շրխկոցով բացվում է, դագաղից ելնում է կիսափքուած, այլանդակ մեռելը և վայրենի աղաղակով գալիս դեպի իրեն: Ձեռքը գենքին է տանում, բայց հասկանում է՝ մեռելին սպանելն անհնար է: Ուզում է փախչել, ոտքերը խրվում են հողի մեջ: Մեռելը ոսկրացած մատներով բռնում է կոկորդից, սկսում սեղմել: Սարգիսը բացում է աչքերը: Հսկիչ ասկյարը չոքել, նրա օձիքն է քաշդում: Կողքը կանգնած է Էրզախ կոմիսարը:

— Հիվա՞նդ ես, կալանավոր:

— Ոչ...

— Դու ջերմում ես: Հիմա քեզ կտեղափոխեն հարմար բանտախուց:

— Հարմար բանտախո՞ւց. այդպիսի բան չի լինում, կոմիսար...— Սաքոն չգիտեր, որ ինքը բարձր ջերմության մեջ հայերեն է խոսում և թուրքացած վրացին չի հասկանում իրեն: Նոր խցի միակ առավելությունը առաստաղի անկյունին սարդի պես կպած թզաչափ պատուհանն էր: Եվ գիտակցությունը կորցնելուց առաջ Սաքոն հասցրեց այդ պատուհանից մի ակնթարթ տեսնել Ծովասարի գլխին ցոլացող Արաբոյի աստղը...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Գիշերը՝ հիվանդի անողորմ թշնամին, կրկին ծանրացավ Մեթերհեմի վրա, թափանցեց մոայլ միջանցքներն ու բանտախցերը: Քաղաքական կալանավորի մենախցում կամքի ուժը դարձյալ պայքարի ելավ ցավի, այրող ջերմության ու տանջալի ծարավի դեմ: Հիվանդության ընթացքում նա կորցրել էր օրերի հաշիվը, սակայն դեռ պահպանում էր դրսի աշխարհի զգացողությունը, որ ամպրոպների հեռավոր թնդյունով, քամու և անձրևի ձայնով ներս էր թափանցում վանդակապատ պատուհանից: Դա՝ ցերեկը, երբ կուրծքը ծվատող հազի նոպան նահմեմատաբար քիչ էր կրկնվում, և աչքերը փոքր-ինչ հանգըստանում էին ցավի կուրացուցիչ բռնկումներից: Ցավի լո՛ւյս, մի՞թե կա այդպիսի բան: Սարգիս Ծովանյանը ի վիճակի չէր գնահատելու իր հետ կատարվող ամեն ինչ: Ցերեկը նրա ջղաձգվող մարմինը շարունակվող կյանքի արձագանքներ էր ընդունում, և տառապանքը մեղմ էր: Իսկ գիշերը հեղեղ էր, սև հեղեղ, որ նրան առնում էր իր մեջ ու քարերին խփելով, մացառաթփերում քրքրելով տանում: Այսպես տանջող սև հեղեղ էր կամ խառնաշփոթ տեսիլներով, կցկտուր ճիչերով լցված մթնաստվեր անտառ, ուր ամեն քայլափոխի կարող էր գահավիժել եղերական անդունդ:

Ատամները սեղմած, վառվող ճակատն ու ամբողջ մարմինը սառը քրտինքով ողողված, Սարգիս Ծովանյանը ճգնում էր պահպանել գիտակցությունը: Խավար անկյունից կրկին հայտնվել էր սև թիթեռը և, նավթավառի մրոտ ապակուն բախվելով՝ թպրտում էր աղոտ լույսի մեջ: Թիթեռ չէր, չարագուշակ ոգի էր, խորհրդավոր կանխաճշակ: Թիթեռը, որքան հիվանդը գիտեր, մեկ օր է ապրում, իսկ սա արդեն քանի՜ գիշեր հայտնվում է այսպես՝ խոշոր ու սև, պտտվում է լամպի շուրջը, կանգնում դատարկ ջրամանին, թռչում պատից պատ: Կար-

թվայնացրել է 1915.info կայքը

ծեա բառ լինի, աննճչի դաժան բառ, որ փնտրում է ու չի գտնում հնագետները: Բայց ո՞ւմ, ուրիշ ո՞ւմ պիտի փնտրեր այս ճշող մենախցում, ուր կար ընդամենը մի հիվանդ կալանավոր: Փայտե մահճակալից ցած ընկած ձեռքը ափ լինեց հատակը: Նախորդ օրվա գարշելի վոհկով կավե թասը շրխկոցով կոտրվել պատից կախած ճավթավառին, նրա մրոտ ապակու հետ փշրվեց խցի անկյունում: Իսկ թիթեռը, մինուճար է, ողջ մնաց: Մի ակնթարթում նրա սև մարմինը անագնորեն խոշորացավ, պատից պատ, հատակից առաստաղ լցրեց ամբողջ մենախուցը: Սաքոն թիթեռի մարմնի մեջ էր, կենտրոնում: Նրա սևադաժան մարմնի սիրտն էր: Թիթեռին սպանելու համար պետք է մեռներ: Ո՛չ,— Անդրանիկ փիղայու ձայնն է: Ո՛չ,— մոր ձայնն է: Ո՛չ,— մարտնչող լեռների ձայնն է: Խավար է և ճավթահոտ: Որտեղի՞ց է բարձրանում զզվելի հոտը: Ահա, երկաթուղային բանվորները ճավթով մաքրում են ռելսերը: Գուրամի ճաշարանից դուդուկի նվագ է հառնվում ձմեռային պաղ իրիկնամշուշին: Ճաշարանի անդողանջ զանգը քարով խփած շան պես վնգստում է: Մեռաքսե շղարշը քամի՞ն հպեց Մարոյի դեմքին, թե՞ ինքն անտանելի շարժումով աչքերին տարավ: Զարմանալի է, գնացքը որքան հեռանում է, այնքան ուժգնանում է դուդուկի նվագը: Եվ միանգամից դառնում է չոր, անորոշ աղմուկ: Դուդուկ չէ, խցի դուռն է մետաղյա ճռինչով բացվում:

— Լամպն էլի ջարդել է գյավուրը: Կախեիք՝ պրծնեիք սրանից, կոմիսար էֆենդի, ցավուկրակ է դարձել ամբողջ Մեթերհեմի գլխին:— Միաչքանի հսկիչը հայհոյելով վերցրեց հատակին ընկած ճավթավառը, գնաց նոր ապակի ու ճավթ բերելու:

Փշրված ապակու կտորները մանրիկ ճարճատում են կոմիսարի ոտքերի տակ: Խցի հիվանդահայաց անկյունում նրա համար մի աթոռ է դրված, որի վրա արդեն չորս գիշեր է լուսացրել և հինգերորդն է սկսվում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կրկնակի՛ չափով: Մինչև առավոտ պետք է վերջացնենք այս պատմությունը, բժիշկ:

— Պատմությո՞ւն: Ի՛նչ պատմություն, կոմիսար, սա նոր կալի ոճիր է, որ կրկնում ենք ամեն գիշեր: Մենք երբևէ հասուցելու ենք այս գազանության համար: Հանդերձյալ աշխարհում չժոխքի շները հոշոտելու են մեղավորներիս:

— Մեզ ոչ ոք չի տեսնում, բժիշկ, և աշխատեք մեկնաբանություններ չանել, ձեզնից այդպիսի բան չի պահանջվում:

— Տեսնող կա, կոմիսար, կա ամենատես աչք, որից ոչ մի տեղ ոչինչ չի վրիպում:

— Կրկնակի դոզա:— Բժշկի՛, թե կալանավորի հասցեին Էրզախն ինչ-որ բան մոլտաց, գայրագին վառեց Տրապիզոնի թութունով լցված ծխամորճը: Նյարդային անհամբերությամբ նա հետևում էր հիվանդի շնչառությանը, հագին, մարմնի ջղաձգումներին: Ուղեղի ամբողջական մթագնում և զառանցանք. ահա թե ինչ էր հարկավոր Էրզախ կոմիսարին: Այս կալանավորի հարցում փորձված քննիչի նրա տաղանդը արտակարգ փայլատակումներ չունեցավ: Քաղաքի դատախազը կանչեց ոստիկանության կոմիսարին և, նախկին մտերմության ավերված հետքերը դեմքին, առաջարկեց քաղաքական կալանավոր Սարգիս Ծովանյանի գործը հանձնել Դարվիշին: Դատախազը պատրաստվում էր Պոլիս տեղափոխվել՝ բարձր պաշտոնավարության, խոստացել էր իր տեղի համար երաշխավորել Էրզախի թեկնածությունը: Ծովանյանի գործը հանձնել Դարվիշին՝ նշանակում էր կարսեցի այդ թուրքին հանձնել նաև քաղաքի դատախազի պաշտոնը: Վիրավորանքը կուլ տալով, կոմիսարը խնդրեց ևս մի քանի օր: Այնուհետև, ասաց, կներկայանա կամ պաշտոնից ազատման խնդրագրով, կամ ձերբակալվածի անձը ու հանցանքը բացահայտող նյութերով, միայն խնդրում եմ այդ ընթացքում նա որևէ մեկի կողմից չկանչվի հարցաքննու-

թվայնացրել է 1915.info կայքը

բչաև, դա կվախեցնի իմ ստեղծած հոգեբանական մթնոլորտը: Սկեսուրը թափանցիկ էր, խոսքը վերաբերում էր նաև իրեն՝ դատախազի:

— Հարցում եմ ձեր խնդրանքը, մեկ շաբաթը, կարծում եմ, բավական է կալանավորին մեղադրանքը գիտակցելու համար:— Դատախազը անողոք նայում էր ոստիկանության կոմիսարին:— Գնացեք: Կհանդիպենք եկող չորեքշաբթի:

Հայց կալանավորը հիվանդացավ, և թե՛ կոմիսարը, թե՛ դատախազը, որին տեղյակ պահվեց այդ մասին, հարկադրված էին սպասել: Որոնանպատակ կալանավորին հիվանդ վիճակում հարցաքննելը գլխացավանք կդառնար բոլորի համար:

Ջևրմախտով ուղեկցվող սուր թոքաբորբ: Այսպիսի հիվանդները սովորաբար զառանցում են, այսինքն ասում են բաներ, որ մինչ այդ թաքցրել են իրենց խորքում: Եվ կոմիսարի գլխում միտք փայլատակեց, դեմքը ճառագեց ինքնագոհության լույսով: Ճշմարտությունն իմանալուց հետո այն կարող է ապացուցել նույնիսկ հիմարը: Ահա ելքը, որ մատուցվում է իրեն հանգամանքների բերումով: Ճարպկորեն ու կշռադատված օգտվել իրադրությունից, չկորցնել այն, ինչին հասել է քսան տարի շարունակ՝ սեփական զգացմունքներն ստրկացնելով, ՝ծնանքն ու շողոքորթումը դաժանությամբ քողարկելով: Նրա՝ ազգն ու հավատը մոռացածի համար հոգու առաքինություն կոչվածը երեխա ժամանակ կորցրած փայլուն խաղալիք է կամ ընդհանրապես չի եղել: Համեմատելիս, չափազանց ուշ է դրան անդրադառնալը: Այո, ինչ որ չի կարող անել Մրհե չաուշի զարհուրելի արցանը, կանի չերմախտը: Կան նաև բանագրկող դեղեր, որոնք, անկասկած, կօգնեն գործին: Մեթերնեմի կալանավոր Սարգիս Ծովանյանը եթե Դերիկի վանքի ինքնապաշտպանության ղեկավար Սևքարեցի Սաքոն է, խիզախ,

թվայնացրել է 1915.info կայքը

անվանի գիմնատարն ու Սասունի ֆիդայիների կրեատորը բարձրացող կազմակերպիչը՝ ինչպես իրենք են կարծում, ապա անհնար է, որ հոգեֆիզիկական այդպիսի վիճակում իր հախուռն կյանքի ինչ-ինչ պահերի վերապրումներ չունենա, չարտաբերի անուններ, բառեր, կատարված դեպքերը հիշեցնող արտահայտություններ: Էրզախ կոմիսարն այդ ամենը իր տրամաբանության հուժկու շաղախին խառնելով կկառուցի հաստատուն մի պատ և հայդուկին, ի տես ամենքի ու Մուշ քաղաքի դատախազի, բացահայտված ու գլխիկոր կկանգնեցնի այդ պատի տակ: Նա առնչվել էր եվրոպական քաղաքակրթությանը, հիանալի գիտեր, որ իր մտադրանքը նողկալի է: Ավելին. բացահայտվելու դեպքում կարող է բանը չվերջանալ սոսկ կարիերայի կործանումով: Սակայն ինքը Ֆրանսիայում չէ, այլ ընդամենը Թուրքիայում, ուր վայրենաբարո ամեն ինչ ընդունելի է: Միայն թե դատախազը չիմանա: Բանտի կրետացի բժշկի հետ հարաբերությունները ոչ լավ էին, ոչ՝ վատ: Վերջինս սառն ու պաշտոնական էր ինչպես բանտի բոլոր ծառայողների, այնպես էլ կոմիսարի հետ: Ենթակայության գիտակցումը զուգորդված էր սեփական արժանապատվության զորեղ զգացումով, որը նա դրսևորում էր անգամ բարևելիս: Էրզախ կոմիսարը հիշում էր բժշկի և քաղաքի դատախազի բախումը մեկ տարի առաջ: Շողոքորթ քննիչներից մեկը, վերադառնալով Գերմանիայից, դատախազի համար ճվեր էր բերել Ռաֆայելի գործերից մի հաջող կրկնօրինակ: Հայացքով փութացիկ զննելուց հետո դատախազը կարգադրեց նկարը դուրս շպրտել սենյակից:

— Ո՞ր կարծիքով, իմ աշխատասենյակն այն տե՞ղն է, ուր կարելի է պոռնոգրաֆիական պատկերներ կախել...

Մինչև վախից ու անակնկալից շշմած քննիչը կփորձեր կակազելով արդարանալ, բժիշկը վերջրեց սեղանի անկյուն

թվայնացրել է 1915.info կայքը

ճետված նկարը և մետաքսե թաշկինակով շրջանակի փոշին մաքրելով, դիմեց դատախազին.

— Եթե սա որևէ մեկին հարկավոր չէ, թույլ տվեք վճարել արժեքը և վերցնել:

— Խորհուրդ չէի տա դատաբժշկի ձեր կարևոր տեսողությունը փչացնել մերկանդամ պոռնիկներին զննելով:— Դատախազը չէր կարողանում իշխել իրեն:

Բժիշկը, հայացքը նկարից չկտրելով, արհամարհական ու աճողոք ծիծաղեց.

— Ձեր գործում չի կարելի այդքան տգետ լինել, պարոն դատախազ: Չի կարելի միջնադարի սքանչելի ստեղծագործությունը շփոթել արևելյան ցանկասիրության հետ...

Այդ պահին ներս մտած արտասահմանցի ինչ-որ դիվանագետ ընդհատեց միջադեպի հետագա զարգացումը: Էրզախ կոմիսարը հիշում էր դա և մտածեց, որ մեկ տարի առաջ կատարված միջադեպն այժմ կարելի է նրբորեն ծառայեցնել իր նպատակին:

Կրետացի բժշկին, որպես աշխատասենյակ, հատկացված էր ոստիկանատան պատշգամբի ծայրի ապակեպատ միջնորմով ու վարագույրով առանձնացված անկյունը: Կրետացին հաճախ այնտեղ մնում էր մինչև ուշ գիշեր: Ահա նա դարձյալ սեղանին հակված ինչ-որ բան է գրում: Ոստիկանատանը մնացել են հատուկենտ մարդիկ՝ Մեհմեդ չաուշը, որ քնում է մի քուրդ ձիագողի, տասնապետը՝ գլուխը սև հեռախոսին դրած, և երկու շարքային ծառայողներ: Պահը հարմար էր, Էրզախն այցելեց բժշկին:

— Դարձյալ գրում եք: Հետաքրքիր է, թե ի՞նչ եք գրում գիշերները շարունակ,— ձայնին մտերիմ երանգ տալով, հայացքն օտարալեզու թղթին՝ հարցրեց կոմիսարը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի անհանգստացեք, կոմիսար, համենայնդեպս՝ ո՛չ պետական դավաճանության նախագիծ: Սա ձեզ համար անկարևոր մի պատմություն է, որ ես մանկության տարիներին ներծծել եմ արյանս ու գիտակցությանս մեջ և հիմա վերարտադրում եմ: Գուցե աշխարհում որևէ մեկին պետք գա:

— Չգիտեի, որ դուք նաև գրական հակումներ ունեք, բժիշկ: Ինչպե՞ս է կոչվում այդ պատմությունը:

— Դա ձեզ ոչինչ չի ասի. «Ծերացած հայերի ծովախորշը»:

— Բանիմաց, ընբռնաշարժ մարդ եք: Ձեզ համար, երևի, դժվար կլինի աշխատել այսպիսի միջավայրում, ուր միջնադարյան արվեստի գլուխգործոցը շփոթում են էժանագին պոռնոգրաֆիայի հետ...

— Դա այնքան էլ սարսափելի չէ, կոմիսար:— Բժիշկը, թաքցնելով ձյարդային լարումը, արհամարհեց խայծը:

— Իսկ ի՞նչն է սարսափելին:

— Անորոշությունը: Իմ, ձեր, աշխարհի ամբողջ մարդկության ու նրա ստեղծած ամեն ինչի ճակատագրի անորոշությունը: Ո՞ւր ենք գնում այսպես բանտերով ու հսկիչներով, հանցանքներով ու պատիժներով, ո՞վ և որտե՞ղ է մեզ սպասում, ինչի՞ համար ենք անում այս ամենը...

Բժիշկն սթափվեց. նրա առջև կանգնած էր ընդամենը էրզախ կոմիսարը, և, ո՞ւմ հետ էր խոսում, լռեց:

Էրզախը ժամանակ չուներ, անցավ կոնկրետ խոսակցության:

— Բժիշկ, ես ուզում եմ ձեզ վստահել մի շատ կարևոր գաղտնիք: Ավելի ճիշտ՝ ուզում եմ խնդրել ձեր օգնությունն այդ գաղտնիքը բացահայտելու համար, որը կնպաստացնի մեր ընդհանուր թշնամուն:

Կրետացին ցած դրեց գրիչը, ակնոցի վրայից արհամարհող կասկածով նայեց կոմիսարին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այստեղ ես չունեմ ոչ բարեկամներ, ոչ թշնամիներ: Ավելի պարզ խոսեցեք, կոմիսար: Եվ, եթե կարելի է, մի ծխեք, ես ասթմա ունեմ:

Էրզախը կարողացավ զսպել իրեն: Դուրս եկավ, ծխամորճը դատարկեց, դուռը ներսից ամուր քաշելով նստեց բժշկի դիմաց:

— Դուք բուժում եք ջերմախտով տառապող մի հիվանդ կալանավորի՝ Սարգիս Ծովանյանին: Նա, իմ համոզմամբ, ֆիդայական շարժման նշանավոր գործիչ է...

— Դա ինձ չի վերաբերում, կոմիսար, բժիշկը գործ չունի քաղաքականության հետ: Ես նրան կբուժեմ, հետո դուք կպարզաբանեք նրա անձն ու գործը:

— Ուշ կլինի:

— Իսկ ինչ է, դուք մտադիր եք նրան քննել քառասուն աստիճան ջերմության մե՞ջ...

— Կա մի դեղ, որը մեղմացնում է թոքաբորբի ծակոցները, տանջալի գլխացավը, իջեցնում ջերմությունը և...

— Հիվանդին զրկում բանականությունից: Հասկացա: Անմարդկային է, կոմիսար:— Բժշկի շուրթերը կապտել ու դողում էին:

— Ոչքան գիտեմ, դուք պատրաստվում եք հրաժարվել բանտային ծառայությունից, վերադառնալ հայրենիք: Փորձինչ համակերպվելու դեպքում կարող եք նավ բարձրանալ ոսկու քսակով: Դա կհեշտացնի հեռավոր ճամփորդությունը և կօգնի մոռանալ ձեր ասած անորոշության տագնապը:

— Ես բժիշկ եմ:

— Այո, սակայն ո՛չ բարեգործական հիվանդանոցի: Բանտի: Հասկանո՞ւմ եք, բա՛ն-տի՛:

— Հասկանում եմ:— Բժիշկը ծիծաղեց չոր, փշրվող ապա-

թվայնացրել է 1915.info կայքը

կու ձայնով, և դա ծիծաղ չէր, ջղաձգվող նյարդերի աղմուկ էր:— Իսկ եթե, այնուամենայնիվ, հրաժարվե՞մ:

— Եթե հրաժարվեք,— կոմիսարի բիբերը շողացին,— եթե հրաժարվեք կամ այս խոսակցության մի բառն անգամ դուրս գա այստեղից, հայրենիք չեք վերադառնա՝ ոչ ոսկու քսակով, ոչ էլ այս գունատաթափ ցնցոտիներով: Պա՞րզ է:

— Պարզ է, կոմիսար, չեմ կասկածում ձեր գործնականությանը:

... Ատամները սեղմած, վառվող ճակատն ու ամբողջ մարմինը սառը քրտինքով ողողված, Սարգիս Ծովանյանը շարունակում էր մաքառել ցավի, ջերմության ու այրող ծարավի դեմ: Բանտախցի անկյունից մութ ու մռայլ հայացքով նրան էր հետևում կոմիսարը: Սրսկումից հետո, ինչպես միշտ էր լինում, ցավը մեղմացել էր, սակայն քնել չէր կարողանում: Հիշողությունը... Ինչպե՞ս կուզենար շոգեքարշից անջատված վագոնաշարի նման այն թողնել հետավոր, ամայի դաշտում, ապրել գիտակցության գուտ ներկա ընթացքով: Բայց նրանք՝ մոտ անցյալի դեպքերն ու դեմքերը, աղմկալի երթով դղրդում են գիշերվա մեջ, և ինքը, որ շոգեքարշն է, չի կարող անջատվել, չի կարող բաժանվել նրանցից: Անդունդ է, խոր անդունդ, ու նրա բարձր եզրին վրնջում է մի կարմիր ձի: Ջիավորն Արաբոն է, նետքն է նայում ձիու պարանոցի վրայից, ու մութ է, չի տեսնում իրեն: Հովատակը ծառս է լինում, պայտերից կայծեր թափելով՝ թռչում անդունդի վրայով: Վիհի հատակին մեկը հավաքում է ձիու պայտերից թափված կայծերը: Մոնչալով հավաքում է և թիկունքին դանակ է խրված: Գանձակի շուկայի խեղկատակն է, շրջվում է ու չոքում Սարոյի կրծքին: Նա՛ չէ՝ անդունդի վերևներից մի ձայն հարցնում է. «Մո՞վ ես, ո՞ւր էիր գնում»: Խեղկատակը հազի խեղդող ցռպան է, հարցնողը՝ Էրզախ կոմիսարի ձայնը: Հազը: Թոքերը ծվատող հազը: Արյան ցայտեր

թվայնացրել է 1915.info կայքը

են թռչում գորշ, կեղտոտ վերմակին: Բժիշկը ջուր է լցնում կավե թասի մեջ:

— Խորհուրդ չէի տա, շատ է սառը:— Անկյունի մութից կաքխում է Էրզախը:

— Նա կարող է մեռնել՝ առանց ոչ մի բառ ասելու:— Բժիշկը թասը մոտեցնում է հազից խեղդվող հիվանդի շուրթերին:

— վերջ տուր մարդասիրությանդ: Նորից սրսկիր:

— Մեր դեղը հազի դեմ անզոր է, կոմիսար: Գիտե՞ս որտեղ է գտնվում ծերացած ճայերի ծովախորշը:

— Թքել եմ ճայերի ու ծովախորշի վրա: Նորից սրսկիր:

Սևքարեցի Սաքոն լսում ու հասկանում էր ամեն ինչ: Օրերի ընթացքում մշակել էր հիվանդության մեջ կառավարվելու ինքնատիպ ծրագիր: Այդպես նավակն է շրջանցում վտանգավոր խութերն ու ջրապտույտները: Նա կանխազգում էր ուղեղը մթագնող նոպայի մոտենալը և հիշողությամբ կառչում պատահական մի դրվագի, ընտանեկան մի թանկ հուշի: Նոպայի ժամանակ այդ դրվագը կամ հուշն էին բոցավառվում ուղեղի մեջ: Նրան, համենայնդեպս, այդպես էր թվում: Հոգու և մարմնի համեմատաբար խաղաղ պահերին ինքնազրույցի մեջ էր. որտե՞ղ են Անդրանիկն ու Սերոբը, ի՞նչ է անում Ռուրվականը, Դերիկի վանքը դեռ կա՞ այս երկնքի տակ իր գինյալ ուխտավորներով... Շարաֆ, արյունարբու շուն, դու իմ ձեռքով ես սատկելու: Դերիկի կովի ժամանակ այս բառերը նա շպրտել էր վանքի պարապի վրայով և հազի բռնկումից հետո կրկնեց գիշերային բանտախցում: Դա միակ պարգևն էր, որ տրվեց կոմիսարին հինգ անքուն գիշերվա դիմաց և որով, սակայն, ոչինչ չէր բացահայտվելու: Երբեմն-երբեմն նա հիվանդի շուրթերից լսում էր Մարոյի անունը, բայց դա նույնպես նրան ոչինչ չէր ասում:

թվայնացրել է 1915.info կայքը

Իսկ այդ օրերին Թիֆլիսում Մարոյի և զենք հայթայթող մյուս ընկերների հետ հակատագրական դեպքեր էին կատարվում: Ջինապահեստում, ուր Մարոն աշխատանքի էր տեղավորվել իր բարեկամ գնդապետ Գեորգի Ղարաքեշիշյանի հեղինակավոր միջամտությամբ, հրացանի և փամփուշտի մի շարք արկղեր արդեն դատարկված էին: Բացահայտվելու վտանգը մեծ էր: Մարոն այցելեց գնդապետին, որը զուրկ չէր հայրենասիրության հովերից, նրան պատմեց ամեն ինչ՝ հավատացնելով, թե ուղարկված զենքը ալեկոծ լեռնաշխարհում ընդունել են որպես գնդապետի անձնական ներդրում: Իմանալով, որ այդ մասին գիտե անձամբ Աղբյուրը, գնդապետը խոստացավ ոչ միայն ծածկել զենքի գողությունը, այլև հետագայում օգնել ամեն ինչով: Բայց նրան անսպասելի նշանակումով տեղափոխեցին Աստրախան, և Հայրենասիրաց Միության գլխին շարունակեց ճոճվել դամոկլյան սուրը:

... Հիվանդը բացեց աչքերը, վանդակապատ լուսամուտից հայացքով սուզվեց ազատ ու խորհրդավոր գիշերվա մեջ: Դեմքը ողողվեց երանելի խաղաղությամբ: Կոմիսարը դա վերագրեց գավից կկլկղոցով թափվող ջրի ազդեցությանը: Ի՜նչ իմանար, որ հիվանդի հայացքի դեմ, Ծովասարի գագաթին, սիրուհի ու կարեկցանքով շողում է Արաբոյի աստղը...

— Դու ինձ նյարդայնացնում ես, բժիշկ,— կոմիսարը վաղուց էր անցել «դու»-ի,— ինձ գիշերային խեղկատակ ես դարձնում:

— Օրգանիզմն ուժեղ է, դիմադրում է: Հիմա կարևոր կրկնակի չափով: Օգնեցեք ինձ, կոմիսար:

Հիվանդն ակնթարթորեն սուզվեց խոր, հաճգիստ քնի մեջ: Քաղաքի արևելյան կողմից կրակոցներ լսվեցին: Կոմիսարը վեր թռավ, թափով հրեց մենախցի դուռը ու հետ շրջվեց: Հիվանդ կալանավորի խցում ինքնադատապարտյալ հերթա-

թվայնացրել է 1915.info կայքը

պահության հիմնադրության գիշերվա այդ պահին նա ամեն ինչ հասկացավ: Նյարդերը վերջնականապես ապստամբեցին, դեմքը չղաձգվեց աճյունոր գայրույթից, կոկորդը լցվեց գազանային ոռնոցով, ու դարձյալ մի անեղ ինքնատիրապետումով զըսպեց իրեն: Դուռը շրխկոցով ծածկեց հետևից, գնաց: Այդ ամենը տևեց մի ակնթարթ: Բժիշկը գործիքներն էր տեղավորում պայուսակում, ոչինչ չնկատեց: Կոմիսարի ծանր ոտնաձայները պաղ, դատարկ միջանցքում դղրդալով գնացին, հանգան ելքի մոտ: Դուրս եկավ նաև բժիշկը: Մեհմեդ չաուշի սենյակում լույսը վառ էր: Կանգնել էր պատուհանի առաջ, հոգնած դեմքով նայում էր խավարին: Բժիշկը բարձրացավ ոստիկանատան պատշգամբ, գլխով արեց Մեհմեդ չաուշին, պայուսակը թողեց աշխատասենյակում, հագավ մաշված անձրևանոցը, դուրս եկավ: Քաղաքի արևելյան մասում կրակոցները շարունակվում էին: Հետո Մուշ քաղաքի վրա կախվել էր թախծոր, ժանգահամ մի լուսաբաց: Բժիշկը տուն էր վերադառնում: Միայնակ, արդեն երկու տասնյակ տարի ապրում էր թուրքական թաղամասի մի փոքրիկ խրճիթում: Ոչ բարեկամ, ոչ թշնամի: Համեստ խնայողություն, չիրականացող երազանք, և կարո՛ղ, կարո՛ղ, կարո՛ղ: Ընտանիք չուներ, չէր ուզեցել: Մտածում էր՝ մարդու երեխան պետք է ծնվի այն հողի վրա, որտեղ թաղված է նրա պապը: Ծերացած ճայերի ծովախորշը: Ե՞րբ է ինքը հեռացել այնտեղից: Կարծես հազարավոր դարեր են անցել, իր ոգին անթիվ պտույտներ է կատարել բազում անմեղ ու մեղավոր, երջանիկ ու դժբախտ մարմինների միջով և հիմա, հնամաշ թիկնոցով այս տխուր մարմնի ներսում ապաստանած, մղվում է դեպի այդ հեռավոր ու թանկ եզրը: Սիրելի ծովախորշից նա պարզ ու որոշակի լսում է ծեր ճայերի ծղրտոցները, ջրաշների խռպոտ ճիչերը, ժայռերի տակ փշրվող ալիքների ուրո՞խ, թե տխուր աղմուկը: Կգնա այնտեղ, ուր,

թվայնացրել է 1915.info կայքը

հավաճաբար, դեռ ապրում են ծերացած ծնողները, կամուսնանա, երեխաներ կունենա ու այլևս չի հեռանա հարազատ ափից:

Ժանգահամ լուսաբացի մեջ կրակոցները հանգան, մնացին վախվորած շների հատուկենտ հաչոցները: Քաղաքը դեռ քնած էր: Ուսերը թրջվել էին սառնաշաղ աննրևից, մարմինը ճվում էր: Ծուտով ինքն էլ կքնի, ու երանի մինչև այս դժնի վայրից հեռանալու պահը իրեն ոչ ոք չարթնացնի: Ինքը կլսի Կրետեից եկող նավի սուլոցն ու կարթնանա: Իրեր գրեթե չունի. ոչ բեռնակիր, ոչ մաքսատնային քաշքշուկ: Թեթև, հանգիստ, խաղաղ նավ կբարձրանա ու այլևս չի շրջվի հետ: Միանգամից կմոռանա պարտադրված տարիների գարշանքն ու մրոտ ձավաճքը ու կնայի առաջ — ճվագող փիրուզե ջրերին՝ հպարտ այն բանով, որ երբեք չդավաճանեց մարդուն ու մարդկայինին:

Հոգնած էր, շա՜տ էր հոգնած: Բանալին մտցրեց փականքի մեջ, բայց պտտելու ուժ չեղավ: Ներսից դուռը բացեցին նրա առաջ: Կիսախավարում նա տեսավ Էրզախ կոմիսարի զարհուրելի դեմքը: Մեկ ուրիշը նրա թիկնոցի օձիքից բռնելով կոպտորեն ներս քաշեց, փակեց դուռը: Ներսի խավարն ու դրսի կապարե առավոտվա լույսը վիճում էին պատուհանի ապակիների մեջ:

— Բծիշկ, դու ե՞րբ էիր մտադիր վերադառնալ քո երկիրը:

— Արդեն կարևոր չէ, կոմիսար, դա այլևս երբեք չի լինի:

— Ճիշտ գուշակեցիր: Ես միշտ գնահատել եմ քո կարողությունները:

— Ինձ համար դա երբեք որևէ նշանակություն չի ունեցել: Քո և ձեր գնահատանքն ինձ համար նույնն է, ինչ Ակրոպոլի սյուներին բսվող որդնած բաղեղը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Շարունակիր, բժիշկ, մեզ ոչ ոք չի լսում և շատ կուզենայի իմանալ, թե դարձյալ ինչ պատկերներով կներկայացնեիր իմ մարդկային էությունը:

— Մարդկայի՞ն: Դա ուրիշ բան է, կոմիսար, կապ չունի ձեր էության հետ: Երբեմնի վրացու և այժմյան թուրքի ձեր էությունը խաչի և կիսալուսնի արանքում ճզմված որդ է: Բայց ձեր ինչի՞ն է պետք այս ամենը լսելը: Ձեզ միայն կարելի է հայհոյել, իսկ այն ցեղը, որից սերում եմ ես, իրեն թույլ չի տալիս շուրթերը պղծել թշվառներին հայհոյելով: Ավելորդ է այս խոսակցությունը, կոմիսար:

— Այո, ավելորդ է: Մենք եկել ենք քեզ ճանապարհելու, բայց, իհարկե, ոչ քո ծովախորշը: Եվ ինչի՞դ է պետք դարձյալ հետ գնալ այդ խավար երկիրը, այդ տգետ մարդկանց մեջ...

— Դու ինձ սպանելու ես, բայց պատմությունը չես սպանի: Հելլադան հավերժության եղբայրն է, կոմիսար, իմ ժողովուրդն իմ երկրի վրա համաշխարհային քաղաքակրթությունն է հիմնադրել: Այն ժամանակ թուրքը, որի թլպատանքը կրում ես, դեռ անորոշ հյուղե էր իր մշտահայր կապկի ողնաշարում և քո քրիստոնյա ցեղից դեռ ոչ ոք ստոր դավաճանությամբ չէր մղվել դեպի նա: Կոմիսար, գործ չունես իմ երկրի ու ժողովրդի հետ, մի խոսիր նրանց մասին: Քո հոգու և ուղեղի չնչին ցանկությունները լիուլի կարող ես բավարարել նաև արևահոտ խավարի այս հայրենիքում: Վերջացնենք, իմ կողմից շռայլություն է քեզ հետ այսքան երկար խոսելը:

— Վերջացնենք, քաղաքն արդեն արթնանում է: Միայն կուզենայի իմանալ, թե ինչ դեղ էիր սրսկում պետական հանցագործին:

— Ոչ քո ուզած դեղը, կոմիսար:

— Կապվա՞ծ էիր ֆիդայիների հետ:

— Կարող եմ չպատասխանել, բայց պատասխանում եմ՝ ոչ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գուցե կաշառվա՞ծ էիր:

— Ինձ դո՛ւ փորձեցիր կաշառել և, ինչպես գիտես, չկարողացար:

— Այդ դեպքում ի՞նչը քեզ դրդեց...

— Եթե հարցնում ես, ուրեմն պատասխանը չես կարող հասկանալ: Բայց կասեմ, թող իմ վերջին խոսքը դա լինի: Ես ժողովուրդների պատմությունն իմացող մարդ եմ, Եվրոպայում մասնագիտացած բժիշկ, որ բանտային ծառայություն եմ ստանձնել ոչ իմ կամքով, ու եթե համակերպվել եմ դրան, ապա՝ զուտ գիտական ու մարդասիրական նկատառումներով: Հարգում եմ իմ ժողովրդի պես հին ու տառապյալ հայերին, խոնարհվում եմ այդ ազգի ըմբոստ ոգու առաջ, որ իր ազատության համար մարտնչում է ձեր բարբարոս ցեղի և իշխանության դեմ: Այսքան բան, կոմիսար...

... Դաշույնը խրվեց թիկունքից: Մնացած հարվածները չզգաց, չիմացավ, թե ինչպես արյան ցայտերը թռան պատին փակցված Կրետե կղզու ինքնագիր քարտեզին: Երկնային խաղաղությամբ նա սուզվում էր մանկության ծովախորշի հատակը, և ծովախորշի վրա ողբահար ճչում էին ծերացած ճայերը...

* * *

Նա գրեթե ոչինչ չէր ուտում: Ամեն օրյա նույն գարշելի վոհկը վաղուց զզվեցրել էր նրան: Եթե հայելի լիներ և նայեր հայելուն, չէր ճանաչի իրեն: Ընդամենը քսանինը տարեկան էր, և քունքերն ու մորուքը սկսել էին ճերմակել, ծանր հիվանդությունից ու աննիաշիվ տառապալի հարցաքննություններից հետո դեմքը ծածկվել էր խորշոմների ցանցով, աչքերի սպիտակուցները դեղնել էին: Նրա սնունդը միայն վոհկի հետ տրվող մի կտոր հացի ևս ու չոր կեղևն էր: Տանջվում էր ցրտից ու

թվայնացրել է 1915.info կայքը

անքնությունից: Ձյունամած դեկտեմբերի պաղ շունչը հում աղյուսե պատի միջով թափանցում էր ներս, անզգայության չափ ընդարմացնում մարմինը: Վերջին օրերին ոտքերն սկսել էին ուռչել, այրող մի ցավ երբեմն կայծակի պես շանթահարում էր ողնաշարը: Յրոնքում Գուրգենի ու նրա հետ դաշտ իջած փիդայիների ողբերգական մահից հետո երկար ժամանակ ուշքի չէր գալիս: Պարտավոր էր ներսում զսպել ծանր ապրումները, և դա ավելի էր դժվարացնում վիճակը: Դեռ ինչքա՞ն կպահեն մեճախացում. դժվար է ասել: Պետական խնդիրներով զբաղված փոխհյուպատոսը ե՞րբ կանդրադառնա իր հարցին, դարձյալ անորոշ էր: Նա առանձնապես մեծ հույսեր չէր կապում Պոլսի պատրիարքարանի միջնորդության հետ, Բ դռան համար պատրիարքի խոսքը որևէ կարևորություն չուներ: Մնում էր հոգու և մարմնի ցավերն արհամարհելով՝ սպասել հետագա օրերի իրադարձություններին: Փակում էր աչքերն ու երկար ժամանակ սուզվում հիշողության գիրկը: Դա է մեճախցերում տառապող բոլոր կալանավորների մխիթարությունը: Եվ հիշողության ծալքերում շատ բան էր գտնում իրեն մխիթարող: Թեկուզ այն, որ մտերիմ է հայտնի հայդուկների հետ և ինքն էլ ճանաչված գործիչ է, որ Մեծ Երկրում ու փիդայական աշխարհում գնահատում են իրեն և մտածում իր փրկության մասին, որ Թիֆլիսում Մարոյի պես գաղափարի ընկեր ու հոգու մտերիմ ուներ, վերջապես հենց այն, որ ինքն այս զազրելի բանտում նստած է հայրենասիրական վեհ գործի համար: Բայց պարտավոր է շարունակել այդ գործը և ոչ թե ամիսներով նստել մեճախցում, ցրտից ընդարմացած ոտքերն ու ձեռքերը շփել. ահա թե ինչն էր ամենից շատ տանջում կալանավորին: Նա երևի արդեն հազար անգամ վերապրել է իր գոյության քսանիվը տարիները, ճշտել կյանքի հաղթանակներն ու պարտությունները: Երբեմն հիշողության խորքից պարզ ու կենդանի

թվայնացրել է 1915.info կայքը

ղողանջում էր սիրելի մի ձայն՝ արթնացնելով ֆիդայական պայքարի որևէ պատմություն: Այդպես նա Սախոյի վերջին խոսքը լսեց Բողազքյասանի մահաշունչ ձորից.

— Տղերք ջան, ես գարկվեցա...

* * *

... Տասնմեկ գիշերվա տառապալից ճամփորդությունից հետո զինատարների տասը հոգիանոց խումբը ադամամութի թանձր խավարի միջով հասավ Այգեստան: Պետոն ու Տաշոն պիտի մնային Վանում, իսկ Սաքոն, Վարդանը, Շերոն, Փոխիկը, Ոսկանը, Սախոն, Միհրանը և Օքմինը մեկ օր հանգստանալուց հետո, հաջորդ գիշեր, բոնեին վերադարձի ճամփան: Բայց ֆիդայիներին լուր տվեցին, թե ասկյարները ուժեղ հսկողություն են սահմանել քաղաքամուտ բոլոր ճամփաների վրա: Հոտն առել էին: Լեռներից փչող ձյունեղեն քամիները փոթորկային ուժով ոռնում էին ձոր ու դաշտերի վրա: Լուսաբացին հասնելով Բողազքյասան, մինչև երեկո խումբը հանգըստանալու էր վստահելի օթևանում, որպեսզի իրիկնամութի հետ կրկին շարունակի ճանապարհը դեպի պարսկական սահմանը: Տեղ չհասած՝ քամու և ձյունախառն անձրևի միջից նրանք լսեցին պախրայի տագնապոտ բառաչ: Բողազքյասանի Ենգոն էր: Ասաց, որ խումբը մատնված է, և Ղըրխ Սարդարը քառասուն ձիավորով գյուղում նրանց է սպասում:

— Հետ գնալ չեք կարող: Ձեր ելքը մեկն է՝ գրոհով ճեղքել դարանակալ ասկյարների շղթան, իջնել Բողազքյասանի ժայռազանգված, մշուշոտ ձորը:

Քամին ու անձրևը խլացնում էին ֆիդայիների ոտնաձայները, կիրճում ապաստանած մառախուղը քողարկում էր նրանց: Գյուղեզրին, քարերի հետևում թաքնված ասկյարները նրանց

թվայնացրել է 1915.info կայքը

նկատեցին ամենավերջին պահին և չհասցրին կանխել գրոհը: Զինատարների խումբը հուժկու կրակով ճեղքեց շրջապատման օղակը, առանց կորուստների իջավ ձոր: Դա, իհարկե, դեռևս փրկություն չէր, դիրքերը թողնելով՝ թուրք զինվորները խառնիխուռն կրակոցներով հետևեցին փիդայիներին: Վերջիններս հասցրին շտապ դիրքեր գրավել և ժայռաճեղքերից որոտացող հրացանները տապալեցին մի քանի ասկյարների: Թշնամին նույնպես դիրքավորվեց: Ղըրխ Սարդարը ժայռի հետևից հրամայեց նետել զենքերը, հանձնվել: Ի պատասխան թշդաց Փոխիկի հրացանը, և կարմիր ֆեսը թռավ Սարդարի գլխից:

— Կոտորել բոլորին, այս գյավուրներից ոչ մեկը չպետք է փրկվի:

Թուրքերը մոլեգնորեն կրակում էին, չհամարձակվելով, սակայն, դուրս գալ դիրքերից: Սաքոն խումբը բաժանեց երկու քաոյակի: Առաջինը պետք է դիմակայեր թշնամուն, երկրորդ քաոյակն աննկատելի նահանջեր: Օգտվելով այն բանից, որ ձորի հունը հետզհետե բարձրանալով հասնում է անտառափեշ, արդեն նահանջած-դիրքավորված քաոյակը կարող էր վերից վար հրաձգությամբ ապահովել թշնամու առջև մնացածների նահանջը: Այսպես՝ մինչև ձորի վերջը, մինչև անտառափեշ, այնուհետև թանձր անտառը կապաստաներ նրանց: Սաքոն, Փոխիկը, Շերոն և Սախոն մնացին դիրքերում, Վարդանը, Ոսկանը, Միհրանը և Օքմինը նրանց պաշտպանական կրակի ներքո նահանջեցին դեպի հետևի մուգ ժայռերը: Քիչ հետո ընկերների գլխի վրայով նրանք կրակում էին թուրքերի վրա: Առաջին քաոյակը նույնպես կարողացավ անվնաս նահանջել մինչև մուգ ժայռերը: Թուրքերը նկատեցին տեղաշարժը,

թվայնացրել է 1915.info կայքը

հասկացան ֆիդայիների մտադրությունը: Ղըրխ Սարդարի հրամանով դուրս թափվեցին թաքստոցներից, փորձեցին հանկարծակի գրոհով ճզմել մի բուռ ինքնապաշտպաններին: Սաքոն ճշաև բռնեց կուզեկուզ մոտեցող առաջնորդ օնբաշու ճակատին: Կրակոցն անվրեպ էր. օնբաշին հազիվ մի խուլ թառանչ արձակեց և մռութով թաղվեց ժայռի տակի կանաչ ճահճաջրի մեջ: Վարդանի գնդակը փշրեց օնբաշուն հետևող ասկյարի ուսը: Թշնամին դարձյալ դիրքեր գրավեց: Ու մինչև երեկո շարունակվող կրակոցներն այնես կորուստներ չպատճառեցին: Ֆիդայիների համար մութը փրկություն էր, թշնամին լավ էր հասկանում դա, սակայն ինքնապաշտպանների դիրքերը շատ էին անառիկ: Բողազքյասանի ձորը կամաց-կամաց լցվում էր խավարով: Սաքոն հրահանգեց զգուշորեն նահանջել: Թուրքը վախենում է խավարից, մթան մեջ վրիժառուներ են թափառում, իսկ նա ոճրագործ է: Ասկյարները նաև հոգնել էին վաղ լուսաբացից մինչև ուշ երեկո ցուրտ ժայռերի տակ կծկվելուց, բնավ ցանկություն չունեին մի քանի հայդուկի համար գիշերային փորձության ենթարկվելու: Ֆիդայիները հասել են անտառափեշին, ահա կսուզվեն ծառերի մութ զանգվածի մեջ: Հուսահատված թուրքերը վերջին կրակոցներն են արձակում, ու Սախոն, բազմաթիվ կռիվներում ներոսացած Սախոն, որ ինքնակամ մնացել է դիրքում՝ հսկելու ընկերների նահանջը, Բողազքյասանի դավադիր ձորից հրաժեշտի ձայնով տնքում է. «Տղերք ջան, ես զարկվեցա»:

Որքա՜ն Սախոներ են դեռ նահատակվելու այս մեծ պայքարում: Եվ սերունդները պարտավոր են արյան միջոցով նրանց ձայնն ու պատկերը փոխանցել միմյանց:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Կեսգիշերին Սեմալից դուրս եկած փոքր զորախումբը լուսաբացից առաջ պիտի հասներ Ղզըլաղաջի մոտակա բարձունքին, թաևձր անտառում ծվարած ս. Հովհաննեսի վանք: Անդրանիկը խումբն առաջնորդեց Սմբեի Գյալի կիրճով, որը դժվարին, բայց և ամենից կարճ ու ապահով ուղին էր: Ոչ զորավարը, ոչ էլ հայդուկները լավ ծանոթ չէին տեղանքին, գնում էին մոտավոր իմացությամբ, սակայն խավարի մեջ ու աստղերի տակ կողմնորոշվելու իրենց զորեղ բնազդով: Նրանց առջև տարածվեց լեռնային գետակով կիսվող ոչ մեծ, խաղաղ մի հովիտ: Քրտնքից թրջված շորերը կպել էին մարմիններին, աչքում աչքերը փակվում էին հովտի անդորրից արբեցած: Գետակի ափին զորավարը կարգադրեց մի քանի րոպե հանգստանալ, շունչները տեղը բերել: Ջուր խմեցին, լվացվեցին և փոքր-ինչ թարմացած շարունակեցին երթը: Զորախումբը Մշո դաշտ էր իջել՝ իմանալու, թե ի՛նչ արդյունք ունեցավ իրենց դիմումը տեղի հայ հարուստներին, նրանք կամենո՞ւմ են պարեն ու հագուստ տալ ֆիդայիներին, թե՞ հարկադրված են մոտալուտ ձմեռը դիմագրավելու համար ուրիշ միջոցների դիմել: Իսկ ուրիշ միջոցներ չկային, մնում էր միայն թալանը, որը թուրքի ու քրդի գործ էր՝ խստագույնս դեմ ֆիդայական օրենքներին ու բարոյականությանը: Անդրանիկի Մշո դաշտ իջնելու մյուս նպատակը Սևքարեցի Սաքոյի մատնության ու կալանավորման համար քուրդ Ջաղայիրից վրեժ առնելն էր: Ղզըլաղաջ, Ավդա-Աղբյուր և Մեյդան գյուղերի այդ թալանչի տնօրենը դեռևս չէր հատուցել արածի համար: Ս. Հովհաննեսի մենավորիկ վանքը ամենահուսալի կայանն էր, որտեղ մի քանի օր ապաստանելով՝ հայդուկախումբը կարող էր իրագործել նպատակները:

թվայնացրել է 1915.info կայքը

Սովորական երթի հինգուկես ժամվա ճանապարհը քրտնաթոր հայդուկախումբն անցավ չորս ժամում: Կանգ առան բարձր ու սաղարթախիտ ծառերով պատնեշված բացատի եզրին: Առաջնորդարանի պատուհանում լույս կար. ինչո՞ւ պիտի այդ ուշ պահին վանքն արթուն լիներ: Անդրանիկը զինախմբից մեկին հանձնարարեց զգուշորեն մոտենալ, պարզել իրավիճակը: Վանքի շները կատաղի հաչոցով դիմավորեցին հայդուկին: Դուռը ճռռաց, մեկը բակ դուրս եկավ:

— Այս կողմ արի, Օհան,— հայդուկը ճանաչեց լույսի շերտի մեջ հայտնված սպասավորին:

Օհանը սաստեց շներին, մոտեցավ ծառի տակ կանգնած ուտվերին: Ճանաչեց:

— Մենա՞կ ես:

— Ոչ, խմբով ենք: Անդրանիկն սպասում է բացատի եզրին:

— Վանքում ասկյարներ կան, վեց հոգի:

— Ի՞նչ գործով են եկել:

— Տասնհինգ ոսկի են ուզում: Պահանջը բավարարելու դեպքում վաղ առավոտյան կհեռանան վանքից:

— Տղերքը հոգնած են, ոտից գլուխ քրտնքի մեջ կորած: Հաղորդիր վարդապետներին, որ նրանք պիտի կարելվույն չափ շուտ վանքն ազատեն այդ շներից:

— Լավ: Հետ քաշվեք բացատից և սպասեցեք ինձ, շուտով ուտելիք կբերեմ:

Մեկուկես ժամ դեռ կար լույսը ծագելու: Ֆիդայիները հրացանը ծնկներին ննջում էին ծառերին թիկնած: Չորավարն էր արթուն և երկու պահակները, որ մթությանը սովոր աչքերով զննում էին անտառի խավարը: Օհանը հաց, կաթ և մածուն բերեց: Ողջագուրվելով Անդրանիկին (վերջինս լավ էր ճանաչում Օհանին ու վանքի հովիվ նրա եղբայր Սեթոյին) հայտնեց

թվայնացրել է 1915.info կայքը

վարդապետների խնդրանքը՝ անտառում սպասել մինչև իրենց հրավերը: Առավոտյան վանքն ընդունեց զինախմբին:

Անդրանիկը դժգոհ էր, մոայլ: Մուշի հարուստ հայերը գրեթե անպատասխան էին թողել ստվարացող հայդուկախումբը զինավորելու մասին նրա պահանջը: Հիմա՞ ինչպես կվերաբերվեն: Նրա կանչով Մուշի մի քանի ծպտյալ հայդուկների հետ ս. Հովհաննես եկավ Հաջի Կոտոն՝ Հակոբ Կոտոյանը: Ասաց, որ քաղաքի հայ հարուստները պատրաստ են հանգանակություն սկսելու, շուտով իրենք հացահատիկ, հագուստեղեն, ձավթ, աղ ու ծխախոտ կհասցնեն Փեթար գյուղ և Առաքելոց վանք: Այդպես էր պայմանը: Այնուհետև ֆիդայիներ՛ը պիտի բեռները հասցնեին Բարձրավանդակ:

Վանքի անտառապահ Ավոն Ղզըլաղաջ էր գնում, հարցրեց, թե Անդրանիկը որևէ բան չունի՞ հաղորդելու Դժոխք Հրայրին:

— Ոչ: Դաշտից եկել այստեղ, բարձրանում ենք Սասուն: Այսքանը կասես:

Անդրանիկին մտահոգում էր վերջին ժամանակներում Հրայրի ներամփոփ խաղաղությունը, ասես այլևս աչքերից կրակ թափող Դժոխքը չէր: Քաշվել էր իր Ղզըլաղաջն ու գրեթե չէր արձագանքում կռիվների թոհուբոհին: Դժգոհության լուրջ պատճառներից մեկն էլ Սևքարեցի Սաքոյին ձերբակալած Ջաղայիր քրդի սպանությունը ձախողելն էր: Դեռևս Գուրգենի կենդանության օրոք էր մշակվել այդ ծրագիրը, Անդրանիկը երկու անգամ զինախմբով իջել էր դաշտ, բայց Դժոխքը թե՛ առաջին, թե՛ երկրորդ անգամ նրան համոզել էր վերադառնալ Բարձրավանդակ՝ խոստանալով անձամբ սատկացնել արյունարբու գյուղապետին: Եվ խոստումը չէր կատարել: Անդրանիկը որոշել էր այս անգամ ամեն գնով իրականացնել մտադրությունը և Հրայրին չխառնել գործին: Նա ուներ կոնկրետ ծրագիր.

թվայնացրել է 1915.info կայքը

«Մեր ունեցած փամփուշտները կը կապենք շորերուս տակից, բ՛երել կտանք ութ հատ զորքի շոր, ութ հատ ֆէս, երկու տղայից ալ՝ քրդական շորեր, գլուխներուն մի-մի քոլոզ՝ իբրև մեզ առաջնորդ: Երեկոյան ժամ մը մնացած մութին կհասնենք Ջաղայիրի Ավդա-Աղբյուր գյուղը... Ճանապարհից դուրս կելլանք, եթե մարդ պատահեցավ ճանապարհին՝ սալեմ ալեքում կսենք և կանցնենք: Եթե բախտավոր ըլլանք, Ջաղայիրը հոն կըլլա...»:

Մեթերհեմում բանտարկված Սևքարեցու վիճակը, նրա անորոշ՝ ճակատագիրը շատ էր անհանգստացնում Անդրանիկին: Երբեմն հաջողվում էր նամակ հասցնել նրան և ստանալ պատասխանը: Սաքոն խորհուրդ էր տալիս հաշտվել Սերոբի ու Մակարի հետ: Գիտեր, որ նույն խնդրանք-խորհուրդները նա բանտից հղում է նաև Աղբյուրին ու շատ կուզեր իմանալ, թե նա ինչ է պատասխանում: Օրեր առաջ, երբ Անդրանիկը խտանում էր, նրա մոտ եկավ Տալորենկի Հագմանք թաղի քահանա տեր Զաքարը, որը նոր էր ազատվել Մեթերհեմ բանտից, և բանավոր հաղորդեց Սաքոյի մի շարք պատվերներ: Առաջիկա գործերի մասին Անդրանիկն էլ նույն կերպ էր մտածում, ինքն էլ գիտեր, որ փիդայիների մասնատված-առանձին կոիվներով, թեկուզ մոլեգին ու անձնուրաց կոիվներով, հնարավոր չէ մեծ հաղթանակի հասնել: Ու սակայն չէր գտնում միավորվելու ելքը...

Անդրանիկն ուզում էր հասկանալ Դժոխք Հրայրի հետքաշվածության պատճառը: Այդ ուժեղ, անձնազոհ գործչին, վստահ էր, անծանոթ է վախ ասածը: Մի՞թե նա պարզապես հոգնել է անվերջ կոիվներից, անձրևից ու քամուց, ամառվենրի ու անտառների խավարից: Եվ Ջաղայիրի սպանությունը երկու անգամ ա՞յն բանի համար ձախողեց, որ դրանից հետո ինքը հարկադրյալ փախստական պիտի դառնար... Ո՛չ: Ո՞վ կարող

թվայնացրել է 1915.info կայքը

էր գուշակել, որ մեծն նախախնամությունը Դժոխքին պահպանում էր գալիքում հերոսացնելո՛ւ համար:

Հրայրը նամակ ուղարկեց վանք: Ուզում էր իմանալ, թե ի՞նչ նպատակով է Անդրանիկն իջել դաշտ: Պատասխան չստացավ ու ինքը եկավ ս. Հովհաննես: Դառն էր ու ցավոտ նրանց զրույցը վրեժխնդրության մասին: Հրայրին, համեմայնդեպս, տեղյակ պահեցին իրենց մտադրությանը: Անդրանիկը հետո հուշագրելու էր այդ զրույցը:

«Նա քմծիծաղով մը ըսավ.

— Տղերք, ձեզ մատաղ, այդ գործը մի հատ մարդով ես ընել կտամ: Նա ամեն օր մեր գյուղը կուգայ և երեկունը մութը ատեն տուն կը վերադառնայ, նա ունի իրեն հավատարիմ ձևացող հայ տղաներ, և անոնց ձեռքով, ձեզի ազնիվ խոսք կուտամ, նրան հինգ-տաս օրեն սպանել տամ:

— Չէ՞ որ դուն Սաքոյին խոստումներ ըրիր ես այդ քուրդը սպանել տալու, երկու անգամ ալ Գուրգենի օրոք մենք եկանք և նույն խոստումները ըրիր, բայց խոստումդ չկատարեցիր:

— Թեկուզ հիմա փախստական ալ ըլլամ, պիտի ընել տամ...»:

Ջորավարն այս զրույցը հիշելու էր չորս տասնամյակ անց, և ափսոսանքո՛վ էր հիշելու: Ափսոսանք այն բանի համար, որ ինքն իր ձեռքով չավարտեց վրեժխնդրության այդ գործը:

Երեկոյան, երբ ս. Հովհաննես վանքի անտառում մութը թանձրացավ, Անդրանիկի զորախումբը վանականներին հրաժեշտ տալով ճամփա ընկավ դեպի սարերը: Վերջին պահին խոստումը կրկին հավաստելով, վանքից դուրս եկավ նաև Դժոխք Հրայրը: Աշխարհը սուզվում էր հերթական գիշերվա մեջ: Ներքևներում կայծկլտում էին Ղզըլղաջի թախծոտ հրագները:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչ-որ հանգամանք թույլ չտվեց Դժոխքին կատարելու երիցս խոստումը, վրեժի գնդակն այդպես էլ չառավ քրդի ճակատին: Սաքոն այս բանն իմանալու էր տարիներ հետո, և Դժոխք Հրայրը նրա համար դարձյալ մնալու էր ինչպես եղել էր՝ ֆիդայական պայքարի խիզախ գործիչ, մեծ հայրենասեր, որը 1904-ին հանճարեղ ճարտարությամբ իր հերթին զարդարեց Սասունի ինքնապաշտպանության անկրկնելի պատմությունը:

* * *

Ծեկ բլուրները խուլ, խորհրդավոր բլվում էին ամպի կարմրասև քուլաներով պատված երկնքի տակ: Քամին վայրենացրել շան պես հոտոտում էր նախափոթորկային լույսով բռնկված ավազները, կաղկանձում չոր փշաթփերի մեջ:

Ողեկից-կառապանը հագիվ էր զսպում տագնապած ձիերին: Հայացքը խռովյալ հորիզոնից չկտրելով, նա ինչ-որ բան էր շշնջում մայրենի լեզվով. երևի անապատների աստծուն խնդրում էր փրկել իրենց սկսվող փոթորկից: Հակերին թիկնած ջանել վանառականը տեսավ նրա շուրթերի վախվորած դողը, հասկացավ դեմքը պատած մռայլ սարսափը:

— Ի՞նչ է եղել, Խոշաբ: Դու բա՞ն ես ասում:

— Իզուր շեղվեցինք մեծ ճանապարհից, ուժեղ մրրիկ է սկսվում ու չգիտեմ, թե որտեղ ենք ապաստանելու: Մի ելք կա միայն. հակերն ու արկղներն իջեցնենք, ձիերին արձակենք, բրեզենտով ծածկված՝ կուչ գանք ֆուրգոնի մեջ: Գուցե մրրիկների տերը խնայի մեր կյանքը...

— Քշիր, Խոշաբ: Այս անապատով միլիոնավոր մրրիկներ են անցել:

— Եվ միլիոնավոր քարավաններ են կործանվել: Կզըլ-

թվայնացրել է 1915.info կայքը

կում — նշանակում է կարմիր ավազ, իսկ կարմիրը արյան գույնն է: Կզըլկումը մահվան անապատ է:

Կովկասցի ջահել վաճառականը՝ չամիչով ու ատլասով բեռնված սայլի տերը, կամ ոչինչ չէր հասկանում անապատի օրենքներից, կամ չափից դուրս համարձակ էր:

— Քանի՞ վերստ է մնում մինչև ամենամոտ քարվանսարան:

— Մոտ քարվանսարա չկա, եղածը շատ է հեռու, չենք հասնի:— Անապատի մարդը մռայլ նայում էր բլուրներին, երևի հայհոյելով այն պահը, երբ շռայլ վարձատրությանը խաբվելով համաձայնեց ուղեկցել մեծ ճանապարհներից խուսափող այդ տարօրինակ կովկասցուն: Բեռն՝ անապատի համար սովորական բեռ, ձիերն՝ այս վայրերին ծանոթ, ինքն էլ դեռ շատ է ջահել մահացու թշնամիներ ունենալու համար: Ումի՞ց, ինչի՞ց էր խուսափում, որ չկամեցավ գնալ օազիս ու քարվանսարա խոստացող մեծ ճանապարհով...

— Վարձդ կրկնապատկում եմ, Խոշաբ, արիացիր ու այլևս չտրտնջաս:

— Կյանքը գին չունի, կյանքից հետո ի՞նչ վարձ,— իմաստախոսեց անապատցին իր զարհուրելի ռուսերենով:— Նույնիսկ իմ՝ միայնակ թափառականիս կյանքն է ինձ համար թանկ:

Հանկարծ բլուրների հետևից փոթորկային սլացքով դուրս խուժեց մի ձիավոր: Օդում կրակելով հասավ ու անցավ ճամփորդներին, սև ձին ծառս հանեց սայլի առաջ և ինչ-որ բան հրամայեց անապատային իր լեզվով:

— Ի՞նչ է ասում:— Կովկասցի վաճառականը ձեռքը պարզեց հրացանին:

— Ասում է՝ մեծ հողմ է գալիս, ո՛ւր եք քշում խելագարի պես, սայլը թեքեք իմ հետևից, թե չէ ավազախեղդ կլինեք:

թվայնացրել է 1915.info կայքը

Անծանոթը կրկին բաց թողեց ձիու սանձը: Ոռնացող քամու մեջ արդեն չէր լսվում ոչ դոփյուն, ոչ սայլի ճռինչ: Նրանք ճանապարհից թեքվել, գնում էին դեպի արևմուտք: Անծանոթը պահ առ պահ շրջվում էր ու, համոզվելով, որ ձիասայլը հետեվում է իրեն, շարունակում էր ընթացքը: Ո՞վ է, ո՞ւր է առաջնորդում: Կառապանը մտածում էր միայն իր թշվառ կյանքի մասին և այն փրկելու համար պատրաստ էր սլանալ միշտ աշխարհի ծայրը: Վաճառականի մտահոգությունը սոսկ փըրկվելը չէր. դա զգացվում էր ոռնացող փոթորկի հանդեպ նրա անտարբերությունից: Զգուշորեն, որ կառապանը չնկատի, պայուսակից հանեց փայլուն ատրճանակը, թաքցրեց ծոցում: Փոթորիկը մոլեգնում էր իր ամբողջ ուժգնությամբ, սայլի վրա ավազի անձրև էր շառաչում: Կարծես թե ամեն ինչ գրողի ծոցն էր կորչում: Ու հանկարծ ասես անապատը վերջացավ իր ոռնացող քամիներով ու շառաչող ավազներով: Սայլն իջնում էր դալար թփուտներով ծածկված թեք լանջով: Կառապանը վտանգի հոտ առավ: Նեղ ու շեղ աչքերով ուշադիր զննեց շրջապատը: Դեմքի հատուկենտ մազերը ցցվեցին, դողալով հետ ընկրկեց.

— Սա Ջումշուդի աուլն է, կորանք, նա մեզ կսպանի ու կթալանի...

— Ո՞վ է Ջումշուդը:

— Ամենամեծ ավազակը, որ երբևէ տեսել է այս անապատը: Կառավարությունը նրա գլխի համար խոշոր գումար է խոստացել:

Անծանոթը ձիուց իջել, ջրհորի մոտ կանգնած սպասում էր սայլի տեղ հասնելուն: Սև մազմորուքի միջից նայող վճռական հայացքը, կրծքին խաչվող փամփշտակալները, գոտուց կախ զույգ ատրճանակներն ու արծաթե պատյանով սուրը լրացնում էին կառապանի խոսքը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հո շատ չվախեցա՞ք, եղբայրներ:— Կակազելով, բառերը խառնելով սայլապանը մի կերպ թարգմանեց նրա ասածը:

— Ես դեռ օրորոցում եմ եղել, որ չար սատանան իմ միջից գողացել է վախը:— Անծանոթին չնայելով, վաճառականը թափ է տալիս շորերի ավազափոշին:

— Իջեք, եղբայրներ, այստեղ իմ օջախն է, կհանգստանաք, կզրուցենք, փոթորիկը դադարելուց հետո կշարունակեք ձեր ճամփան:

— Ասա նրան, որ ես կովկասցի եմ և իմ լեռների օրենքն արգելում է ընդունել մեկի հյուրասիրությունը, որի անունն ու հավատը հայտնի չէ:

Սայլապան-թարգմանչի լեզուն վախից կարկամեց: Սակայն անծանոթը ծիծաղեց ու մեկեն լրջացավ, աչքերը նայեցին մի տեսակ խոր, ցավագին տխրությամբ: Նա մոտեցավ սայլակողին և ռուսերեն լեզվով շշնջաց.

— Ոչ անանուն եմ, ոչ էլ անհավատ, եղբայր: Անապատի օրենքով հյուրն օջախի սրբությունն է, և տանտերն իրավունք չունի ներկայանալու, քանի դեռ նա չի պահանջել:

— Դուք լավ եք խոսում ռուսերեն, որտե՞ղ եք սովորել,— խրճիթի կիսամթում հյուրընկալի դեմքը զննելով հարցրեց կովկասցին:

— Սիբիրում: Վեց տարին քիչ ժամանակ չէր լեզու սովորելու համար, թեև այդ լեզվով ինձ միայն հայհոյում ու սպառնում էին:

— Դուք իսկապե՞ս ավազակ եք:

— Եթե ուզում եք, դուք էլ կարող եք ինձ այդպիսին համարել, մանավանդ որ տեսքս այլ բան չի հուշում: Բայց ես ավազակ չեմ, եղբայր, ես որոնող եմ:

— Եվ ի՞նչ եք որոնում այս դատարկ, փոթորկաշունչ անապատներում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Արդարություն: Դա են պահանջում իմ կործանված ընտանիքի ողբերգությունը, աշխարհի բոլոր տխուր մարդկանց տառապանքները: Նրանք, ում մինչև հիմա սպանել եմ, իրենց արյունով միայն ձեռքերս են թրջել: Խղճիս վրա արյուն չկա, հատուցման արդար լույս կա միայն... Ինձ նման մի քանի տարաբախտ մարդկանց հետ քաշվել ենք անապատի այս հեռավոր անկյունը՝ քարավանների ճամփից հեռու, և չենք ապաշխարում, դրա համար շատ ուշ է, սպասում ենք պատեհ հանգամանքների, որպեսզի վրեժ լուծելով հասնենք արդարության հայտնագործմանը:

— Արդարությունն ամբողջ աշխարհում են որոնում ու դեռ չեն գտել, եղբայր: Օվկիանոսներում. լեռներում, խոր անտառներում, աճավասիկ՝ անապատում: Որտե՞ղ է թաքնված, չգիտենք...

— Անապատի օրենքը թույլ չի տալիս ձյուրին հարցուփորձ անել, իմ գործը չէ, թե դուք ով եք կամ ուր եք գնում, միայն ուզում եմ ասել, որ ճամփորդական կոշտ հանդերձանքի միջից էլ ձեր կանացի դեղեցկությունը երևում է: Դուք վատ եք ծպտված, դա վտանգավոր է:

— Շնորհակալ եմ, որ զգուշացրիք, բայց դրանում առանձնապես խորհուրդ ու գաղտնիք չկա: Նույնիսկ շատ է հասկանալի. չէ՞ որ իմ ճանապարհը չի անցնում Եվրոպայի քաղաքներով: Հիվանդացած ամուսնուս փոխարեն այս անգամ ես եմ Տաշքենդից ապրանք տեղափոխում Թիֆլիսի մեր վաճառատուն: Այս է բոլորը:

— Ձեր բեռը, հավանաբար, շատ կարևոր է: Այն վտանգի չենթարկելու համար սիրով կուղեկցեինք մինչև Արալյան ծով, սակայն, ցավոք, մեր ուղեկցելն առավել վտանգավոր կլինի: Մինչև մութն ընկնելը հեռվից կհսկենք ձեր ընթացքը, իսկ եթե ճամփին որևէ մեկը հայտնվի, ասացեք, որ փոթորկի ժամանակ

թվայնացրել է 1915.info կայքը

մոլորվել եք այս անիծյալ անապատում: Այդպիսի բան հաճախ է լինում:

Ջումշուդի ավազակներից մեկը ներս մտավ ու ասաց, որ անապատում հողմը դադարել է: Կառապանը փոխեց տիկերի ջուրը, լծեց ձիերը:

— Բարով մնաք, տխուր մարդիկ: Ծնորհակալ ենք օթևանի համար: Տա աստված, որ երբևէ գտնեք ձեր որոնածը...

Ասիական ատլաս ու չամիչ բարձած սայլը կրկին բռնեց անապատի շոգ, փոշոտ ճամփան: Տասնչոթ օր էր ինչ Մարո Ղարաբեշիշյանը դուրս էր եկել Տաշքենդից: Արդեն չորս զույգ ձի էր փոխել և չորրորդ ուղեկիցն էր նջում ձիասայլի նստակին: Սամարղանդն անցել են, Բուխարան անցել են, հույս ուներն այդ օրը երեկոյան կողմ հասնել Ջանգելդի, բայց հողմը խառնեց հաշիվները: Կարողանալո՞ւ է բեռն ապահով հասցնել Աստրախան, որտեղ իրեն դիմավորելու են:

Մարոն Տաշքենդից Թիֆլիս այդ ճանապարհն անցնում էր երկրորդ անգամ: Մեկ տարի առաջ Հայրենասիրաց միության Գրիգորի հետ քառասունչորս օրում Թիֆլիս հասան: Գնում էին քարավանների մեծ ճանապարհով: Սակայն այս անգամ Տաշքենդի երևելիներից մեկը՝ նրա ազգական Գեորգ Կարապետշիշովը, որի հոգածությամբ սայլը բեռնավորվել էր, խորհուրդ տվեց Կզըլկումը կտրել կիսավայրի մի ուղիով: Այդ ճանապարհին չկային մաքսատնային հսկիչ կետեր, թեև փոխարենը չէին բացառվում թափառական ավազակների հետ հանդիպումները:

... Պայծառ, խոշոր աստղեր էին կախվել անապատի վրա: Գորշ մթության մեջ ավազաթմբերի միահյուսման, կրկնվող եզրագծեր էին ու նրանց հետևից բարձրացող բորենու վնգստոց:

— Լույսեր են երևում, հասնում ենք Ջանգելդի:— Խոշաքը մտրակեց ձիերին մղձավանջային ճամփորդությունից սևած առաջ

թվայնացրել է 1915.info կայքը

ազատագրվելու երջանիկ հույսով: Նա այնտեղից հետ էր վերադառնալու: Անապատի խորքերում թախծող այդ գյուղակում Մարոն պիտի վերավճարով փոխանակեր ձիերը, ուրիշ ուղեկից գտներ:

Քարվանսարայի տիրուհին նրանց խաշած միս ու թեյ մատուցեց, տրամադրեց մի փոքրիկ սենյակ:

— Մյուս անգամ, երբ ընկնեք այս կողմերը, ամենալավ սենյակը կստանաք: Հիմա, ներող եղեք, այն զբաղեցնում են ճանապարհների զինվորական հսկիչները:

— Նրանք ի՞նչ են անում այստեղ...

— Խառը ժամանակներ են, ճամփորդների փաստաթղթերն ու բեռներն են ստուգում: Նրանց գործից ո՞վ է բան հասկանում:

Խոշաբը քնելու էր ձիասայլի վրա, որպեսզի միաժամանակ հսկեր բեռներին: Անհանգիստ մտքերից ալեկոծվող Մարոն չէր կարողանում աչք փակել: Նրան տանջում էր ճամփորդության հետագա ճակատագիրը. դեռ ի՞նչ փորձությունների միջով պիտի անցնի, մինչև բեռը հասցնի Աստրախան: Եվ արդյո՞ք բանը կվերջանա սոսկ ֆիզիկական չարչարանքներով: Քնեց միայն լուսաբացին և անմիջապես էլ արթնացավ դռան ուժեղ թակոցից: Խոշաբն էր: Գունատված, սարսափից դողացող ձայնով բան էր ուզում ասել ու չէր կարողանում:

— Դեղին օձը... սողաց հակերի արանքը... Բեռը թափեցի, որ օձին սպանեմ: Ես մեղավոր չեմ, սահիբ, ես իմ երկար ու խեղճ կյանքում երբեք մուխանննաթ չեմ եղել: Օձը խցկվեց տախտակների ճեղքերը: Սայլի հատակի տախտակը պոկեցի, որ վիժվածքին դուրս քաշեմ այնտեղից, և... այնտեղ շատ մարդ էր հավաքվել, բոլորը տեսան, որ տախտակների տակ հրացաններ են շարված: Ճանապարհային հսկիչները քանդուքարափ են անում սայլը...

թվայնացրել է 1915.info կայքը

Գաղտնիքը բացված էր: Ձամիչն ու ատլասը չէին սայլի իսկական բեռը, այլ նրա երկու հատակների արանքը խցկված հիսունվեց հրացանները: Մարոն շտապ մի երկտող գրեց:

— Խոշաբ, այստեղ ես ուրիշ հարազատ չունեմ, դու ես: Վերցրու այս թուղթը և այս մի քանի ոսկին: Հասնում ես Տաշքենդ, մտնում շուկա, թուղթը հանձնում ամենամեծ վաճառատան տիրոջը՝ Գեորգ Կարաքեշիշովին: Եթե ճանապարհին գրությունը կորչի, դու նրան պարզապես կպատմես, թե որտեղ, ինչպես, ինչ հանգամանքներում ձերբակալվեց թիֆլիսցի նրա ծանոթ վաճառականը:

— Թուղթը տուր, ոսկիները չեմ ուզում:

— Այստեղ դրանք ինձ այլևս հարկավոր չեն, վերցրու: Կարող ես, եթե խիղճդ թույլ տա, թուղթը նետել, ոսկիներն առնել ու գնալ քո գործին, չէ՞ որ ես երբեք չեմ կարող քեզ գտնել: Բայց հավատում եմ քո բարությանը, Խոշաբ...

Մարոն չսպասեց, որ գան իր հետևից: Քարվանսարայի տիրուհին ապուշ կտրեց՝ տեսնելով, որ կովկասցի վաճառականի փոխարեն նրա սենյակից դուրս եկավ սև մազերը ջրվեժի պես ուսերին թափած մի աղջիկ:

— Այստեղ ո՞ւմ են ներկայանում կալանավորվելու համար, տիրուհի:

Վերջինս դեռ չէր կարողանում հասկանալ իրողությունը:

— Տեր աստված, ինչ կախարդանքներ ասես, որ չեն լինում այս գարշելի անապատում...

Ներս մտան երկու հսկիչներ, մոտեցան քարվանսարայի տիրուհուն:

— Ո՞ր սենյակում է կովկասցի վաճառականը:

— Ես այստեղ եմ, պարոններ:

— Դո՞ւք...

— Այո, ես:

թվայնացրել է 1915.info կայքը

Ջարմանքը կարճ տևեց: Երևի ցարական օրենքի այդ անհայտ պաշտպանները նման բաներ շատ էին տեսել: Նրանք Մարոյին սենյակ հրավիրեցին:

— Ո՞վ եք, որտեղից և ուր եք տանում զենքը:

— Այդ հարցերին ես պետք է պատասխանեմ նաև բանտային քննասենյակում: Միշտ չի՞ լինի, որ առանց ավելորդ ժամանակ կորցնելու անապարենք այնտեղ:

Անապատի վրա արեգակի նարնջե լույս էր թափում 1899 թվի աշունը:

* * *

Բողազքչասանի մշուշոտ ձորում հրաժեշտ տալով նահատակված մանանդեցի Սահակի շիրմին, զինատարների խումբը Խոյի վրայով վերադարձավ Դերիկ: Շարաֆ ցեղապետի հարձակումից յոթ-ութ ամիս անց այստեղ կյանքը դարձյալ մտնում էր հունի մեջ: Հիվանդությունից ապաքինվելով վանք էր վերադարձել Հովհաննես քահանան: Գավառում ուսուցչությամբ զբաղվող օրիորդ Սաթենիկ Մատինյանը առժամանակ տեղափոխվել էր այստեղ՝ քահանայի հետ կարգավորելու հոգևոր տան ներքին գործերը: Սաքոյի և նրա ընկերների բացակայության ընթացքում Կովկասից «ուխտավորներ» էին եկել, վանքի պահեստում գոյացել էր «խունկ ու մոմի» նոր պաշար: Կազմավորվում էր զինատարների նոր խումբ, որոշված էր զենքը Վան տեղափոխել առաջիկա օրերին, քանի դեռ չէին սկսվել փոթորկալի ձնահյուսերը: Խմբում ընդգրկված էին հիմնականում շատախցիներ: Վերադարձած զինատարներից մի քանիսը ցանկություն հայտնեցին նոր խմբի մեջ կրկին ճանապարհվելու Վան: Շատախցիները, ոգևորված Դերիկի կովի պատմությամբ, սիրով ընդունեցին Սևքարեցի Սաքոյի մասնակցությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Թիֆլիսից մինչև Նախավկա ու Դերիկ և այստեղից մինչև Վան դու կիրճերի անորսալի գայլ ես, մեզ հետ քո գալը ուրախալի է բոլորիս համար,— ասաց շատախցի Մկրտչ:

— Խումբը ղեկավարելու եմ ես,— հայտարարեց Ոսկան Զադեն, և դա դուր չեկավ շատախցիներին, որոնք արդեն ղեկավար էին ընտրել իրենց համար:

— Դու կղեկավարես մեկ ուրիշ խումբ, որը Վան կճանապարհվի մեզնից հետո: Մեր խումբն արդեն ունի իր ղեկավարը:

— Ձեր ընտրած ղեկավարով դուք Վան կգնաք առանց զենքի...

Տարաձայնությունը լուրջ բնույթ էր ընդունում: Ոսկան Զադեն խոսում էր որպես Վանի ներկայացուցիչ, այսինքն՝ իրավատեր, և ունեցավ իր կողմնակիցները: Շատախցիները պնդում էին իրենց ընտրած ղեկավարի թեկնածությունը: Ու մինչև կողմերը լեզու կգտնեին իրար հետ, լեռներում սկսվեցին ոռնացող փոթորիկները: Վարդանի և Սաքոյի համառ ջանքերով ի վերջո հաշտություն եղավ պատակտված կողմերի միջև: Ոսկան Զադեն ճշանակվեց խմբի ղեկավար, շատախցիներից մեկը և Սաքոն՝ օգնականներ: Ձնաբքերը դադարեցին, մոտալուտ գարնան խաղաղություն իջավ լեռներին, և զինատարների խումբը ճանապարհ ընկավ: Տանում էին Տուլայի զինագործարանի երեսուներեք հրացան, մի քանի տասկրականոց ատրճանակներ և մոտ չորսուկես հազար փամփուշտ: Առաջին չորս օրերը անցան առանց անակնկալների: Հինգերորդ օրը Չուխագյադուկի ձորում երկու ավազակախմբեր պաշարեցին զինատարներին: Ոսկան Զադեն որոշեց ուժեղ կրակով ճեղքել պաշարողների շղթան և կովելով բարձրանալ Բաշեթ լեռան անձավները: Սաքոն դեմ էր դրան:

— Հիմա՝ ցերեկով, այդ բանը մենք չենք կարող անել, Ոսկան Զադե, ձորի երկու ափերից նրանք բոլորիս ճանճերի

թվայնացրել է 1915.info կայքը

պես կկոտորեն: Մենք միայն գիշերով կարող ենք այդ փորձն անել: Հիմա գոնե ապահով դիրքավորված ենք, թող օրն ըթանա՝ տեսնենք ինչ է սրանց ուզածը:

Շատախցիները Սաքոյի կողմն էին: Նրանք էլ էին գտնում, որ դա անհմաստ խելահեղություն կլինի:

— Հարկավոր է ճշտել շատ կարևոր մի բան. սրանք գիտե՞ն, թե մենք ովքեր ենք և ուր ենք գնում, թե՞ մեզ պաշարել են առօրյա թալանի սովորությոմվ,— շարունակեց Սաքոն:

— Դա, երևի, դու ի՞նքդ կգնաս ու կիմանաս:— Ոսկան Ջադեն մռայլ ու նեղացած նայեց Սաքոյին:

— Կգնայի ու կիմանայի, բայց նրանց լեզուն չգիտեմ, խմբապետ:

— Իսկ ո՞ւմ ես առաջարկում այդ անհիտ նահատակությունը:

— Ոչ ոքի: Մենք այդ բանը կիմանանք առանց մեր դիրքերից հեռանալու: Եթե նրանց համար միևնույնն է, թե մենք ովքեր ենք և ո՞ւր ենք գնում, գուցե և կարողանանք հաշտվել:

— Պետք չէ, հետո նրանք մեզ կատիպեն օրերով կերուխումի նստել իրենց վրաններում...

Սաքոն չպատասխանեց Ոսկան Ջադեի ծաղրին: Շատախցի Մկրոն իր դիրքում անհանգիստ շարժվեց, բայց Սաքոյի հայացքը սաստեց նրան:

Ձորի երկու կողմերից ավազակները կրակում էին՝ ոչ մի վնաս չհասցնելով զինատարներին: Սալամաստցի Համիկը, միջին տարիքի արծաթագործ, տիրապետում էր այդ կողմերի խառը թուրքերենին: Սաքոյի հրահանգով նա ճերմակ թաշկինակը կապեց հրացանի փողի ծայրին և իր քարի ետևից վեր բարձրացրեց: Վերևից նկատեցին դա: Մեկը բարձրացավ ձորեզրի քարին:

— Մենք գտնում ենք,— դիրքից ելնելով, Ոսկան Ջադեի

թվայնացրել է 1915.info կայքը

Խոսքը թարգմանեց Համիկը,— ոչ այս կոիվն աննիեթեթ է, մենք թշնամի չենք ձեզ: Ինչո՞ւ եք կրակում մեզ վրա, ի՞նչ եք ուզում:

Վերևում ինչ-որ բան խոսեցին իրենց մեջ:

— Դուք ջանֆիդաներ եք, մենք ձեզ պիտի կոտորենք:

— Եթե դրա համար եք պաշարել, իզուր: Ջանֆիդաները Մշո դաշտում ու Սասունի լեռներում են:

— Իսկ դուք ովքե՞ր եք:

— Խաղաղ մարդիկ, Թավրիզից Դիլմա ենք գնում մեր գործերով:

— Ինչո՞ւ ճանապարհով չեք գնում:

— Մտածեցինք, որ այս կողմերով ավելի շուտ կհասանենք և տեղի աշիրեթները մեզ կպաշտպանեն վտանգներից:

Այս վերջին խոսքը Ոսկան Ջադեինը չէր, Համիկն իրենից ասաց՝ լավ իմանալով նրանց սովորույթը: Վերևում երկար խորհրդակցեցին: Քարին կանգնած թուրքը նորից հարցրեց.

— Դուք ձեզ հետ ի՞նչ եք տանում:

— Մի քիչ կաշի: Հույս ունենք Դիլմայի շուկայում վաճառել կամ փոխանակել ուրիշ ապրանքով:

— Իսկ ինչո՞ւ եք զինված:

— Ինքնապաշտպանության համար, որևէ մեկին վնասելու նպատակ չունենք:

— Ցեղապետ Ալեն հավատում է ձեզ և իր խմբով հետևում է Չուխագյադուկից: Գնացեք ձեր ճամփան:

Զինատարները տեսան, թե ինչպես Ալեի խումբը դուրս եկավ դիրքերից և ձիերը հեծնելով՝ գնաց դեպի Վիշապասարի աղբյուրները: Ձորի մի ափից վտանգը վերացավ: Մյուս կողմում, ուր դիրքավորված էր երկրորդ ավազակախումբը, շփոթ ու անհասկանալի վիճակ էր:

— Մենք ձեզ չենք հավատում: Հրամայում ենք զենքն ու բեռները թողնել տեղում և մեկ-մեկ դուրս գալ ձորից:

թվայնացրել է 1915.info կայքը

Ոսկանն ու Սաքոն իրար նայեցին: Զինատարները տասնչորս հոգի էին, ձորի արևելյան ափից սպառնացող ավազակները՝ քսանհինգ-երեսուն: Նրանց կողմն էր նաև դիրքային առավելությունը: Կար մեկ այլ վտանգ. կրակոցների վրա, ինչպես ագռավները վիրավոր գազանի վրա, շրջակայքից կարող էին հավաքվել ուրիշ թալանչիներ: Այդ դեպքում վիճակն անասելի կբարդանար, եթե նույնիսկ պաշարումը ճեղքեին, դա կլիներ ծանր կորուստների գնով: Տասնչորսից ոչ մեկի մտքով, իհարկե, չէր անցնում կյանքը փրկելու համար հրաժարվել թանկագին բեռից: Բայց երկուսից միաժամանակ հրաժարվելն էլ քաջագործություն չէր:

— Դուք լսեցի՞ք հրամանը, թե՞ վախից խլացել եք:— Թուրքը հարցն ուղեկցեց հայհոյանքով ու հրացանի որոտով: Գնդակը քերծեց Համիկի կողքի քարը, թռավ-խրվեց բեռներից մեկի մեջ:

— Հարկավոր է ժամանակ շահել,— Սաքոն նայեց արեվին,— իրիկնամուտն այնքան էլ հեռու չէ: Մեր հույսը գիշերն է, ավազակը վախենում է խավարից: Համիկ, ասա, որ մեզ ժամանակ է հարկավոր մտածելու համար:

Համիկը ձորն ի վեր կրկնեց Սաքոյի ասածը: Վերևում դըժգոհություն էր, խլրտոց: Մի քանի րոպե լռություն տիրեց, երևի խուժանախումբը խորհրդակցում էր:

— Գյավուրներ,— բանակցող թուրքը, ժայռի հետևից դուրս չգալով, ներկայացրեց որոշումը,— կես ժամ ենք տալիս մտածելու: Թե որ կես ժամ հետո կյանքներիդ գինը չհասկացաք ու չենթարկվեցիք, դիրքերի մեջ բոլորիդ գյուլլախորով կաևենք:

Զինատարները մտածելու բան չունեին, պարզ էր՝ պետք է կովեին:

— Մեր խնդիրը մեկն է,— ասաց Ոսկան Զադեն,— կռիվն ամեն կերպ ձգձգել մինչև մութն ընկնելը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդ[illegible]ի չենք կարող,— Սաքոն կրկին նայեց արևին,— շուտով նրանք կսկսեն մեզ գնդակոծել: Ոսկան Զադե, տուր ինձ քո ջրամանը:

Դա Վանի վարպետների պատրաստած պղնձե դրվագազարդ փարչ էր, որ նման ճամփորդությունների ժամանակ Ոսկան Զադեն ամրացնում էր գոտուն: Սարգիսը պտտելով հանեց խցանը, ջուրը թափեց: Մոտիկ դիրքերի զինատարները հետաքրքրությամբ ու ջրի համար ափսոսանքով նրան էին նայում:

— Ո՞ւմ մոտ վառոդ կա:

Մտադրությունը հասկացան: Կաշվե տոպրակներից հավաքված վառոդը լցրեց փարչը: Ճարվեց նաև մի բուռ արճիճ:

— Այս փորձն ինձ մնացել է Դերիկի վանքի կռվից, երբ վիճակներս ավելի ծանր էր...

Թուրքը նորից կրակեց:

— Ժամն է, գյավուրներ, հրամայում ենք մի վերջին անգամ:

— Ուզում ենք իմանալ, թե ո՞վ է մեզ հրամայում:

— Հարյուրապետ Չյարքազը:

— Նրա հրամանը մեզ համար նույնն է, ինչ ատամնաթափ շան հաչոցը:

Համիկի վերջին բառերի հետ Մկրտոն կրակեց: Թուրքը ոռնաց՝ երևի վիրավորվեց, ու անհետացավ վերևում: Սկսվեց անկանոն փոխհրաձգություն: Ավելի ճիշտ, թուրքերն էին կրակում, զինատար հայդուկները հատուկենտ էին պատասխանում նրանց: Տեսնելով, որ լավ դիրքավորված հայդուկներին չեն կարողանում որևէ վնաս պատճառել, նրանք էլ կամաց-կամաց նվազեցրին կրակոցները: Սաքոն չէր խառնվում այդ անվնաս թոհուբոհին, իր ժայռի տակ զբաղված էր պղնձե փարչով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ոսկան Ջադե, ո՞ւմ բեռի մեջ են տասկրականոց ատրճանակները,— մի պահ ընդհատելով գործը, կրակոցների արանքում հարցրեց Սաքոն:

— Շատախցի Մկրոյի:

— Հարկավոր է հանել դրանք, կարծեմ յոթն են, բաժանել տղերքին: Միակրակ հրացաններով դժվար է գրոհել:

Լեռները հետզհետե մթնեցին: Ձորի արևելյան ափին շարժում նկատվեց: Ոսկան Ջադեն թեքվեց դեպի Սաքոյի ժայռը:

— Նրանք փակում են ձորի ելքը:

— Հիմա եկավ քո որոշումը կատարելու ժամանակը, Ոսկան Ջադե: Առաջանանք:

Հրացաններով ու ատրճանակներով զինված խումբը ժայռարանքներով հետևեց Սաքոյին: Վերջինս ընդհուպ մոտեցավ ձորի ելքը խիտ կուտակումով փակած թշնամուն: Ձնախատեսված ու անսպասելի պայթյունի դղրդը, բոցախառն ծուխը թուրքերի մեջ ահռելի իրարանցում առաջացրեց: Զինատարներն ուժեղ կրակով, հուժկու ձայներով գրոհեցին ծխի մեջ մոլորված թշնամու վրա: Սաքոն ցավ զգաց քունքին, արյունը ողողեց դեմքը: Տասանոց ատրճանակները կրակում էին աջ ու ձախ:

— Դեպի լեռը, տղերք,— ատրճանակի կոթով խփելով հրացանը լցնող թուրքի գլխին, Սաքոն առաջինը դուրս եկավ ձորից: Մկրոյի ատրճանակի փամփուշտները վերջացել էին, կըռվում էր բերդանի խզակոթով: Իրարանցման մեջ փայլատակում էր արծաթագործ Համիկի ինքնաշեն սուրը: Պաշարումը ճեղքվեց: Կրակոցների խուով ձայները, վիրավորների ճիչերին խառնված, արձագանքում էին Չուխագյադուկի ժայռեղեն ձորում:

— Դեպի լեռը,— կրկնեց Ոսկան Ջադեն՝ բռունցքի շառաչուն հարվածով տապալելով ժայռի հետևից դուրս թռած թուր-

թվայնացրել է 1915.info կայքը

քին: Կես ժամ անց Չուխագյադուկի ձորում խոր լռություն էր, ասես ոչինչ չէր եղել: Թուրքերը չհամարձակվեցին գիշերվա խավարում հետապնդել զինատար հայդուկներին:

— Վիրավորներ կա՞ն,— Ոսկան Զադեի հայացքը տընտղում էր լեռան ստորոտում հավաքված խմբին: Սաքոն թաշկինակն այրել, դրել էր քերծված քունքին:

— Կա՞ն,— կրկնեց Ոսկանը:

Խումբը պրծել էր մի քանի քերծվածքներով: Բայց զինատարներից մեկը չկար: Թավրիզցի Հակոն: Նա կրում էր փամփուշտների կաշեպարկը:

— Ես հետ եմ գնում,— շատախցի Մկրոն իջեցրեց բեռը:

— Եթե կենդանի է, կգա,— փոքր-ինչ վարանելով ասաց Ոսկանը:

— Գուցե ծանր վիրավոր ընկա՞ծ է մի տեղ...

Համիկը գնաց Մկրոյի հետ: Վերադարձան երկու ժամ անց, ձեռնունայն:

— Ամեն տեղ փնտրեցինք, չկա:

— Ի՞նչ անենք,— Ոսկան Զադեն մտահոգ նայեց Սաքոյին:

— Իրավունք չունենք ամբողջ խումբն ու բեռը վտանգի մեջ պահելու: Պետք է բարձրանալ Բաշեթի անձավները, այնտեղ սպասել ու հանգստանալ մինչև վաղը երեկո: Եթե թավրիզցի Հակոն, ինչպես դու ասացիր, կենդանի է, կգտնի մեզ: Նա գիտեր, որ խումբը Բաշեթ է բարձրանալու:

Զինատար հայդուկները Ոսկան Զադեի առաջնորդությամբ հասան Բաշեթի խոր ու անվտանգ անձավներից մեկը: Մեջտեղ եկավ մթերքի ուսապարկը: Մնացել էր երկու հաց ու մի քիչ պանիր: Ով ինչպես կարող էր, շատերն իրենց բեռների վրա, թիկնեցին ու քուն մտան: Մկրոն տեղավորվեց մուտքի առաջ: Սաքոն ու Ոսկան Զադեն առանձնացան մի անկյունում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դու ինչո՞ւ չկամեցար, որ խումբը գնար ճախորդ ճամփորդության ուղիով: Մենք ի՞նչ էինք կորցրել Չուխագյադուկի ձորում, Ոսկան Զադե:

— Լավ զինատարն իրավունք չունի նման հարց տալու, Սաքո, չգիտե՞ս, որ երկու անգամ անընդմեջ նույն ճանապարհով գնալը վտանգավոր է:

— Ավելի վտանգավոր, քան անծանոթ ձորերում պաշարվե՞լը: Ես քո քաջության ու հայրենասիրության վրա չեմ կասկածում, Ոսկան Զադե, բայց լավ կլինի, որ դու այլևս խումբ չառաջնորդես: Միայն ճանապարհն իմանալը քիչ է զինատարների ղեկավար լինելու համար: Գիտես չէ՞, որ մենք հրաշքով փրկվեցինք Չուխագյադուկի ձորից: Դու չլսեցիր իմ խոսքը, ես չուզեցի առանց այն էլ դժգոհ խմբին տրամադրել քո դեմ և քո կամքով իջանք այդ ձորում մթնեցնելու օրը: Դու չէի՞ր հասկանում, որ պաշարվելու և կոտորվելու համար դա հրաշալի տեղ է:

— Մենք կարող էինք պաշարվել նաև լեռան վրա: Փառք տանք աստծուն, որ ամեն ինչ բարեհաջող վերջացավ:

— Չէի ասի: Թավրիզցի Հակոն չկա:

— Ես իմ գործունեության համար պատասխանատու եմ, Սաքո, բայց ոչ թե քո առաջ, այլ Վանի կոմիտեի:

— Ոչ թե Վանի կոմիտեի առաջ, այլ ժողովրդի: Հայդուկը ժողովրդի առաջ է պատասխանատու, Ոսկան Զադե: Թիֆլիսի կոմիտեն, որն իր կարծիքով ղեկավարում է ազգային-ազատագրական շարժումը, ինձ իր ներկայացուցիչն է համարում այստեղ:

— Գիտեմ: Եվ դրանից ելնելով՝ ռազմագիտության դասեր ես տալիս ինձ:

— Դա չէի ասում, Ոսկան Զադե: Ցավում եմ, որ մենք իրար երբեք չենք հասկանա:

թվայնացրել է 1915.info կայքը

Մղչուն ծկլթաց: Մկրոն սթափվեց ցիրհից, նայեց ձորերին: Ուր որ է կլուսանա, ու թավրիզցի Հակոն չերևաց: Արդյոք մեռա՞ծ ես, թե վիրավոր ընկած մի ձորում, թավրիզցի Հակո: Այգամութի մեջ Մկրոն լեռն ի վեր շարժվող բան նկատեց: Գալիս էր ուղիղ դեպի քարանձավ: Գազա՞ն էր, մա՞րդ էր, չէր զանազանվում: Մարդ էր: Ստեպ-ստեպ կանգնելով ու շուրջը նայելով, բարձրանում էր հայդուկների թաքստոցի ուղղությամբ: Մի՞թե թավրիզցի Հակոն է: Նա չէր, շալակին բեռ չկար: Եկավ, հասավ քարանձավի մուտքին և ասես չշփոթվեց ու չվախեցավ, երբ հրացանի փողը հպվեց կրծքին:

— Ո՞վ ես, ի՞նչ մարդ ես,— հարցրեց Ոսկան Զադեն:

— Հովիվ եմ, աղա, սարերում ոչխար եմ պահում:

— Ինչի՞ց իմանանք, որ խաղաղ հովիվ ես, ոչ թե ծուղակն ընկած թշնամի:

— Ես զենք չունեմ:

— Հաճախ անզգույշն ու լրտեսությունն է լինում թշնամու զենքը:

— Ես թշնամի չունեմ, աղա, թշնամի չունեցողը թշնամի չի կարող լինել:

— Լավ ես ասում, բայց ինչպե՞ս հավատանք:

— Այդ բանը դո՛ւք պիտի որոշեք, աղա:

— Ի՞նչ ես կարծում, Սաքո, սա ո՞վ կլինի և ինչո՞ւ է հայտնվել այստեղ,— Ոսկան Զադեն քարանձավի կիսախավարի մեջ կասկածով զննում էր անսպասելի եկվորին: Հանկարծ մեկը ճիչով վեր թռավ քնից: Բոլորը նետվեցին ձայնի կողմը:

— Հետ քաշվեք,— քուրդը կոացավ քնաթաթախ զինատարի վրա:— Կարիճն է խայթել, դրանք վխտում են այս քարայրներում: Լույս վառեք:

Քուրդը դանակի ծայրով ծակեց խայթած տեղը, երկու կողմից այնքան սեղմեց, մինչև քամեց զինատարի աղետյալ դաս-

թվայնացրել է 1915.info կայքը

տակի ամբողջ արյունը, հետո ծոցից վայրի խոտերից պատրաստած դեղ հանեց, քսեց վերքին, փաթաթեց:

— Վերջ, մի քիչ կցավի ու կանցնի: Մեզ համար սովորական բան է սա: Դուք ջանֆիդաներ եք, աղա:

— Ինչի՞ց ենթադրեցիր:

— Ջանֆիդաներն են օթևանում լեռնային քարանձավներում:

— Եվ չե՞ս վախենում, որ քեզ կսպանենք:

— Ոչ, աղա, ջանֆիդան անմեղ մարդ չի սպանում:

— Ի՞նչ անենք սրան,— Ոսկան Զադեն դարձավ Սաքոյին:

— Թող մեզ հետ մնա այս քարանձավում, մինչև օրը մթնի:

Համիկը թարգմանեց խմբի ղեկավարների պահանջը:

— Իմ այստեղ մնալուց ձեզ ի՞նչ օգուտ, աղա: Թողեք գնամ իմ կորած անասունը փնտրեմ: Սարերում ինձ ջանֆիդաներ են հանդիպել, դուք առաջինը չեք: Ով հանդիպել է՝ հաց եմ պարզել, թույն ու դավ չեմ պարզել: Սարի ջանֆիդաները լավ են ճանաչում Բաշեթ լեռան քրդին:

— Գնա, քուրդ, բայց թե որ մտքովդ ուրիշ բան անցավ...

— Բարով մնաք, ջանֆիդաներ: Շուտով մենք էլի կհանդիպենք:

Քուրդը գնաց: Զինատարները չթաքնված անհանգստությամբ նայեցին խմբի ղեկավարներին:

— Ստիպված ենք թողնել քարանձավը:— Մկրոն դժգոհությամբ վեր կացավ:

— Հանգիստ, նա մեզ չի մատնի, նրա աչքերում նենգություն չկար:— Սաքոն ուզում էր հիշել, թե որտեղ է լսել Բաշեթ լեռան քրդի մասին: Շատախցի Մկրոն չէր հանգստանում:

— Ոսկան Զադե, դու զորով դարձար մեր խմբի առաջնորդը և ահա այսպիսի բաներ ես անում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Նա մեզ չի մատնի, Մկրտ,— ներքին համոզվածությամբ Սաքոյի կարծիքը պաշտպանեց Համիկը:

Բաշեթ լեռան քուրդ... Որտե՞ղ եմ լսել, մտածում էր Սաքոն: Եվ հիշեց: Սախոն էր պատմել:

— ... Շատ արյուն կորցնելուց ու վերքի ցավից ուժաթափ էի եղել: Իմ փրկությունը վերևում էր՝ լեռան անձավներում, բայց դժվար թե այնտեղ հասնեի: Ընկա մի առվի մոտ, դեմքս թաղեցի պաղ ջրի մեջ ու խմեցի: Մեռնելու եմ՝ գոնե ծարավ չմեռնեմ: Ու կորցրեցի գիտակցությունս: Ուշքի եկա ինչ-որ քարանձավում: Ճակատիս թրջոց էր դրված, մեկը կապում էր ազդրիս վերքը: Հարցրի՝ ո՞վ ես դու, ես ինչպե՞ս եմ հայտնվել այս քարանձավում: Չպատասխանեց: Հարցս կրկնեցի թուրքերեն: Ասաց՝ քեզ որ մնար դժոխքում կհայտնվեիր, սպասիր այստեղ, մինչև ես գամ: Գնաց ու վերադարձավ մի կճուճ մածնով: Մախաղից հաց հանեց, բրդեց կճուճի մեջ, դեմ արեց փայտե գդալը: Կեր, հայդուկ, ասաց: Բայց դու ո՞վ ես, հարցրի: Բաշեթ լեռան քուրդն եմ, հացդ կեր ու քնիր, երբ գիշերը գա, քեզ կտանեմ սարվոր հայերի վրանները:

Ահա թե ով ես դու, Բաշեթ լեռան քուրդ: Սաքոն գինատարներին պատմեց իր իմացածը: Իրիկնամուտին, երբ խումբը պատրաստվում էր թողնել քարանձավը, ներս եկավ շատախացի պահնորդ Հովեն, ետևից՝ արդեն ծանոթ քուրդը: Հևում էր քրտնքի մեջ: Իջեցրեց շալակի պարկն ու թեթև խուրջինը:

— Վախենում էի մինչև տեղ հասնելս ճանապարհն ընկնեք, չհասցնեմ... Խուրջինի հակերից հանեց կավե երկու կճուճ ու մի քանի գարեհաց: Կճուճներից մեկում մածուն էր, մյուսում՝ ոչխարի խաշած միս:

— Կերեք ճամփից առաջ: Պարկի մեջ ձեր ընկերոջ բեռն է: Նա վիրավոր է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց ո՞վ ես դու,— Սաքոն ուզում էր լսել նրա պատասխանը:

— Բաշեթ լեռան քուրդն եմ: Առավոտյան այնքան էլ պատահաբար չէի ընկել այս կողմերը:— Հետո դարձավ Ոսկան Զադեին:— Աղա, մինչև Հայոց ձոր ձեր ճամփին չարուհարամի չկա, ես ստուգել եմ ամեն թուփ ու քար: Ձեր ընկերոջ մասին չմտածեք, վերքը ծանր չէ, կբուժեմ:

Խումբը դուրս եկավ քարանձավից:

— Հաջողություն ձեզ ու ձեր գործին,— մաղթեց Բաշեթ լեռան քուրդն ու գնաց լանջն ի վեր:

Ձնհալի ջրերից Խոշեթ գետը վարարել, դարձել էր պղտոր, գահավեժ հեղեղ: Մեկ ժամից ավելի զինատարները անցման համար տեղ էին փնտրում: Չգտան: Ջորի ամբողջ երկայնքով գետը հոսում էր մոլեգին շառաչով, իր ճամփին խորտակելով ամեն ինչ: Զինատարները մտահոգ նայեցին իրար:

— Մենք այս բեռներով չենք կարող անցնել Խոշեթը:— Ոսկան Զադեն մոայլ նայում էր խավարում շառաչող ջրերին:— Ի՞նչ անենք:

— Ո՞ւմ մոտ է պարանը:

— Այստեղ է:

— Տուր:

Հովեն արձակեց գոտուց կախած պարանի խուրձը, մեկնեց Սաքոյին:

— Ուրիշ ելք չկա, Ոսկան Զադե, պետք է պարանե կամուրջ գցենք գետի վրայով ու անցնենք:— Սաքոն արձակեց պարանը, մի ծայրն ամուր կապեց ժայռի ելուստին:— Ո՞վ լավ լողալ գիտե:

— Ես,— առաջ եկավ շատախցի Մկրոն:

— Երբ բոլորը կանցնեն, կարձակես պարանի ծայրը, կկապես մեջքիդ և քո բեռան հետ կմտնես ջուրը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սաքոն իջեցրեց ուսապարկը և պարանի մյուս ծայրը թևին փաթաթելով, ջուրը մտավ: Չինատարների լարված հայացքի առաջ նա մերթ երևում էր ալիքների վրա, մերթ սուզվում: Հետո մութն ամեն ինչ կլանեց:

— Եթե պարանը ձգվի գետն ի վար, քաշեցեք,— հրահանգեց Ոսկան Ջադեն:

Պարանը մի քանի անգամ փոխեց ուղղությունը, թուլացած կորավ սև հեղեղում, նորից հայտնվեց ջրի երեսին, ի վերջո շեշտակի պրկվեց գետի լայնքով:

— Առաջինը կանցնեմ ես,— քայլ արեց Ոսկան Ջադեն:

— Առաջինը Սաքոն անցավ,— չհնազանդեց շատախցի Մկրտոն: Ոսկանը չլսեց կամ չլսելու տվեց տաքարյուն չինատարի խայտոցը: Համիկն ու Հովեն իրենց հետ անցկացրին նաև Սաքոյի բեռը: Մկրտոն, պարանի ծայրն արձակելով ու մեջքին կապելով, համարձակ տրվեց մութ, շառաչուն ջրերին:

... Սա է ֆիդայական սովորույթը: Ցուրտ գիշերներին պիտի թրջվես անձրևի տակ, պղտոր գետաջրերում և իրավունք չունես գոնե շորերդ չորացնելու համար կրակ վառես: Գոնե՝ այս կողմերում: Շորերդ պիտի չորանան մարմնիդ ջերմությամբ, ներսիդ կրակով: Ինչպես այս երկիրը, որ պիտի ապավինի իր ներսի ուժին, ներքին զորությանը:

Խումբը, թրջված ու հոգնած, բարձրանում էր քարքարոտ զառիվերով:

— Թե որ ուրիշ անակնկալներ չլինեն, մեր նախորդ ճամփորդությունների հետ համեմատած սա կարող ենք համարել թեթև զբոսանք,— ասաց Ոսկան Ջադեն:

— Տա աստված՝ չլինեն:— Սաքոն մտասույզ նայում էր խավարին, որի միջից վիթխարի նավի նման դուրս էր լողում տխուր ու գեղեցիկ Վարագա լեռը:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Էրզաղա կոմիսարը կանչվել է Պոլիս, գլխավոր դատախազի մոտ: Դավրիշը ճոգ է տարել, որպեսզի կրետացի բժշկի սպանությունը բացահայտվի:

Քուրդ ցեղապետի հարազատները եկան տեսակցության: Նա վերադարձավ երկու կապոցով:

— Սա քեզ համար է,— մեկը պարզեց Սաքոյին:

— Ո՞վ է ուղարկել...— հուզմունքը ողողեց Սևքարեցու դեմքը:

— Մերոնք:

Մաքուր ապիտակեղեն էր, նոր հագուստ: Ընդունե՞լ ցեղապետի մեծահոգությունը: Իսկ ինչո՞ւ ոչ: Նույն բանն ինքը կաներ, եթե գտնվեին ոչ թե Մեթերհեմում, այլ Մետեխի բանտում: Փոխեց շորերը: Արտաքին բարվոք վիճակը մարդուն օգնում է պահպանելու արժանապատվությունը: Ցնցոտիներ դարձած հագուստի մեջ, որքան էլ քեզ հպարտ պահես, խեղճությունը կա, դիմացինի արհամարհական վերաբերմունքը կա: Գոնե այստեղ՝ Մեթերհեմում, դա այդպես է: Ցեղապետի նվիրած հանդերձանքը քրդի տարազ չէր, նոր գնված եվրոպական կոստյում էր, կապույտ վերնաշապիկ ու կոշիկներ: Սաքոյի մոտ երկու ոսկի կար, Անդրանիկն էր ուղարկել: Ոչ, ցեղապետը խիստ կվիրավորվի, նա առևտուր չի անում, լավություն է անում:

— Թե որ այստեղից դուրս եկանք, կհատուցեմ, եթե ոչ, ուրեմն լավությունդ ջուրը տարավ, եղբայր,— մտերմորեն գըրկեց քրդի ուսը:

— Այստեղից դուրս գանք՝ քեզ մի հրեղեն ձի եմ նվիրելու, Սարգիս: Թուխ մաշկով, ճերմակ խալերով մի ազնվացեղ հովատակ: Հալեպի շուկայում իր քաշով ոսկի եմ տվել:

թվայնացրել է 1915.info կայքը

Թամաճակին թե որ այդ ձին տայի, հիմա այստեղ չէի լինի: Իմ աշիրեթից երեք հոգի զբաղված են գուտ նրա խնամքով...

— Հարցաքննությա՛ն:— Հսկիչն առանց աչուքը տալու, մատով դուրս կանչեց Սաքոյին:

Սա իմ ո՞րերորդ հարցաքննությունն է այս բանտում: Հիմա՞ ովքեր են ուզում փորձել իրենց իրավաբանական տաղանդն ու հմտությունը: Սենյակում Մեհմեդ չաուշն էր և քաղաքացիական հագուստով մի մարդ:

— Յորգախ էֆենդին Մուշի քաղաքագլխի օգնականն է, լալանավոր, ուզում է խոսել քեզ հետ:— Մեհմեդ չաուշը գոհությամբ ու հագիվ թաքցրած ժպիտով զննում էր Սաքոյի նոր հագուստ-կապուստը:

— Ես ո՞ւմ հետ գործ ունեմ, Մեթերհեմի կալանավորի՞, թե շվեյցարական բանկի ներկայացուցչի,— քաղաքագլխի օգնականը փորձեց հումորով սկսել: Սարգիսը չհասկանալու տվեց:

— Դուք՝ չգիտեմ, իսկ ես ոչ մեկի հետ գործ չունեմ:

— Լավ,— իշխանության ներկայացուցիչը դեմքից դեն նետեց հումորի լաթը:— Ես պետք է զրուցեմ ձեզ հետ, կալանավոր: Ես քննիչ չեմ, սա հարցաքննություն չէ, խոսելու ենք գուտ բարոյական խնդիրների շուրջ:

— Էֆենդի, Մեթերհեմում բարոյականության մասին խոսելը նույնն է, ինչ Սահարա անապատում ծաղկաբուծության հարց քննարկելը:

— Հասկանում եմ: Բայց Սահարայում կակտուս է աճում, որը գեղեցիկ և բուրավետ ծաղիկ է տալիս:

— Ես ձեզ լսում եմ:— Սաքոյին դուր եկավ նրա պատասխանը: Լավ գտավ: Բայց սա ինչու է եկել, այս զրույցի նպատակը ո՞րն է:

— Ծովանյան, դուք անընդհատ պահանջում եք ռուսական ճյուպատոսին: Հարցաքննության չեք ենթարկվում՝ պատճառա-

թվայնացրել է 1915.info կայքը

բանելով նրա բացակայությունը: Հույս եք կապում նրա մասնակցությամբ նոր դատի հետ: Իրո՞ք համոզված եք, որ ռուսական հյուպատոսն իր քաղաքական դիրքով ու դիվանագիտական տաղանդով պաշտպանելու է ձեզ:

— Ես միայն մի բանում եմ համոզված. որ Մուշի դատարանն ինձ հանիրավի է դատապարտել:

— Այդպես չէի ասի...

— Կասեիք, եթե ձե՛զ լինեին 101 տարով փակած Մեթերհեմ բանտում:

— Կալանավոր, հարցը նրանում չէ, թե ես էլի որքան կարող եմ դիմանալ ձեր վիրավորանքներին, այլ՝ թե ինչպես վերջացնել Պոլսից Պետերբուրգ, Գանձակից Մուշ և ով գիտե էլի ինչ շառավիղներ գցած այս պատմությունը: Ռուսաստանը Թո ր-քիայից պահանջում է ազատել իր հպատակին: Ֆ դուռը իրավապահներին մեղադրում է, որ չեն կարողանում սպառիչ փաստերով ապացուցել ձեզ ներկայացված քաղաքական մեղադրանքը: Դուք բողոքում եք դատարանի վճռի դեմ և միաժամանակ ներքին վախ ունեք, թե արդյունքը կարող է ձեր սպասածի հակառակը լինել...

— Ի՞նչ կա 101 տարուց այն կողմ...

— Կախաղան կա: Ես ձեզ հետ խոսում եմ շատ պարզ ու անկեղծ:

— Իսկ ինձ թվում է, որ դուք եկել եք աճաբեկելու, ինձ ստիպելու, որ կախաղանից վախենալով հետ կանգնեմ իմ պահանջից:

— Դուք առայժմ իրավունք չունեք նման եզրահանգում անելու, մենք դեռ չենք հասել զրույցի վերջին: Արդեն մի շարք առիթներ եք ունեցել առնչվելու քաղաքի դատախազի հետ: Կարծում եմ՝ գոնե ներքուստ կկիսեք իմ այն կարծիքը, որ նա

թվայնացրել է 1915.info կայքը

բանիմաց և գործունյա իրավաբան է, ճվիրված իր երկրի շահերին, և անհիմն սպառնալիքներ չի տալիս...

— Ներկայացրեք պարգևի...

— Քաղաքապետարանը վաղուց կաներ այդ բանը, եթե իմանար, որ դուք դեմ չեք լինի: Եկեք լուրջ խոսենք, կալանավոր, եկեք հարգենք միմյանց:

— Դուք չասացի՞ք, որ սա գրույց է, ոչ թե հարցաքննություն:

— Այո, գրույց է: Ոչ հարցաքննություն է, ոչ էլ հումորի մրցույթ: Ուշադիր լսեք ինձ, գուցե կարողանանք հասկանալ իրար: Այս գրույցն իմ սեփական նախաձեռնությունն է, այն, ինչ կասեմ՝ առայժմ միայն իմ ցանկությունը: Ես եկել եմ առաջարկով: Պաշտոնապես չերաշխավորված, սակայն փոխհամաձայնության դեպքում անցանելի առաջարկով: Եթե դուք հասնեք այն բանին, որ ձեր դատը վերանայեն, լավագույն դեպքում կփոխվի պատժաչափը: Չէ՞ որ կա ապացուցված հանցանք. առանց իրավունքի խախտել եք պետական սահմանը, թույն եք կրել ձեր ծոցում, որը չէր կարող բարի նպատակ հետապնդել: Ի վերջո խփել եք բանտապետին, հասցրել մարմնական վնասվածք: Այս ամենի համար, անկախ այն բանից, թե ո՞ր երկրի հյուպատոսը կմասնակցի դատավարությանը, ձեզ կարող են դատապարտել 15—20 տարվա ազատազրկման: Մեկ տարուց ավելի Մեթերհեմում եք, գիտեք, որ այստեղ թե 15, թե 101 տարով դատապարտվածների վախճանը նույնն է...

Սարգիս Ծովանյանն ուշադիր լսում էր քաղաքագլխի տեղակալին: Նրա ասածի մեջ տրամաբանություն կար. այո, Մեթերհեմ դժոխքում դժվար թե որևէ մեկը տասը տարուց ավելի դիմանա: Բայց ի՞նչ է առաջարկելու:

— Ձեր բողոքները դրանով կարող են վերջանալ լ ա վ ագույն դեպքում: Իսկ դատախազը խնդրել է ևս մեկ ամսով

թվայնացրել է 1915.info կայքը

ձգձգել նոր դատավարության հարցը: Նա ասել է, թե ինքը շուտով ջախջախիչ մեղադրանք կունենա ձեռքի տակ: Դժվար թե այս բանը ձեզ ուրախացնի և ոգևորի:

— Վերջապես ի՞նչ եք առաջարկում:— Ծովանյանի նյարդերը դողում էին պրկվածությունից:

— Առաջարկում եմ հետևյալը: Դուք դժգոհ եք դատարանի վճռից: Բողոքեցեք: Բայց ոչ թե ռուսական կառավարությանը, այլ Մուշի քաղաքապետարանին, որին անմիջապես ենթարկվում է դատարանը: Ձեր բողոքը կընդունվի և ըստ էության կքննվի: Հյուպատոսի միջոցով Ռուսաստանին կհաղորդվի, որ հարցը վերանայվում է ներսում: Դատարանը լրիվ նոր կազմով կլսի գործը: Դատախազը լրացուցիչ մեղադրանք չի ներկայացնի: Կհրապարակվի տվյալ իրավիճակում ամենամեղմ վճիռը՝ տասնհինգ տարով աքսորել Անատոլիա: Այս մղձավանջային պատմությունը դրանով կվերջանա, իսկ Անատոլիայում դուք հնարավորություն կունենաք նոր բան մտածելու: Ահա իմ առաջարկը:

Սարգիս Ծովանյանը չէր կարողանում կողմնորոշվել ստեղծված իրադրության մեջ: Մեհմեդ չաուշի դեմքը մոայլ էր, հայացքը՝ չխրախուսող: Տրամաբանորեն նա գտնում էր, որ իրեն առաջարկվում է չարյաց փոքրագույնը: Բայց ի՞նչ է առաջարկվում. այստեղ է գաղտնիքը:

— Ինձ համար հեշտ կլիներ վճիռ կայացնել, եթե իմանայի՝ ի՞նչ ակունքից է բխում իմ ճակատագրի համար ձեր անհանգստությունը: Ինձ առնվազը տարօրինակ է թվում այս սրտացավությունը...

— Օրինաչափ է: Ես անկեղծ կլինեմ մինչև վերջ: Ում ում, բայց Մուշի քաղաքապետարանին, որը պատրաստվում է Ռուսաստանում դիվանագիտական աշխատանքի ներկայացնել իր պաշտոնյաներից մեկին, ձեռնտու չէ այն կոնֆլիկտը, որն ան-

թվայնացրել է 1915.info կայքը

խուսափելիորեն ծագելու է նոր դատավարության ընթացքում: Դատարանը չի կարող արձակել երկուստեք ընդունելի որոշում, դա անհնարին է: Իսկ ես գտնում եմ, որ միտք չունի բանը հասցնել քաղաքական հակադրության: Մտածեք, կալանավոր: Երեք օր հետո Մեհմեդ չաուշը ինձ կհաղորդի ձեր պատասխանը:

Ի՛նչ պետք է պատասխանի: Հարկավոր է խորհրդակցել, բայց ո՛ւմ հետ: Ի՞նչ էր ասում Մեհմեդ չաուշի դժգոհ հայացքը: Հավանաբար, իրեն մնում է սպասել դեպքերի ընթացքին, երեք օրում շատ բան կարող է փոխվել:

— Քննիչները ինչպե՞ս ընդունեցին քեզ նոր հագուստի մեջ,— քուրդ ցեղապետն անկեղծորեն ուրախ էր իր արածի համար:

— Նրանք ինձ շփոթեցին շվեյցարական բանկի ներկայացուցչի հետ:

— Ի՛նչ էին հարցնում:

— Այն, ինչ հարցրել են հազար անգամ: Ի՞նչ երկիր է Անատոլիան, ցեղապետ:

— Չեմ եղել, բայց գիտեմ, որ դաժան երկիր է:— Ցեղապետը մոայլ կասկածանքով նայեց նրան:

Ոչ: Դեպքերն ինչպես էլ ընթանան, ինքը պարտավոր է որոշում կայացնել: Եվ վճիռը պարզ էր: Նույնիսկ զարմացավ, որ քաղաքապետարանի ներկայացուցչին անմիջապե՛ս չի պատասխանել: Կյանքի համար այսքան դողալն էլ մի բան չէ, ավելի լավ է կախաղան բարձրանալ որպես մեծ գործի նահատակ, քան անհայտ գալիքով ողորմելի գոյություն քարշ տալ Անատոլիայի խորքերում: Եթե, իրոք, դատախազը խնդրել է մեկ ամիս ևս ձգձգել նոր դատավարության գործը, նշանակում է նրան ինչ-որ բան հայտնի է իր անձի և առաքելության մասին, նշանակում է Մեթերհեմում տասնհինգ-քսան տարվա բանտար-

թվայնացրել է 1915.info կայքը
կությաև վճիռ չի կայացվի: Հազարապետին ձեռնաշղթայով խփելու փաստը չի արձանագրված, նա խոստացել է այլ կերպ լուծել իր վրեժը ոստանիպատակ կալանավորից: Պետական սահմանն է խախտել. փոխարենը մեկ տարուց ավելի տանջահարվում է Մեթերհեմի դաժան խցերում: Ինքը կանգնած է մահվան ու ազատության արանքում, նրան այդ երկուսից մեկն է տրվելու:

Դուռը բացվեց, թևերից քարշ տալով բանտասենյակ նետեցին արյունլվա մեկին: Ցեղապետը թասով ջուր տվեց նրան, լվաց դեմքը: Քուրդ էր:

— Ինչո՞ւ են քեզ բերել այստեղ:

— Ասում են՝ կապ ունես ֆիդայիների հետ...:— Ձայնը ծանոթ էր Սաքոյին: Այո, տեսել է խիտ հոնքերով այդ թուխ, բարի դեմքը: Բայց որտե՞ղ:

— Բաշեթ լեռան քո՛ւրդը,— ճչաց հիշողությունը:

* * *

Սասունի դեպքերը ալեկոծել էին ամբողջ Արևմտյան Հայաստանը: Հուզմունքի ալիքները սփռվել էին ամենուր՝ հայ բնակչությանը թելադրելով զգոնություն ու արյունալի վտանգը դիմագրավելու պատրաստակամություն: Ամեն ինչից ենթադրվում էր, որ հաջորդ ճակատագրական կռիվը լինելու է Վանում: Թուրքական պաշտոնավայրերում դեռևս ծառայությունը շարունակող հայերը ոչ որոշակի, բայց մեծ սպառնալիք պարունակող լուրեր էին բերում: Քաղաքի հայ և թուրք բնակիչների մեջ գրեթե ամեն օր մանր բախումներ էին լինում, որոնցից յուրաքանչյուրը կարող էր մեծ աղետի սկիզբ դառնալ: Վանը գիտվում էր, Վանը նախապատրաստվում էր կյանքի ու մահվան

թվայնացրել է 1915.info կայքը

կովի: Պետոն, Մկրտիչ Ավետիսյանը և շուշեցի Մարտիրոս Սարուխանյանը խիզախ ու բանիմաց մի քանի ուրիշ ընկերների հետ ծրագրեր էին մշակում մոտալուտ ինքնապաշտպանության համար: Հանգանակությամբ հավաքված 600 օսմանյան ոսկին տրամադրելով Ներսես Ավետիսյանին, մի քանի անվանի հայդուկների հետ ուղարկեցին Պարսկաստանից զենք ու ռազմամթերք գնելու: Այնտեղ նրանց մատնեցին տեղական իշխանության ձեռքը: Հայդուկախումբը ոչ միայն զենք չհայթայթեց, այլև ինքն էլ գերվեց ու մնաց Թավրիզի բանտում:

Օրերը լարված էին ու բախտորոշ, Այգեստանում հայերն սկսել էին բացեիբաց բարիկադներ կառուցել:

Ինքնապաշտպանության ղեկավարների հոգսը միայն Վանը չէր, նրանք խիստ անհանգստացած էին շրջակա հայ գյուղերի բնակչության ճակատագրով: Նրանք ոչ զենք ունեին, ոչ կովի փորձ, ոչ էլ պաշտպանության որևէ այլ միջոց: Լեռներից Անդրանիկը հրահանգներ էր ուղարկում, բայց Մեծ Հայդուկի բոլոր հրահանգները չէ, որ իրագործվում էին տեղում, խանգարող հանգամանքներ շատ կային:

... Գիշերվա քողի տակ զինատարները բարեհաջող թափանցեցին քաղաք: Վանի Պետոն Սաքոյին ընդունեց կարոտած եղբոր ողջագուրանքով: Ընդունելով զենքն ու զինամթերքը, նա հանձնարարեց խմբին ուղեկցել սնվելու և հանգստանալու, իսկ Սաքոյին տարավ ծառերի արանքում պատսպարված իր կացարանը:

— Խոսիր, վանքի դև, ի՞նչ կա Մեծ Երկրում:

— Մեր վերջին հանդիպումից մինչև հիմա փակված եմ եղել վանքում, ձնաբքերի մեջ: Սաթենիկ Մատինյանի օգնությամբ գրագիտություն էի զորացնում, որ քո մասին պատմություն գրեմ:

թվայնացրել է 1915.info կայքը

Կատակել չստացվեց, երկուսն էլ իրենց խեղդելով էին ձգում զրույցի խաղաղ թեման:

— Վիճակը շատ լուրջ է, Սաքո: Վանը դեռ՝ ոչինչ, կովող ունի, շատից քչից զենք ունի: Ի՞նչ են անելու գյուղերի բնակիչները...

Առանց դուռը բախելու մի զինված վանեցու հետ ներս մտավ Արտակ Դարբինյանը: Նա մի քանի օր առաջ էր վերադարձել Կովկասից, ուր թունդ վիճել էր Թիֆլիսյան մի քանի ղեկավարների հետ, ինչպես ինքն էր ասում՝ ջախջախել նրանց նվազ ու փափկասուն գաղափարները ազատագրական ու ինքնապաշտպանական կռիվների հարցում:

— Դուք ճառեր ասեք Թիֆլիսում, մենք Սասունում ու Զեյթունում կովենք: Ազատ խոսեք, ինչ ուզում եք ասեք, մեկ է՝ չենք լսում: Ներեցեք, բայց մենք կռվով ենք զբաղված, հայրենասիրական ճառ լսելու ժամանակ չունենք,— նետեցի ու դուրս եկա: Ո՞նց ես, Դերիկի աբեղա, վանքի կռվից հետո քեզ չեմ տեսել: Հա, Մարոն բարև է ուղարկել, Թիֆլիսում հանդիպեցի: Լսե՞լ ես նրա մասին, Պետո: Սաքոյի հարսնացուն է, Հայրենասիրաց միության շունչն ու ոգին: Թիֆլիսից եկող զենքի զգալի մասը նա է հայթայթում իր ընկերներով: Ահա թե ով իրավունք ունի խոսելու հայրենասիրության մասին:

— Արտակ, մինչև քո գալը Սաքոյի հետ Վանի գյուղերի վիճակն էինք քննում: Ի՞նչ կարող ենք անել, ինչո՞վ կարող ենք սատար լինել անզեն ու անպաշտպան ժողովրդին:

— Այո, հարցը շատ է լուրջ:— Արտակը մոայլվեց, անքնությունից կարմրած աչքերով երկար նայում էր տագնապալի գիշերվա մեջ սուզված Այգեստանին:

— Դու որևէ կոնկրետ ծրագիր ունե՞ս,— շրջվեց դեպի Պետոն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ունեմ: Բայց որոշ ընկերներ նույնիսկ չեն ուզում լսել այդ մասին:

— Ի՞նչ ես առաջարկում:

— Առաջարկում եմ, Ավետիսյանը համաձայն է ինձ հետ, գործիչներ ուղարկել գյուղերը նրանց նախապատրաստելու մեծ վտանգին, հրահանգներ տալու ինքնապաշտպանության կազմակերպման վերաբերյալ: Նաև մտադիր եմ նրանց հետ զենք ուղարկել, ամեն գյուղից թող գոնե մի քանի հրացան պարզվեն թուրքի դեմ:

— Եվ ո՞վ է առարկում դրան:

— Ի՞նչ կան առարկողներ... Առավոտյան կոմիտեի նիստ է լինելու, կգաս ու ինքդ կտեսնես:

Նիստում, որին մասնակցում էին ինքնապաշտպանության բոլոր կազմակերպիչները, Պետոն ներկայացրեց իր ծրագիրը: Բվվոց բարձրացավ, ընդհանուր աղմուկի մեջ դժվար էր տարբերել համախոհներին ու հակառակորդներին: Ալեկոծել էր հատկապես գյուղերը զենք ուղարկելու միտքը: Ելույթները խիստ հակասական էին: Արտակ Դարբինյանը պաշտպանեց Պետոյի ծրագիրը:

— Մենք ժամանակ չունենք երկար-բարակ հարցեր քննարկելու,— ասաց նա,— գաղափարախոսական սկզբունքները պետք է նահանջեն ընդհանուր ցավի առաջ, մեր դեմ ազգի լինել-չլինելու խնդիրն է: Առաջարկում եմ հենց այստեղ փոքր խմբեր կազմել և Պետոյի մշակած հանձնարարականով ուղարկել գավառները:

— Իսկ զենքի՞ հարցը...

— Առայժմ կուղարկենք զինատարների վերջին խմբի բերած զենքը,— ասաց Վանի Պետոն:

— Իմ խումբը օրեր շարունակ բաշիբոզուկի դեմ կռվելով զենք է հասցրել, որ Վանը պաշտպանվի,— չարությամբ նե-

թվայնացրել է 1915.info կայքը

տեց Ոսկան Զադեն,— ես գործ չունեմ զենքի հարգն ու կարգը չիմացող գյուղացիների հետ: Իմ բերած զենքը ես ոչ ոքի չեմ տա:

Արյունը խուժեց Սաքոյի գլուխը: Նա, որ մինչ այդ իրեն օտարի, այստեղ իրավունք չունեցողի պես էր պահում, ընդոստ վեր կացավ:

— Զենքը դու չես բերել, Ոսկան Զադե, խումբն է բերել, որին դու քեզ պարտադրեցիր որպես ղեկավար: Բերել է Դերիկի վանքից: Իսկ որտեղի՞ց, ինչպե՞ս է հասել Դերիկ, գիտե՞ս, Ոսկան Զադե...

Հավաքվածների մեջ կային մարդիկ, որ չէին ճանաչում նրան:

— Ո՞վ է այս զայրացած եֆիտասարդը:

Վանի Պետոն ներկայացրեց.

— Պարսկաթուրքական սահմանային տարածքում Թիֆլիսի կոմիտեի ներկայացուցիչ Սարգիս Ծովականյանը: Քաջ զինատար, Դերիկա վանքի կովի հրամանատար Սևքարեցի Սաքոն:

Հարգալից լռություն իջավ:

— Շարունակիր, եղբայր, դու իրավունք ունես այդպես խոսելու,— ասաց տեղացի կազմակերպիչներից մեկը:

— Ինձաբեռը շալակած հունվարի սառնամանիքին դո՞ւ չես անցել Արաքսը, Ոսկան Զադե, թող ուրիշները որոշեն, թե ում պետք է հատկացվի զենքը: Ես, եղբայրներ,— դարձավ հավաքվածներին,— պատրաստ եմ ձեր հանձնարարությամբ հենց այստեղից մեկնել գյուղերը և անել, ինչ կարող եմ:

— Մեկնիր, ուր ուզում ես, ես իմ բերած զենքը ոչ ոքի չեմ տա: Առաջարկում եմ գյուղեր ուղարկելու համար նախ վերցնել այստեղ գտնվող զինատար խմբի անդամների անձնական զեն-

թվայնացրել է 1915.info կայքը

քերը: Նրանք քարերի հետևում թաքնվելով էլ կարող են հասնել Պարսկաստան:

Սաքոն ձեռքը սրին տանելով խոյացավ դեպի Ոսկան Ջադեն: Արտակն ու Պետոն կանգնեցին նրա առաջ:

— Հանգիստ, Սաքո, քեզ ճանաչողը գիտե, որ քո գենքը ոչ ոք չի կարող խլել:

Արտակի և Պետոյի հանդեպ ունեցած խորին հարգանքը զսպեց Սաքոյին: Ոսկան Ջադեի գլխին հանդիմանանքի տարափ իջավ:

Երևկոյան ինքնապաշտպանության ղեկավարները կարևոր լուր ստացան.

— Ֆիդայիների մի փոքր խմբով Վան է գալիս շապին-գարահիսարցի Անդրանիկը: Գալիս են տեսնելու, թե քաղաքն ինչպես է նախապատրաստվում դիմագրավելու անխուսափելի արհավիրքը: Անդրանիկին Սաքոն հանդիպել էր մեկ անգամ, երբ Դժոխք Հրայրի ուղեկցությամբ բարձրացել էր լեռները՝ Թիֆլիսից բերած հրահանգները հանձնելու հայդուկներին և՝ հաղորդելու զենքի հայթայթմանն ու տեղափոխմանը վերաբերող որոշ տեղեկություններ: Չէր ենթադրում, թե այնտեղ կարող է տեսնել օրեցօր հոչակվող հայդուկին: Անդրանիկը Աղբյուրի ինչ-որ հանձնարարությամբ կայան էր իջել:

— Դու Սալմաստի վանքի աբեղա՞ն ես: Ես լսել եմ քո մասին: Ուրախ եմ, որ կյանքդ և գործդ չես բավարարում միայն ճառերով ու հրահանգներով: Հավատո՞ւմ ես քո աստծուն, աբեղա:

— Հիմա իմ ու քո աստված չկա, կա մի աստված՝ վրեժի աստվածը: Ես նրա՛ վանքի աբեղան եմ:

Հայդուկը ձեռքը դրեց Սաքոյի ուսին, իր հզոր հայացքով նայեց նրա աչքերի մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քանի՞ անգամ ես Արաքսի այն ափից խումկ ու մոմ բերել վանքիդ համար, աբեղա:

— Երեք անգամ: Բայց եթե երեք հարյուր անգամ էլ բերած լինի, ինձ հայդուկ չէին կոչելու, մնալու եմ ընդամենը զինատար: Իսկ նպատակս ֆիդայությունն էր...

Անդրանիկը թախծոտ ու ջղաձիգ ծիծաղեց:

— Նա, ով կյանքը գրավ է դնում հայրենիքի ու ժողովրդի համար, հայդուկ է: Դու չես կարող մեջքիդ սեփական պատանք կրել, զինատարի ճամփի համար դա անսովոր բեռ է: Քո պատանքը զենք ու զինամթերքով լցված բեռիդ մեջ է, որ ամեն րոպե կարող է հայտնաբերել ժանդարմը կամ սահմանապահը: Այն գործը, որ դու ես անում, շատ կարևոր է մեզ համար, Սեբաստացի Սաքո: Ես շատ էլ մեծ հարգանք չունեմ Թիֆլիսի ու նրա հրահանգների հանդեպ, բայց քանի դեռ դրանք հաղորդվում են, կուզենայի քո, քո նմանների՛ միջոցով հաղորդվեին: Մտածող ու գործող մարդկա՛նց միջոցով:

— Դու ասում ես, որ իմ արած գործը կարևոր է: Ուրեմն ես կշարունակեմ այդ գործը...

Բաժանվեցին որպես մտերիմներ: Մի քանի ամիս անց, Դերիկի վանքի կովից հետո, Սաքոյին հասավ շապինգարահիսարցի ֆիդայու քաջալերող ողջույնը:

Խումբը, սակայն, Վան չհասավ: Վարագա լեռան անտառում դեմ առ դեմ հանդիպել էր մի քանի տասնյակ քուրդ թալանչիների, հարկադրաբար կռվի բռնվել, և, քանի որ արդեն հայտնաբերված էր, թշնամուն կորուստներ պատճառելով հասհանջել էր դեպի լեռները:

Վանի Պետոն երկար խորհեց Սաքոյի առաջարկության շուրջը: Գիտեր, որ նրա խոսքը գործ է, բայց որքան էլ խիզախ ու խելոք, Սաքոն տեղացի չէր, գրեթե անծանոթ էր այդ վայրերին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հասկանում եմ, թե քեզ ինչն է մտահոգում. այն, որ իմ չիմացությունը կարող է վտանգել խմբի կյանքն ու առաքելական նպատակը: Մտածել եմ այդ մասին, Վանի Պետո: Ես ունեմ մի զինակից, որը քաջածանոթ է ամբողջ Վասպուրականին, Մոկաց ու Ռշտունյաց գավառներին:

— Ո՞վ է:

— Շատախցի Մկրոն: Նա ինձ հետ մնացել է Վանում:

Հաջորդ առավոտյան զինատար-հրահանգիչների փոքր խմբով Սևքարեցի Սաքոն դուրս եկավ Վանից: Նաև ինքն էր մշակել խմբի շրջագայության ծրագիրը, այն ընդարձակելով Հայոց ձոր — Շատախ — Մոկաց երկիր — Ռշտունյաց գավառ ընդգրկմամբ: Իրենց զենքերից բացի, կրում էին տասներկու հրացան և չորս ատրճանակ: Հինգն էին՝ Սաքոն, Մկրոն, երկու վանեցի տղաներ՝ Արշակն ու Կարոն, և ղարաբաղցի Օհանը: Կարսի մոտերքում ռուս սահմանապահների կողմից գնդակոծված կամավորական մի փոքր խմբի վերջին մոհիկանն էր ղարաբաղցին: Միշտ լուրջ ու տխուր, հատուկենտ բառերով մըտքերն արտահայտող, ինքն իր մեջ ներփակված այդ տղան ընկերների ողբերգական կորստից հետո ուրիշ մտերիմներ չէր փնտրում: Կոիվ էր ուզում, որ ընկերների վրեժն առնի: Խմբում նրան ընդգրկել էին որպես ուժեղ, դիմացկուն զինատարի ու լավ կռվողի՝ եթե դրա անհրաժեշտությունն առաջանար: Օհանն ու Մկրոն ներկայացնում էին խմբի «թիկնազորը»:

Նրանք գնում էին հայաբնակ վայրերով, երբեմն հանդիպելով ձիավոր ասկյարների, որոնք, սակայն, իրենք էին զգուշանում պատահական բախումներից: Հայոց ձորի գյուղերում Սաքոն համոզվեց, որ Պետոյի, Վանի մյուս ընկերների անհանգըստությունը տեղին է: Խաղաղ շինականները հույս ունեին, թե բանը զենքի չի հասնի, զանազան ևվիրատվություններով, ինչպես եղել է միշտ, կշահեն թուրքերի բարյացակամ վերաբեր-

թվայնացրել է 1915.info կայքը

մունքը: Նրանք չէին պատկերացնում կործանարար վտանգը, որ կախված էր իրենց գլխին: Խումբն ամենուր կոչ էր անում նախապատրաստվել միասնական պայքարի, զենք ձեռք բերել, նախատեսել ապաստով թաքստոցներ՝ կանանց, ծերերին ու երեխաներին այնտեղ տեղափոխելու համար: Հրացան գործածելու դասեր էին տալիս, սովորեցնում պարզունակ ինքնաշեն զենքեր պատրաստել: Սաքոն, Արշակն ու Կարոն գյուղերում պատմում էին Արևմտահայաստանի ներկա իրավիճակի, ֆիդայական կռիվների ընթացքի, Աղբյուր Սերոբի, Անդրանիկի, մյուս նշանավոր հայդուկների գործունեության մասին: Նրանց պահանջն էին հաղորդում՝ պահակետեր նշանակել բնակավայրերի մոտակա բարձունքներին, դիրքեր որոշել պաշտպանության համար և ուժերը բաշխել այդ դիրքերի վրա: Նրանց խոսքըն ու խորհուրդը ջերմ արձագանք էր ստանում, մարդիկ հարցուփորձ էին անում թուրքերի հարձակման հնարավոր ժամկետի, զենքի հայթայթման ուղիների մասին: Մի քանի գյուղերում, շնորհիվ առանձին խելոք ու բանիմաց անհատների, ժողովուրդը շատ լավ պատկերացնում էր սպասվող վտանգը և այն դիմագրավելու համար անում էր, ինչ կարող էր: Այդ շեներում դարբնոցները խոփերից սրեր էին կռում, նորոգում եղած հին զենքերը, նիգեր պատրաստում դռներն ու պատուհանները փակելու համար:

Չորս հրացան ու երկու ատրճանակ թողնելով Հայոց ձորում, խումբն անցավ Շատախ: Այնտեղ Մկրոյին լավ էին ճանաչում, դա օգնում էր ավելի արագ և արդյունավետ գործելու: Մտան Հաշկանց՝ Մկրոյենց գյուղը:

— Ութ ամիս է մերոնց չեմ տեսել, նրանք ինձ պանդխտության են ուղարկել և, ահա, վերադառնում եմ որպես զինատար հայդուկ...

թվայնացրել է 1915.info կայքը

Մայրը սև շորերի մեջ էր: Մկրոն փշաքաղվեց: Մեծ եղբոր կինը սեղան էր գցում:

— Ո՞ւր է եղբայրս...

— Դարբնոց է գնացել: Երկու ամիս առաջ հորդ ենք թաղել, որդի: Մի սև ցավ եկավ ու մի քանի օր տանջելուց հետո տարավ խեղճ մարդուն: Վերջին շնչում քո անունն էր տալիս, քեզ էր ուզում...

Մկրոյի ձեռքերը դողացին, աչքերը լցվեցին: Բայց աչքերը դարձյալ կուլ տվեցին արցունքները: Չէ՞ր ուզում լաց լինել գենքի ընկերների մոտ, թե՞ մոր վիշտը չնորոգելու համար՝ զսպեց իրեն:

Հասպատ ներս ընկավ եղբայրը:

— Իմացա, որ եկել եք, բայց եկել եմ ասեմ, որ շուտ գնաք: Քիչ առաջ երեք ձիավոր ոստիկան իջան ռեսի տանը: Վախենում եմ՝ ձեզ հետ կապ ունենա նրանց այստեղ հայտնվելը...

Սեղանին դրված հացն ու պանիրը լցնելով ուսապարկի մեջ, Մկրոն համբուրեց մոր ձեռքն ու՝ գնացինք, գլխով արեց Սաքոյին: Դուրս եկան տան հետևի դռնով, անցան բանջարանոցն ու իջան ձոր:

— Կգնանք այսպես՝ ձորով, վտանգի դեպքում այստեղ կարող ենք հեշտությամբ թաքնվել:

Այո, խմբի առաքելությունը չէր կարող հանգիստ ու խաղաղ շարունակվել մինչև վերջ: Մատնիչներ կան, գուցե և հետևողներ, հավանաբար ում պետք է արդեն հայտնի է, որ ինչ-ինչ խաղաղ գործերով գյուղից գյուղ թափառող այդ շինականները բնավ էլ բարեպաշտ հպատակներ չեն: Եթե նրանց երբեմն հանդիպող հատուկենտ ասկյարները վախի՞ց, թե այլ պատճառով չէին կտրում իրենց ճամփան, դա չի նշանակում, թե նրանք ոչինչ չէին կասկածում: Խումբն, իհարկե, զգուշու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյուն էր պահպանում, գիշերում էր բնակավայրերից դուրս, շրջանցում էր ասկյարների ու ոստիկանների հաճախակի ելումուտ ունեցող գյուղերը, բայց դա նույնպես չէր նշանակում, թե ապահովված են վտանգից: Սարգիսը նույնիսկ զարմանում էր, որ այդքան ժամանակ իրենց շուրջկալի մեջ չէին առել:

— Ոտքերս առաջ չեն գնում, Սաքո: Աղետ բերի մեր խեղճ տան գլխին ու մերոնց այդ աղետի մեջ թողած փախչում եմ: Սա հայդուկի անելու բան չի, Սաքո: Այս ձորը տանում է մեր ուզած ուղղությամբ, գնացեք, ես վերադառնամ, եթե այնտեղ ամեն ինչ խաղաղ լինի, կգամ կհասնեմ ձեզ: Թույլ տուր մի հրացան վերցնեմ հետս:

— Գուցե բոլորո՞վ վերադառնանք,— Սաքոն նույնպես անհանգիստ էր:

— Միտք չունի: Ես ու եղբայրս հերիք ենք երեք ոստիկանի դեմ:

Մկրտոն հետ գնաց: Խումբը ձորով շարժվեց դեպի Մոկս: Մոտ մեկ ժամ գնալուց հետո, համոզվելով, որ շրջակայքում անվտանգ լռություն է, Սաքոն խումբը հանեց դաշտ: Կանաչ, փափուկ մարգագետնով գնալն ավելի հեշտ է, քան ձորի ցեխափոսերով ու լպրծուն քարերի վրայով: Հանկարծ Օհանը բռնեց Սաքոյի թևը, նրան շրջեց հետ: Եվ ձեռքն անխոս պարզեց Մկրտչենց գյուղի ուղղությամբ: Շեկ բոցեր էին բարձրանում երկինք, լսվում էին հեռավոր կրակոցներ:

— Մկրտչի տունը վառել են: Մենք պիտի նրան չլսեինք, պիտի հետ գնայինք:— Օհանը մոայլ նայում էր գիշերվա խորքում տվայտող հրդեհին:

Հետագա օրերին խմբի գործը չափազանց դժվարացավ: Նրա առաքելության մասին գիտեին, ձիավոր ասկյարները քառատրոփ սլանում էին գյուղամիջյան ճամփաներով, հարցուփորձ անում հրահանգիչ-զինատարների մասին: Այժմ, ինչ-

թվայնացրել է 1915.info կայքը

պես միշտ՝ Դերիկից Վան զենք տանելու ժամանակ, ցերեկը թաքնվում էին որևէ ապահով տեղ, գիշերը՝ քայլում: Մկրոյի պակասը շատ էր զգացվում, այս կողմերում նա անգիր գիտեր ամեն թուփ ու քար, ճանաչում էր գյուղերի նշանավոր տղամարդկանց: Ստիպված էին մնացած զենքը թողնել իրենց ապահովաբար հյուրընկալած մի գյուղում և անծանոթ տեղերով, հայ հովիվներից ուղղություն իմանալով, շարժվել դեպի Վան: Երկրորդ գիշերը, մի քարախոիվ բլրի մոտ, խմբի դեմ հրացան կրակեցին: Վանեցի Կարոն բռնեց կուրծքն ու կուչ գալով, կողքի ընկավ մացառաթփի վրա:

— Դիրքեր բռնեք:— Սաքոն վիրավորին տարավ ժայռի հետևը: Կրակոցը չկրկնվեց: Արշակը խզակոթը սեղմած նայում էր քարքարոտ բլրին: Նրա բազեի հայացքն ուզում էր որսալ մի չնչին շարժում, որպեսզի գնդակն անվրեպ մխրճեր շարժվողի մեջ:

— Որտե՞ղ է Օհանը:

Դավադիր կրակոցի պահին Օհանը նկատեց, թե որտեղից ժայթքեց բոցը: Նետվելով մացառաթփերի մեջ, նա վազքով շրջանցեց քարքարոտ բլուրը, հայտնվեց կրակողի թիկունքում: Անշարժացել էր քարերի արանքում, շունչը պահած սպասում էր երկրորդ կրակոցի կամ գոնե թույլ շշուկի: Ծատ չսպասեց, մեկը կուզեկուզ իջնում էր դեպի իրեն: Հասավ, պիտի անցներ, ծոծրակին ծանր հարված առավ ու բերանքսիվայր փռվեց՝ մոութը խփելով որձաքարին: Մացառաթփերի միջից Օհանը հայտնվեց դիրքավորված ընկերների մոտ, ցած նետեց շալակի լեշը:

— Այս շունն էր: Կարոն կենդանի՞ է...

— Կենդանի է, գիտակցությունը՝ տեղը: Հույս ունեմ, որ գընդակը ծակել-անցել է՝ մաճացու վնաս չհասցնելով:

Կոճակներն աջ ու ձախ թոցնելով Սաքոն պատռեց վիրավորի արնաթաց շապիկը, բացեց կուրծքը: Արշակը տա-

թվայնացրել է 1915.info կայքը

փաշիշը շրջեց Սաքոյի բոի մեջ: Լվացին վերքը: Գնդակի կարմիր հետքը զննելով, Սաքոն համոզվեց իր ենթադրության մեջ՝ վերքը մահացու չէր: Կարոն փորձ արեց ճառելու:

— Պառկիր,— խիստ ասաց Սաքոն: Հանեց իր շապիկը, պատռեց երկու մասի: Մի մասն այրեց, մրուրը դրեց վերքին, մյուսով պինդ վիրակապեց:

Թփի մոտ ընկած ավազակը խռխռացնելով շարժվեց: Արշակը բռնեց նրա մազերից, դեմքը շրջեց լուսնալույսին:

— Ուշքի եկ, տեսնենք ուզածդ ինչ էր, թլպատված շուն:

Թուրքը բացեց աչքերը, լորձունքախառն արյուն թքեց՝ բերանից թափելով ջարդված ատամները:

— Ասա, շուն, ի՞նչ էիր ուզում մեզնից, ի՞նչ էինք արել քեզ:

Թուրքն անասունի վախեցած հայացքով շուրջն էր նայում:

— Ինչո՞ւ կրակեցիր,— թուրքերեն գոռաց իրեն մի կերպ զսպող Օհանը:

— Ես մի՛ հոգու տեսա, այդ մի՛ հոգու վրա կրակեցի:

— Գիտեի՞ր, որ հայ է:

— Չգիտեի: Ի՞նչ տարբերություն, ինձ նրա գենքն էր պետք:

Օհանն ատրճանակը դեմ արեց ավազակ թուրքի ճակատին:

— Երեսուն ոսկի կտամ, մի սպանիր...— թուրքը համբուրում էր Արշակի կրունկը:

— Չի լինի, թուրք, այսուհետև քո թալանն այն աշխարհում ես անելու:

— Սպասիր, Օհան, նա մեզ դեռ պետք է,— կանխեց Սաքոն:— Մենք կարծես թե մոլորել ենք ճանապարհը, այդ շունը թող մինչև լուսաբաց մեր ուղեկիցը լինի:

Կիրճի ձեղ, ծուռումուռ կածանով միաշար գնում էին դեպի լուսացող հեռուները: Առջևից գնում էր թուրք ավազակը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սաքոն, Օհանն ու Արշակը միմյանց օգնելով տանում էին վիրավոր Կարոյին: Արևածագին կանգ առան մի անդունդի մոտ, որի հատակից ջրի քչքչոց էր լսվում: Վիրավորի շուրթերը շիկացել էին ծարավից, Արշակը տափաշիշը վեցրեց, թփերից ու ժայռերից կախվելով ցած իջավ: Կարոյին պառկեցրին կանաչ խոտի վրա:

— Դե, թուրք, ալլահը կանչում է:— Օհանը հետ քաշեց ատրճանակի շնիկը:

— Մի սպանիր, հիսուն ոսկի կտամ... հարյուր կտամ...

— Գնա, շուն,— Օհանն իջեցրեց ատրճանակը,— հայդուկը չի կրակում անզեն թշնամու վրա:

Թուրքն անասնական սարսափով հետ-հետ էր գնում: Ծրջվեց, որ միանգամից փախչի, բայց ոտքը սայթաքեց և նրա ոռնոցը դատարկ անդունդի մեջ տարածվելով գնաց, հանգավ ինչ-որ տեղ:

— Ո՞նց ես, Կարո ջան:

— Ծարավն է տանջում, Սաքո: Թվում է, հենց որ ջուր խմեմ, ողջ-առողջ ոտքի եմ կանգնելու:

Օհանը մրտենու մի ամբողջ թուփ կտրեց և նրա պինդ ու ճկուն ճյուղերից պատգարակ հյուսեց Կարոյի համար: Անդունդի եզրով շարունակեցին ճամփան:

* * *

... Հրահանգիչ-զինատարների խումբը Վան հասավ լուսաբացից առաջ, հոգնությունից ու ծանր ապրումներից տանջահար: Ճանապարհին Կարոյի վիճակը ծանրացել էր, նրան հարկավոր էր անկողին, սնունդ և բուժում: Հայաբնակ Էրմանք գյուղի մոտ, Օհանին և Արշակին վիրավորի հետ թողնելով կիսավեր ջրաղացում, Սաքոն առանց զենքի, որպես վարձկան

թվայնացրել է 1915.info կայքը

մշակ գյուղ մտավ: Իմացավ քահանայի տան տեղը: Աստծո ծառան փարաջայի փեշերը վեր բարձրացրած թարխունի մարգն էր քաղհանում: Բարևեց հավատացյալի հեզությամբ: Քահանան տարիքն առած մարդ էր, դեմքին ու աչքերում ծանր տառապանքի հետքեր կային:

— Ներս արի, զավակս, հյուրն աստծունն է,— հրավիրեց ծերունին:

— Աշխատանք եմ փնտրում՝ մշակություն անեմ, հայր սուրբ:

Քահանան ուշադիր զննում էր եկվորին, ակնհայտորեն կասկածելով նրա ասածի ճշմարտությանը: Խորաթափանց հայացք ուներ, կյանքում սուտ չխոսած հայդուկը կախեց գլուխը:

— Այն չես ասում, ինչի համար եկել ես, զավակս...

— Ճիշտ է, հայր սուրբ: Գյուղում հանձա՞խ են ասկյարներ երևում:

— Հանձախ: Գալիս են, հարցուփորձ անում՝ զինված մարդիկ, կասկածելի անցորդներ չե՞ն երևացել գյուղում: Երբեմն էլ պատահական մի տուն են մտնում, տակնուվրա անում, թողնում-գնում: Հյուրին հարցեր չեն տալիս, բայց կուզեի իմանալ, թե քեզ ի՞նչն է բերել այստեղ...

Քահանան անհանգիստ էր, նա ստեպ-ստեպ շուրջն էր նայում, երևի զգուշանում էր, որ կարող են անծանոթին տեսնել իր մոտ: Տուն մտան:

— Հայր սուրբ, իմ ընկերը ծանր վիրավոր է, օգնության կարիք է զգում:— Սաքոն տեսավ, թե ինչպես վախը պատեց նրան: Աչքերը տագնապով շողացին, ադամախնձորն սկսեց տենդագին վերուվարել:

— Որտե՞ղ է ընկերդ, ջանֆիդա,— մի կերպ վախն ու շփոթմունքը զսպած, հարցրեց տանտերը:

— Հեռու չէ, այստեղից հազիվ կես ժամվա ճանապարհ է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես ի՞նչ կարող եմ անել: Ուտելիք, բարձ ու վերմակ կտամ: Մի քիչ էլ, կարծեմ, բույսերից եփած ինչ-որ դեղ պիտի լինի տանը:

— Նրան օթևան է պետք, խնամող է պետք...

— Դա իմ ուժից վեր է, ես միայնակ մարդ եմ:

— Ինչ արած, մնաս բարով: Եթե նույնիսկ քահանան է բռնաժարվում օգնել ժողովրդի ազատության համար կռվողին, նշանակում է, իրոք, կործանում է մոտենում: Հուսանք, որ վերևում աստված կա և ամեն ինչ տեսնում է:

— Սպասիր: Ուղիղ կեսգիշերին ժամհարը ձեզ կդիմավորի գյուղի ծայրին: Մինչ այդ ես կգնամ հարևան գյուղ, այնտեղ պոլսեցի մի հայ բժիշկ կա, կխնդրեմ ու կվարձատրեմ, որ գա նայի վիրավորին: Բայց չգիտեմ ինչ մարդ է, գուցե փորձանք բերի մեր գլխին...

— Դու նրան կասես, որ կինդ է հիվանդ, մնացածը ես կկարգավորեմ:

Կիսավեր ջրաղացից ոչ հեռու, գյուղի ծայրին, ժամհարը թամբած ջորիով սպասում էր նրանց: Սաքոն չթողեց, որ Օհանն ու Արշակը գնան իր հետ: Ով իմանա՝ ինչ կարող է պատահել, ասաց, ինչո՞ւ բոլորս վտանգի ենթարկվենք: Բժիշկը փոքրամարմին, ալեզարդ մի ծերուկ էր: Քահանայի կնոջ փոխարեն տեսնելով կուրծքը արյունոտ, ջերմության մեջ տապակվող Կարոյին, վախեցած հետ-հետ գնաց:

— Ի՞նչ է նշանակում սա, քահանա է՞լ սուտ խոսի...

— Հանգիստ, բժիշկ, մեր ազգի վիճակը մեզ ստիպում է երբեմն քողարկված խոսքերով դիմել միմյանց,— հնարավորին չափ մեղմ ու սիրալիր, ասաց Սաքոն:— Քահանան մեղավոր չէ, նա իմ խնդրանքն է կատարել:

— Բայց ովքե՞ր եք դուք: Լավ, գլխի եմ ընկնում: Չե՞ք վախենում, որ ձեզ կմատնեմ, ջանֆիդա:

թվայնացրել է 1915.info կայքը

— Մատնողը նախապես չի զգուշացնի, բժիշկ, կգնա ու կմատնի: Ուրիշ ելք չկար, մենք հարկադրվա՛ծ ենք դիմել այս քայլին:

— Ջուր տաքացրեք:

Արդեն լույսը բացվում էր, երբ Սաքոն քահանայի տված ուտելիքի կապոցով վերադարձավ կիսավեր ջրաղաց: Նրան անակնկալ էր սպասում. ջրաղացի թեքված այանը, Օհանի կարմիր թաշկինակը բերանը խցկած, կապկպված էր մի թուրք օձբաշի: Տեսնելով նա մի հայդուկի, նա ցնցվեց ու խոխոտացրեց: Աչքերը չռվել էին մոտալուտ մահվան սարսափից:

— Սա՞ որտեղից հայտնվեց:

— Դեռ չգիտենք...

— Եթե մենակ չէ, ընկերները հետ կգան, կփնտրեն: Թաշկինակդ հանիր բերանից, Օհան:

— Ո՞վ ես, ի՞նչ ես անում այս կողմերում:

Թուրքն ուզում էր չոքել, բայց այունը, որին մեջքով կապկպված էր, խանգարում էր:

— Ինձ մի սպանեք, ես երբեք արյուն չեմ թափել, ոչ ոքի վնաս չեմ տվել: Դասալիք եմ, փախել եմ բանակից: Իմացա, որ կինս երեխաներիս լքել, հեռացել է, չդիմացա...

Օհանն ու Արշակը հարցական նայեցին Սաքոյին՝ ի՞նչ անենք: Օձբաշին լաց էր լինում:

— Թուրք, քեզ չենք սպանում: Դու այստեղ կմնաս այնքան, մինչև քեզ նման մեկը գա, կապերդ արձակի: Մենք ճամփա ընկնենք, շուտով լույսը կծագի:— Սաքոն վերցրեց զենքերը և առաջինը դուրս եկավ հին ջրաղացից:

— Ի՞նչ եղավ Կարոն, ո՞ւր մնաց:

— Քահանան թաքցրեց իր տանը: Բժիշկը խոստացավ երկու օրը մեկ տեսության գալ: Ասաց՝ եթե արյան վարակում չլինի, մի շաբաթից կարող է քայլել:

թվայնացրել է 1915.info կայքը

Վասպուրականի վրա սև, արյունահոտ ամպեր էին կուտակվել: Վանում անհամբեր սպասում էին Սարգիս Ծովանյանին: Սալմաստում զենք էր կուտակվել, պետք է մեկներ այնտեղ, զինատար խումբ ստեղծեր և զենքը հասցներ Վան:

— Արտակ Դարբինյանը պիտի գնար, բայց նա ուրիշ հանձնարարություն ստացավ: Գիտենք, որ շատ ես հոգնած, ի՞նչ անենք, սակայն, աղետը մոտենում է...

Հազիվ մի քանի ժամ հանգստանալով, առաջին աստղի ցոլքի հետ Սաքոն դուրս եկավ Վանից: Երկու օր, խուսափելով բանուկ ճանապարհներից, կիրճերով ու անտառներով գնում էր դեպի պարսկական սահմանը: Հրացանը քանդել, տեղավորել էր ուսապարկի մեջ: Վտանգի դեպքում օգտագործելու էր ծոցում պահած տասկրականի ատրճանակը կամ քրդական լայն գոտու տակ խրած դաշույնը: Պարսկաստանի սահմանագլխին ոտքերն այլևս չէին ենթարկվում, ծնկները ծալվում էին ուժասպառությունից: Գտավ մի քարանձավ, քաշվեց մութ խորքը ու քնեց:

... Գանձակի շուկայում է, սեխի թանձր բուրմունք, չայխանայից ելնող դառնածոր բայաթի, փոշոտ հրապարակում փռված կանաչ գորգ: Ծաղկատար դեմքով ավարացին խփում է դափին, փահլևան հրավիրում գրազով ըմբշամարտելու: Գորգի եզրին ծալապատիկ նստել է մի վիթխարի խեղկատակ: Բերանից լորձունք թափելով բուռ-բուռ չամիչ է ուտում պղնձե թասից: Երբեք չսափրված ու չլվացված դեմքը մարդկային քիչ բան ունի: Լայն, տափակ քիթ, դուրս ցցված ծնոտ, բութ հայացքով նեղ աչքեր ու գերզարգացած ականջներ: Չամիչը վերջանում է: Դատարկ թասը պարզում է դեպի ավարացին ու կարմիր լեզուն լայն երախի մեջ պտտելով բառաչում: Ավարացին փող է աշխատում խեղկատակի միջոցով: Քաղաքից քա-

թվայնացրել է 1915.info կայքը

ղաք շրջելով՝ կանաչ գորգը փռում է հրապարակներում և գրազով փաիլևաններ հրավիրում խեղկատակի հետ չափվելու: Ահա ամբոխի միջից դուրս եկավ դարձյալ հսկայամարմին մի թուրք: Հանեց չուխան, թևերը քշտեց, կանգնեց գորգի եզրին: Ավարացին իր լեզվով ինչ-որ բան շշնջաց խեղկատակին: Վերջինս նետեց պղնձե թասն ու ոռնոցով խոյացավ թուրքի վրա: Մարտը կարճ տևեց: Թուրքի ոսկորները տնքում, ճռռում էին խեղկատակի հուժկու բազուկների մեջ: Նա գետնել էր հակառակորդին և ծունկը փորին սեղմած խեղդում էր: Թուրքը խռխռում էր, թափահարում ձեռքերը:

— Հետ քաշիր, գրազը քոնն է,— ասաց թուրքի ընկերը: Ավարացին գոռաց խեղկատակի ականջի տակ: Իզուր: Տիրոջ համար էլ անհասկանալի վայրենի մոլուցքով նա խեղդում էր թուրքին: Մի քանի հոգի թափվեցին խեղկատակի վրա, խփում էին, քաշքշում, բայց նա շարունակում էր խեղդել: Թուրքն արդեն խաղաղվել էր, բերանից փրփուր էր ելնում, ձեռքերն անօգնական թափվել էին կողքերին: Նրա ընկերը դուրս քաշեց դաշույնն ու մինչև դաստակը մխրճեց խեղկատակի թիկունքը: Անասնական բառաչով նա բաց թողեց զոհին, երերալով վեր կացավ, տեղում պտտվելով ապարդյուն փորձում էր հանել թիկունքը խրված դաշույնը: Հետո երախից արյուն շաղ տալով գնաց դեպի ամբոխը: Հրապարակը դատարկվեց: Կույր բախտագուշակը ճզմվեց մահագար խեղկատակի ու ձիասայլի արանքում: Բերանքսիվայր ընկնելով խաղողի կույտի վրա, խեղկատակը խռխռաց, ցնցվեց, ջղաձգվեց ու ավանդեց հոգին: Թուրքի ընկեր թուրքը մեռածի թիկունքից հանեց իր դաշույնը, զոհի շորերին քսելով արյունը սրբեց, խրեց գոտու տակ, հեռացավ շուկայից:

... Սաքոն արթնացավ ինչ-որ ձայնից, քրտինքի մեջ ողողված: Երազում կատարվածին նա ականատես էր եղել տարի-

թվայնացրել է 1915.info կայքը

ներ առաջ: Արդեն որերորդ անգամ այդ դաժան պատկերը քնի մեջ հառնում էր նրան՝ կանխագուշակելով դժբախտություն ու աղետ: Ձայնը, որից արթնացել էր, կրկնվեց: Սաքոն ձեռքը ծոցը տարավ: Քարանձավում երկու ավազակ վիճում էին: Սկսեցին քաշքշել իրար, բանը հասավ դաշույններին: Սաքոն հանեց ատրճանակն ու երեք անգամ կրակեց առաստաղին: Վայրի ոռնոցով դուրս նետվեցին: Նրանք թողել էին իրենց հրացաններն ու մի փոքրիկ կապոց՝ ոսկե և արծաթե կանացի զարդեր: Հավանաբար, մտել էին այստեղ թալանը բաժանելու: Սաքոն վերցրեց կապոցն ու դուրս եկավ քարանձավից: Շըրջակայքում շունչ-կենդանի չկար:

Դուշման-Դարասի ձորում, ուր չորս տարի առաջ սպանել էին Մովսես Իշխանին, թիերի միջից հրամայեցին կանգնել: Սաքոն սպասում էր նման հանդիպման: Ակնթարթորեն դուրս քաշեց ատրճանակն ու ձայնի ուղղությամբ կրակելով՝ նետվեց ծառի հետևը: Մեկը թառանչեց և թիերը ջարդելով ընկավ: Մի քանի րոպե սպասելուց հետո Սաքոն դուրս եկավ արահետ: Եվ որոտաց կրակոցը, մեռնելուց առաջ ավազակը հասցրեց արձակել վերջին գնդակը: Ցավը շամփրեց ոտքը, զգաց, թե արյունն ինչպես է տաք հոսքով բխում վերքից: Դաշույնով ծառից մի ճյուղ կտրեց, հենվելով դուրս եկավ ձորից: Դերիկի վանքը հեռու չէր, մի կերպ կհասներ: Արձակեց մեջքի գոտին, ամուր փաթաթեց ոտքը: Ցավն ու արյունը չէին մտահոգում նրան, անհանգստությունն ուրիշ բանի համար էր՝ չէր կարողանալու զինատարների խումբն առաջնորդել Վան: Գնդակը խրվել էր ազդրոսկրի մեջ: Ղարաբաղցի Պետոն զննեց վերքը:

— Առանց բժշկի գործը գլուխ չի գա, պիտի համբերես, մինչև գնամ Թավրիզ, գամ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կհամբերեմ: Ինչքա՞ն զենք եք բերել:

— Քսաներկու հրացան:

— Երկուսն էլ իմ ուսապարկում կա՝ քսանչորս, բայց էլի քիչ է: Մենակ մի գնա Թավրիզ, Պետո: Երկու հոգի էլ վերցրու հետդ,— Սաքոն նրան պարզեց քարանձավում ձեռքն ընկած զարդեղենի կապոցը,— փորձեք էլի զենք ճարել:

Վերադարձան հաջորդ օրը: Բերել էին ութ հնաոճ հրացան, մի քանի լիքը փամփշտակալներ: Բժիշկը յուրային էր, առաջին անգամ չէր գալիս Դերիկ՝ վիրավոր բուժելու: Կտրրվածք արեց, դժվարությամբ հանեց ոսկորի մեջ խրված գնդակը:

— Վերքը շուտ կլավանա, բայց վախենում եմ մի քիչ կաղ մնաս...

Բժշկին ճանապարհելուց հետո Սաքոն հրավիրեց զինատարների խորհրդակցություն: Վեց հոգի էին, երեքը ղարաբաղցի, երկուսը Նախիջևանից, մեկը լոռեցի: Միայն Պետոն էր մի քանի տարի առաջ զենք տարել Վան:

— Իրադրությունն ստիպում է գործել արագ ու վճռական: Ես եկել էի, որ ղեկավարեմ խումբը, բայց տեսնում եք ինչ եղավ: Այդ բանը դու կանես, Պետո: Սակայն քո ընկերները անծանոթ են ճանապարհին, նրա դժվարություններին, հարկավոր է խումբը համալրել ևս մեկ-երկու զինատարով, մանավանդ որ զենքը շատ է:

— Բայց ինչպե՞ս, վանքում միայն վանահայրն է, պատանի ժամհարը և խուլ ծառան...

— Սալմաստից պետք է կանչել դարբին Համբարձումին, Թավրիզից՝ արծաթագործ Համիկին:

— Մենք նրանց չենք ճանաչում:

— Գիտեմ, Հովհաննես քահանան կհոգա այդ մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Համիկը Թավրիզում չէ,— ասաց քահանան:— Մնում է դարբինը: Ես հիմա ժամհարին քո Սարի ձիով կուղարկեմ Սալմաստ:

Սարի ձին Բագրատ վարդապետն էր գնվիրել Սաքոյին: Չափազանց ուշ-ուշ էին հանդիպում նրանք, սակայն խելոք կենդանին չէր մոռանում տիրոջը:

— Խումբը գալիք գիշեր պիտի ճանապարհվի: Գուցե գտնենք նաև մի վարձկան քո՞ւրդ, որ առաջնորդի մինչև սահմանագլուխ:

— Պետք չի,— ասաց Պետոն,— ես գիտեմ ճանապարհը:

Դարբինը եկավ ժամհարի հետ: Նրան վաղուց գործի չէին կանչել, եկավ մի քիչ նեղացած և ուրախ: Զինատարների խումբը ղարաբաղցի Պետոյի ղեկավարությամբ ճանապարհ ընկավ:

Վերքն այնքան էլ շուտ չլավացավ: Սաքոն չէր համակերպվում անկողնային վիճակին, մի կերպ հեծնում էր Սարի ձիուն, որսի գնում մոտակա անտառները կամ այցելում Ստեփանոս Նախավկայի Վարդան քահանային: Դերիկի կռվից հետո, երբ Էջմիածնի Մայր աթոռը բողոք ներկայացրեց թշնամոց կամայականությունների դեմ, երկու վանքերի դրությունը փոքր-ինչ բարելավվել էր:

— Լուսաբացին մի հայդուկ եկավ, քեզնից էր հարցնում՝ Դերիկի վանքո՞ւմ ես, թե անցել ես Կովկաս:

— Ո՞վ էր:

— Անունը չիմացա: Ճանապարհին կռիվ էր ունեցել, շատ էր հոգնած: Հրեն, քնած է ծառայանոցում:

Սաքոն մտավ ծառաների սենյակ: Մեկը խոմփացնում էր այծենակաճով ծածկված: Նայեց դեմքին և... անակնկալից շանթահարված ընկրկեց: Հրացանը կողքին, ձեռքն արխալուղի ծոցում, թախտին քնած էր շատախցի Մկրտոն: Մի՞թե, իրոք,

թվայնացրել է 1915.info կայքը

հրաշքներ լինում են աշխարհում: Նորից կռացավ քնածի վրա: Ոչ, տեսողական պատրանք չէր: Ձախ այտին դեռ չապաքինված սպի կար: Հայդուկը շուռ եկավ մեջքի, բացեց աչքերը:

— Մկրո՞...

Վրա նստեց ու մի քանի վայրկյան քնաթաթախ նայում էր Սաքոյին:

— Մկրո, ախպերս, դու կենդանի՞ ես:— Նրանք փաթաթվել էին իրար և աշխատում էին զսպել խեղդող հուզմունքը:

* * *

... Մկրոն գյուղ էր վերադառնում ծանր նախազգացումով: Ոստիկանների հայտնվելը պատահականությո՞ւն էր, թե կապ ուներ իրենց հետ: Երկու դեպքում էլ վտանգը նույնն էր մնում: Նրան հայտնի էր, որ ազգասիրությամբ չփայլող ոեսը մի քանի անգամ հետաքրքրվել է իր «պանդխտության» հանգամանքներով, հետացել թերահավատ ու կասկածավոր: Բայց նա կհասցնե՞ր խմբի՝ գյուղում գտնված կարճ ժամանակամիջոցում ոստիկաններ կանչել: Ոչ, այլապես Հաշկանց կգար մեծ խումբ, հինգ հայդուկի դեմ չէին ուղարկի ընդամենը երեք ձիավոր ոստիկան: Մկրոն տագնապալի մտքերից ալեբախվելով հասել էր բանջարանոցներին, երբ երկինք խոյացավ հրդեհի ծխախուտն բոցը: Կրակի վետվետուն լույսի տակ նա տեսավ ցանկապատի այունին կապկպված եղբորը, նրա մոտ ջահը ձեռքին կանգնած ոստիկանին, որն անընդհատ ինչ-որ բան էր հարցնում: Մյուս երկու ոստիկանները հրացանները կրակի պահած կանգնել էին տան առաջ: Մկրոյի կրակոցից ջահակիր ոստիկանը գե-

թվայնացրել է 1915.info կայքը

տին թավալվեց: Երկրորդ հրացանը, որը վերցրել էր եղբորը զինելու համար, որոտաց տան առաջ կանգնածներից մեկի կրծքին: Վերջին ոստիկանը հասավ ձիուն, իրեն գցեց թամբին, բաց ատրճանակի անվրեպ կրակոցից բերանքսիվայր ընկավ ձիու բաշին: Հրդեհվող տան պատուհանը խզակոթով ջարդելով, Մկրոն ներս ընկավ: Նախ գտավ ուշաթափ մորը, հետո՝ հարսին: Եղբոր կապերն արձակել էին, նրա օգնությամբ աղետյալներին դուրս բերեցին բակ: Տունը փրկելու մասին մտածելն անիմաստ էր, ոչ ժամանակ կար, ոչ՝ հրդեհը հանգցնելու միջոց: Սպանված ոստիկանների ձիերը դոփում, խրխնջում էին, փորձում պոկոտել ցանկապատին կապված սանձերը: Գյուղի ոեսը անհետացել էր խավարում:

— Դեպի ձիերը:— Ուշաթափ մորը ձեռքերին առած, Մկրոն դուրս եկավ ցանկապատի դռնակից:

Մինչև լուսաբաց քափ ու քրտինքի մեջ կորած ձիերը գնում էին դեպի սարերը:

— Մինչև ո՞ւր ենք քշելու այսպես,— եղբայրը մտահոգ նայում էր մթնոտ, անծանոթ սարերին:

Առջևում պիտի հայաբնակ շեն լիներ: Եթե առանց ուղղությունը շփոթելու հասնեին այնտեղ, Մկրոն հույս ուներ մորն ու եղբոր կնոջը առժամանակ տեղավորել որևէ ապահով հարկի տակ, մինչև հետագա դեպքերը հուշեին իրենց անելիքը: Եղբայրն այլ առաջարկություն չուներ:

— Իսկ ես կգնամ Վան,— ասաց նա:— Քո տված այս հրացանով գուցե պետք գամ այնտեղ...

Մկրոն գիտեր, որ ընկերները վերադարձել եմ Սալմաստ, և հայաբնակ շենում հարազատներին հրաժեշտ տալով՝ ճամփա ընկավ դեպի պարսկական սահման: Ձորերում պատահական

թվայնացրել է 1915.info կայքը

ավազակների հետ մի քանի բախումներից հետո հասավ Ստեփանոս Նախավկայի, Դարաշամբի հին, երբեմնի խաղաղիկ վանքը:

— Եթե մեկ օր առաջ տեղ հասնեիր, հիմա զինատար խմբի հետ անցած կլինեիր թուրքական սահմանը:

— Ո՞վ է առաջնորդում:

— Ղարաբաղցի Պետոն:— Սարգիսը մի քանի բառով պատմեց տրված հանձնարարության և Շեյթան Դարասիի ձորում կատարվածի մասին:

— Եվ ի՞նչ ենք անելու այս վանքերում մինչև քո ապաքինվելը...

— Անգործ չես ասի: Կհանգստանաս, հետո կմտածենք, թե ուր գնաս և ինչ անես:

Գիշերը Թիֆլիսից մարդ եկավ Դերիկ: Չորս ատրճանակ էր բերել և մի նամակ՝ հասցեագրված Սարգիս Ծովականին: «Հանձնարարվում է Ատրպատականի հայկական գյուղերում ստեղծել գաղտնի զինյալ խմբեր, որոնք, մնալով իրենց բնակավայրերում, պատրաստ լինեն առաջին իսկ կանչով համախմբվելու մեկ հրամանի տակ: Ձենքը պետք է հայթայթել տեղում...»: Սաքոն առանձնակի հարգանք չուներ թիֆլիսյան հանձնարարությունների նկատմամբ, բայց ինքն էլ էր վաղուց այդ կարծիքին՝ պետք է զինել Ատրպատականի շինական տղամարդկանց, ներգրավել համաժողովրդական պայքարի մեջ: Նրանց պատրաստակամությանը, թերևս, չի կարելի կասկածել, բայց շատերը, առօրյա հոգսերում թաղված, տեղյակ չեն երկրում կատարվող իրադարձություններին, չգիտեն, որ իրենց համախմբյալ ուժը կարող է լուրջ օգնություն լինել ֆի-

թվայնացրել է 1915.info կայքը

դայական շարժմանը: Մանավանդ՝ հիմա, երբ Վանի գլխին ուր որ է ճայթելու է արյունալի փոթորիկը: Հաջորդ գիշեր Դեբրիկի վանքի դարպասից երկու ձիավոր դուրս եկան: Սաքոն և Մկրոն: Մեկը վանականի հագուստով, մյուսը որպես նրա սպասավոր, գնում էին վանքի համար հանգանակություն անելու...

թվայնացրել է 1915.info կայքը

ՄԱՅՍ ԵՐԵՐՈՒՔ

ԵՐԿԻՐ ԼՌԵՑՅԱՅ



Հեք մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ՝օգնած աւոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... Ոչ, Սաքոն չէր հպարտանում Խանասորի արշավանքով: Այն լինելու էր և եղավ: Պե՞տք էր այդ արշավանքը, թե՝ ոչ: Հիմա էլ, երկու տարի անց, այս հարցադրման հետ Սաքոյի ներսում գլուխ են բարձրացնում երկու հակադիր ուժեր: Պե՛տք էր. ասում է նահատակված ընկերների վրիժառությամբ տանջվող զինվորը: Ո՛չ, ասում է սթափ ջիտակցությամբ առաջնորդվող զորագետը: Հետո Շարաֆ ցեղապետը հրդեհեց մեկ տասնյակ հայկական գյուղեր: Բայց մի՞թե Խանասորի արշավանքից առաջ չէր հրդեհում ու չէր կոտորում, մի՞թե արշավանքի դրդապատճառը նրա կատարած ներթական արյունահեղությունը չէր: Համենայնդեպս, Խանասորի արշավանքը տեղի ունեցավ: Վերջին՝ որոշիչ ժողովում Սաքոն, Վարդանը և Տաշոն հանդես եկան արշավանքի դեմ: Նրանք գերադասում էին շարունակել զենք ու զինամթերքի մատակարարումը՝ վրիժառության խնդիրը թողնելով ավելի հարմար ժամանակների: Բայց ընկերների կորստյան ցավից տնքացող ֆիդայիները լոեցրին հակառակվողներին: Վրիժառության արշավանքի շարժառիթը Վանի ինքնապաշտպանների կոտորածն էր սուրբ Բարդուղիմեոս Առաքյալի վանքի մոտ և Գարահիսար լեռան լանջին: Չկարողացավ ծնկի բերել հերոսաբար դիմադրող վանեցիներին, և Սասունդին փաշան անգլիական դիվանագետ Ուլյամսի միջոցով նրանց առաջարկեց

թվայնացրել է 1915.info կայքը

թողնել դիրքերը, դուրս գալ քաղաքից, հեռանալ դեպի Պարսկաստան: Նրանց կյանքի անվտանգությունը երաշխավորում էր եվրոպացի դիվանագետը: Ինքնապաշտպանության ղեկավարների խորհուրդը առանձնապես մեծ հավատ չընծայեց Ուլյամսին, բայց հարկադրված էր ընդունել առաջարկությունը. սպառվել էր ռազմամթերքը, սնունդ չկար, օրեր շարունակ դիրքերում մարտնչած վաճեցիները ֆիզիկապես ջլատվել էին: 1896 թվի հունիսի 8-ին ինքնապաշտպանների մի մեծ խումբ, նրանց հետ շուրջ յոթ հարյուր անզեն մարդիկ, Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ շարժվեց դեպի Աղբակ: Մարտիկի և Պետոյի խմբերը քաղաքը թողնելու էին ավելի ուշ, Ավետիսյանի խմբի անվնաս հեռանալուց հետո: Ս. Բարդուղիմեոս Առաքյալի վանքի մոտ Սաադեդդինի ուղարկած զորաբանակը պաշարեց Ավետիսյանի զինավոր ու անզեն թափորին: Շուրջ մեկուկես հազարից փրկվեցին ընդամենը երեսուն մարդ: Գարահիսար լեռան լանջին, թանձրացող մթության մեջ, Պետոյի ու Մարտիկի խմբերը տեսան բոլոր կողմերից իրենց շրջապատող թուրք և քուրդ զինյալների խառը զանգված: Հերոսաբար մարտնչեցին ու անհավասար կռվում ճահատակվեցին գրեթե բոլորը: Հետո ժողովրդի շուրթերից ցավագին ողբերգ էր հընչելու՝

Գարահիսար լերան կրծքին
Նա էլ ընկավ վիրավոր,
Կուրծքը պատռած, սիրտը խոցված
Ձար թշնամու գնդակով:

Խոցված սրտից մուգ արյունը
Կաթիլ-կաթիլ կծորա...
Ախ, ջիվանու կյանքն է հոսում
Խոցված կրծքի լայն վերքից...

թվայնացրել է 1915.info կայքը

Վանի ինքնապաշտպանների կոտորածին գազանային դաժանությամբ մասնակցել էր հատկապես քրդական մազրիկ ցեղը՝ իր առաջնորդ Շարաֆ բեյի գլխավորությամբ: Այդ ցեղը 250 վրաններով զբաղեցնում էր Խանասորի բարձր ու ծաղկավետ լանջը: Վրանների առաջ, խարույկներին կախված կաթսաների մեջ, եփվում էր մորթված հայերի օջախներից թալանած ձավարն ու հաճարը, վրանների շուրջն արածում էին հայ ուխտավորներից խլած երբեմնի մատաղացու գառներ ու երինջներ, առավոտները նրանց քնաթաթախ լամուկներն իրարից խլխլելով հագնում էին հայ երեխաների՝ տեղ-տեղ արյունոտված շորերը...

Խանասորի արշավանքը պե՛տք է լիներ: Եվ Նիկոլ Դումանը Թիֆլիսից Սալմաստ էր վերադառնում արշավանքի հաստատված ծրագրով: Մտահղացումը նրանն էր, նրան էլ հանձնարարված էր վրիժառական գործողության ամբողջ նախապատրաստությունը: Միայն Մումանի տաղանդով օժտված ռազմագետը կարող էր իրականացնել այդպիսի մի դժվարին արշավանք: Ինչպե՞ս պիտի կազմակերպեր հայդուկների զինահավաք, որտեղի՞ց պիտի ճարեր զենք ու ձիեր: Այդ ամենի համար պահանջվեց ութ ամիս: Տուլայի զինագործարանից Սալմաստ հասան հարյուրավոր հրացաններ, հանգանակությամբ հավաքված գումարով գնվեցին ձիեր: Վրիժառության կանչով Արևելյան Հայաստանի, Վասպուրականի տարբեր վայրերից Սալմաստ ուղևորվեցին ուժեղ ու պատվասեր հայ տղամարդիկ: Համադանից եկավ Սաղաթել խանը, Թեհրանից և Ղազվինից՝ վաճառականներ Համբարձում Մելիք-Սարգսյանը և Մեսրոպ Տեր-Հակոբյանը, Ղարաբաղից՝ Կոլյա Աարիբեկյանը... Ամեն մեկն իր զենքով ու ձիով: Եկավ Եփրեմը, որը յոթ տարի առաջ Կուկունյանի խմբի մեջ աքսորվել էր Սախալին և փախել կալանքի վայրից, զարհուրելի տանջանքներով հա-

թվայնացրել է 1915.info կայքը

սել Կովկաս: Նա հետո դառնալու էր Պարսկաստանի սահմանադրական հեղափոխության առաջնորդներից մեկը, հասնելու էր սարդարի կոչման՝ Եփրեմ խան սարդար: Եվ նրա քաջ ու սիրելի զորականներից մեկը լինելու էր Նիկոլ Դումանը:

1897 թվականի հուլիսի 22-ին Հայթվան գյուղում երեք հարյուր ֆիդայիներ հանդիսավոր երդում էին տալիս: Նիկոլ Դումանը, որն արշավանքի նախաձեռնողն ու կազմակերպիչն էր, և, բնականաբար, պիտի լիներ նրա ընդհանուր ղեկավարը, ընտրվեց ընդամենը հիսնապետ: Այդ վիրավորանքի գաղտնիքը թաքնված էր Թիֆլիսի ներկայացուցիչ Շահրիկյանի, Հովսեփ Արղությանի, մի քանի այլ գործիչների դրսևորումներում: Նիկոլ Դումանն ամեն ինչ ներսում խեղդեց, ընդունեց առաջարկը. նա իսկական զինվոր էր, նրա համար ամենից կարևորը ոչ թե անձի, այլ ընդհանուր նպատակի հաղթանակն էր: Արշավանքի հրամանատար ընտրվեց Վարդանը, օգնական՝ Հովսեփ Արղությանը: Հարյուրապետներն էին շատախցի Օհանը և մոկացի Ախպերը: Հեծյալ ջոկատի հրամանատարն էր Սևքարեցի Սաքոն, նրա օգնականը՝ Կոլյա Ասրիբեկյանը: Վրիժառության խոսք են ասում արշավանքի հրամանատարը, ղարաբաղցի բժիշկ Քրիստափոր Օհանյանը, ֆիդայի քահանա Բիձան: Արշավախումբը զինված էր մոսին հրացաններով: Ֆիդայիներից յուրաքանչյուրը կրում էր 3—4 փամփշտակալ: Հաջորդ առավոտյան հասնում են Պրիգդարաձորը, սարերի գլխին նշանակում հսկիչ կետեր: Երեկոյան երթը շարունակվում էր: Գիշերը Դերիկի վանքի տաք ջրի մոտով հայդուկները բարձրանում են Առաուլ լեռը: Այնուհետև, հաղթահարելով Խանասոր սարի դժվար վերելքը, լուսաբացը դիմավորում են նրա ձյունամած գագաթին: Բարձունքն ի վար փռված էր կանաչ ու ծաղկուն լեռնադաշտը՝ մազրիկ վայրենաբարո ցեղի գույնզգույն վրաններով, որոնց կողքով կարկաչում էր հավեր-

թվայնացրել է 1915.info կայքը

ժական ձյունների պաղությունը ներծծած մի կապտաջուր գետակ: Նրա մյուս ափին, կանաչ բլրի վրա, ցեղապետ Շարաֆի մեծ, ճերմակ վրանն էր: Ձյունոտ բարձունքից հայդուկները տեսնում էին տարաբախտ երկրի բոլոր սիգամած լեռները՝ Սիփանը, Արտոսը, Վարագը... Նրանց գագաթները հիմա վրեժ ղողանջող զանգեր էին, որոնց ոգեղեն կանչով ձորերի մշուշից ասես բարձրանում էին ճահատակների սիրելի պատկերները: Եվ քահանա Բիձան, աջն անդունդներին պարզած, Վարդանանց շարականով օրհնում էր լեռնազանգերի ըմբոստ ղողանջն ու ճահատակների պայծառ հիշատակը: Նրանց հայացքի դեմ, կապտավուն մշուշի մեջ, հանգած կանթեղներով ու անշունչ խորաններով թախծում էր ս. Բարդուղիմեոս Առաքյալի վանքը: Այն արդեն ոչ այլ ինչ էր, քան մեռած աղոթքների, կործանված աստվածասիրության դամբարան...

Իրիկնամութի հետ արշավախումբը դանդաղ իջնում էր դեպի վրաններով ծածկված լեռնահովիտ: Հանգիստ է հայտարարվում: Հարձակումը նշանակված էր աղամամութին: Ֆիդայիները լայն աղեղով պաշարել են վրանները: Արաբոյի աստղի ցոլանքի հետ հնչում է մարտի շեփորը...

Զինվորական խորհուրդը խստորեն հրահանգել էր ձեռք չտալ կանանց ու երեխաներին, ու եթե այդպիսի զոհեր եղան, ապա՝ առաջին ընդհանուր համազարկի ժամանակ: Վրիժառու հայդուկների գթասրտությունը հետո երգ էր դառնալու՝

Ցաման աստված, ֆիդան եկավ, ո՞ւր փախնեմ—
Ասաց որդուն կրծքին սեղմեց լեղապատառ քրդուհին:
Մի վախենա, հանգիստ կեցի, բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆիդան...

... Նիկոլ Դումանն ընդհանուր հրամանատար չէր, բայց նրա խոսքն ու խորհուրդն իշխում էր ամբողջ արշավանքի ըն-

թվայնացրել է 1915.info կայքը

թացքում: «Վեհանձն եղեք դեպի տկարները, ձեռք չտաք կանանց ու երեխաներին». Դումանի այս պահանջը դարձել էր գործողության սկզբունք: Մազրիկ ցեղը լուսաբացը դիմավորեց առանց իր դաժան զինակիրների: Ժամը վեցին շեփորը նահանջ ազդարարեց: Հրաման եղավ հետ բարձրանալ Առաուլ լեռը և այնտեղ դիրքեր գրավեցին՝ դիմակայելու տարբեր կողմերից օգնության եկող քուրդ և թուրք զինախմբերին: Հետո կովելով նահանջում էին դեպի լեռան գագաթը: Հիսնապետ Դուման Նիկոլի ֆիդայիները կրակում էին առանց վրիպելու: Ախպերը, Վոամը, Կարոն և նրանց հետ՝ մի քանի ուրիշ հայդուկներ, կովում էին վիրավորներին շալակած: Նույնն էին անում Սաքոյի ձիավորները: Եղավ պահ, որ նրանց ձիերը դարձան լոկ սանիտարական փոխադրամիջոց: Արշավանքի ընդհանուր հրամանատար Վարոանը կռիվը ղեկավարում էր գագաթի ձյան մեջ կանգնած: Նրան անընդհատ լուրեր էին հասնում՝ Կարոն պաշարված է, օգնության հասեք: Թավարվարցի տղերքը պաշարված են, օգնության հասեք...

Հիսնապետի օգնական Հաջին և տասնապետ Ավոն իրենց ֆիդայիներով նետվում էին դեպի պաշարվածները: Համադանցի Սաղաթելն ընկավ: Կրետցի Արոն ընկավ: Բասենցի Հարութն ընկավ: Նակոն ընկավ: Կարոն ընկավ... Վիրավորները շատ էին: Ֆիդայի բժիշկ Քրիստափոր Օհանյանը քափ-քրտինքի մեջ կորած կապում էր վերքերը, լվանալու համար ջրի տեղ ձյուն էր օգտագործում: Ծանր մարտով մթնեց օրը: Դուման Նիկոլին կարգադրվեց իր հիսնյակով ապահովել հետագա նահանջը: Սևքարեցի Սաքոյի հեծյալներն իրենց ձիերը տրամադրել էին ծանր վիրավորներին, այժմ Սաքոյի խնդիրն էր այդ վիրավորներին հասցնել Դերիկի վանքի բուժիչ ջրերը: Ըստ հրամանի, վերջին հավաքավայրը Սպիտակ սարն էր: Գանձակեցի տասնապետ Եփրեմը, հետագայում՝ Պարսկաստանի սահ-

թվայնացրել է 1915.info կայքը

մանադրական զորքերի հրամանատար Եփրեմ խանը, իր խիզախ հայդուկներով հսկում էր վիրավորների ճահիճը: Բժիշկը, Դումանը, Արբակը, տասնապետ Համբոն մի քանի ուրիշ ֆիդայիների հետ Սպիտակ սար հասան ամենավերջում: Արշավի երրորդ օրվա երեկոյան ճանապարհ ընկան դեպի Սալմաստ: Հայաստան աշխարհի տարբեր կողմերից ազատագրական պայքարի գինվորագրված տասնիները հայդուկներ պակասում էին վերադարձող արշավախմբից: Նրանք հերոսաբար ճահճատակվել, պայծառ տեսիլքներ էին դարձել վեհ լեռների խորհրդավոր մշուշներում...

— Հիմա ես ձեզ հրաժեշտ եմ տալիս,— ասաց Նիկոլ Դումանը:— Ուզում եմ գնալ Ղարաբաղ, շատ եմ կարոտել մերոնց:

Դժվար թե նրա պես հայդուկը կարոտից այդչափ խեղճանար: Նրա մեջ խոսողը, հավանաբար, վիրավորանքն էր: Սաքոն հիացած էր հին ընկերոջ վեհանձնությամբ: Երկար նայում էր նրա հետևից, մինչև գնաց, անհետացավ բլուրներից այն կողմ: Եվ հիշողության մեջ արթնացան անցած օրերը, Դումանի բոլոր սխրանքները...

... Փամփուշտներով լիքը կաշվե ուսապարկն անասելի ծանր էր: Ս. Ստեփանոս Նախավկայի պատանի աբեղան Արաքսի ափի թաքստարանից այն մի կերպ հասցրել էր ճամփեզրի մամխուտները և քրտինքի մեջ ողողված՝ նստել մի փոքր շունչ առնելու: Մեջքը տնքում էր հոգնությունից, կաշեփոկերը երևի կապտեցրել էին ուսերը: Գիշերը դեռ առջևում էր, կարող էր ուսապարկին թիկնած մի քանի րոպե փակել աչքերը: Զինատար հայդուկներն այդպես էին հանգստանում գիշերային դժվար ու վտանգավոր ճանապարհներին: Վեր թռավ. կողքին զգաց ինչ-որ կենդանու հևոց: Գազան չէր, խելոք, մթան մեջ կայծկլտացող աչքերով նրան էր նայում մի հին որսաշուն:

թվայնացրել է 1915.info կայքը

Դռփյուն լսվեց, ու ոլորանի հետևից հայտնվեց նաև շան ձիավոր տերը: Այծենականճն ուսերին, կրակի պատրաստ հրացանը ձեռքին, ուժեղ մարդու առնական կեցվածքով նա ասես թագավորի փոքր որդին էր, որ դևերին հաղթած վերադառնում էր կախարդական աշխարհներից: Լուսնալուլյսի տակ տեսավ աբեղային, քաշեց ձիու սանձը: Այդ կողմերում հանդիպող վանականը միայն հայ կարող էր լինել, և նա ողջունեց արյունակցի ջերմությամբ.

— Հարգանքներ աստծո սպասավորին: Կեսգիշերին ի՞նչ ես փնտրում այս ամայության մեջ:

— Բարև: Ինչ փնտրում էի, արդեն գտել եմ: Խունկ եմ տանում վանքի համար:

— Խունկ... Իսկ ինձ ասել էին, թե Արաքսից այս կողմ վառոդի պաշտամունք է և սրի օրհնություն:— Անճանոթն իջավ ձիուց, հրացանը թամբից կախեց ու մոտեցավ, նստեց աբեղայի կողքին:

— Ո՞վ ես դու, բարեկամ, ո՛ւր ես գնում այսպես գիշերով:

— Ղարաբաղի Բալլուջ գյուղացի եմ, Նիկոլ Տեր-Հովհաննիսյան, ուսուցչության եմ գնում Թավրիզ: Ճանապարհին որսով տարվեցի, քարավանից հետ ընկա: Իսկ դո՞ւ ով ես:

— Ստեփանոս Նախավկայի վանքի աբեղա Սևքարեցի Սաքոն եմ: Բայց դու այնքան էլ նման չես ուսուցչի: Առաջին անգամ եմ տեսնում մեկին, որն ուսուցչության է մեկնում ձիով ու յափնջիով, բերդանով ու որսաշնով...

— Մի՞թե դա ավելի զարմանալի է, քան խունկը տեղափոխելու քո այս գիշերային մեթոդը. խավարին ապավինած, ահռելի ուսապարկի մեջ մամխաթիերի միջով քարշ տալով: Բայց ես վատ բան չեմ մտածում քո մասին, աբեղա, տա աստված, որ դու իմ փնտրած մարդկանցից մեկը լինես...

Մինչև վանք հետագա ճանապարհը գնացին միասին: Բեռը դրել էին ձիու մեջքին, Նիկոլը սանձը քաշելով աբեղայի

թվայնացրել է 1915.info կայքը

հետ ոտքով էր գնում: Լուսաստղը ցոլում էր, երբ հասան վանքի ճամփաբաժանին: Նիկոլը չընդունեց աբեղայի հրավերը.

— Որքան շուտ հասնեմ Թավրիզ, այնքան լավ: Ապահովության համար մի անհանգստացիր, իմ շունն ու ձին վտանգն զգում են հարյուր վերստից:

Սևքարեցի Սաքոն ամեն ինչ պատմեց Վարդան քահանային:

— Բալլուջեցի Նիկոլ...— աղոտ լուսաբացին նայելով ինքըն իրեն շշնջաց քահանան:— Ինչո՞ւ է ինձ թվում, թե այս անունը պիտի ըմբոստ զանգի պես ղողանջի մեր հողմահար լեռներում...

— Բա՞ն ասացիր, հայր սուրբ,— չլսեց պատանի աբեղան:

— Ոչ, զավակս: Գնա քնիր, մարմինդ տանջահարվել է ամբողջ գիշեր:

Այո, Նիկոլ անունով ուսուցիչը հետո դառնալու է հզոր հայդուկ Նիկոլ Դուման: Եվ հարկ է նրա մասին խոսել փոքր-ինչ հանգամանորեն:

... Բալլուջեցի Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը եկեղեցական հոր շնորհիվ լավ կրթություն էր ստացել: Մի քանի տարի ուսուցիչ էր եղել Հյուսիսային Կովկասի հայաբնակ գյուղերում, բայց նպատակն ուրիշ էր՝ անցնել Արևմտահայաստան, միանալ ֆիդայիների արդար ու անձնազոհ պայքարին: Սարգիս Կուկունյանի խմբի առաքելության աղետալի վախճանից հետո Արաքսի վրայով կամավորների անցումը դժվարացավ: Նիկոլը փոխեց ծրագիրը. կգնա Ատրպատական, ուսուցչություն կանի, կառնչվի Ստեփանոս Նախավկայի ու Դերիկի վանքերից Արևմտահայաստան զենք տեղափոխող ֆիդայիների հետ, կընդգրկվի նրանց խմբերից մեկում և կանցնի Ավետյաց Երկիր: Զենքի գործածությանը տիրապետում էր հրաշալի: 14—15 տարեկանից որսորդությամբ էր զբաղվել Ղարաբաղի լեռնային

թվայնացրել է 1915.info կայքը

անտառներում, մեն-մենակ գիշերել քարայրների մեջ, դաշույնով կռվել վիրավոր գազանի հետ: Գնդակն անվրեպ էր, հարվածը՝ մահացու: Եվ Թավրիզ էր գալիս ոչ թե քոլեջային նիստուկացի մի կոկիկ ինտելիգենտ, այլ վառոդի ծուխը շնչած, մարմնին վերքերի սպիներ ունեցող մի խիզախ զինվոր:

Քսանչորս տարեկան էր, երբ 1891 թվականի մի օր ձիով ու որսաշնով մտավ Թավրիզ: Արևելքի թախծոտ քաղաքում Ռուսահայաստանից եկած շատ հայեր կային, որոնց գործունեության բուն առանցքը Արևմտահայաստանում ազգային-ազատագրական շարժմանն օժանդակելն էր: Նիկոլ Տեր-Հովհաննիսյանի առաջին ծանոթները «Խարիսխ» գինագործական արհեստանոցի վարպետներն էին, ուսուցիչներ Հովսեփ Արղությանը և Սաթենիկ Մատինյանը: Այս երկուսը կապ ունեին Սալմաստի գինանոց-վանքերի հետ, ճանապարհ էին այնտեղ ելումուտ անող անվանի հայդուկներին և նրանց գործն ավելի շատ հանգամանակության ու այլ միջոցներով զենք հայթայթելն էր, քան ուսուցչությամբ զբաղվելը: Հայտնի չէ և կարևոր էլ չէ, թե ինչու Նիկոլի և նրանց՝ ապագա ամուսինների հարաբերությունները բարդացան: Դա չխանգարեց, որ երեքն էլ մինչև վերջ մնան նույն երդումի նվիրյալներ:

... Դերիկի վանքի կառավարիչ Մովսես Իշխանը Թավրիզից վերադարձավ ու պատմեց, որ իր համերկրացի Նիկոլ անունով մի երիտասարդ ուսուցիչ ստեղծել է կամավորների խումբ, զենք ճարել ու լավ գինվել և պատրաստվում է կոնկրետ գործողության: Լուրն իմացավ նաև Ստեփանոս Նախավկայի Վարդան քահանան ու վերատին հավատաց ներքին ճշմարիտ ձայնի զորությանը: Սևքարեցի Սաքոն չէր կասկածում, որ նա մեկ տարի առաջ իրեն հանդիպած բալլուջեցի երիտասարդն է: Եվ շատ էր ուզում կրկին հանդիպել:

թվայնացրել է 1915.info կայքը

Սալմաստի և Դերիկի արանքում, Դուշմանա ձորի բարձր ափին, կար մենավոր, քարաշեն մի տնակ: Նրա տերն ու միայնակ բնակիչը որսորդ Ավոն էր (Րաֆֆի, «Կայծեր»), որի անունը սարսափով էին լսում այդ վայրերում թափառող թալանչիները: Նույնիսկ այն ժամանակ, երբ տնակը լքված էր, նրանք հեռվից ու վախով էին նայում քաջ որսորդի խորհրդավոր կացարանին: Շշուկ էին տարածել, թե Ավոյի ոգին խոր անտառներից լուսանի կերպարանքով վերադարձել, ապրում է իր հին տնակում: Մի քանիսն իբր նրան տեսել էին տնակի առաջ լուսնալույսի ցոլքերով հուրհրատելիս: Նրանք վախենում էին մոտենալ տնակին, և որսորդ Ավոյի երբեմնի օթևանը հուսալի ապաստան էր այդ կողմերով անցնող հայդուկների համար:

Դերիկի վարդապետ Բագրատ Թավաքալյանի հանձնարարությամբ Սևքարեցի Սաքոն գնացել էր Սալմաստ: Վերադարձին իջավ ձոր՝ Պանդուխտի աղբյուրից ջուր խմելու: Ավազակները հաճախ էին ճամփորդներին թալանելու համար դարանակալում աղբյուրների մոտ: Սաքոն, ջրի հայելում տեսնելով գլխավերևը կանգնած ինչ-որ ավազակի, առանց շրջվելու մատուցեց, ուսի վրայով դատարկեց նրա կրծքին: Երկրորդ գնդակը լուծեց փողի մեջ: Ժայռի հետևը նետված հայդուկ աբեղան փաստորեն անզեն էր: Մյուս ավազակը հասկացավ դա և հրացանը պարզած մոտենում էր նրան թաքցնող ժայռին: Ու լսվեց մի կրակոց: Ավազակը ոռնաց, երևաց ու մեջքնիվայր փովեց թաց քարերին: Ո՞վ էր կրակողը:

— Բան չէր մնացել, աբեղա,— դեռ ծխացող հրացանը ձեռքին նրա մոտ հայտնվեց Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը: Բարձրացան որսորդ Ավոյի տնակը, մինչև ուշ երեկո մնացին այնտեղ: Պարզվեց, որ Նիկոլը հաճախ է լինում մենավոր տնակում: Հետո միասին իջան Դերիկի վանք: Նիկոլ Տեր-Հովհան-

թվայնացրել է 1915.info կայքը

Գիսյանի այդ այցելությամբ սկսվելու էր հայդուկի նրա սըխրալի կյանքը...

«Քայլիր անմոռուչ գիշերային խավարի մեջ, սարերով ու ձորերով, լուսաբացին թաքնվիր անմատչելի դարաններում, հսկիր մշտապես քրդական ոսոխի դեմ, որ ամեն քայլափոխիդ հետևում է նզովքի պես: Ընքա բեռան տակ, դողա միշտ մատնըվելու վտանգից, մաքառիր շարունակ սոսկալի բնության դեմ, տառապիր ցրտից, քաղցից ու ծարավից. ապրիր միշտ անքուն, տանջալի գիշերներ, փնտրիր անառիկ քարայրներ, ուր կարենաս շունչ առնել... Անտառի մեջ քայլելիս մի զարնվիր տերևներին, նրանց դավաճան խշշոցը կարող է ուշադրություն հրավիրել. մի ծխիր, որովհետև այդ ծուխը կարող է նկատվել թշնամու որջերից...»: Այս խորհուրդներով էին առաջնորդվում զինատարները Սալմաստից Վան սոսկալի ճամփորդությունների ընթացքում: Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը զինատար հայդուկ է, հենց առաջին ուղևորությամբ հռչակված իր ուժով, անօրինակ սխրանքներով: Կանցնի կարճ ժամանակ, և նա ի՛նքը հայդուկային զինատար խմբեր կառաջնորդի դեպի Արևմտահայաստան: 1894 թվականի գարնանը, ինչպես հիշում ենք, Ծարաֆ ցեղապետը քրդերի ու թուրքերի չորս հարյուր հոգիանոց բանակով պաշարեց Դերիկի վանքը: Բաշիբոզուկների բանակի դեմ կովում էին ընդամենը տասնյոթ զինատար հայդուկներ: Նրանցից մեկը Նիկոլ Տեր-Հովհաննիսյանն էր, որ կռվում էր միաժամանակ բոլոր դիրքերում, ուր ուժեղանում էր թշնամու ճնշումը: 17-ը հաղթեց 400-ին:

1895 թվականի աշնանը Սալմաստից դուրս եկավ զինատար հայդուկների 45 հոգիանոց մի խումբ: Խնդիրը միայն զենք տեղափոխելը չէր, Վանի ինքնապաշտպանությանը նաև կռվողներ էին պետք, և զինատարների մեծ մասը մնալու էր այնտեղ՝ մասնակցելու աղետի դիմագրավմանը: Զենք ու զի-

թվայնացրել է 1915.info կայքը

նամթերքով բեռնավորված հայդուկախումբը ղեկավարում էր 28-ամյա Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը: Վասպուրականի լեռներում ձմեռը շուտ է գալիս, հոկտեմբերն էր ու արդեն գագաթները ձյունոտվել էին, ձորերը լցված էին սառնաշունչ քամիներով: Պարսկա-թուրքական սահմանից այն կողմ հարկադրված էին առաջ գնալ ձնախառն բքերի միջով: Երևանցի Խեչոն մի քանի ուրիշ հայդուկների հետ գնում էր խմբի առջևից: Ջորափնյա ինչ-որ բացատում նրանք երես առ երես հանդիպեցին թուրք սահմանապահ ասկյարների մի հարյուրակի: Փոխհրաձգությունը տևեց միայն երեկո: Դա այն կռիվը չէր, որ զինատար ֆիդայիները հանդես գային քաջությամբ ու սխրանքներով, նրանց առաջնային խնդիրը զենքով Վան հասնելն էր: Երբ խավարն իջավ ու ծածկեց ամեն ինչ, Նիկոլ Տեր-Հովհաննիսյանը խումբը բաժանեց չորս մասի, երևանցի Խեչոյին, կաճեթցի Շերոյին և ղարաբաղցի Հարությունին հանձնարարեց երեքի ղեկավարությունը, իսկ մնացածին ինքն էր առաջնորդելու: Հրահանգեց տարբեր ուղիներով շրջանցել թուրքերով լցված տեղանքը, հավաքվել ձորի մյուս ափի կաղնուտում: Հրահանգը կատարվեց հաջողությամբ: Առավոտյան, հոգնած ու ցրտահար, զինատարները հասան մի գյուղ: Բողազքյասանն էր: Ուղիղ մեկ տարի առաջ այս կողմերով Վան էր անցել «Դերիկ»-ի զինատարների խումբը, որը ղեկավարում էր Վանի Պետոն: Նիկոլը, Շերոն, Հակոն և այժմ Վան գնացող մի շարք ուրիշ զինատարներ մասնակցում էին «Դերիկի» արշավանքին: Այդ ժամանակ նրանք շրջանցեցին Բողազքյասանը՝ իմանալով, որ գյուղում թուրք հարկահավաքներ կան: Սևքարեցի Սաքոյի խումբը Վանից Սալմաստ էր վերադարձել Բողազքյասանով և նրա մշուշոտ ձորում կատաղի կռիվ էր ունեցել թվով քառապատիկ ասկյարների հետ: Նահատակվել էր Սախոն՝ մանանդեցի Սահակը: Զինատարները տեղավորվեցին գյուղի մա-

թվայնացրել է 1915.info կայքը

ոտքերում: Ցրտից ընդարմացած մարմինները դեռ չէին տաքացել, երբ քրդական մի մեծ հրոսակախումբ պաշարեց նրանց ապրուստանող մարագները: Հրամայեցին թողնել զենքերը, դուրս գալ մարագներից: Հայդուկները պատասխանեցին ուժեղ կրակով: Նրանց գնդակներն անվրեպ էին, և կորուստներ կրող հրոսակախումբը դադարեցրեց անմիտ գրոհները: Քրդերն անցան փորձված ու դաժան միջոցին՝ հրդեհեցին մարագները: Ծուխը խեղդում էր զինատարներին, հարկավոր էր վճիռ կայացնել: Իսկ վճիռը մեկն էր. կրակելով դուրս նետվել մարագներից: Նիկոլը, ծխով ու բոցով պատված, առաջինը հարձակվեց պաշարողների վրա: Մի քանիսին ոտքերի տակ փռելով, ճեղքեց շղթան, դուրս եկավ գյուղից: Դումա՞ն, գոռում էին նրա տեսքից սարսափած քրդերը: Նրա հետ էին երևանցի Խեչոն և ղարաբաղցի Հարությունը: Թշնամին իրարանցման ու շփոթմունքի մեջ, զոհեր տալով, նահանջում էր վառվող շորերով մարագներից դուրս նետվող հայդուկների առաջ: Անվտանգ այրվածքներով ու վերքերով զինատարները հեռացան Բողազքյասանից, այնուհետև առանց անակնկալների հասան Վան: Իսկ քրդերի դուման (փոթորիկ) սարսափախառն արտահայտությունը հավիտյան մնալու էր Նիկոլի անվան կողքին, որպես այդ կռվի հպարտ հուշ և նրա խիզախ էության բնորոշում:

... 1896 թվականի ձմռան վերջերին Նիկոլ Դումանը իր խմբով Վանից վերադառնում էր Սալմաստ: Գալիս էր զենք ու զինամթերքի նոր պաշար տանելու: Նա չգիտեր, որ իրենց բացակայության ժամանակ Դերիկի վանքը նոր ասպատակության է ենթարկվել և այնտեղ գտնվող բոլորը կրկին տեղափոխվել են Ստեփանոս Նախավկա: Նաև չգիտեր, որ խմբի վերադարձը հայտնի է քրդերին և Դերիկի վանքում դարան է սարք-

թվայնացրել է 1915.info կայքը

ված: Զինատարները վանք հասան վաղ լուսաբացին, հոգնությունից ջարդված, ուժասպառ: Կրկնվում է Բողազքյասանի խիզախապատումը: Հրդեհի բոցերը լափլիզում են վանքի պատերը, ծուխը խեղդում է փիդայիներին: Նրանք անձնական զենքերի մեծ մասը թողել են Վանում, յուրաքանչյուր երկուսին հազիվ մեկ հրացան կամ ատրճանակ է հասնում: Նիկոլ Դումանը հրահանգում է չկրակել, դիմանալ ծխին, ներսում պահպանել մեռյալ լռություն: Այսպես մնում են այնքան, մինչև թշնամին սկսում է կասկածել, թե վանքում քնած զինատարների խումբը խեղդվել է ծխի ու բոցերի մեջ: Եվ այդ ժամանակ, ինչպես Բողազքյասանում, զինատարները կրակելով դուրս են նետվում, ճեղքում զգոնությունը կորցրած թշնամու շղթան: Տարիներ հետո Սևքարեցի Սաքոն իր ինքնակենսագրության մեջ գրելու էր. «Սալմաստից եկավ մեր սուրհանդակը և հաղորդեց, թե Վանից Դումանը իր 45 հոգուց բաղկացած խմբով ապահով հասել է Դերիկ, բայց Դերիկում առավոտից մինչև երեկոյան ժամը ինը խիստ կռվի մեջ են եղել: Սպանվել են Շերոն, Մանուկը և Հակոն: Քրդերը տվել են ինը զոհ և մի քանի վիրավոր: Կռվի մյուս օրը պարսից կառավարությունը գրեթե ամբողջ խմբին բանտարկեց: Դումանի խումբը բանտում մնաց մոտ երկու ամիս, վերջը ահագին կաշառքներով հազիվ ազատեցինք...»:

... — Ժամանակն է շարժվելու,— Սաքոյի հիշողությունն ընդհատեց տասնապետ Եփրեմը: Հայդուկները գիտեին նրա տխրության պատճառը և չէին ուզում խանգարել մտածումները: Բոլորն էին նեղացած Դումանի հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից: Բայց ժամը չէր այդ հարցը քննելու, հարկավոր էր շարժվել: Գնում էին տարբեր ուղղություններով: Սաքոն շարունակում էր խորհել Դումանի, կատարված արշավանքի մասին:

թվայնացրել է 1915.info կայքը

Հաղթանա՞կ էր դա, թե պարտություն: Խանասորի արշավանքը գուցե չպե՞տք է լիներ: Բայց ինչ հասկացնեին վրեժխնդրությունից ոռնացող արյանը: Թուրքական շահբանդարն իմացավ, որ Խանասորի ֆիդայիները վերադարձել, կրկին ապաստան են գտել պարսկական հողում և իր Թուրքիայի միջոցով տեղի կառավարությանը հարկադրեց հավաքել ու դատական պատասխանատվության ներկայացնել բոլորին: Բայց հայդուկներին գտնելն այնքան էլ հեշտ չէր:

— Սաքոն, Տաշոն և Սալմաստում նրանց միացած օրիորդ Սաթենիկ Մատինյանը օթևան գտան Փայաջուկ գյուղում, Րաֆֆու տանը: Նրանց պահում-պահպանում էր վիպասանի քույրը՝ Ջավահիրը: Մի քանի օր հետո, առավոտյան ժամը հինգին, ֆարրաշները շրջապատեցին տունը:

— Պիտի կովենք, ելք չկա,— ասաց Տաշոն:

— Ոչ, մեր պատճառով նրանք կվառեն տունը,— ընդդիմացավ Սաքոն:

— Այդ դեպքում ես և օրիորդը կհանձնվենք, մեր անցագրերը գուցե մեզ փրկեն, իսկ դու առայժմ մի երևա:

Նրանք դուրս եկան տնից: Տաշոյին անմիջապես ձերբակալեցին, իսկ Սաթենիկ Մատինյանը կարողացավ պաշտպանություն գտնել ռուսական դիվանագիտական մի պաշտոնյայի մոտ: Սաքոն գիտեր, որ գյուղի ծայրին ապրող բժիշկը իր տանը թաքցրել է մի խումբ ֆիդայիների: Ջավահիրը լուր բերեց՝ բժիշկը մատնված է: Սակայն նա ռուսահպատակ էր, տունը խուզարկելու համար անհրաժեշտ էր Թավրիզի հատուկ թույլտվությունը: Դա եղավ: Ձերբակալման սպառնալիքով բժշկին սաստելով, ֆարրաշները նրա տան նկուղից հանեցին հինգ ֆիդայիների: Նույն օրվա երեկոյան բժիշկը երկտող ուղարկեց Սաքոյին. «Իմ տունն արդեն կասկածից դուրս է, տեղափոխվիր

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ մոտ»: Երկու գիշեր մնաց բժշկի նկուղում, երրորդ գիշերամուտին ճանապարհ ընկավ: Հաջորդ լուսաբացը դիմավորեց Արաքսի մյուս ափին, Ջուլֆայում, և ճանապարհ ընկավ դեպի Էջմիածին:

... Պե՞տք էր. ասում է ճահճատակված ընկերների վրիժառությամբ տանջվող զինվորը: Ո՛չ. ասում է սթափ գիտակցությամբ առաջնորդվող զորագետը: Ի՞նչ կասի պատմությունը հարյուր տարի հետո...

* * *

Հետամնաց երկրների քաղաքակրթությունը պետք է որոնել բանտերի մեջ, բարոյականությունը՝ հասարակաց տների պատերի տակ: Եվ իր բանտարկության ընթացքում Սարգիս Տովանյանը Թուրքիան ճանաչեց՝ նրան դիտելով Մեթերլեմում կատարվող իրադարձությունների մոայլ շղարշների միջով: Ու որքան լավ ճանաչեց, այնքան պակասեց քաղաքակիրթ օրինականության նկատմամբ այնտեղից ազատվելու հույսը: Եթե հնարավոր է երկրի գործող ուժը ներկայացնել նրա բնակիչներից որևէ մեկի բարոյական խառնվածքի ու արտաքինի միջոցով, ապա Մըհեե չաուշը Թուրքիայի այդ ուժը մարմնավորող անմրցելի կերպար է: Տար նրան աշխարհի ցանկացած անկյունը, կանգնեցրու շքեղ ջահերով լուսավորված սրահում կամ խավար ժայռի վրա՝ միևնույնն է, անսխալ ու ամբողջական պատկերացում կհաղորդի իր երկրի ներքին զորության մասին: Կնայես դեղին բիբերով մանր ու խոր աչքերին և կիմանաս, որ այդ զորությունը նենգ է: Նեղ ճակատի մի քանի անորոշ կնճիռները կվկայեն, որ համաշխարհային փիլիսոփայության զարգացումը ընթացել է այդ ուժը կրողներից հեռու վայրերով: Կբացի դեղին ժանիքներով երախը՝ որպես անվիճելի ապացույց գործող ուժի

թվայնացրել է 1915.info կայքը

գիշատչական էության: Իսկ գորիլլայի երկար, այլանդակ ձեռքերը կպատմեն երկրի ներքին խնդիրների կարգավորման մեջ ուղեղ կոչվածի բացարձակ ավելորդության մասին: Այո՛, անվիճելիորեն սա էր Մեթերնեմի շղարշների միջով երևացող Թուրքիան: Կարինի ռուսական հյուպատոսի մահը անորոշ ժամանակով հետաձգեց երկրորդ դատավարությունը: Պոլսի պատրիարքարանի միջնորդականը ընդամենը սառն ու զուսպ հետաքրքրվում էր՝ ինչո՞վ է հաստատվում քաղաքական կալանավոր Ծովանյանի հանցանքը, արդյո՞ք թյուրիմացություն չկա նրա գործում, և այլն: Խեղճ, անհետևանք հարցումներ: Երևի թե պատրիարքարանն ավելին չէր էլ կարող անել: Քաղաքի դատախազը ոստիկանական քննիչ Մեհմեդ Չաուշի միջոցով կալանավորին ի պաշտոնե տեղյակ պահեց այդ մասին, ու վերջ: Սաքոյին չէր լքում «սեփական ուժերով» Մեթերնեմից հեռանալու գաղափարը: Բայց դա անհնարին էր: Մեթերնեմի պատմության ընթացքում նրա մահաշունչ խցերից միայն մեկ կալանավոր է փախել հսկիչին կաշառելով, որին նույն հսկիչը գնդակահարել է բանտի տարածքից չհեռացած և արժանացել պարգևի:

... Սևքարեցի Սաքոյին մենախցից տեղափոխեցին ընդհանուր բանտախուց: Հին ծանոթներից բացի կային նոր մարդիկ և նրանցից մեկը՝ Ղզըլաղաջի ռես Ներսոն, անմիջապես մտերմացավ Սաքոյի հետ:

— Ես քեզ ճանաչում եմ,— ասաց,— Ղզըլաղաջում ես տեսա, թե քեզ ու ընկերոջդ ինչպես ձերբակալեց Չագայիր աղան: Եթե գյուղն ով լինելդ իմանար, բերդաքի կառներ նրա ամբողջ խումբը, բայց մենք ոչինչ չգիտեինք...

Ամիսների ընդհատումից հետո կապը վերականգնվեց դրսի աշխարհի հետ: Մոկունք գյուղացի Եսթեր անունով մի աղջիկ, որի ձեռքով իր շնային մահն էր գտնելու Շաբաթը,

թվայնացրել է 1915.info կայքը

հաճախ էր այցելում իր բանտարկված հարազատին: Եսթերը նամակ բերեց Անդրանիկից: Ջորավարը հայտնում էր, որ Աղբյուրի ու նրա ֆիդայիների դավադրական սպանության համար ինքը մանվան է դատապարտել սասունցի Խալիլ փաշային և շուտով կգտնի նրան ու վճիռը կիրագործի:

Եկավ 1900 թիվը: Նամակ Դժոխք Հրապից: Սպաղանացց Մակարը Սերոբի վրեժն առնելու նպատակով հարձակվել է Խալիլ փաշայի ցեղի վրա, բայց նրան չի գտել աշիրեթում: Այնուհետև Մակարն ու Անդրանիկը վերջապես միանալով հնկտեղ են շարունակում հետամտել արյունարբու շանը և նրա մանվան վճիռը իրագործում են քրդախոս Մառնի գյուղի մոտակա ձորում: Ստոր դավաճանության համար արյամբ է հատուցում նաև ոես Ավոն: Թուրքական կառավարության՝ Սասունի խաղաղեցման ծրագիրը չէր իրագործվում: Խնձորիկ գյուղի բնակիչները իրենց ունեցած-չունեցածով քաշվել էին սարերը, քնդամենը երկու երիտասարդ էին մնացել գյուղը հրսկելու: Ֆիդայիների հետևից լեռները բարձրացող ասկյարների մի խումբ պիտի անցներ դատարկ Խնձորիկով: Երիտասարդները կրակում են, Անդրանիկի և Մակարի վերջին գործողություններից սարսափած հրամանատարը կարգադրում է թողնել իրենց վիրավոր ընկերոջը և երկու հրացանի առաջից նրա մեծ խումբն անկազմակերպ հետ է փախչում:

Սասունցիները ներփակվել էին իրենց անառիկ լեռնաբերդում՝ արհամարհելով կառավարության բոլոր պահանջներն ու սպառնալիքները: Նրանց դեմ թակարդներ էին լարում, բայց էին թողնում հայախոս լրտեսներ: Սրանցից մեկը՝ Սպաղանք գյուղի ոես Գասպարը, դարձավ սեփական ստորության զոհը: Վերջապես թուրք կառավարությանը հաջողվեց Մշո դաշտում ձերբակալել հավատորիկցի Կրպեհին: Նա պատանքը մեջքին, հրացանի հետ ամուսնացած ֆիդայի չէր, սակայն լավ

թվայնացրել է 1915.info կայքը

գիտեր ֆիդայական շարժման գործիչներին և 1894 թվի կոտորածի ժամանակ խիզախաբար կռվել էր Սասունի լեռներում:

— Քեզ ճանաչողներ կան, դու հավատորիկցի Կրպեն ես,— ասաց հարյուրապետը:

— Եթե ճանաչողներ չլինեին, չէիք ձերբակալի: Ես հավատորիկցի Կրպեն եմ, հետո՞:

— Ջանֆիդա ես ու քեզ պիտի կախենք:

— Ջանֆիդա չեմ և սպառնալիքը ավելորդ է, առանց այն էլ մենք գտնվում ենք խիստ անհավասար պայմաններում:

— Ջանֆիդա ես, բայց կարող ես կյանքդ խնայել, եթե անկեղծորեն ասես ամեն ինչ: Եթե հայտնես, թե Սասունից դուրս ո՞ւմ գիտես, որը մասնակցում է ֆիդայական գործողություններին, ո՞վ է նամակներ ուղարկում լեռները:

— Ես չիմացած բաներ ինչպե՞ս ասեմ:

Կրպեն ոչինչ չէր կարող իմանալ նամակների մասին, բայց լսել էր Սաքոյի անունը, գիտեր, որ նա բանտարկված է Մեթերհեմում և լեռների հայդուկներն իրենց գործողություններում հաշվի են նստում նրա հետ:

— Չիմացած բաներ պետք չի որ ասես, իսկ իմացածդ դուրս կհանեմ քո միջից:— Հարյուրապետը կարգադրեց խարույկ վառել: Ականջները քիչ հետո ներս բերեցին երկու պողացած շամփուրներ:

— Փամփշտակալների նման խաչեք կրծքին:

Այրվող մսի ճենճերահոտից բարձրացավ Կրպեի տանջալի գոռոցը:

— Սա միայն սկիզբն է, շարունակե՞նք, թե բան ունես ասելու:

— Ինձ իզուր եք խոշտանգում, աղա, ես չեմ ճանաչում ձեր փնտրած մարդուն: Ախր ինչո՞վ երդվեմ, որ հավատաք...

թվայնացրել է 1915.info կայքը

Երդումը սուտ չէր լինի, Կրպեն, իրոք, անձամբ չէր ճանաչում Սարգիս Ծովանյանին:

— Նեղություն մի քաշիր, ես թքել եմ քո երդումների վրա: Ահմեդ,— դարձավ ասկյարներից մեկին,— այս մարդը մեզ բան է ուզում ասել, բայց ատամները խանգարում են, որ խոսքը բերանից դուրս գա: Ի՞նչ է հարկավոր:

— Աքցան, օնբաշի էֆենդի: Վալին արդեն շիկացնում է կրակի վրա:

Հավատորիկցի Կրպեն երանի չհասկացար թուրքերեն: Ձեռքերը կապված չլինեին՝ կհարձակվեր հարյուրապետի վրա և ասկյարներից մեկն ու մեկը կկրակեր, մահով կփրկվեր գազանային խոշտանգումից: Բայց ոչ միայն ձեռքերը, այլև ինքն էր ամբողջ մարմնով կապված կաղնե ծանր աթոռին: Աքցան, և այն էլ՝ շիկացած: Ահմեդը ներս բերեց զարհուրելի գործիքը...

Կրպեն ուշքի եկավ մի քանի ժամ հետո:

— Կրակը լավ բան է, Կրպե, առանց կրակի մարդը մարդ չէր դառնա:

— Բայց քո ցեղում մի կրակ վառող չեղա՞վ, որ մի քիչ էլ դու մարդ դառնայիր:

Հարյուրապետը լսե՞ց նրան, թե բառերը մոլորվեցին-կորան բերանի ու շուրթերի վերքերի մեջ:

— Հը, շարունակե՞նք, այս մարդն իր ասելիքը չի կարողանում ասել, հիմա էլ լեզուն է ընդարմացել: Ի՞նչ անենք:

— Սովորաբար ընդարմացած տեղն ասեղով ծակում են, էֆենդի:

— Հիմա մենք էլ կփորձենք այդ ստուգված մեթոդը:

Կրպեի լեզուն աքցանով դուրս քաշեցին և նրա մեջ ասեղներ խրեցին, հետո Կրպեն խոսեց:

— Մեթերիեմ բանտում նստած է Սարգիս Ծովանյան

թվայնացրել է 1915.info կայքը

աճում-ազգանունով մի ռուսաստանցի: Անդրանիկը ու Մակարը հաճախ են նրանից նամակներ ստանում...

Եվ Կրպեն նորից կորցրեց գիտակցությունը:

Կրպեի խոստովանությունը հաստատեց Սաքոյի հանդեպ եղած կասկածը, ճշտեց, թե ով է դատախազի դեղին թղթապանակում պահպանվող գրությունների հեղինակը: Օրենքի պահապանը գտնում էր, որ պետական սահմանը խախտելու, անհայտ, սակայն պարզ է՝ ոչ բարի նպատակով ծոցում մահաբեր թույն կրելու համար Սարգիս Ծովագյանը լիովին արժանի է 101 տարվա ազատազրկման վճռին: Նա լրացուցիչ ցյութեր էր հավաքում Կարինում նախապատրաստվող դատավարության համար, որը երբևէ կայանալու էր: Եվ այդ ցյութերը ոչ այնքան կալանավորի դեմ էին, որքան՝ նրա երկրի: Դատախազը եղել էր Պոլսում և ապահովել Կարինի դատարանում պետական մեղադրողի իր թեկնածությունը: Համոզված էր, որ այնտեղ ավերիչ հաղթանակ կունենա, երկրի հեղինակությունը շոյող փայլուն մեղադրական ճառով կգինաթափի ռուսական հյուպատոսին, և այդ բանը չի վրիպի Բ դռան ուշադրությունից: Կանչեց ոստիկանապետին:

— Հոգ տարեք, որ կալանավորը լրիվ մեկուսացվի: Նրան գրկեք բոլոր առնչություններից: Փոքրիշատե կասկածվող հրսկիչներին փոխարինեք ուրիշներով: Աշխատեք պարզել նրա հարաբերությունները և այդ մասին զեկուցեք անձամբ ինձ: Միայն ինձ:

* * *

Մենախուց: Սաքոյի համար անհասկանալի էր վերաբերմունքի այս շեշտակի փոփոխությունը: Ինչո՞ւ նորից մենախուց: Նրանք ինչ-որ բան են պարզել, բայց ի՞նչ: Մեթերհեմի

թվայնացրել է 1915.info կայքը

խավար մենախցում փակված հեշտ չէր գուշակել, թե որտեղից է գալիս վտանգը: Ծանոթ հսկիչները չկային: Ոչ նամակ, ոչ հացի կապոց: Եթե նույնիսկ բանտի իր մեծահոգի բարեկամը՝ գեղապետ Սլոն չի կարողանում որևէ բան հասցնել, նշանակում է իրադրությունն անսպասելիորեն բարդացել է: Դռան փականքը կոպիտ շրխկոցով հետ գնաց:

— Հարցաքննության, գյավո՛ւր:

Քննիչը նոր մարդ էր, Սաքոն նրան առաջին անգամ էր տեսնում: Սկսեց առանց նախաբանի:

— Ինձ մի հարց է հետաքրքրում, կալանավոր: Ինչպես բազմիցս հայտարարել եք, դուք այս երկրում չունեք ոչ բարեկամներ, ոչ ծանոթներ: Բայց սնվում և հագնվում եք գեղապետից ոչ վատ, որքան հնարավոր է բանտում՝ ամեն ինչով ապահովված եք: Ես չեմ կարողանում մեկնաբանել այդ փաստը...

— Մի՞թե այդքան դժվար է: Իմ ողորմելի հագուստը չգիտեմ ինչու է ձեզ այդքան գրավել, իսկ սննդի հարցում ինձ օգնում է բանտային ընկերս՝ գեղապետ Սլոն: Մեկ-մեկ էլ փող է տալիս, չգիտեմ կարողանալո՞ւ եմ հատուցել այդ բարի մարդու լավությանը:

Քննիչը լրջացավ:

— Դուք այնքան միամիտ չեք, որ չիմանաք, թե ուր է մղվում իմ հարցը...

— Ես հրաժարվում եմ հարցաքննությունից: Ձեր կոլեգաները ձեզ պետք է ասեին, որ Սուլթան Համիդի հրովարտակով ապահովագրված՝ ես հարցաքննության եմ ենթարկվելու միայն իմ երկրի հյուպատոսի ներկայությամբ: Ես սա հայտարարում եմ երևի հազարերորդ անգամ...

— Եթե նույնիսկ հարցաքննությունը ձեր շահե՞րն է պաշտպանում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դա բացառվում է:

Քննիչը ճնչեցրեց սեղանի փոքրիկ զանգակը:

— Տարե՛ք սրան:

... Ցրոնքում Գուրգենի, Ռուբենի, Վարդենի, Փարսադանի, Տիգրանի, Կարապետի և Մկոյի ճահճատակվելուց հետո Սաքոյին պաշարած գիշերային հիվանդությունը — տեսլական մըղձավանջներ — խորանում էր: Նրա առջև դառնաթախիծ հայացքով կանգնել էր Աղբյուր Սերոբը:

— Դո՞ւ ես, Ախլաթի վագր: Վաղուց էի սպասում քեզ:

— Ես եմ, Սաքո:

— Անդրանիկն ու Մակարը քո վրեժն առան...

— Գիտեմ: Բայց դրանից ի՞նչ օգուտ, երբ ես չկամ, իմ եղբայր ֆիդայիները չկան, ու մարտնչող լեռներում թշնամու դեմ մեր տեղը դատարկ է: Մենք ինչո՞ւ չկարողացանք միաբան լինել, Սաքո: Մեր նախնիներն ինչո՞ւ չկարողացան միաբան լինել, և ժողովրդի կենսագրությունը, երկրի կենսագրությունը խոշտանգվեց անվերջ ողբերգություններով: Դու էլ չգիտես պատասխանը, Սաքո, դու միայն գիտես, որ եթե ես, Անդրանիկն ու Մակարը միաբան լինեինք, ոչ մի Խալիլ չէր կարող կտրել իմ գլուխը: Մեզ համար մտահոգվելը չափազանց ուշ է, գալիքն է ինձ մտատանջում, եղբայր, ի՞նչ է լինելու գալիքը: Նահատակվածներս արծիվներ էլ դառնանք Սասունի լեռներում, ոչինչ չենք կարող անել, մենք չկանք, գոնե Անդրանիկն ու Մակարն այսուհետ զենքով ու գաղափարով միաբան լինեն...

— Քո կորուստը միացրել է նրանց, Ախլաթի վագր:

— Թե որ այդպես լինի, ես երկնքից կհաշտվեմ նրանց հետ,— շշնջաց անփոփոխ դառը տխրությամբ:— Հիմա գնամ, իմ Հակոբ տղեկը Ծովասարի գլխին Արաբոյի աստղի տակ նստած ինձ է սպասում...

թվայնացրել է 1915.info կայքը

Աղբյուրն աճէացավ, և տարիների մշուշը դեմքին հայտնվեց Դերիկի Մովսես իշխան հայրենասերը:

— Հանգիստ, աբեղա, մի ցնցվիր: Դու ինձ չես կարող ոչ գրկել, ոչ համբուրել: Ես տեսիլք եմ, անշոշափելի գոյություն, լույսի ստվեր: Ես փոշիացա, և իմ սրտում խրված գնդակը զրնգոցով ընկավ դագաղիս հատակին: Ո՞ւր են զինատարներդ, Սաքո: Շերոն չկա, Պետոն չկա, Սախոն չկա, Վարդանը չկա, ո՛ւր են:

— Դու եկել ես ինձ իմ մեջ սպանելո՞ւ, Մովսես իշխան:

— Ոչ: Եկել եմ հիշեցնելու, որ Դերիկի բակի մեծ խաչքարն անտերությունից թեքվել է:

— Ժողովրդի բախտի խաչն է թեքվել, դու խաչքարի մասի՞ն ես մտածում:

— Հավատի մասին եմ մտածում, աբեղա: Վախենում եմ ապրելու հավատը խաչքարի հետ թեքված լինի:

— Դու վախկոտ չէիր, Մովսես իշխան:

Չպատասխանեց: Լաց եղավ, լաց լինելով անէացավ:

Նահատակները...

Աշխարհի բոլոր վայրերում նրանց շիրիմները պետք է ինքնաղողանջ զանգեր լինեին: Հատկապես դատարկված, կարոտյալ այն երկրներում, ուր երանելի հիշողությունների և հավերժական սիրո հետ միայն շիրիմներն են մնացել: Երբ Մեծ Հախտավորության ժամանակը գա, մենք նրանց որտե՞ղ ենք փնտրելու, ինչպե՞ս ենք գտնելու: Մշո դաշտի լուսնյակ գիշերում Գուրգեն կանչելով, ջրերի ամպոտ ակունքն ի վեր Արաքո ձայնելով, ձորերն ի վար Սերոբ հառաչելով ու դեպի երկինք Վարդան մրմնջալով չենք գտնի: Նահատակների շիրիմները պետք է ինքնաղողանջ զանգեր լինեին, որ թեկուզ վայրիացած հողի փուշուտատասկով ծածկված՝ ճնչեին ու, մենք աչքերս փակ, արցունքներս չսրբելով գնայինք դեպի այդ սըր-

թվայնացրել է 1915.info կայքը

բազուն կանչերը: Նահատակների շիրիմները դողաձեին... Օ, ինչ ցավոտ, ինչ հերոսական համաձվագ կբարձրաձար Տարոն աշխարհից: Շիրիմներն ինքնաղողաձը զանգեր չեն, ի՞նչ եկք աձելու, երբ Մեծ Բախտավորության ժամաձակը գա...

... Մենախցում գերեզմանային լռություն էր, և այդ լռության մեջ ճանճի միալար բզզոց կար: Սաքոյին թվաց, թե ճանճի միապաղաղ բզզոցն իր ուղեղից է բարձրաձում, մտածեց՝ երևի խելագարությունն այսպես է սկսվում: Ոչ, տաձջող աձորոշության ձայնն էր, որ տարածվում էր առաստաղի ածկյունի սարդոստայնից: Վաձդակապատ լուսամուտի միջով, ձմեռային գիշերվա խավարում, Սաքոն տեսնում էր փաթիլների հատուկենտ կայծկլտոց: Դրսում լիներ, ազատ լիներ, ոչինչ, որ ցրտի ու խավարի մեջ քամիներով ծեծկված: Սաքոն այնպես էր կարոտել բնության տարերքին, որ դրսում մեռած ու թաղված էլ լիներ՝ կզգար, թե ինչպես են փաթիլներն աձշշուկ հպվում իր գերեզմանին:

Տեսապատրաձքը կրկնվեց: Նա լաց լինող երեխաների ձայն լսեց, ու իրար հետևից ներս մտան քաղցած, դողահար որբերը:

— Ես Սարի Դավոյի Հարությիկն եմ, հիշո՞ւմ ես Քրդի ձորի լեռնախորշը...

— Ես Բարդուղիմեոս վանքի հրդեհից փրկված աղջնակը եմ...

— Ես Գարաճիսարի կոտորածից վիրավոր գլխով փրկված վանեցի մանչն եմ...

Որբերը... Տեսնես որտե՞ղ են նրանք հիմա, ո՞ւր են շպրտվել դեպքերի պայթյուններից: Եվ կենդանի՞ են: Եվ նրանցից որևէ մեկին կհանդիպի՞ կյանքում:

Որբերը...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Գիշերվա մեջ ամեն ինչ խորհրդավոր է՝ ծառի խշշոցը, թռչունի ճիչը, քարերին բախվող ջրի ձայնը, կիրճերում թափառող քամու ևվագը, նույնիսկ ամպերի խաղաղ սահքը լուսնի ու աստղերի տակով: Ամեն ինչում վտանգ է թաքնված, և հայդուկը պարտավոր է գերզգայուն լարումով գուշակել այն: Նա մի աչքը բաց պիտի քնի, մի ականջն՝ արթուն, ու միշտ ձեռքը հրացանին: Հրացան չկար: Ամեն անգամ Կովկաս վերադառնալիս Սաքոն մոսինը թողնում էր վանքում, ճանապարհ ընկնում տասկրականի մաուզերին ապավինած, որը ծոցում էր լինում, խուրջինի հակի մեջ կամ ցորենով կիսով չափ լեցուն ուսապարկում: Կաղնու լայնատարած ճյուղին, սաղարթների թանձր քողի տակ, ուռենու դալար ոստերով ճոճք էր հյուսված: Դա նրա հուսալի օթևաններից էր, ուր հայտնվում էր վաղ լուսաբացին, գիշերային ճամփորդությունից հոգնած, և հանգստանում մինչև մութն ընկնելը: Վաղուց ժամն էր ճանապարհը շարունակելու, բայց նա չէր շտապում: Սպասում էր ձայնի կրկնվելուն: Հայդուկի լսողությունը չէր խաբում, դա երեխայի լացի ձայն էր և, ներքին մի զգացում հուշում էր՝ հա՛յ երեխայի: Ձորի դիմահայաց լանջին քրդական մի քանի վրանևներ կային, որ վաղուց սուզվել էին խավարի մեջ: Ձայնը, սակայն, վրաններից կողմից չեկավ, այլ, որոշակիորեն լսեց, մըթնակոխ ձորից: Բնության մարդու ուժեղ բնազդով նա ունկընդրում էր ամեն շշուկ, ամեն ծկլթոց: Քանի՞ ժամ մնաց այդպես — դեմքը կաղնու ճյուղին հպած, հայացքը խավար ձորին: Եվ ձայնը կրկնվեց: Մղձավանջային քնից վեր թռածի վախեցած, լացախառն ճիչ էր: Սաքոն իջավ ծառից, խարխափելով գնաց ձայնի ուղղությամբ: Լպրծուն քարերի վրա սայթաքելով անցավ սրընթաց առուն, դուրս եկավ աղբյուրի մոտ: Եվ աղոտ լուսնա-

թվայնացրել է 1915.info կայքը

լույսի տակ տեսավ մեկին, որ մի ձեռքին կապոց, մյուսին՝ կրակի պատրաստ հրացան, իջնում էր աղբյուրի արահետով: Հրացանի խզակոթին սադափի հատիկներ էին կայծկլտում, պարզ երևում էր հետ քաշված շնիկը: Յուրաքանչյուր շարժում ու շշուկ կպատասխանվեր կրակոցով: Արահետն անցնում էր այն քարի մոտով, որի հետևում, շունչը պահած, թաքնվել էր Սաքոն: Անկասկած, ինչ-որ կապ կա գիշերային այս զինավորի և երեխայի լացի միջև: Երբ անցնում էր Սաքոյին պատըսպարող քարի մոտով, վերջինս ճարպիկ ոստյունով հայտնվեց խորհրդավոր գիշերագնացի հետևում և մատուզերի փողը սեղմեց թիկունքին:

— Չշարժվես: Գցիր հրացանը:

Եվ, չսպասելով նրա կամավոր զինաթափմանը, ուժեղ խփեց հրացանը բռնած ձեռքի դաստակին: Անծանոթը կարճ, վայրի ճիչ արձակեց, ու Սաքոն ապշահար ընկրկեց. նա տղամարդու շորերում ծպտված դեռատի կին էր: Բռնել էր ցավող դաստակն ու էգ հովազի կատաղի հայացքով նայում էր հակառակորդին:

— Ո՞վ ես, ո՞ւր ես գնում:

Կինը չէր հասկանում կամ չէր ուզում պատասխանել: Սաքոն հարցումը կրկնեց իր քիչումիչ քրդերենով:

— Իսկ դո՞ւ ով ես, ինչո՞ւ ես կանգնել իմ ճամփին:

— Անցորդ եմ, քույրիկ, այս կողմերից մի ձայն ինձ թեքեց ճամփից, բերեց այստեղ: Ներիր, ես չէի ուզում քեզ ցավ պատճառել, ի՞նչ իմանայի, որ կին ես:

— Թուրք չես, ուրեմն հա՞յ ես:

— Հայ եմ:

— Վերցրու հրացանն ու արի իմ հետևից:

Սարգիսը վերցրեց արահետի եզրին ընկած հրացանը, գնդակը հանեց փողից, հետևեց քրդուհուն: Վերջինս առանց

թվայնացրել է 1915.info կայքը

հետ ճայելու թեքվեց արահետից, թփուտների արանքով բարձրացավ, մտավ մի լեռնախորշ: Ձեռքը պարզեց, քարերի արանքից գիհու կիսայրված ճյուղ հանեց, ինչ-որ հնարքով վառեց և արդեն կռացած շարունակեց առաջանալ: Դեմ առած խորշը փակող պատի:

— Պահիր:— Առանց շրջվելու հետ պարզեց գիհու ճյուղը, սկսեց իջեցնել պատի քարերը:

Երկու-երեք տարեկան մի աղջնակ, քրջերի մեջ փաթաթված քնած էր խորշի անկյունում: Նրա մոտ պահապան հրեշտակի պես չոքել էր հազիվ յոթ տարեկան մի մանչուկ և փայլուն դանակը ձեռքին, արծվաձագի կռնչյունով ճայում էր քանդվող պատին:

— Քեզ ճամփից թեքող ձայնն այստեղից է հնչել:— Քրդուհին մի կողմ հրեց պատի վերջին քարն ու կապոցը դրեց տղայի առաջ, խսիրին: Նրա ձայնից աղջնակն արթնացավ, նստեց տեղում և քնաթաթախ, պլշած աչիկներով ճայում էր եկվորներին: Կասկած չկար, որ նրանք հայեր են:

— Ինչպե՞ս են հայտնվել այստեղ...

— Չգիտեմ: Ես նրանց չորս օր առաջ եմ աղբյուրի մոտից բերել այստեղ, բայց թե ովքե՞ր են, ինչպե՞ս են ընկել այս կողմերը, չգիտեմ: Հոգնած ու քաղցած, ցրտից դողալով կուչ էին եկել աղբյուրի մոտ: Չէի կարող վրան տանել, որովհետև հայի երեխաներ են, իսկ հայերը դրանից երեք օր առաջ սպանել էին իմ մարդուն: Եղբայրները կմորթեին սրանց:

— Ինչո՞ւ են սպանել...

— Նա ինձ չլսեց: Ես նրան ասացի՝ մի գնա, հայը քեզ կսպանի իր թոնրի շրթին, իր երեխայի օրոցքի մոտ և նույնիսկ անիծելու իրավունք չեմ ունենա: Չլսեց, ընկավ իր հորեղբայր Զրմոյի խելքին ու գնաց: Իբր Զրմոն մի տան մեջ ոսկու տեղ գիտեր: Թուրքերն ավերել էին գյուղը, բնակիչներին կոտորել,

թվայնացրել է 1915.info կայքը

հատուկենտ փրկվածները սար էին բարձրացել: Տուն են մտել՝ սարից գիշերով իջած տանտեր հայը հրացանը ծնկներին ընտած է եղել օդայում: Հրացանը դատարկել է Զրմոյի կրծքին, իսկ մարդուս խանչալով է սպանել: Ինչ անեմ, անիծելու տեղ չունեմ: Տար այս երեխաներին քեզ հետ, այստեղ նրանց համար վտանգավոր է: Դեռ երեկ մերոնցից մեկն ասում էր, թե ձորից լացի ձայն է լսել: Փոքրը շատ է վախեցած, ճչում է երազի մեջ: Բարին ձեզ հետ:

Քրդուհին վերցրեց հրացանն ու դուրս եկավ:

— Քեռի, դու հա՞յ ես:— Տղան հուսավառ աչքերով նայում էր Սաքոյին:

— Հայ եմ: Մի վախեցեք, բալիկներս, ես ձեզ այս մութ ձորից կտանեմ հեռու, արևոտ մի տեղ, ուր ոչ թուրք կա, ոչ մահ: Իսկ դուք ովքե՞ր եք:

— Իմ անունը Հարութիկ է, սա էլ իմ քույրիկն է, Արծվիկը: Մեր հայրը Սարեցի Դավոն է, չգիտենք հիմա կենդանի է, թե մեռած: Մեր մայրը մեզ առել, փախցնում էր բինաև հրդեհած թուրքերից: Նա հիվանդ էր: Երկու ձոր այնկողմ քցել էինք ժայռի տակ, ես ու Արծվիկն արթնացանք, նա չարթնացավ: Ես փափուկ մամուռով ու կանաչ տերևներով ծածկեցի մայրիկին և Արծվիկին շալակած հասանք այստեղ: Ուրիշ բան չեմ հիշում: Արթնացա քարանձավում, Արծվիկի լացի ձայնից: Նա մայրիկին էր ուզում: Հետո քրդուհին մեզ թան էր խմեցնում: Նա հաց տվեց մեզ և հասկացրեց, որ այստեղից դուրս չգանք:

Լույսը բացվում էր: Սարգիս Ծովանյանը չէր կարողանում որոշել հետագա անելիքը. ո՞ւր տաներ երեխաներին, ի՞նչ աներ: Մինչև պարսկական սահմանը կես օրվա հանապարհ էր, բայց վստահ չէր, թե տեղ կհասնեն առանց պատահարների: Ինքն այլևս իր գլխի տերը չէր, պատասխանատու էր երկու որբ երեխաների կյանքի համար և պարտավոր էր գործել ծայրահեղ

թվայնացրել է 1915.info կայքը

խոհեմությամբ՝ խուսափել ընդհարումներից, հրաժարվել անվրեպ մաուզերի «ախպերությունից»:

Նա դուրս եկավ տեղանքը զննելու: Աղբյուրի մոտ դատարկ խուրջինը մեջքին մի սպիտակ ջորի մամուռ էր կրծում: Տերը, մի անատամ ծերունի, չոր հացը ջրում թրջելով էր զբաղված:

— Բարի լույս,— ասաց թուրքերեն:

Ծերունին սլատասխանեց առավել վատ թուրքերենով: Նա պարսիկ էր:

— Ի՞նչ ես անում այս կողմերում, ո՞ւր ես գնում:

— Խեցեղեն էի բերել քրդերին վաճառելու,— հասկացրեց,— հիմա, թե որ աստված կամենա, տուն եմ վերադառնալու, թուրքա-պարսկական սահմանագլխի մեր գյուղը:

— Աստծո բարությանն ապավինելու համար պետք է բարի գործ անել...

— Ի՞նչ գործ, ջանֆիդա, ասա լսեմ: Ինչո՞վ կարող եմ արժանանալ աստծո բարությանը:

— Այստեղ երկու որբ, հիվանդ երեխաներ կան, պետք է հասցնել Պարսկաստանի սահմանը: Կամ ջորիդ վաճառիր ինձ, կամ ինքդ տար: Լավ կվարձատրվես...

Ծերունին մի փոքր մտածեց, և՝

— Որտե՞ղ են նրանք, բեր: Հարցնողին կասեմ թոռներս են: Վճարդ էլ քեզ պահի, երեխաներն ազգությունից ու հավատքից դուրս են, նրանց վրա չի կարելի առևտուր անել...

Արծվիկին մի քարի հետ տեղավորեցին խուրջինի մի հատկում, Հարութիկին՝ մյուս: Նրանք պիտի գնային բանուկ ճանապարհով, իսկ Սաքոն նրանց ուղեկցելու էր հեռվից հետու, ճամփամերձ թփուտներից հսկելով ծերունու և երեխաների անվըտանգ ընթացքը:

թվայնացրել է 1915.info կայքը

Երկու ձիավոր ասկյարներ հանդիպեցին, անխոս անցան, ոչինչ չկասկածեցին: Մի քանի ժամ ճանապարհը գրեթե դատարկ էր: Ցորեն բարձած ավանակով մի թուրք գյուղացի անցավ, չադրայով մի կին՝ 10—12 տարեկան աղջնակի հետ, և կորած անասուն փնտրող մի քուրդ պատանի, որը հաց խընդրեց պարսիկ ծերունուց: Հետո, երբ ճանապարհը գալարվելով բարձրանում էր կիրճից, միաչքանի տասնապետի առաջնորդությամբ երևաց ասկյարների մի խումբ:

— Ո՞վ ես, ո՞ւր ես գնում, ծերուկ,— ձիու սանձը քաշեց տասնապետը:

— Աշխատավոր մարդ եմ, աղա, հիվանդ թոռներիս էի բերել բժշկելու, բայց ոչինչ չօգնեց:

— Ի՞նչ հիվանդ են թոռներդ:

— Ընկնավոր են ծնվել: Ասացին այս կողմերում հեքիմ կա, որը բուժում է նման հիվանդներին: Տասնհինգ օր տանջեց երեխաներիս ու բան դուրս չեկավ:

— Դու թուրք չես, ի՞նչ ազգ ես, որտեղացի՞ ես:

— Թուրք չեմ, պարսիկ եմ:— Ծերունին տվեց սահմանամերձ մի գյուղի անուն, որը Թուրքիայի տարածքում էր, սակայն պարսիկներով բնակեցված:

Մամխի թանձր թփի միջով Սարգիս Ծովանյանը հետևում էր նրանց խոսակցությանը: Ասկյարները խթանեցին ձիերը, փոշու ամպ բարձրացնելով հեռացան:

... Մայրամուտ թեքվող արևը հրդեհել էր գագաթների բուսչափ ձյուները, երբ լեռան ստորոտին երևացին իրար ապավինած մի քանի տասնյակ խեղճ, գետնափոր տնակներ:

— Հասնում ենք մեր գյուղ, ջանֆիդա, հետո ո՞նց ես տանելու այս երեխաներին:

— Չգիտեմ: Թող շնորհակալություն հայտնեմ և վճարեմ չարչարանքիդ համար:

թվայնացրել է 1915.info կայքը

— Աստծո բարությանն արժանացա՝ հերիք է, ուրիշ վարձ չեմ ուզում:— Դառը քմծիծաղ կար ծերունու դեմքին:— Միայն թե ափսոս, ոչ աստծուն եմ հավատում, ոչ նրա բարությանը: Աստված չկա, ջանֆիդա, դու էլ մի հավատա: Կա երկնային դաժան, վայրի ուժ, որ հոգու և մարմնի ավերմունք է անում երկրի վրա: Ջորին իմը չէ, իմը լիներ քեզ կտայի: Դուք այստեղ մի քիչ հանգստացեք, ես հասնեմ գյուղ ու հետ գամ:

Երեխաների ոտքերը թմրել էին խուրջինի հակերում երկար կծկված մնալուց: Քաղցը վաղուց զգացնել էր տալիս: Հարությիկը տղամարդավարի դիմանում էր, բայց Արծվիկ աղջնակը թշերն ուռցրել, ուր որ է լաց էր լինելու: Իրիկնացուրտ էր բարձրանում: Սաքոն նրան փաթաթեց իր տաք բանկոնում, տափաշշում մնացած ջուրը խմեցրեց, ու — երեխաների հետ երբեք գործ չէր ունեցել, չգիտեր է՛լ ինչ անի, որ լաց չլինի:

— Այսպես գնալով ո՞ւր պիտի հասնենք, քեռի,— թմրած ոտքերը շփելով հարցրեց Հարությիկը:

— Հասնելու ենք Արաքսին, անցնենք մյուս ափը: Այնտեղ դուք ապահով կապրեք, մինչև ձեր հայր Սարի Դավոն թուրքերից ձեր տան, ձեր մոր վրեժն առնի ու գա ձեզ հետ բերի:

— Մեր հայր Սարի Դավոն որտե՞ղ կլինի հիմա...

Հարությիկը, ինչպես դժբախտություն տեսած բոլոր երեխաները, գիտակցությամբ առաջ էր անցել իր տարիքից և ամեն ինչ հասկացող տխուր աչքերով նայում էր անծանոթ հեռուներին: Գուցե նրա մաքուր-մանկական հոգին գուշակում էր, որ մինչև կյանքի վերջն այլևս չի դառնալու հարազատ վայրերը, որ արյունը պիտի կարոտից ոռնա, սիրտն անարդարության մղձավանջից տնքա ու իր համար հավիտենական գաղտնիք մնա՝ իր հայր Սարի Դավոն սպանվե՞ց թուրք ու հրդեհի այն սարսափելի գիշերը, թե՞ կովելով սարերը բարձրացավ, հետ եկավ և անտեր մորմոք դարձավ այրված տան մոխիրներում...

թվայնացրել է 1915.info կայքը

Արծվիկը լաց եղավ: Եղբայրը մեծավարի գգվեց նրան, տունն ու ծնողներին հիշեցնող բառերով հուսադրական խոսքեր շշնջաց ականջին: Երեխան խաղաղվեց, քուն մտավ կոշտ բանկոնի մեջ: Դեմքին երանելի ժպիտ կար. ի՞նչ երազ էր տեսնում...

Պարսիկ ծերունին չուշացավ: Կաշվե տոպրակի մեջ հաց էր բերել, մի կտոր աղ դրած միս, տափաշշով կաթ:

— Դե, բարին ձեզ հետ, ջանֆիդա: Այստեղից դեպի աջ Սալմաստն է, դեպի ձախ՝ Արաքսի հովիտը: Այս կողմերի քրդերը արյունարբու չեն, կարող եք գնալ բանուկ ճամփաներով:

Ծերունու խորհուրդներն ավելորդ էին, Սարգիս Ծովանյանը հրաշալի գիտեր այդ վայրերն ու տեղի բնակիչներին: Նրան այլ բան էր մտատանջում. ո՞ւր տանի երեխաներին, Դերիկի վա՞նք, թե Արաքսի արևելյան ափը: Գիտեր, որ վանքում խառն օրեր են: Ծաղիկ Մատինյանն ամուսնացել էր Արղությանի հետ, մնացել Թիֆլիսում: Զինատարներին խորհուրդ էր տրվել առժամանակ խուսափել Դերիկի վանքից, մինչև մոռացվեին նրա շուրջը թափառող չարաշշուկ կասկածները: Մի քանի վանականների ու ծառայողների համար առանց այն էլ շատ հոգսեր կային աստծո տանը, արժե՞ր նրանց պարտադրել նաև որք երեխաների խնամքը: Ոչ, ինքն այդ իրավունքը չուներ: Ու ելքը մեկն էր:

... Արաքսի պարսկական ափին հիմա էլ կա թփուտներով քողարկված այն քարանձավը, ուր Սարգիս Ծովանյանը հանգրվանում էր ծանր զինաբեռով գետն անցնելուց հետո կամ Կովկաս վերադառնալիս՝ սպասելով մութն ընկնելուն: Հազարավոր տարիներ մոայլ հայացքով Ջուղայի սարերին նայող այդ ապաստանը զինատար հայդուկի համար դարձել էր հարազատ օջախի պես մի բան, ուր նա տիրոջ զգացում էր ունե-

թվայնացրել է 1915.info կայքը

ճում: Ստիպված էին երկու օր սպասել, որովհետև գետի մյուս ափին զորավարժություններ էին կատարվում: Երրորդ գիշերը որբերին գրկած, շամբուտի միջով մտավ Արաքս: Մայր գետը որոգայթներ չմատուցեց իր զավակներին...

* * *

Մեթերհեմի խոնավ բանտախցում Սարգիս Ծովականյանը հիշում էր որբերին և տագնապում նրանց ճակատագրի համար: Սևքարում դեռ հարատևո՞ւմ է Մարոյի որբանոցը, թե՞ նրանք՝ վիրավոր հողի այդ մի բուռ տխրաչ ծաղիկները, ցաքուցրիվ շաղ են եկել Կովկասով մեկ: Մայրն ասում էր. «Դեռ չամուսնացած՝ ձեզ այսքան որբերի տեր դարձրիք, հետո ի՞նչ է լինելու»: Հետո... Ո՞վ իմանա, թե հետո ինչ է լինելու: Հարությիկին ու Արծվիկին հանձնել էր մոր գթությանը, զինաբեռով հետ վերադարձել: Սպասում էր զինատար ընկերներին, որպեսզի խումբ կազմեին Վան ուղևորվելու համար: Ուշ գիշերին վանք եկավ խելագար քուրդ Հազրոն: Հաց չկերավ, թեյ չուզեց, ասաց՝ կուշտ եմ, Սեյրանի հետ խավրծիլ ու մանանա եմ կերել սարում: Ասաց՝ ուրիշ բանի համար եմ եկել:

— Մեր քրդերը չգիտեմ որտեղից հինգ հայ տղա երեխաներ են բերել, որ իրենց համար հոտաղ դառնեն կամ չգիտեմ ինչ անեն: Փակել էին թաղիքե վրանում: Ինձ համար թաղիքե պատն ի՞նչ. ներս մտա, հինգին էլ հանեցի: Երկուսը, որ մյուսներից մեծ էին, ձորերն ընկան, փախան:

— Իսկ մյուսնե՞րը, Հազրո, որտե՞ղ են մնացած երեքը,— վեր թռավ վարդապետը:

— Հետու չեն: Ինձ մի շապիկ կտա՞ք...

— Տվեք, ինչ ուզում է, ու մեկդ հետը գնացեք, գուցե ճիշտ է ասում,— կարգադրեց Բագրատ Թավաքալյանը:

թվայնացրել է 1915.info կայքը

Յոթ-ութ տարեկան երեք տղա երեխաներ վախվորած կուչ Լին եկել վանքի պարսպի տակ: Կփախչեին, եթե անճանոթ վայրի գիշերային սարսափը չլիներ: Քրդերը նրանց առևանգել էին Վարագա սարի լանջերից, խավրծիլ հավաքելու ժամանակ: Երեխաները մինչև աշնանամուտ մնացին Դերիկում, հետո, երբ վանքի գլխին դարձյալ սև ամպեր էին կուտակվում, Բագրատ վարդապետ Թավաքալյանը կանչեց Սևքարեցի Սաքոյին:

— Երեխաներին պետք է հեռացնել վանքից:

— Եվ ո՞ւր տանել:

— Արաքսի այն ափը, Ռուսահայաստան: Այնտեղ նրանք չեն կորչի:

— Արաքսը հիմա սառն է ու պղտոր, վարդապետ:

— Գիտեմ: Դու առաջին անգամ չես անցնելու սառն ու պղտոր Արաքսի միջով:

Գարահիսարի լանջին և ս. Բարդուղիմեոս վանքի ձորում վանեցիների կոտորածից հետո շրջակա լեռնաշխարհի թփուտներում ու անձավներում վիրավոր թռչունների պես որբեր էին մղկտում: Մազապուրծ եղած հատուկենտ երեխաներ: Սարգիս Ծովականյանը վանքի սպասավորի հետ սար ու ձոր էր ընկել նրանց հավաքելու հույսով: Հետո եղավ նրա ամենաստխուր վերադարձը Ռուսահայաստան: Սևքար հասցրեց վանեցի վեց որբերի, որոնցից երկուսը վիրավոր էին:

Նրանց բազմանդամ ու կարիքավոր ընտանիքը անկարող էր խնամել տասնմեկ որբուկներին: Սևքարից հաջորդ օրը Սաքոն մեկնեց Թիֆլիս, Մարոյի մոտ:

— Հանգամանքները պահանջում են, որ դու առժամանակ տեղափոխվես Սևքար:

— Ինչո՞ւ...

— Կազմակերպելու որբերի խնամքը:

— Ի՞նչ որբեր,— չհասկացավ Մարոն:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես քեզ չեմ ասել: Արևմտահայաստանից վերադարձներիս ժամանակ ես ինձ հետ որբ երեխաներ եմ բերել: Նրանք արդեն տասնմեկն են: Երեկ Ղևոնդ քահանան գյուղի անունից խոստացավ նրանց հարազատի պես պահել-պահպանել: Բայց երեխաների մեջ հիվանդներ կան ու վիրավորներ, դո՛ւ ես հարկավոր այնտեղ, Մարո:

— Իսկ զենքի հայթայթման գո՞րծը...

— Դա կարվի առանց քեզ: Ես ինքս կզբաղվեմ:

Երկու օր հետո Սարգիսը մեկնեց Տուլա՝ զինագործարանի ծանոթ բանվորներից զենք գնելու: Ծանր բեռով Թիֆլիս վերադարձավ մեկ շաբաթ անց: Մարոն որբերի մասին պատմել էր հորը: Սանդրո Ղարաքեշիշյանը ոչինչ չէր խնայել: Նախասենյակում Սարգիսը տեսավ մթերքների, հագուստի ու դեղորայքի բազմաթիվ կապոցներ:

— Ես կառք եմ պատվիրել: Եթե չուշանար, մենք այստեղ չէինք հանդիպի,— ասաց Մարոն:

Սևքար գնացին միասին: Քահանան որբերին բաժանել էր գյուղի տների վրա, իսկ նրանք, արյունոտ մղձավանջներից դեռ չազատագրված, ապավինել էին միմյանց, չէին ուզում անջատվել իրարից:

— Այսպես դժվար կլինի թե՛ որբերի, թե՛ նրանց խնամողների համար, հայր սուրբ:

— Ի՞նչ ես առաջարկում, զավակս, ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

— Նրանց առանձին ծածկ է հարկավոր, նրանք միատեղ պետք է լինեն, որ շատ չխեղճանան,— բացատրեց Մարոն:

— Որքանո՞ց...

— Որքանց: Անունն այնքան էլ կարևոր չէ:

Քահանան երկար մտմտում էր: Հետո, ինչ-որ բան հիշելով, ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Գնանք: Այդպիսի մի ծածկ կա՛ գյուղում, գնանք տեսեք հարմա՞ր է:

Այնքան էլ հարմար չէր, ամրացման, նորոգման խիստ կարիք էր զգում:

— Առաքել,— Սաքոն դիմեց եղբորը,— վարպետներ կանչիր: Իմ անունից: Լավ վարձատրություն խոստացիր:

Երկու օրում հին, լքված տունը դարձավ օգտագործման պիտանի: Վարպետները հրաժարվեցին իրենց աշխատանքի վարձից, թիթեղագործն իր ձեռքով պատրաստած վառարան տեղադրեց ներսում, անտառապահը եզնասայլով ցախ բերեց:

— Այսքանով չպրծանք, հայր սուրբ,— Սարգիսն ու Մարոն դարձյալ մտահոգ էին:— Երեխաները հո չե՞ն կարող գիշեր-ցերեկ կուչ գալ վառարանի շուրջը: Օգնենք, որ կազմակերպենք կենցաղային իրերի համագյուղական հանգանակություն...

Բերեցին ով ինչ կարող էր՝ խսիր, վերմակ, նավթալամպ, բարձ, փայտաշեն մահճակալներ, և Մարոյի հրահանգով կահավորված որբատունը պատրաստ էր: Ու դարձյալ ամեն ինչ չէ, որ արված էր: Երեկոյան Սարգիսն ու Մարոն նստած էին գյուղի մեծահարուստ Ստեփան Մկրտումյանի տանը:

— Դուք հարյուրավոր կովեր ու ոչխարներ ունեք: Ազգասիրությունը պահանջում է, որ ձեզ վրա վերցնեք որբ երեխաներին կաթնամթերքով ապահովելու գործը:

Մեծահարուստն ապավածից ավելի պատրաստակամություն ցուցաբերեց.

— Վաղը ես ինքս էի առաջարկելու իմ օգնությունը: Ունեմ ու չեմ խնայի: Որբատանն եմ տրամադրում հինգ կով, ամեն ամիս նրանց համար կմորթվի մեկ ոչխար: Բուրդ տամ՝ թող գյուղի կանայք գուլպաներ ու ձեռնոցներ գործեն, կաշի տամ՝

թվայնացրել է 1915.info կայքը

տղամարդիկ տրեխներ կարեն: Փող տամ, ցորեն տամ: Ամեն ինչով պատրաստ եմ ծառայելու...

Մեկուկես տարի, մինչև որբերին Թիֆլիս տեղափոխելը, Սևքարի այդ ուսնուր մարդը իր խոսքի տերը եղավ: Համագյուղացիների գիտակցության մեջ հարուստ և շռայլ բառերը երկար ժամանակ չէին տեղավորվում կողք կողքի, հետո իմացան, թե ինչումն էր գաղտնիքը: Գաղտնիքը նրանումն էր, որ հարուստ մարդկանց մեջ էլ կարելի է մեծ հայրենասեր հայտնաբերել:

Ութ օր մնացին Սևքարում: Մարոն ի՞նչ ուրախ երեկոներ կազմակերպեց որբերի համար, ինչե՞ր պատմեց հեռավոր կըղզիների, խիզախ մարդկանց մասին: Գտնվեցին կանայք, ովքեր քահանայի խորհրդով համաձայնեցին դառնալ որբանոցի խոհարար ու լվացարար: Գյուղն էր նրանց ընդհանուր միջոցներով վարձատրելու: Ո՞վ իմանա, այդ որբերից գուցե մեկը դեռ ապրո՞ւմ է այս աշխարհում և հիշում է այս ամենը...

* * *

Առաստաղին կպած մի թզաչափ պատուհան, որտեղ երբեմն-երբեմն առկայծում է Արաբոյի աստղը: Դուռը պահպանում է վերջերս հսկիչ ընդունված մի կակազող թուրք: Օրը մի քանի անգամ նա դունչը ներս է հրում նեղլիկ պատուհանից ու ոսկի պահանջում՝ խոստանալով փոխարենը շուկայից հաց ու ժաժիկ բերել:

— Ո-ոսկի տուր, գյա-գյա-գյավուր...

Այդ ջարդված, փսլնքոտ ձայնը ծանոթ էր Սաքոյին: Ե՞րբ, որտե՞ղ էր լսել: Օրեր անց, երբ թուրքը դարձյալ ոսկի էր ուզում, Սաքոն հիշեց նրան: Ավելի ճիշտ՝ նրա ձայնը: 1897 թվի ամ-

թվայնացրել է 1915.info կայքը

ռանց էր, Փայաջուկում: Թաքնված էր Բաֆֆու տան նկուղհարդանոցում: Թուրքական կառավարության պահանջով Սալմաստի նահանգապետը հրամայել էր «մաքրել» ամբողջ նահանգը, հայտնաբերել Խանասորի արշավանքից հետո գյուղերում թաքնված հայդուկներին: Չորս-հինգ հոգի ամեն առավոտ կանգնում էին դարբասի առաջ, և մեկը հարցնում էր.

— Գյա-գյա-գյավուրներ չե՞ն երևացել:

Ինչպե՞ս է հասել Մուշ ու Մեթերհեմում հսկիչ դարձել, ո՞վ գիտե:

Թուրքին ո՞վ էր ոսկի տվել: Գիշերային հերթապահության ժամանակ դռան դիտանցքից ներս գցեց թղի մի փոքրիկ կծիկ: Սաքոն քանդեց կծիկը և նրա մեջ գտավ երկու նախադասությունից բաղկացած անստորագիր մի նամակ: «Վանեցի բարեկամի ուղարկած մթերքն ու նամակը չընդունես: Պոլսի պատրիարքարանը նորից է քո գործով դիմել Բ դռանը»:

Վանեցի բարեկամի նվերը չուշացավ: Երկու օր հետո ատամնաթափ թուրքը դռան ճեղքից ներս հրեց մի կապոց.

— Քո վանեցի բարեկամներից մեկն է ուղարկել, գյավուր: Մաղարիչ տուր:

Սաքոն ոտքով խփեց կապոցին: Կապը քանդվեց, ու ամբողջ պարունակությունը դուրս թափվեց դռան արանքից, պաուրի ու խաշած մսի կտորներ գլորվեցին միջանցք:

— Տար, տուր քո բանտապետին և ասա, որ այս երկրում ես ոչ մի բարեկամ չունեմ:

Ակնյարն անորոշ մռլտաց և ակնհայտ շփոթվածությամբ շտապ-շտապ հավաքեց կապոցը: Նրանում, իհարկե, նամակ կար, պատասխան ակնկալող նամակ, ու հետաքրքիր է՝ ի՞նչ էր գրված այդ նամակում: Սաքոն ճշգրիտ մի բան գիտեր. կապոցը դուրս է եկել ոստիկանապետի առանձնասենյակից:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

101 տարով դատապարտված և, ըստ շշուկների, առաջիկայում ավելի ծանր պատժի սպասող կալանավորն իրավունք ունի՞ մտածելու ապագայի մասին:

— Ունի,— ի պատասխան առկայծեց Արաբոյի աստղը:

Արդեն քանի գիշեր նրա զրույցը մեռուլյան մեջ Արաբո-աստղի հետ էր:

— Ես քո զինվորը չդարձա, Արաբո, Գոշավանքի իմ երդումը դրանով թերի մնաց: Այնինչ ա՛յդ երազանքով թողեցի իմ ափերը: Նպատակս ի՞նչ էր. կովել քո կողքին, քեզ հետ շառաչել թշնամու դեմ, ու երբ նահատակվեի, դու եղբայրորեն համբուրեիր սառչող ճակատս և ինձ թաղեիր արևահայաց մի բարձունքի վրա...

Մգլահոտ բանտախցի, հոգին ավերող ցավի միջից նա կարողանում էր մտածել ապագայի մասին: Ստեփանոս Նախավկա վանքի Վարդան քահանան ասում էր. «Զոհվածները մեծ ու փոքր աստղեր են դառնում այն հողի երկնքում, որի համար նահատակվել են»: Մահից հետո ինքը գոնե չնչին առկայծումով մի փոքրիկ աստղ կդառնա՞ փոթորկոտ լեռնեբի վրա...

— Իսկ եթե այնպես լինի, որ շարունակեմ ապրել, արդյո՞ք ինձ դարձյալ տրվելու է ժողովրդին ծառայելու, նրա բախտի համար նահատակվելու շքեղ ազատությունը:

— Տրվելու է,— ցոլաց Արաբոյի աստղը:— Դու դեռ վրեժ ես առնելու, դեռ ապրելո՛ւ ես հոգու հաղթանակի հրաշալի տոներ:

Այո, կյանքը շարունակվելու էր: Նա դեռ գործելու էր...

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

... 1904 թվի հուլիսի 15-ին Օլթիի շրջանում թուրքական սահմանին մոտեցավ կամավորների մի խումբ՝ ղարաբաղցի Թումաև Թումանյանի և դպրոցի Գևորգի հրամանատարությամբ: 61 հոգուց բաղկացած կամավորների այս ջոկատը երկար ու հանգամանորեն էր նախապատրաստվել մեծ առաքելության: Նպատակն էր հասնել Սասուն, միանալ լեռնաշխարհի ազատագրության պայքարին: Խումբն ուներ իր բժիշկը, քահանան, ռազմական կանոնադրությունը, գործունեության հրատարակ ծրագիրը: Հենց սահմանի վրա մեծ բախում սկսվեց թուրքական զինված ուժերի հետ: Կռվի ամենավճռական պահին գնդապետ Բրիկովի հրամանով կամավորներին թիկունքից սկսեցին հարվածել ռուս սահմանապահները: Կուկունյանի խմբի ողբերգությունն էր կրկնվում: Մտածելով, թե դա ինչ-որ թյուրիմացություն է, Թումաև Թումանյանը հրամայեց ոչ մի գնդակ չարձակել ռուսների դեմ: Սակայն «թյուրիմացությունը» շատ էր երկարում: Այն պարզելու համար ռուսների մոտ պատվիրակ գնաց տասնապետ Լևոն Քալանթարյանը:

— Պարոն գնդապետ, ձեր զինվորները թյուրիմացորեն կրակում են մեր թիկունքին:

— Նրանք կրակում են ի՛մ հրամանով: Դուք ավազակներ եք, պետք է ոչնչացնենք բոլորիդ:

Սպիտակ դրոշով և արծաթազօծ խաչով կայազորի հրամանատարին ներկայացավ երկրորդ պատվիրակը՝ խմբի պատկառազդու քահանա Տեր Ղազարը:

— Օրհնյալ, ախր մենք ոչինչ չունենք ձեր դեմ, դուք լավ գիտեք մեր նպատակը...

Արծաթազօծ խաչը որևէ ազդեցություն չունեցավ: Բրիկովի հրամանով մի պորուչիկ թքեց խաչի վրա և դիմահար կրակեց

թվայնացրել է 1915.info կայքը

քահանայի մորուքին: 61 հոգուց ոչ ոք չփրկվեց: Վերջում գընդապետը սահմանապահ թուրք սպաներին հրավիրեց ներկա լինելու հայ վիրավորների ավիճահարման արարողությանը...

Թիֆլիսում այս ողբերգական լուրն առնելով, Սաքոն անմիջապես մեկնեց Կարս, ինքնուրույն նախաձեռնեց գնդապետ Բրիկովից վրեժ լուծելու գործը: Գնդապետը հասկանում էր սեփական արարքի աններելիությունը, գիտեր, որ հատուցում է լինելու, և նրան պաշարել էր անասնական կույր վախ: Դուրս չէր գալիս կայազորի սահմաններից, միակ երթուղին իր բնակարանից մինչև ակումբ և հակառակ ճանապարհն էր: Այդ տարածքը գտնվում էր խիստ հսկողության տակ, այնտեղ թափանցելը գրեթե անհնար էր: Մինչև Սաքոն ծրագիր էր մշակում, նրան մոտեցավ մի հայ պատանի.

— Ես Համո Ջանփոլադյանն եմ, գիտեմ ով եք դուք և ինչ նպատակով եք եկել Կարս: Ինձ զենք տվեք, վստահեցեք, և ես կատարացնեմ այդ շանը:

Սաքոն, արհամարհելով մյուս կարծիքները, հավատաց տղային և զինեց նրան: Նրանք օրեր շարունակ միասին քննում էին վրեժխնդրության հանգամանքները: Զգուշությունը ոչ միայն չվրիպելն էր, այլև հատուցումից խուսափելը: Ծովանյանի համար խիզախ պատանու կյանքն ավելին արժեր, քան գընդապետի մահը:

Մի շարք ծրագրերից նրանք ընտրեցին ամենահարմարը, սակայն Բրիկովին գնդակահարելուց հետո Համո Ջանփոլադյանի փրկությունը մնում էր խիստ կասկածելի:

— Երևի ճիշտ կլինի այս գործը թողնել ավելի հարմար ժամանակի: Կամ էլ անձամբ ինքս պիտի սպանեմ նրան:

— Կայազորի սահմանին չհասած քեզ կբռնեն: Իսկ ինձ այստեղ շատերն են ճանաչում, նաև՝ զինվորներից: Հարմար

թվայնացրել է 1915.info կայքը

է, որ ե՛ս գնամ: Այս որոշումը համարենք վերջնական: Ուրիշ բան եմ ուզում խնդրել քեզ. եթե ամեն ինչ բարեհաջող ավարտվի, խոստանո՞ւմ ես ինձ տանել Անդրանիկի մոտ և երաշխավորել, որ ընդունի իր հայդուկախմբում: Դա իմ երազանքն է...

— Խոստանում եմ,— ասաց Սաքոն,— միայն թե պահպանիր քեզ...

Համոն ներկարար բանվորի շորերով մի քանի օր շրջում էր ծանոթ քաղաքի փողոցներով, աշխատանք խնդրում: Իր թափառումի շրջանը կամաց-կամաց ընդլայնելով, քիչ-քիչ տեսանելի ու սովորական դառնալով զինվորների աչքին, նա ընդհուպ մոտեցավ կայազորի սահմաններին: Գիտեր, թե գնդապետը երբ է դուրս գալիս տնից, երբ է հասնում ակումբ, ինչքան է մնում այնտեղ ու երբ է վերադառնում: Եվ եկավ երանելի պահը: Ակումբ գնալու ժամանակ «իրենից ոչինչ չներկայացնող փնթի տղան», որսորդական հրացանի դիմահար կրակոցով գետին փռեց գնդապետ Բրիկովին: Դրանով չբավարարվելով, ավելի մոտեցավ և նրա գանգին դատարկեց ծոցում պահած ատրճանակի ամբողջ պարունակությունը: Տղան հրաշալի գիտեր, թե ինչ է սպասվում իրեն այնուհետև, Անդրանիկի հայդուկը դառնալու երազանքին զուգընթաց նա պատրաստվել էր ստույգ մահվան: Բայց կյանքն ավելի զորեղ գտնվեց, քան մահը: Ատրճանակը գնդապետի գլխին դատարկելուց հետո Համոն ջահել հովազի ոստյունով հայտնվեց գազոնի մեջ, թաքնվեց տերևախիտ թփերում, հետո, հարմար պահ որսալով, բարձրացավ ցանկապատի մոտ աճած բարձր լորենուն, թաքնվեց նրա թանձր սաղարթներում: Զինվորները կարծեցյալ ուղղություններով վազեցին գնդապետին սպանողի հետևից: Մթան հետ Համոն իջավ Կարս գետի ափը, ուր նրան սպասում էր Սևքարեցի Սաքոն:

թվայնացրել է 1915.info կայքը

... Այո, լինելո՛ւ էր հետագա կյանք: Բանտախցի պատուհանից Ծովասարի ամպերին նայելով ի՞նչ իմանար, որ իրե՛ն է բախտ վիճակված ծանոթացնելու ազգի երկու մեծ դեմքերին՝ Զորավար Անդրանիկին և բանաստեղծ Հովհաննես Թումանյանին:

* * *

1904 թվական: Նիկոլ Դումանը կառավարիչ է Բաքվի նավթահանքերից մեկում: Արևմտահայաստանից տագնապալի լուրեր են գալիս. թուրքական կառավարությունը զորք է ուղարկում Սասունի դեմ: Նիկոլ Դումանը կովի փորձ ունեցող կամավորներ է հավաքագրում, նրա կողքին են Սարբազ Խեչոն, Թադևոս Ամիրյանը, Սուրենը, Ավդոն, Սերոբը, ուրիշներ: Դումանին հանձնարարված է կամավորների խումբը հասցնել Սասուն և ղեկավարել նրա ինքնապաշտպանությունը: Դումանը գիտե, որ դա անհույս ձեռնարկում է, սակայն չի կարող ձեռքերը ծալած նստել: «Կովկասեան մարմիները կը ճամբէին Դումանը, որպէս լաւագոյն թեկնածուն Սասնոյ կռիւներու հրամանատարութեան... համար: Կը ղրկէին Նիկօլ-Դումանը մանաւանդ այն նկատառումով, որ Սասնոյ բոլոր մեծ դէմքերը, Հրայրէն մինչեւ Անդրանիկ, ջերմ, անվերապահ յարգանք կը տածէին դէպի... Բողազքեսանի և Խանասորի կռիւներուն հերոսը, դէպի անոր ռազմագիտական ու վարչական տաղանդը... քաջութիւնն ու վճռականութիւնը»: Կամավորների զորահավաքի վրա իշխում էր Նեկրասովի պատգամը. «Տար ինձ այնտեղ, կովողների բանակը, ուր մեռնում են Սիրո մեծ գործի համար»:

Դումանի արշավախումբը հասավ Սալմաստ, անցավ Վասպուրական, որը ծածկված էր թուրքերի ու քրդերի զորաշարժերով, և, մի շարք կռիվներ մղելուց հետո, համոզվելով, որ

թվայնացրել է 1915.info կայքը

Սասուն հասնելն անհնարին է, անտեղի զոհեր չտալու համար հետ վերադարձավ: Արաքսի արևելյան ափից կամավորների շատ խմբեր էին փորձում հասնել Սասուն: Արճեշի մոտ, ընկնելով պաշարման մեջ, ահաւատակվեց Աշոտ Երկաթի ամբողջ խումբը: Երևանից մեկնած երկու խմբեր Գայլ Վահանի և Բաբերդցի Միհրանի ղեկավարությամբ անցան սահմանը և ավերեցին ու կոտորեցին Ջորի և Մոսունի թուրք սահմանապահ կայազորները: Մոտալուտ արհավիրքի սարսափից դեպի Արևելահայաստան շարժվող հայ գաղթականներին ուղեկցելով՝ խմբերը հետ են վերադառնում: Թուրքերը հարձակվում են, խիզախորեն ահաւատակվում է երևանցի հայդուկ Գայլ Վահանը: Նիկոլ Դումանը Բաքու վերադարձավ անզորությունից վիրավոր գազանի պես մռնչալով, կրկին հետ գնալու հաստատ վճռով: Սակայն դեպքերի բերումով նրա խիզախությունն ու ռազմական տաղանդը պետք եղան հենց Բաքվում...

* * *

Ամառը դժվար է ահահանջում Լոռվա ձորից: Քարափները մինչև նոյեմբեր արտաշնչում են հուլիս-օգոստոսին ներքաշած տաքությունը, ձորը պահում արևային օրերի ջերմ հիշողության մեջ: Ժայռերի ստվերում, կայծակնաշեղ արահետների եզրին, թփերի տակ խոտը կանաչ է մնում մինչև աշնան վերջին անձրևները, մինչև ձորի երկինքը ճերմակապատող ձյունը: Ամեն քարանձավում՝ հնաշխարհիկ մի ցավոտ պատմություն, ամեն ժայռի տակ՝ մի լեգենդ ու Դեբեդի հառաչանքին կախված ամեն ծառի փչակում՝ մի չծնված հեքիաթ: Ցրտերին հանձնվելուց առաջ ձորը մի քանի օր հրավառվում է բազմատեսակ ծառ ու թփերի խնկահոտ հրդեհով, շառաչուն մի անձրևվով իր այդ կրակները հանգցնում իր մեջ և տրվում ձմռան

թվայնացրել է 1915.info կայքը

քմայքներին: Եվ ձորի միջով, ափերի խրոխտ գեղեցկությանն անհաղորդ, անսկիզբ հառաչանքով հոսում է քարախոիվ Դեբնդը:

Զիավորների հոգնած խումբը դանդաղ ընթանում էր ձորն ի վար: Ե՛վ մարդիկ, և՛ ձիերը ուժասպառ էին եղել երկար ճանապարհից: Ճերմակ ձիու վրա, ճերմակ ձիու հետ որպես առնական շքեղություն, առջևից գնում էր Անդրանիկ զորավարը: Նրա կողքից ընթանում էր մեկ ուրիշ ձիավոր՝ նույնպես զինավառ, լեռնականի մորթե փափախի տակ սուզվող լայն ճակատով ու թանձր բեղմորուքով: Գնում էին լուռ, հայացքները՝ ոլորվող ձորի գահավեժ քարափներին: Սասունի վերջին կռիվներից հետո զորավարին պաշարած դառը թախիծը չէր փարատվում: Մոայլ էր, անասելի հոգնած, աչքերը, սակայն, առաջվա պես պահպանում էին արծվային ուժեղ հայացքը: Հանդիպող գյուղացիները հարգանքով մի կողմ քաշվում, ճանապարհ էին տալիս անճանոթ զորախմբին: Նրանցից մեկը փափախը վերցրեց, համարձակ մոտեցավ ու կանգնեց զորավարի ձիու առաջ:

— Խորին հարգանքս քաջ Անդրանիկին ու նրա զինվորներին: Մեզ համար մեծ պատիվ է ձեզ այս ձորում տեսնելը: Հուսա՞մ, որ ձեր ընթացքը դեպի Ջալալօղլի, է, զորավար:

— Ո՞վ ես դու, շինական:

— Քո զինվոր Անդրեի եղբայրն եմ: Չեմ հարցնում, թե ուր է իմ եղբայրը, դա քո՛ գիտենալու բանն է: Բայց շատ կուզենայի, որ կտրես զինվորիդ օջախի հացը:

— Հոգսիդ կաց, բարի մարդ, լավ ժամանակներ կգան, քո հացն էլ կվայելենք:

Զորավարը կամեցել էր, որ Լոռվա ձորով իր երթն անցնի աննկատ, առանց մարդաշատ դիմավորումների ու հյուրասիրու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյունների: Սիրտ չուներ, ողբերգական թարմ դեպքերի տպավորությունները շարունակում էին տանջել նրան:

— Սաքո, որտե՞ղ է հիմա քո այդ քաջ տղան:

— Ո՞վ, զորավար:

— Գնդապետին ատոկեցնողը:

— Ապահով թաքնված է Գյումրիում: Նա մտադիր էր Սատուն բարձրանալ՝ հասնելու քեզ: Խոստացա, որ երբ Ռուսաստանից վերադառնաս, ինքս կբերեմ քեզ մոտ:

— Արժե, քաջ պատանի է, լավ է գործել: Բայց գնդապետին սպանելով բանը չի վերջանում, մեր ազգի, մեր պայքարի դեմ նրանց մեջ եղած դաժանությո՛ւնը պետք է սպանել, Սաքո:

— Դրա համար գուցե տասնամյակներ հարկավոր լինեն, զորավար: Մինչ այդ Բրիկովը պիտի հատուցեր իր գազանությաև համար...

Զորավարը դարձյալ ներքաշվել էր ցավոտ խոհերի մեջ: Սևքարեցի Սաքոն լռեց, որպեսզի չխանգարի նրա մտորումները:

Գյումրիում Սաքոն իմացավ, որ Հովհաննես Թումանյանը ամռան վերջերին շրջագայել է Բորչալուի գյուղերում, այցելել Էջմիածին՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին, և այդ օրերին Դսեղում է, հայրենական տանը: Անդրանիկը շատ էր ուզում հանդիպել նրան և, հաղթահարելով դառն ապրումները, կամ գուցե հենց այդ ապրումների առաջնային պահանջով, ընդունեց Սաքոյի առաջարկը՝ Ջալալօղլիի ճանապարհից թեքվել դեպի Դսեղ:

Թումանյանի հետ Սարգիսը ծանոթացել էր չորս տարի առաջ, Մարոյի միջոցով: Թուրքիայից տեղափոխվել էր Թիֆլիսի Մետեխի բանտ, այնտեղից ազատ արձակվել և նույն օրը ինքն ու Մարոն գնացել էին բանաստեղծի մոտ՝ խոչին երախ-

թվայնացրել է 1915.info կայքը

տագիտություն հայտնելու բանտից ազատելու գործում նրա օգնության համար:

Անմոռանալի էր Թումանյանի տված այդ երեկոն: Սարգիսը պատմում էր Սերոբի ու Անդրանիկի, Մակարի ու Հրայրի կռիվների մասին, զինատար խմբերի, Վանի ինքնապաշտպանության ու Մեթերհեմ բանտի իր տանջանքների մասին, ու բանաստեղծը լսում էր նրան հաղթանակների հետ ոգևորվելով, պարտությունների հետ հառաչելով:

... Դահլեզի տանիքներից կապտավուն ծուխ էր բարձրանում: Դաշտային փոշոտ ճամփով նրանց ընդառաջ էին գալիս մի խումբ մարդիկ: Զորավարի ժամանման լուրը, համենայնդեպս, գյուղ էր հասել: Սև թիկնոցն ուսերին, լայն-լայն քայլերով զորախմբին էր մոտենում մի բարձրահասակ մարդ:

— Ահա և պարոն Թումանյանը, Զորավար...

— Պարզ է: Ես նրան կճանաչեի հազարների մեջ:

Զորավարն իջավ ձիուց: Դեբեդի երկնամերձ ափին, ուշ աշնան սարսուռն ամպի տակ, զորավարն ու բանաստեղծը նայում էին իրար, հիացքով զննում էին իրար, հետո երկար, ամուր ողջագուրվեցին:

... Տասնիներ տարի անց, Թումանյանի վաղաժամ մահվան առթիվ, Անդրանիկ զորավարը պիտի գրեր. «... 1904-ին առաջին անգամ ըլլալով տեսա և ճանչցա զայն իր բնակարանին մեջ Սևքարեցի Սաքոյի միջոցավ... Լոռիի Դսեղ գյուղին մեջ հանրապետական կյանք մը կապրեր բազմանդամ ընտանիքի մը հայրն ըլլալով: Բաց էին իր տան դռները բոլորին առջև: Վանքի մը պես ամեն օր ուխտավորներ և այցելուներ կմտնեին ու կելնեին՝ վայելելով այդ հանրապետական տան ճոխ սեղաններն ու բարիքները...»:

Թումանյանը շնորհակալ եղավ Սաքոյից այդ հանդիպումը ձեռնարկելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սա էլ ծառայություն է ազգին,— ասաց կես-կատակ, կես-լուրջ:

— Եվ գուցե՝ իմ ամենամեծ ծառայությունը...

1904 թվի ուշ աշնանը Դսեղի այդ հանդիպումով սկսվեց այն մեծ բարեկամությունը, որ պիտի մշտատևեր Հայոց մեծ Բանաստեղծի և Հայոց Մեծ Ջորավարի միջև:

* * *

Բայց հիշողության այս հրաշալի էջը գրվելու էր մեթերնիխյան մղձավանջից հետո: Մուշից Կարին շղթայակապ ճամփորդությունից, կախաղանի դատապարտվելուց և հրաշքով փրկվելուց հետո: Իսկ այժմ գիշերային բանտախցի ճեղքից պատուհանից աշնան խոիվ գիշերվա մեջ Արաքսի ափողը փնտրող կալանավորը չգիտեր՝ կյանքը շարունակվելո՞ւ է իր համար, թե՞ ամեն ինչ վերջանալու է թուրքական բանտի խավարում:

Իսկ կյանքը շարունակվելու էր...

1905 թվի փետրվարին Սարգիս Ծովականյանը Տուլա և Ռյազան կատարած ուղևորությունից վերադարձավ հարուստ բեռով: Սակայն այս անգամ նրան չէր վիճակված զենքը հասցնելու Արաքսի այն ափը:

— Հովհաննես Թումանյանն անհամբեր քո վերադարձին էր սպասում:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ: Պատվիրեց, որ վերադառնալուց հետո անմիջապես այցելես իրեն:

Մարոն գիտեր, թե ինչ նպատակով է նրան կանչել բանաստեղծը: Բայց չգիտեր՝ Սարգիս Ծովականյանն ինչպե՞ս կընդունի բանաստեղծի առաջարկը: Ախր նրա համար չկար ուրիշ

թվայնացրել է 1915.info կայքը

սեր և տառապանք, բացի ֆիդայական իր երդումը սրբագործելը: Աշխարհում մի մարդ կար միայն, որի հորդորը կամ պահանջը գուցե կարողանար ազդել նրա սրբազան երդումի վրա, և այդ մարդը Թումանյանն էր:

Տխուր էր բանաստեղծը, մարմինն ու հոգին ալեկոծվում էին ցավերից:

— Ուշացար, հայդուկ, վաղուց եմ սպասում քեզ:

— Այսօր եմ վերադարձել, պարոն Թումանյան: Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար...

— Ինձ համար ոչինչ պետք չէ անել, Սաքո, բայց ազգի համար կարող ես օգտավետ բան անել:

— Իմ կարծիքով, հենց այդպիսի գործով եմ զբաղված... Վաղը պատրաստվում եմ հերթական ճամփորդության:

— Ազգի համար քո արածը ոչ ոք չի կարող ժխտել, բայց վաղը դու չպետք է մեկնես: Ձենքը կտանեն ուրիշ մարդիկ: Հիմա դու այստեղ ավելի ես անհրաժեշտ:

— Թիֆլիսո՞ւմ:— Սաքոն տարակուսանքով նայեց բանաստեղծին:

— Ոչ, այլ Ղազախ-Շամշադինի կողմերում, որտեղ հայերի և մահմեդականների միջև թշնամություն է մոլեգնում:

— Իսկ ես ի՞նչ կարող եմ անել: Սուրը ձեռքիս եղբայրությո՞ւն քարոզեմ:

— Սրով եղբայրություն չեն քարոզում, հայդուկ:

— Խաչով ու գրչով են քարոզում: Ես ոչ խաչ ունեմ, ոչ գրիչ:

— Ինձ դուր չի գալիս քո վերաբերմունքն այդ տագնապալի խնդրին...

— Պարոն Թումանյան, տասնհինգ տարի առաջ, երբ ես Արաբոյի սխրանքներով հիացած պատանի էի, Գոշավանքում սրբազան երդում եմ տվել մինչև կյանքիս վերջը նվիրաբերվել

թվայնացրել է 1915.info կայքը

Արևմտահայաստանի ազատագրության գործին: Ինձ մի ստիպեք երդմնազանց լինել...

— Ժողովուրդը պետք է ազատագրվի ոչ միայն թշնամուց, այլև կույր թշնամանքից: Այս ծանր իրավիճակում դու պարտավոր ես լինել քո հայրենակիցների կողքին, որոնց համար ճանաչված հեղինակություն ես, և նրանց հասկացնես անհիմն կռիվների ամբողջ անհեթեթությունը: Քեզ լավ գիտեն նաև հարևան մահմեդականները: Նրանք հարգում են քո ուժն ու խիզախությունը և կլսեն ճշմարիտ խոսքդ:

— Ինձնից ի՞նչ պրոպագանդիստ, ես զենքի մարդ եմ, պարոն քանաստեղծ:

— Վանի գյուղերում, Ատրպատականի հայ բնակչության շրջանում դեռ հիշում են պրոպագանդիստ Սևքարեցի Սաքոյին...

— Ես այնտեղ զենքի էի կոչում...

— Իսկ այստեղ զինադադարի կոչիր, խոսքի ուժը երկուսի համար էլ նույնն է: Դու պիտի մնաս, Սևքարեցի: Ի վերջո այդպես կկամենար նաև Անդրանիկը:

— Անդրանի՞կը...

— Այո, Անդրանիկը:

— Ո՞րն է լինելու իմ կոնկրետ խնդիրը, պարոն Թումանյան:

— Կազմակերպել հայկական գյուղերի ինքնապաշտպանությունը...

— Դա կանեմ...

— Մի ընդհատիր: Եվ վերականգնել խաղաղությունը քեզ ծանոթ հայ և մահմեդական գյուղերում: Ես ինքս էլ պատրաստվում եմ մեկնել այդ կողմերը, գուցե իմ առաքելությունն օգնի վիճակի ընդհանուր կարգավորմանը:

— Այդպիսի բան չանեք, պարոն Թումանյան:

թվայնացրել է 1915.info կայքը

— Կգամ, և դու ինձ կուղեկցես սահմանամերձ գյուղերը:

Դեռևս ոչինչ չհարցրած՝ Մարոն հասկացավ, որ Թումանյանի խոսքը վիթխարի ազդեցություն է ունեցել:

— Ե՞րբ ես մտադիր մեկնել:

— Ուրեմն դու գիտեի՞ր, թե ինձ ինչ է ասելու Թումանյանը:

— Այո, գիտեի:

— Եվ նույն կարծիքի՞ն ես:

— Իհարկե: Եթե կամենաս, ես կգամ քեզ հետ:

— Դու կմնաս Թիֆլիսում: Հոգ կտանես, որ հայթայթված զենքը վստահվի հուսալի մարդու:

Դիլիջան — Քարվանսարա — Ղազախ — Ծամշադին տարածքում ցարական կառավարության հրահրած ազգամիջյան թշնամանքը մոլեգնում էր փոթորկի պես: Այդ վայրերում թափառող կազակական խմբերը հայ-մահմեդական ընդհարումները կանխելու փոխարեն իրենք էին երկուստեք կրքեր բորբոքում: Հայկական գյուղերում ժողովրդական ջինջված խմբերը կամովին և ուրախությամբ անցնում էին Սևքարեցի Սաքոյի հրամանի տակ: Նա իր շուրջը հավախմբեց շուրջ երեք հարյուր հրացանավոր տղամարդիկ, նրանց տեղաբաշխեց վերոհիշյալ գծի ամբողջ երկարությամբ: Տասնապետներ նշանակեց, ովքեր պարտավոր էին շտաբին տեղեկություններ հաղորդել: Ինքնագլուխ գնդակ արձակողը գլխով պատասխան կտա. սա էր գործունեության նշանաբանը: Ժողովը կայանում էր Սևքարում, որտեղ շտաբն էր տեղավորված:

— Սաքո,— տեղից վեր կացավ մազմորուքի մեջ կորած մի հաղթանդամ գյուղացի,— դու եկար և մենք իմանալով, որ ֆիդայի ես, կռիվների մեծ փորձ ունես, քեզ հրամանատար ընդունեցինք: Բայց ասածներդ լավ չենք հասկանում, ո՞նց թե չկրակել: Բա մեր խնդիրը ո՞րն է:

թվայնացրել է 1915.info կայքը

— Եսայի, դու ոանչպար մարդ ես, այդ ե՞րբ է քո խնդիրը կրակելը եղել: Մեր նպատակը, եղբայրներ, հայկական գյուղերի, Ղազախ — Դիլիջան ճանապարհի պահպանությունն է և այս լեռնաշխարհում խաղաղության վերականգնումը:

Թույլ քրթմնջոցներ ու բացահայտ դժգոհություններ եղան:

— Դու այնտե՞ղ էլ այսպես ես կռվում...

— Այո, այսպես եմ կռվում: Ոչ մի ֆիդայի իրավունք չունի զենք բարձրացնելու ամեն մարդու վրա, էլ չեմ ասում՝ կնոջ կամ երեխայի: Եվ հետո դուք գործ չունեք այնտեղի կռվի հետ, այնտեղի կռիվն ուրիշ կռիվ է, մեծ ու բարձր կռիվ է:

— Իսկ եթե նրանք կրակում են, մենք չպե՞տք է պատասխանենք:

— Ես կոչ եմ անում ոչ թե կույր բարությամբ կոտորվել, այլ արժանապատվորեն խաղաղ դիրք բռնել: Դրանից հետո, եթե դիմացինը չգնահատի մեր վերաբերմունքը, ուրեմն չար է և չարը պետք է պատժվի:

Սաքոն գիշեր-ցերեկ դիրքերում էր: Հայտնվում էր իրավիճակի ամենալարված պահին, ու նրա ներկայությունն ազդում էր թե հայերի, թե մահմեդականների վրա: Վերջիններս լավ գիտեին նրա ֆիդայական համբավը և նրան տեսնելով՝ հարգանքից, թե վախից կույչ էին գալիս դիրքերում: Ուզունթալա գյուղի մոտ, հեռադիտակով զննելով դիրքավորված մահմեդականներին, Սաքոն նրանց մեջ ճանաչեց մի մարդու, որի հետ տասնհինգ տարի առաջ աշխատել էր անտառտնտեսության հիմնարկում: Կանգնեց թմբին, ձայն տվեց նրան:

— Գլուխդ բարձրացրու, չոփուր Ահմեդ, մի վախենա:

Դիմացի դիրքից մեկը բարձրացավ:

— Ձայնդ ծանոթ է, բայց չեմ հիշում ով ես: Չեմ էլ ուզում հիշել, հիմա մենք թշնամիներ ենք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Արի, Ահմեդ, մոտեցիր մի քիչ խոսենք:— Ու ինքն առաջ գնաց:

Մահմեդականն ուշադիր նայեց նրան, ճանաչեց:

— Շատ ես փոխվել, Սաքո..

— Ի՞նչ կա, Ահմեդ, ինչի՞ ես թուրութվանք առել, եկել խցկվել այս գյուղի քիթը: Ի՞նչ ես ուզում:

— Դե որ բոլորը գալիս էին, ես էլ եկա:

— Սպանելո՞ւ ես եկել: Սպանիր, կանգնած եմ առաջդ:

— Քե՞զ... դու իմ դառն օրերի ախպերն ես, ինձ ի՞նչ ես արել:

Սարգիսը հետ շրջվեց:

— Համբարձում, հրացանդ թող, եկ այստեղ:

Դիրքերից բարձրացավ մի տարեց գյուղացի, մոտեցավ նրանց:

— Սա՞ քեզ ինչ է արել, Ահմեդ:

— Ես այդ մարդուն չեմ ճանաչում, Սաքո:

— Բա առանց ճանաչելու ինչո՞ւ ես ուզում սպանել, անասուն: Գնա, հավաքիր այդ գյադագյուդեքին, խաղաղությամբ ձեր տները վերադարձեք: Այստեղ ձեզ թշնամի չկա:

Սաքոն մի գիշեր Սարիգյուղի դիրքերը հասավ այն պահին, երբ կազակական սպան ձեռքը բարձրացրել, պատրաստվում էր կրակի հրաման տալու:

— Սպասեցեք, իջեցրեք հրացանները:— Ձիուց թռչելով հրամայեց դիրքերի մարդկանց, մոտեցավ սպային:

— Ո՞վ ես դու այստեղ:

Կազակը գիտեր նրան, բայց չէր ուզում իր զինվորների մոտ նվաստանալ:

— Դու, ինչ է, զինվորական կոչումներից ոչինչ չե՞ս հասկանում: Ես պորուչիկ եմ:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հեռացիր այստեղից, պորուչիկ, և ինչքան շուտ, այնքան լավ:

— Լսեք իմ հրամանը:— Պորուչիկը նորից շրջվեց դիրքավորների կողմը:— Պատրաստ...

Չհասցրեց կրակի հրաման տալ: Սաքոյի շառաչուն ապտակը նրան գլխիվայր շպրտեց դիրքի մեջ: Զինվորները չխկացրին հրացանների փականաղակները, բայց գյուղաշխարհի տղամարդկանց սպառնալի հայացքների ներքո հրաժարվեցին մտադրությունից:

— Դու դեռ կիմանաս, թե ինչ է նշանակում խփել ցարական սպային: Սիբիրում կզղջաս արածիդ համար:— Քիթմոութի արյունը սրբելով փնթփնթում էր սպան:

— Մի հատ էլ հասցրու դրան, Սաքո փադիշահ:— Ձայնը մահմեդական դիրքերից էր: Մի պահ անց շարունակվեց.— ափսոս, որ թշնամիներ ենք, թե չէ ճակատդ կհամբուրեի...

Օրերով, շաբաթներով դիմահայաց դիրքերում այսպես նստոտած, կրակ չէին բացում միմյանց վրա: Սաքոն, մահմեդականների կոչումով՝ Սաքո փադիշահը, անընպատակ կռիվ չէր ուզում: Որոշ հատվածներում ազգայնամոլ կրոնապետերին հաջողվում էր ընդհարում ստեղծել: Սակայն հայտնվում էր Սևքարեցին, և ալլահի պատրանքային կամքը տեղի էր տալիս ստույգ սարսափի առաջ:

Մի մահմեդական Սաքոյին լուր բերեց, թե Աքսիբար գյուղում ինչ-որ մեկը ժողով է հրավիրել, որպեսզի կոչ անի մարդկանց՝ հրդեհելու և կոտորելու մոտակա հայ գյուղը: Դժվար չէր չախչախել Աքսիբարի հարձակումը: Բայց Սաքոն այլ բան որոշեց:

Երեկոյան, երբ Աքսիբարի մզկիթի առջև հավաքված ամբոխը մոլտալով լսում էր արյունարբու մեկին, մի ձիավոր հայտնվեց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սաքոն...

— Սաքո փադիշահը...

Ոչ հրացան, ոչ փամփշտակալներ, ոչ գոնե դաշույն: Այս ամենի փոխարեն մի լայն ժպիտ էր առնականորեն գեղեցիկ դեմքին:

— Բարի երեկո, բարի մարդիկ:— Իջավ ձիուց, սանձը պարզեց հավաքվածներից մեկին, որն ակամայից ընդունեց այն:

Ճառողը խոսքը կիսատ թողել, ապշած նայում էր անսպասելի եկվորին: Ամբոխը կարկամել էր թշնամանքի ու բարեկամության արահետում: Մի ձայն խզեց լարված լռությունը.

— Բարով եկար, Սաքո:— Աքսիբարցի Վալին էր, խիզախությամբ հայտնի մարդ: Այնքան էլ նման չէր թուրքի, ասում էին՝ ուրիշ ազգից է սերված...

Դրան հետևեցին ողջունող ուրիշ ձայներ: Իմանալով, թե ով է եկողը, հոետորը մոլեգնեց.

— Սա նրանց ղեկավարն է, սրա ձեռքերը մեր արյունով են ներկված, այստեղ՝ մեր, Թուրքիայում՝ մեր հավատակիցների: Սպանեցեք նրան...

Սակայն ամբոխը չէր շտապում կատարել ինքնակոչի հրամանը:

— Ո՞նց եք, ժողովուրդ, մեր այս թշնամության վերջն ի՞նչ է լինելու,— բանի տեղ չդնելով ճղճղան հոետորի բարբաջանքները, Սաքոն շարունակում էր ժպտալով նայեց մարդկանց:

— Իսկ դու ինչո՞ւ ես եկել այստեղ, ի՞նչ ես ուզում,— աքլորանալով առաջ եկավ մի ջահել:

— Բա չասացի՞: Եկել եմ իմանամ ոնց եք և ինչով է վերջանալու մեր թշնամանքը:

— Սպանեցեք նրան, մի թողեք ավել-պակաս խոսի,— ոռնից ծղրտաց հոետորը:

Վալին, որ միշտ այդ լուռ հետևում էր իրողությանը, նետեց նախախոտի մնացորդը, մոտեցավ հոետորին:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գուցե դու ի՞նքդ կսպանես նրան: Իգիթների օրենքով, հավասար մարտում:

— Իմ գործն սպանելը չէ...

— Իսկ ո՞ւմ ես խորհուրդ տալիս ձեռքերը ողողել հյուրի արյունով:— Հետո շրջվեց, դիմեց ամբոխին:— Կա՞ մեկը, որ ուզում է հյուր սպանել: Թող առաջ գա:

Ամբոխը հապաղում էր: Ամբոխը վաղուց էր տրորել հյուրընկալության դարավոր ավանդույթը: Պատճառն այն էր, որ Վալին պահանջում էր նրան սպանել արդար մենամարտում: Ամբոխը սովոր չէր այդպիսի բանի, մանավանդ որ դիմացինը Սևքարեցի Սաքոն էր...

— Քարերով, քարերո՛վ ջարդեցեք նրան,— Վալիի թևատակից կրկին ճղճղաց հոետորը:

— Դու քո գործը պրծար, հեռու գնա:— Վալին հետ մղեց նրան:— Ժողովուրդ, մեզ մոտ եկած մարդը պատահական մեկը չէ, Սևքարեցի իգիթ Սաքոն է, որ, ինչպես տեսնում եք, մի փամփուշտ էլ չի կրում հետը: Մենք պարտավոր ենք հարգել նրան, լսել, թե ինչ է ասում...

... Սաքոյին տանջում էր հայդուկ ընկերների կարոտը: Լսել էր Դժոխք Հրայրի հերոսական ճահճատակման մասին և հոգին տնքացել էր մեծ կորստի ցավից: Լուր էր առել, որ Խաճասորի տասնապետ Եփրեմը Պարսկաստանում խիզախ գործչի համբավ ունի: Իսկ որտե՞ղ են, ի՞նչ են անում մյուսները: Բաքվից եկած մի վաճառական պատմեց, թե այնտեղ ինչ սրխրանքներ է գործում նրա զենքի ու տառապանքի ընկեր Նիկոլ Դումանը...

1905 թվականի փետրվարի չորսին մի խումբ զինվորներ բանտ էին տանում թաթար ավազակապետ Աշուրբեկովին: Նա փորձեց փախչել: Զինվորները կրակեցին: Հայ զինվորի գրնդակն ավազակապետին փոեց փողոցի մեջտեղում: Ինչ-որ մե-

թվայնացրել է 1915.info կայքը

կը հարձակվեց զինվորի վրա, ատրճանակով վիրավորեց նրան: Երկու հայ տղաներ հետապնդեցին փախչող ոճրագործին և գնդակահարեցին: Թաթար մահմեդականները սպանվածի դիակը դրեցին սայլին և տանում էին քաղաքի թաղամասերով՝ կոչ անելով վրիժառության: Մոլլան բորբոքում էր կույր ամբոխի կրոնական մոլեռանդությունը, ամենուր հավաստիացնում, թե հայերը պատերազմ են հայտարարել իսլամի դեմ, որոշել են պայթեցնել բոլոր մզկիթները: Փետրվարի վեցի երեկոյան թաթարական վայրի ամբոխը հարձակվեց քաղաքի հայ բնակչության վրա: Հայերն ամեն գնով փորձում էին կանխել մեծ աղետը, հասկացնել, որ իրենք թշնամի չեն թաթար մահմեդականներին: Նրանք բազմիցս դիմեցին ևահանգապետ Նակաշիձեին՝ խնդրեցին զորքի օգնությունը, բայց միայն մերժումներ ստացան: Հետո պարզ եղավ, որ այդ ամենը ծրագրված էր ցարական Ռուսաստանի կողմից: Հայերը չէին ուզում անտեղի արյուն թափել, փակվել էին իրենց տներում և հույս ունեին, որ կույր մոլուցքը կհանդարտվի: Իզուր: Զարդարար խուժանն սկսեց հրդեհել հայերի տները: Առաջինը բռնկվեց մեծահարուստ Լալայանի տունը, ողջ ընտանիքը հրդեհի զոհ դարձավ: Հրդեհված երկրորդ տան տերը կնոջ և 14-ամյա որդու հետ դիմադրեց մինչև վերջին պահը, երբ առաստաղը ճարճատելով փլվեց: Նրա տան առաջ գոյացել էր գնդակահարված թաթարների մի ամբողջ կույտ: Նակաշիձեն ոչ միայն չէր կանխում դեպքերի հետագա ընթացքը, այլև հրահանգներ էր տալիս ջարդարարներին: Քառասուն ժամ թաթար ամբոխն անարգել կոտորում ու հրդեհում էր: Նիկոլ Դումանը կատարվածի մասին իմացավ Բալախանի նավթահանքերում և անմիջապես եկավ Բաքու: Ծտապ ստեղծեց ինքնապաշտպանության կոմիտե, որում ընդգրկվեցին Մարտիրոս Զարուխյանը, Մկրտիչ Աղամալյանը, Աբրահամ Գյուլխանդյանը և Հմայակ Ջանփոլադ-

թվայնացրել է 1915.info կայքը

յանը՝ 19-ամյա այն պատանին, որը գնդապետ Բրիկովին սատկեցնելուց հետո տեղափոխվել էր Բաքու: Կարծես թե ոչինչ հնարավոր չէր անել, նահանգապետի ու զինվորականության կողմից հովանավորված արյունարբու հրոսակները, լավ զինված, վխտում էին ամբողջ քաղաքում: Մելիքյանի լուսանկարչատունը դարձավ ինքնապաշտպանության շտաբ: Ձենք չկար, մի բուռ հայեր դուրս էին գալու արյան մոլուցքով հարբած հազարավոր թաթարների դեմ: Դումանին տեղեկացրին, որ հայերը 10—12 մոսին հրացան ունեն պահած, բայց թաքստոցը գտնվում է մահմեդական թաղամասերից մեկի կենտրոնում: Նիկոլը վերցրեց երեք հոգու և գիշերով դուրս եկավ: Զարդարարների առանձին խմբերի հետ մի քանի բախումներից հետո զենքը տեղափոխվեց լուսանկարչատուն: Չորս-հինգ տասնյակ զինված հայեր՝ մոլեգնող մահմեդական քաղաքի դեմ: Նիկոլ Դումանը հին կռիվների փորձով, ռազմագետի փայլուն տաղանդով մշակեց գործողության ծրագիր, ըստ որի հայերը պետք է կռվեին արագ տեղաշարժերով, սուր գրոհներով խուճապի մատնեին խառնամբոխին: Առաջին իսկ բախումներից իրարանցում առաջացավ թշնամու հրոսակախմբերում: Նրանք, ինչպես և նահանգապետն ու ոուս զինվորականները, չէին սպասում դիմադրության: Օգտվելով թշնամու շփոթմունքից, Դումանի խումբը ցաքուցրիվ էր անում նրա շարքերը: Հայերը շեշտակի հարվածներ էին հասցնում այրվող տների շուրջը խմբված, վայրենի հաճույքից ոռնացող թաթարներին, նրան մղում հետ՝ դեպի մահմեդական թաղամասերը: Կռիվը շարունակվեց չորս օր: Հայերին փամփուշտներ էին հասցնում զորամասի մի քանի արյունակից զինվորներ: Չորրորդ օրվա վերջում Դումանի խումբը վայրագ հրոսակախմբերից մաքրել էր քաղաքի ամբողջ հայաբնակ տարածքը: Թշնամին հարկադրված էր հաշտություն առաջարկել, որը Նիկոլ Դումանն ընդունեց սիրով:

թվայնացրել է 1915.info կայքը

Այնուհետև թռուցիկների ձևով հրապարակվեց հայերի դիմումը՝ ուղղված քաղաքի մահմեդական բնակչությանը: «Մեր քաղաքը արիւնալի, ամօթաբեր գործողութիւններու ասպարէզ էր դարձել... Թափվեց շատ անմեղ արիւն, եղաւ բազմաթիվ մարդկային զոհեր: Թէ ում վրա է ընկնում այդ սարսափելի օրերի պատասխանատուութիւնը,— մենք դեռ չետոյ կվերադառնանք դրան: Այժմ անկեղծ սրտով ողջունում ենք վերականգնած խաղաղութիւնը: Մենք այդ արիւնին ծարավի չէինք... Մահմեդականներ, մի փնտրէք թշնամուն այնտեղ, ուր նա չկա... 14 փետրուար, 1905 թ.»:

Խաղաղության կոչերով հանդերձ, Նիկոլ Դումանը չէր կարող մոռանալ նահանգապետի ստոր վարմունքը իր ազգի հանդեպ: Չէր կարող ներել: Եվ մի քանի ամիս անց ժամանակի մամուլը գրեց. «Մայիսի 11-ի ցերեկւան ժամը 3-ի սուեն, երբ գեներալ-նահանգապետը կառքով կը սլանար քաղաքի կեդրոնական պողոտայով, ռումբ մը նետուեցաւ անոր վրա և սիաւոր դղրդիւնի մեջ Նակաշիձէի ջախջախուած ու այլանդակուած դիակը փուեցաւ գետնին... Ոճրագործը չկրցաւ խուսափիլ հայոց Նեմեզիդայի արդար վրեժխնդրութենէն...»:

Նիկոլ Դումանի այս հանձնարարությունը կատարող Դրաստամատ Կանայանին հաջողվեց փրկվել:

1905 թվականի հունիս. Երևանում, ամբողջ Արարատյան գավառում կովկասյան թաթարները սրով ու հրով ելել են հայերի դեմ: Նախիջևանում նրանք հրդեհել են հայ վաճառականների 180 խանութներ, թալանել տները, կոտորել մոտ չորս հարյուր հոգու: Թուրքիան պատրաստվում է գրոհել դեպի Կովկաս, ոտքի հանել տեղի ամբողջ իսլամությանը: Արարատյան աշխարհում ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարն է Նիկոլ Դումանը: Նա Երևանը բաժանել է մի քանի հատվածների, նշանակել կոիվների փորձ ունեցող ղեկավարներ, ստեղ-

թվայնացրել է 1915.info կայքը

ծել ուժեղ պաշտպանություն: Նրա կողքին են ռուսահայաստանցի բոլոր հայդուկները, ովքեր ջարդուփշուր են անում գավառի ճանապարհներով թափառող արյունարբու հրոսակներին: Արևմտահայաստանից եկել է կատաղի հայդուկների մի ամբողջ խումբ՝ Մուրադը, Սեպուհը, Ավոն, Քեռին, Առաքելը, Առյուծ Ավագը, կոփեցի Մուշեղը, Հաճի Կոտոն, ուրիշներ: Կռիվները, թեև մեր հողի վրա, մեր երկրի սրտում, հայերի կողմից ինքնապաշտպանական բնույթ են կրում: Դումանը հրամայել է երբեք նախահարձակ չլինել, և այդ հրամանը բխում է մեր ազգային էությունից, այն բանից, որ մեր ժողովուրդը երբեք ջարդարար չի եղել: Այդ ամբողջ իրադարձությունների ընթացքում Հայաստանն իր մեծ ռազմագետի շնորհիվ կարողացավ պահպանել հայոց ազգային արժանապատվությունը և ապահովել պատմության աչքերի մեջ ուղիղ նայելու իրավունքը:

... Սևքարում հայտնեցին, որ Ղազախից դրագունյան ջոկատ է ժամանել թշնամի ազգայնամոլներին ջախջախելու համար: Նշանառության տակ էր հատկապես Աքսիքարը:

— Իզուր եք նեղություն քաշել,— լսելով ջոկատի հրամանատարին, ասաց Սարգիսը:— Մահմեդականների կողմից այստեղ լուրջ հարձակում չի կարող լինել:

— Իսկ եթե լինի ո՞վ պատասխան կտա:

— Վերադարձեք զորամաս: Լավ կանեք, եթե այսուհետև չխառնվեք մեր հարաբերություններին:

— Սա առաջին ջոկատը չէ, որին դուք խորհուրդ եք տալիս հետ վերադառնալ:

— Բայց կարո՞ղ եմ հուսալ, որ վերջինը կլինի...

— Շատ բան եք վերցնում ձեզ վրա, Ծովանյան: Չեմ կարծում, թե գնդապետը կողջունի ձեր վերաբերմունքը:

— Դա ինձ այնքան էլ չի հետաքրքրում: Մեր հողի վրա մենք ենք մեր գնդապետն ու մեր պորուչիկը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Գնդապետին նաև հայտնի է, թե ինչպես եք մեր եկեղեցասպային բանտարկել ինչ-որ գոմում: Իսկ պորուչիկը, որին ապտակել եք զինվորների ներկայությամբ, դիմել է ռազմական տրիբունալ:

— Այդ վտանգներից որևէ մեկը ձեզ չի սպառնում, բայց լավ կլիներ հրաժեշտ տայիք, որովհետև իրադրությունն ամեն պահ կարող է փոխվել...

... Գարունն անցել էր, ամառն ու աշունն անցել էին: Գյուղաշխարհում ճարճատում էր դեկտեմբերի սառնամանիքը: Սաքոն ավելի ու ավելի էր կարոտում Դերիկի վանքին, ձյունամած լեռնակիրճերին, ֆիդայիներին ու կռիվներին: Ազգամիջյան հարաբերությունները մնում էին լարված: Թիֆլիսից եկավ Մարոն: Տեղ էր հասել մեծ դժվարություններով, ներկայացել որպես զինվորական ամուսնուն տեսության մեկնող վրացուհի:

— Բանաստեղծը ողջունում է գործունեությունդ: Նա ինքն էլ նոր է վերադարձել Բորչալուի գյուղերից և պատվիրեց հայտնել, որ շուտով կգա այստեղ՝ քեզ հետ միասին շրջելու Ղազախ-Ծամշադինի գյուղերը:

Ղազախ-Ծամշադին... Իսկ ե՞րբ պիտի վերադառնա իր ֆիդայական գործին, ո՞ւր մնաց երդումը: Կյանքն էլ, ահա, անցնում է, իսկ ամուսնության, խաղաղ ու երջանիկ ընտանեկան կեցության երազանքը տակավին հեռու է իրականանալուց: Ուշադիր, քնքշությամբ նայեց Մարոյին: Աչքերի անկյուններում մանրիկ կնճիռներ էին հայտնվել:

— Ծերանում ենք, Մարո...

— Ինչ արած: Մենք իրար նախատելու, իրարից նեղանալու բան չունենք: Երկուսով ենք կամ մեղավոր, կամ անմեղ:

Ջրույցն ընդհատվեց դռան ուժեղ թակոցով:

թվայնացրել է 1915.info կայքը

— Սարգիս, հեռվից եկած մի խումբ ձիավորներ քեզ են հարցնում:

— Հայե՞ր են, Մեսրոպ:

— Հա, բայց մի տեսակ ուրիշ հայերենով են խոսում:

Ովքե՞ր են, ի՞նչ ձիավորներ: Սաքոն ենթագիտակցաբար անցյալ օրերի սոսափ զգաց ներսում, թվաց, թե շառաչուն կրակոցների հեռավոր արձագանքներ լսեց: Լեռնականի հանդերձանքով, զենքերի մեջ կորած տասնչորս ձիավորներ տեղում անհանգիստ պտտվելով նրան էին սպասում: Ովքե՞ր են: Հեռվից տեսնելով մոտեցող հայդուկին, բոլորը ցած թռան ձիերից: Տեր աստված, ո՞վ է սպիավոր դեմքով այս հաղթանդամ լեռնցին:

— Սաքո, մեր անմեղ կալանավոր...

— Մկրո, շատախցի գազան...

Խոսքեր չկային: Այնպես էին փարվում, ասես միմյանց ոսկորները պիտի փշրեին: Մկրոն էր, շատախցի Մկրոն: Տասը տարի առաջ, երբ Սաքոյի հետ բարձրացան պարսկաթուրքական սահմանամերձ հայ գյուղերը՝ շինականներից զինյալ խմբեր կազմակերպելու, նա տասնհինգ հոգիանոց մի խմբի գլուխ անցած հրաժեշտ տվեց Սաքոյին: Գնաց դեպի անառիկ Զեյթուն, հասնելու նրա ինքնապաշտպանությանը: Ու այլևս ոչ մի լուր:

— Սաքո, իմ ախպեր, զարմանում ես, չէ՞, որ դեռ կենդանի եմ: Ես ու դու պիտի մի ամբողջ տարի կողք կողք ընտենք, որ հասցնեմ պատմել գլխովս անցած ամեն ինչ: Հիմա մենք էլ, ձերն էլ հոգնած ենք ու քաղցած...

— Ինչպե՞ս եք անցել սահմանը, ինչպե՞ս եք հայտնվել այստեղ:— Սաքոն դեռ շփոթված, զարմացած էր ուժեղ անակընկալից:

թվայնացրել է 1915.info կայքը

— Քո իմացած տասնհինգ հոգիանոց խմբից չորսն ենք այստեղ, Սաքո, մնացածը զոհվեցին: Մենք զոհվածներին խոստացել էինք այցելել նրանց օջախները, վերջին ցանկությունները հաղորդել հարազատներին: Վերջապես կարողացանք խոստումը կատարել: Իսկ Դերիկի վանքն արդեն մոտ էր, գնացինք քեզնից մի լուր առնելու: Թաքուն հույս ունեի, թե այնտեղ կտեսնեմ քեզ: Պատմեցին քո մասին ամեն ինչ. Խանասորի արշավանքը, Մուշի կեդրոնական բանտում կալանվելդ և ասացին՝ հիմա Ղազախում է, իր ծննդավայրի ինքնապաշտպանության է ղեկավարում: Եվ որոշեցինք գալ, տեսնել քեզ, մեկերկու օրում գյուղիդ շրջապատը մաքրել ու հետ վերադառնալ...

Երբ բոլորը քնել էին, Սաքոն մի կողմ տարավ Մկրոյին:

— Աստված բարեգութ եղավ ու քո շնորհիվ նորից հանդիպեցինք, Մկրո: Գոհ եմ քո ախպերությունից: Բայց այստեղ դուք ապելիք չունեք, ձեր խմբի զինյալ այցը կարող է փչացնել ամեն ինչ: Պիտի խնդրեմ, որ խումբդ առնես, հետ գնաս: Հենց վաղը: Առավոտյան: Դու ճիշտ հասկացիր ինձ, Մկրո:

Հաջորդ օրը, դեռ արևը կարգին չբարձրացած, խումբը հասել էր Դիլիջան: Այնուհետև Սաքոն պիտի վերադառնար:

— Գնացեք բարով, եղբայր: Կհանդիպենք փոթորկոտ լեռներում ու դեռ միասին կմարտնչենք Արաբոյի աստղի տակ...

Ի՞նչ իմանային, որ վերջին հրաժեշտն են տալիս իրար: Իսկ Սաքոն ազգամիջյան կռիվներից հետո դեռ պիտի մնար գյուղում, հարստահարողներից բարություն քամեր ճնշվածների համար և, որպես երախտագիտություն, գյուղը տուն էր կառուցելու նրա համար և հարսանիք էր անելու: Դժբա՜խտ երջանկություն...

... Այս ամենը հետո, հետո՛ էր լինելու: Գալիքին անհաղորդ, Կարինի բանտում կիսափակ աչքերով նա սպասում էր մթնելուն, որպեսզի վայելի Արաբոյի աստղի ցոլանքը:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

1898 թվի վաղ գարնանը Թիֆլիսում կայացավ ազգային մեծ ժողով: Քննարկվում էր Սասունի ապստամբության ձախողումից հետո, Վանի ինքնապաշտպանության անկումից ու Խանասորի արշավանքից հետո Արևմտահայաստանում ստեղծված իրադրությունը: Վիճակը ծանր էր, գրեթե աղետալի: Հարկավոր էր ուժի և գաղափարի միասնական, գործարար աշխատանք տանել ազատագրական շարժման կենտրոններում, բորբոքել հույսի ու վրիժառության կրակը: Առաջարկվեց ստեղծել չորս պատասխանատու կոմիտեներ, որոնք պիտի աշխատեին պայքարի կենտրոններում՝ կազմակերպեին հայդուկախմբերի համերաշխ գործունեություն, ծրագրված ռազմական միջոցառումներ, ընդունեին և տեղաբաշխեին լեռները բարձրացող կամավորական խմբերին, մի խոսքով՝ ապահովեին ընդհանուր-ազատագրական կորովի պայքար: Կոմիտեներում կարող էին ընդգրկվել միայն զենքի և գաղափարի փորձառու գործիչներ, ովքեր մասնակցել են ֆիդայական թեժ կռիվների, ապացուցել իրենց անձնուրացությունն ու ձեռներեցությունը:

Բարձրավանդակի՝ Սասունի պատասխանատու կոմիտեի կազմում, հասկանալի անհրաժեշտությամբ, պետք է ընտրվեին առավել նվիրյալները: Անդրանիկը դեռևս ձեղացած էր Թիֆլիսից: Ընտրվեցին չորս հոգի՝ Աղբյուր Սերոբը, Խանասորի Վարդանը, Սևքարեցի Սաքոն և Ագուլեցի Գուրգենը: Սերոբն իր սխրագործություններով վաղուց ազգային հերոս էր լեռներում: Նա էր, որ 1895-ի կոտորածների ժամանակ իր հայդուկներով չերքեզական արյունոտ հարձակումներից պաշտպանեց Ախլաթի երեսունհինգ հայաբնակ գյուղերը և հռչակվեց Ախլաթի Վագր: Նա էր, որ ֆիդայիների գլուխն անցած ջարդուփշուր արեց Թեղուտ գյուղի վրա կոտորածի հարձակվող քուրդ

թվայնացրել է 1915.info կայքը

ոհմակներին: Աղբյուր Սերոբի անունն ինքնին սխրանքի ու հերոսացման կոչ էր: Վարդանը Սաքոյի հետ կողք կողք կռվել էր Դերիկում, Բողազքյասանում, երկու անգամ Դերիկից գենք էր տարել Վան, կազմակերպչական աշխատանքի էր եղել Շատախում: Որպես ընդհանուր հրամանատար, ղեկավարել էր Խանասորի վրիժառու արշավանքը և դարձել Խանասորի Վարդան:

Կոմիտեի չորրորդ անդամը՝ ագուլեցի Գուրգենը, երկու տարի ծառայել էր ռուսական բանակում: 1896-ին անցել էր Սալմաստ, որպեսզի հասնի Երկիր, մասնակցի ազատագրական կռիվներին: Թիֆլիսեցի Շեկոյի՝ Արշակ Բարսամյանի զինատար խմբի կազմում գնում է Վան: Կարծես թե հասնում էր նպատակին: Բայց Վանի Այգեստանում զինատարները բախվում են մի մեծ խումբ թուրք զինվորների հետ: Թեժ կռիվ է լինում: Զոհեր տալով, ռուսահայաստանցի կամավորները քաշվում են Հայոց Ջոր: Կեմ գյուղի մոտ ընկնում են շրջապատման մեջ և մի գիշեր ու մի ցերեկ դիմադրելուց հետո կարողանում են ճեղքել պաշարման շղթան: Կենդանի մնացածները, որոնց մեջ էր նաև Գուրգենը, մեծ դժվարություններով վերադառնում են Կովկաս: 1897-ի գարնանը նա նորից է անցնում Պարսկաստան, այնտեղից՝ Վան, և նետվում ֆիդայական կռիվների թոհուբոհի մեջ: Այն պահին, երբ Թիֆլիսի ազգային ժողովը նրան ընտրում էր պատասխանատու կոմիտեի կազմում, խիզախ երիտասարդն արդեն ճանաչված հայդուկ էր Բաղեշ-Բարձրավանդակի շրջանում:

Ժողովը հրահանգներ ուղարկեց վերոհիշյալ չորս գանտրոնները, հայտնելով կոմիտեների կազմը, գնացողներին դիմավորելու տեղը և ժամանակը: Սերոբը Բարձրավանդակում էր: Գուրգենը Բարձրավանդակում էր: Անսպասելի մի հանգամանք վերջին պահին խանգարեց Խանասորի Վարդանի առաքելությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

Թ՝ ֆլիսից Սևքարեցի Սաքոն միայնակ էր մեկնելու Բարձրավանդակ:

1898 թվի ապրիլի 24-ի երեկոյան ընկերներն ու բարեկամները եկել էին երկաթուղային կայարան՝ Սարգիս Ծովականցին ճանապարհելու դժվարին առաքելության: Բաժանման հուզիչ պահին, երբ չգիտեր նորից հանդիպելո՞ւ է այդ սիրելի մարդկանց, թե վերջին հրաժեշտն է տալիս, նա իրեն պահում էր ուժեղ ու առնական, հուզմունքն արտահայտելով միայն ջերմ ձեռքսեղմումով:

— Պահպանիր քեզ,— ասաց Մարոն, գլուխը թեթևակի հպելով սիրած տղամարդու կրծքին: Յոթ տարվա ընթացքում դա ամենամերձ շփումն էր նրանց միջև:

— Եվ դու պահպանիր քեզ, Մարո: Մենք մեր կյանքի համար պատասխանատու ենք ինչպես հայրենիքի, այնպես էլ միմյանց առաջ:

Հրաժեշտի այդ պահը — զսպված արցունքներով, զոհաբերման պատրաստակամությամբ ու սրբազան գործին ծառայելու հպարտ զգացումով — հրաշալի արտացոլմամբ Սաքոյին բազմիցս այցելելու էր Մեթերհեմի ծանր գիշերներին, Արաբոյի աստղի տակ նրան պահելով միշտ ուժեղ, միշտ առնական:

Աղստևում իջավ գնացքից, փոստային կառքով ուղևորվեց Դիլիջան: Ճանապարհն անցնում էր Սևքարի մոտով: Չգնա՞ հարազատներին հրաժեշտ տալու: Ոչ, միտք չունի նրանց ծանր ապրումներ պատճառել: Նա տեսնում էր բարձր լեռնադաշտի միակ տանձենին, թախծոտ կտուրներ՝ աղոթքի պես ելևող ծխասյուներով, և Արջաձորի մեծ կաղնու գագաթը, որի բնի մեջ արդեն յոթ տարի մխրճված էր իր ու Մարոյի անվանատառերով պղնձե գնդակը: Նա ծիծաղում էր, հիշելով իր այդ պատանեկան խնդությունը: Բայց հո չէ՞ր կարող գնդակը հանել կաղնու բնից: Կամ ինչո՞ւ հաներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Երևանում մեկ օր հանգստանալուց հետո ճանապարհ ընկավ դեպի Կարս: Բարձրավանդակի ներկայացուցիչների հետ հանդիպումը նախատեսված էր սահմանագլխի հայկական մի փոքր ու խուլ շենում: Սերոբ փաշայի հանձնարարությամբ Սևքարեցի Սաքոյին դիմավորելու և Բարձրավանդակ ուղեկցելու էր եկել հայդուկների հիսուն հոգուց բաղկացած մի ջոկատ, որը ղեկավարում էին Ճարտարը և Մուշեղը: Երկու մասի բաժանված, նրանք տարբեր ուղիներով եկել, այստեղ հանդիպել էին իրար: Ուժեղ հայդուկների այդ ջոկատով, ինչպես նախատեսել էին Սերոբն ու Գուրգենը, Սաքոն կարող էր առանց կյանքը վտանգելու հասնել Բարձրավանդակ: Սակայն նա գիտեր, որ այդ երկար, դժվարին ճանապարհը հնարավոր չէ անցնել առանց ասկյարների ու քուրդ ավազակների հետ բախումներ ունենալու: Հիսուն հոգիանոց ջոկատը չէր կարող չնկատվել: Եվ Սարգիս Ծովանյանը հրաժարվեց խիզախ հայդուկապետի մեծահոգի, բայց խելահեղ ձեռնարկումից:

— Իմ կյանքն ավելի թանկ չէ, քան ձեզնից որևէ մեկի կյանքը: Թող ինձ հետ գա միայն մի հայդուկ և տվեք մի ուղեկից, որ մեզ առաջնորդի համեմատաբար անվտանգ վայրերով: Ճիշտ կլինի, որ դուք էլ փոքր խմբերի բաժանվեք և Բարձրավանդակ վերադառնաք տարբեր ճանապարհներով: Որովհետև ներկա իրադրության մեջ ամեն բախում ավելորդ կլինի և խիստ վնասակար՝ անկախ կռվի ելքից:

Ճարտարը և Մուշեղը համաձայն էին նրա հետ:

— Դու Աղբյուրին կասես, որ ինքդ ես փոխել գործողության ծրագիրը:

Սաքոյի որոշումը ճիշտ էր: Ապրիլի հինգի գիշերը հայդուկ Մխոն ընկերների հետ փախել էր թուրքական բանտից: Պատը ծակել էին ու փախել: Բաղեշի գյուղերում վխտում էին նրանց փնտրող զինվորական ու ոստիկանական խմբեր, բազ-

թվայնացրել է 1915.info կայքը

մաթիվ լրտեսներ: Խմբի ճանապարհն անցնելու էր այդ կողմերով: Դրանից բացի, կառավարությունը մեծ գլխագին էր նշանակել Սերոբի համար, պարգև խոստացել նրան, ով կսպանի Գուրգենին կամ կմատնի իշխանության ձեռքը: Այդպիսի ծանր պայմաններում ստվար հայդուկախումբը Բարձրավանդակ հասցնելու այլ միջոց չկար՝ եթե նաև հաշվի առնենք, որ ազգային ժողովը բացառում էր ամեն մի աննպատակ բախում:

Սաքոյի հետ գնալու էր հայդուկ Մխիթարը: Նրանց ուղեկցելու էր Ռաջապ անունով մի... թուրք: Սարգիսը չզարմացավ, որ իրենց թուրք է ուղեկցելու: Նա հիշում էր մեկ ուրիշ թուրքի, որը Խանասորի դաշտում մեռավ իր ձեռքերի վրա: Վերջին շնչում նա ասաց. «Ես ձեզ հետ այստեղ եկա մեռնելու գիտակցությամբ: Եկա ապացուցելու, որ շինական թուրքերի մեջ շատ կան Սերոբով ու Անդրանիկով հիացած, ձեր արդար պայքարը պաշտպանող մարդիկ»: Ռաջապն ապրել էր հայաբնակ գյուղում, մաքուր խոսում էր հայերեն: Առաջին անգամ չէ, որ նա ծառայություն էր մատուցում հայդուկներին: Սաքոյին և Մխիթարին ուղեկցելու էր մինչև Եփրատի ափը: Այնուհետև Դժոխք Հրայրը պիտի ուղեկից տար՝ նրանց առաջնորդելու Սասուն:

— Մինչև Եփրատ դուք իմ իշխանության տակ եք լինելու: Ասեմ համրացեք՝ պիտի համրանաք, կուրացեք՝ կուրանաք, նայած որտեղ ինչպես կպահանջվի,— որպես սովորական նախազգուշացում ասաց Ռաջապը:

Գիշերամուտին ճանապարհ ընկան: Ռաջապը գնում էր առջևից, անաղմուկ ճեղքելով մացառաթփերը՝ բաց տարածք դուրս գալուց առաջ վայրի բնազդով հոտոտելով օդը: Լուսաբացին հասան Սանամերկ: Ռաջապը նրանց տարավ գյուղեզրի մի տուն: Թույլ հրագով աղոտ լուսավորված տունը դա-

թվայնացրել է 1915.info կայքը

տարկ էր: Ռաջապը պահարանից հանեց հաց, պանիր և մածունով լի երեք կավե թաս:

— Ուտենք, որ կարողանանք ճանապարհ գնալ:

— Այստեղ մնալու ենք մինչև օրը մթնի՞:

— Ոչ, կարիք չկա այդքան ժամանակ կորցնելու: Այս կողմերում ես ամեն ինչի համար պատասխանատու եմ: Դու, աղա,— դիմեց Ծովանյանին,— այս պահից համր ես: Իսկ դու, որ գիտես թուրքերեն,— դարձավ Մխիթարին,— հանկարծակի համրացած այս մարդու եղբայրն ես: Լսել ես, որ Եփրատի ափին մի զորավոր բժիշկ է ապրում, եղբորդ տանում ես նրա մոտ: Այսպես կգնանք մինչև Քյոփրիքերոյ:

Գարնան զարթոնք էր՝ ջահել արև ու վառ կանաչ: Ծաղկել էին ճույճիսկ չոր փշաթփերը և իրենց նեկտարն էին բաժանում վայրի մեղուներին: Ջորակները լցվել էին գարնանային ջրերի ուրախ աղմուկով: Նրանց երբեմն հանդիպում էին թուրք գյուղացիներ, բանջար հավաքող կանայք ու երեխաներ, որ իրենց համար անցնում-գնում էին:

— Այս ձորում սառն աղբյուր կա, իջնենք ջուր խմենք, մի քիչ հանգստանանք,— Ռաջապը ճանապարհից շեղվեց ցած:

Աղբյուրի մոտ, հրացանները կողքերը դրած, մի ոստիկան ու երկու զափթիե հաց էին ուտում:

— Հանգիստ, չխառնվեք,— հրահանգեց ուղեկիցը:

Բարևեցին, մոտեցան աղբյուրին: Ոստիկանը, առանց բարևին պատասխանելու, ուշադիր զննում էր նրանց:

— Ի՞նչ մարդիկ եք,— հարցրեց Սաքոյին նայելով:

— Նա համր է, էֆենդի, սարում կայծակի որոտից հիվանդացավ, անկողին ընկավ ու լեզուն լկվեց: Ասում են, Եփրատի կողմերում լավ բժիշկ կա, տանում եմ տեսնեմ ինչ կասի:

Մխիթարի թուրքերենն անթերի էր, որևէ կասկած չհարուցեց:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դուք չե՞ք լսել այդ բժշկի մասին, չգիտե՞ք որ գյուղում է ապրում:

— Չէ, չենք լսել, չգիտենք,— Ռաջապի երեսին չնայելով, պատասխանեց ոստիկանը:

Մինչև Քյոփրիքերոյ ուրիշ վտանգավոր հանդիպումներ չեղան: Ուղեկիցը Սաքոյին ու Մխիթարին տարավ մոռի թփերով ծածկված անտեսանելի մի քարայր:

— Այստեղ պիտի սպասեք, մինչև ես մտնեմ գյուղ, վերադառնամ: Մուշեղն ինձ ասաց, որ ձեզ ներկայացնեմ այս գյուղի ռես Ղազարին: Մի նամակ գրեցեք, տվեք ինձ:

«Ուզում ենք հանդիպել քեզ, բայց չգիտենք, թե ինչ վիճակ է գյուղում: Վալադը գիտե մեր տեղը: Երկու ճամփորդներ»: Ռաջապը վերցրեց երկտողը, գնաց: Վերադարձավ մեկուկես-երկու ժամից, մի պատանու հետ: Ռես Ղազարն ուտելիք էր ուղարկել և հայտնել, որ թուրք ասկյարները գյուղում խուզարկություններ են կատարում, ցերեկով այնտեղ երևալը խիստ վտանգավոր է: Խորհուրդ էր տվել երեկոյան, հանդ ու դաշտից վերադարձող շինականներին խառնված, գյուղ իջնել:

— Մինչ այդ ասկյարները կհեռանան գյուղից,— լրացրեց պատանին:

— Նրանք ի՞նչ են փնտրում:

— Չենք գտնելու հույսով թոնիր ու գոմ, մառան ու ձեղնահարկ իրար են խառնել: Բայց գլխավոր նպատակը զենքը չէ, նրանք փնտրում են հայդուկ Մխոյին ու նրա երկու ընկերներին:

— Ձե՞զ ինչու ուղարկեցին վալադի հետ, դու ո՞վ ես, տղա,— հարցրեց Սաքոն:

— Ես Ղազարի եղբոր որդին եմ, իմ հայրը հայդուկ է Սասունում: Եկա, որ զրուցեմ ձեզ հետ, պատմեմ այստեղի նորություններից, մինչև օրը մթնի: Չանձրալի է, չէ՞, վեց-յոթ ժամ լուռումունջ նստել մութ քարայրում: Հորեղբայրն ասաց,

թվայնացրել է 1915.info կայքը

որ վալադն այստեղից կարող է հետ վերադառնալ, ձեզնից մեկը թուրքերեն գիտե և դա հերիք է մինչև Եփրատ գնալու համար:

— Ինձ տրված վարձը մինչև այստեղ բերելու համար շատ է...

— Ոչինչ, Ռաջապ, էլի կհանդիպենք,— Սաքոն իր կողմից էլ մի բան տվեց ուղեկցին:

— Հաջողություն ձեզ ու ձեր արդար գործին, աղա, ես գնամ,— Ռաջապը տաբատի փողքերը խցկեց գուլպաների մեջ, պնդեց տրեխների կապերը, վերցրեց ձեռնափայտն ու մոռի թփերի միջից շրջակայքը զննելով՝ դուրս եկավ:

— Բարով գնաս,— հետևից ասաց Մխիթարը,— երանի քո սիրտը Թուրքիայի կրծքում դրված լիներ...

Երեկոյան հանդվորներին խառնված գյուղ իջան: Ռես Ղազարը վստահելի մարդ էր, զենքը ձեռքին մասնակցել էր ազատագրական շարժմանը, 1895—96 թվերի կոտորածի ժամանակ ձորերից վիրավորներ, որբացած երեխաներ, մոլորյալ փախստականներ էր հավաքում, տեղափոխում լեռնային ապահով քարայրները: Ճաշակել էր Կարինի բանտի դառնությունները: Ազատվելուց հետո նրան հանձնարարվել էր մնալ գյուղում, դարձրել էին գյուղի ռեսը, և Քյոփրիքերոյը հաճախ էր ընդունում Բարձրավանդակ ելնող կամ այնտեղից իջնող հայդուկ ճամփորդների, ապաստան տալիս թուրքական իշխանության կողմից հետապնդվող գործիչների: Եղբայրը վաղուց ի վեր Աղբյուրի հայդուկախմբում էր, պատրաստվում էր հոր մոտ՝ լեռները բարձրանալ նաև նրա 15-ամյա որդին: Գիշերը, երբ տան հետևի փոքր սենյակում ընկերոջ հետ քնած Սաքոն արթնացավ, ցածրիկ պատուհանից նրան երևաց մի հուզիչ պատկեր: Վիթխարի գայլխեղդը ոտքերի տակ թավալված ու

թվայնացրել է 1915.info կայքը

հրացանը ծնկներին, տղան նստել էր ցանկապատի դռան մոտ և ուշադիր հսկում էր գիշերային խավարը:

Լուսաբացից առաջ ճանապարհ ընկան: Սաքոն՝ մի պարկ քալակին, Մխիթարը՝ ճքճքան սապոգներով ու մորթե ծիլ փափախով, ձեռքին փայլուն գավազան: Սաքոն համր բատրակ էր, Մխիթարը՝ նրա թուրք աղան:

— Իմ բանտարկությունն ու քո աղայությունը մինչև ո՞ւր է տևելու:

— Մինչև Կարին, հետո կառաջնորդվենք իրադրության թելադրանքով:

Սաքոյի պարկն առանձնապես ծանր չէր: Նրա մեջ Մխիթարի նախկին հանդերձանքն էր, մի քանի պատահական չուքուփալաս և ճանապարհի ուտելիքը: Թուրքաբնակ ինչ-որ գյուղով անցնելիս նրանց միացավ ջորուն աղ բարձած մի թուրք գյուղացի:

— Ասում եմ՝ մենակ ճամփա գնացողը կրկնակի է հոգնում: Գնանք միասին, թե որ միմյանց օգուտ չտանք, վնաս էլ չենք տա: Ծառայիդ ասա, թող պարկը ջորու վրա դնի:

Անցան Կարինը, միացան դեպի Մուշ գնացող մի խառնադեմ քարավանի: Այժմ երկուսն էլ մանր վաճառականներ էին, գնում էին տնայնագործական իրեր գնելու: Մի թուրք հարյուրապետ՝ չորս-հինգ ասկյարներով, հույն ատաղձագործ, արաբ առևտրականներ, չարչիներ և, ի վերջո, սրինգը գոտու տակ խրած և պարկով օձը շալակին անհայտ ազգությամբ մի դերվիշ: Նա քայլում էր ու արևելքի ինչ-որ լեզվով խոսքեր շշընջում: Ո՞ւմ հետ էր խոսում, ճակատագրի՞, իր ալլահի՞, թե օձի: Հասան բացօթյա գիշերակայան: Սաքոն առաջվա պես համր էր, ընկերոջ օգնությամբ առևտուր անող համր վաճառական: Սմեն խումբ իր համար խարույկ վառեց, պատրաստվեց գիշերելու: Սրաբների խարույկի մոտ դերվիշը սրինգով հմայում էր օձին:

թվայնացրել է 1915.info կայքը

Սաքոն չէր ճայում այն կողմ, հարյուրապետի ու ասկյարների խոսակցությունն էր լսում: Դա պատմություն էր երկու օր առաջ ձերբակալված ու կախաղան հանված մի պատանի հայդուկի մասին: Հարյուրապետը, որ ղեկավարել էր մահապատժի արարողությունը, գրեթե հիացմունքով էր խոսում նրա մասին:

— Ասաց՝ այո, ես ջանֆիդա եմ և ուզում էի սատկացնել Բահրի փաշային: Ափսոս, չստացվեց, դուք ինձ բռնեցիք: Բահրի փաշան կախաղան է հանում ինձ, բայց թող իմանա, որ ինձանով չի վերջանում վրեժի ոգին: Մեզնից մեկ ուրիշը շանսատակ կանի նրան...

— Հետո՞:— Ասկյարները պլշած, բերանները բաց լսում էին հարյուրապետի բաց պատմությունը:

— Հետո ինքն իր ոտքով դեն գետեց տակի աթոռը և մեկ րոպե չանցած հոգին ավանդեց:

— Ափսո՜ս...

— Ի՞նչն ափսոս:— Իր էությանը վերադարձած հարյուրապետը արնակոխ աչքերով նայեց ասկյարին:

— Ասում եմ ափսոս, որ այդպիսի իգիթը գյավուր էր...

Մխիթարի վառած խարույկից քիչ հեռու արաբները հարբել էին: Հարբել էր նաև դերվիշը: Օձը նվագի տակ գալարվելուց հոգնել, ընկել էր պարկի մոտ: Երբ դերվիշն ավելի հարբեց, օձը փաթաթեց վզին և սկսեց պարել: Ոչինչ չասող վայրենապար էր: Պարելով մոտեցավ ասկյարներին, փող ուզեց: Հարյուրապետը ձեռքը սրին տարավ: Դերվիշը շրջվեց, մոտեցավ Սաքոյենց խարույկին: Նրանք զենք չունեին, ավելի համարձակ ու լկտիորեն պահանջեց:

— Հեռացիր, լպիրշ, օձիդ հետ միասին շանսատակ կանեմ,— մոլտաց Մխիթարը:

Չհեռացավ: Իր անհայտ լեզվով բարբաջելով կես պտույտ արեց խարույկի կողքով, հայտնվեց Սաքոյի գլխավերևում:

թվայնացրել է 1915.info կայքը

Պզտ ց, ձեռքը բուռ արած պարզեց փողի: Սաքոն համր էր, իրավունք չուներ խոսելու: Զզվանքով հետ հրեց դերվիշի ձեռքը: Դերվիշը գալար-գալար քանդեց վզին փաթաթած օձը և ինչ-որ բան շշնջաց նրան: Սև, երկճյուղ լեզուն հանելով օձը չարագուշակ ֆշշացրեց Սաքոյի դեմքին: Ձախ ձեռքի խանձողով սողունի ուշադրությունը շեղելով, աջով բռնեց վզից և լախտի նման պտտելով, որ չհասցնի փաթաթվել իրեն, ուսախառն իջեցրեց դերվիշի մեջքին: Նա ոռնաց, հետ թռավ: Բոլորն ակնապիշ նայում էին Սաքոյին: Թունավոր կենդանի մտրակով ևս երկու անգամ դերվիշին ոռնացնելուց հետո օձը գլխավերևում ուժգին պտտեց ու բաց թողեց դեպի ներքևի քարափները: Ոչ ոք ծպտուն չհանեց: Նա դարձյալ թիկնեց կրակի կողքին, փորձեց քնել:

Հաջորդ օրվա մայրամուտին ճամփորդները հանգստանում էին Կալա հայաբնակ գյուղից հյուսիս-արևելք ընկած Սոսի սարի բարձունքներում: Նրանք տեսնում էին դատարկ ճամփաներ, գյուղեր, որոնց երդիկներից ծուխ չէր բարձրանում, լսում էին վայրենացող հատուկենտ շների ողբաձիգ ոռնոցներ: Դրանք 1895—96 թվերին կոտորածի ենթարկված գյուղերն էին: Ամայություն, լռություն, ոռնացող թախիծ: «... Այստեղով թուրքերն են անցել»:

— Մի՞թե փրկվողներ չեն եղել:— Սարգիսը շշմած էր զարհուրելի տեսարանից:

— Հատուկենտ փրկվողները գաղթել են Տիգրանակերտ կամ Ռուսաստան:

— Ահա եվրոպական և ցարական դիվանագետների սըրտացավ օգնության արդյունքը...

Սարից իջնելիս հանդիպեցին մի պատանի հայ հովվի:

— Ո՞վ ես դու, տղա:

— Տալվորիկցի եմ, ս. Կարապետ վանքի հովիվը:

թվայնացրել է 1915.info կայքը

Տալվորիկ անունը սպարզապես բան չէր: Պատմություն էր ու լեգենդ, հեքիաթ էր ու առասպել: Տալվորիկ: Հրաշագործի որոտ էր ու սրի զնգոց: Մի՞թե Սաքոյին բախտ էր վիճակված տեսնելու այդ ըմբոստ հայդուկապետը:

— Որտե՞ղ է Տալվորիկը, տղա:

Պատանին ձեռքը պարզեց դեպի լեռների հեռավոր մշուշը:

— Այնտեղ: Տալվորիկ հասնելու համար դեռ շատ պիտի գնանք...

Տղան ասաց, որ վանքում գիշեր-ցերեկ զափթիաներ են հերթապահում: Միասին իջան ձոր, վանքի հովիվը գնաց կանչելու Մովսես վանահորը: Սևոն՝ այսպես էր աստծո ծառայի հայդուկային անունը, խոստացավ մի սարկավագ ուղարկել, որպեսզի նրանց ուղեկցի Եփրատի ափ:

— Կգնաք այնքան, մինչև գետի մյուս ափին երևա հույլ նավավարի միւղնակ խրճիթը: Ստիպված եք գիշերելու եղեգնուտում: Լուսաբացից առաջ հույլը նավակով կգա, կանցկացնի Եփրատը: Նա կասի, թե այնուհետև դեպի ուր գնաք և ինչ անեք:

— Չէի՞ք կարող վանք մտնել որպես ուխտավոր:

— Ոչ, վտանգավոր է: Ոչ դուք, ոչ էլ ես իրավունք չունենք այդպիսի համարձակության դիմելու: Այստեղ սպասեք սարկավագին:

Սևոն ուտելիք և մի զույգ տրեխներ էր ուղարկել սարկավագի հետ:

— Սրանք հարմար են անձայն քայլելու համար: Վանահայրն ասաց գետն անցնելիս փոխեք:

Լուսինը կեռ յաթաղանի պես փայլում էր լեռների վրա: Եփրատը հորդացել էր սարերի ձնաջրերից, հոսում էր ափերը լիզելով, ջրերի խորքում տնքոց էր ու մռնչյուն: Սարգիս Ծովակյանն առաջին անգամ էր տեսնում Եփրատը: Թախծալի հուզ-

թվայնացրել է 1915.info կայքը

տուաք էր պատել նրան: Հիշեց Արաքսը, որի ջրերը քանի -քանի անգամ թրջել էին իրեն բեռան տակ պարսկական ափն անցնելիս:

— Հայոց բոլոր գետերը նման են իրար, Մխիթար, պղտոր են, տխուր ու շառաչուն:

— Որովհետև մեր բախտը մեկն է և ամեն տեղ նույնը... Գնանք, հարմար տեղ գտնենք գիշերելու, տեսնենք ինչ է բերելու առավոտը:

Թիկնեցին չոր եղեգների վրա: Ահավոր հոգնածությունը նրանց վայրկենապես սուզեց խոր քնի մեջ:

... Սարգիսն արթնացավ կեսգիշերին, ձիրհուն ձայների մեջ թափանցած վտանգի շշուկից: Եղեգնուտի սառն ու չոր խշշոցի մեջ նա դարանաքայլ մոտեցող շնչավորի գոյությունն զգաց: Ո՞վ էր: Գուցե մթնաորսի ելած գազան, գուցե և գիշերապահ թալանչի, որ այստեղ, գետանցի մոտերքում, սպասում է սուրբ Կարապետ բարձրացող միայնակ ուխտավորի: Հեռվից խուլ դղիրդ եկավ, գետինը մի քանի անգամ ցնցվեց բախումից և լսվեց ջրի հուժկու ճողփյուն: Ամպրոպների որոտից օրեր առաջ բնահանված ժայռաքար էր, որ ի վերջո հենարանը կորցնելով՝ գլորվեց ու հանգավ ձորերում: Վտանգը մի պահ շունչը պահած կույչ եկավ, հետո եղեգները նորից շարժվեցին, և նրանց մութ զանգվածից բոցկլտաց վայրենացած կատվի չար հայացքը: Թվաց, թե եղեգնուտը պիտի բռնկի այդ հայացքի վայրի կրակից: Հետո խելագար ոստյուններով մագլցեց ափամերձ ժայռը, և բարձր խռոռոցները լցվեցին չղջիկների տագնապահար թպրտոցով: Վերևում աղոտ լուսնամշուշ էր, և Սարգիս Ծովանյանը տեսավ չղջիկի հետևից ոստնած կատվի կորագիծ անկումը գետի խոիվ ջրերին, լսեց նրա վերջին մլավյունը, որ նման էր աստղի անկումից հետո դեռ ինչ-որ ժամանակ

թվայնացրել է 1915.info կայքը

օդում մնացող հետագծի: «Վերջ,— մտածեց Սարգիս Ծովականը:— Բայց ինչի՞ն վերջ: Երանի թե վայրենացած կատուն իր մեջ ներառած լիներ այս երկրի ամբողջ աղետն ու ողբերգությունը և այսպես գնար, խեղդվեր հին գետի պղտոր ալիքներում: Եվ ինքը զոհված հայդուկների շիրիմները համբուրելով հետ դառնար դեպի ծննդավայր, դեպի խաղաղ հորովելն ու Թումանյանի բանաստեղծությունը, Արջաձորի կաղնու մամոռոտ բնի միջից հաներ տարիներ առաջ իր արձակած պղնձե գնդակն ու երդմանը հավատարիմ՝ նրանից մատանի պատրաստեր Մարոյի համար... Եվ կյանքն ապրեր երկրի փրկությանը մասնակցած մարդու անխոով գոհությամբ, և իր սպիների պատմություններն աներ երեխաներին: Բայց հիմա ի՞նչ վերջ, ինչի՞ն վերջ, մի վայրենացած կատու խեղդվեց Եփրատում՝ մի բան, որը նույնպես ողբերգության փաստ է: Վերջը հեռու է, և ընդհանրապես ի՞նչ է իր մեջ ավարտելու այդ վերջը...»:

Դիմահայաց ափին ճրագ դողաց, քնաթաթախ ճոհնչով բացվեց հույն նավավարի խրճիթի դուռը: Գորշ երկնքի հեռավոր ծիրում արթնացավ Արաբոյի աստղը: Մխիթարը դեռ քնած էր չոր եղեգների վրա: Սարգիսը մեղմորեն ցնցեց ընկերոջ ուսը.

— Վեր կաց, ուխտավոր, աղոթքի ժամն է...

Տեսան, թե ինչպես ծերունին կռացավ Եփրատի վրա, մի բուռ ջուր խփեց դեմքին, և արձակեց ուռենուն կապված նավակը՝ պահ առ պահ խորհրդավոր նայելով դիմացի եղեգնուտին: Մեկուկես ժամ անց նրանք Եփրատի մյուս ափին լսում էին ծեր նավավարի հրահանգները.

— Քարերին բախվող ջրի ձայնով գտեք սրընթաց առուն և գնացեք հոսանքն ի վեր: Սև ժայռի մոտ բուն կկոնչա: Կպատասխանեք գիշերահավի կանչով: Այնտեղ ձեզ սպասում է Ուրվականը կամ նրա մարդկանցից մեկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սև ժայռից հետո անցնելու էին մի քանի ձորակ, հասնելու Ղզըլաղաջ գյուղ: Այնտեղ, նախապատրաստված հանգստատեղիում, մնալու էին մինչև երեկո, և գիշերամութի հետ Մխիթարին հրաժեշտ տալով՝ Սարգիս Ծովանյանը մեկ ուրիշի ուղեկցությամբ շարունակելու էր ճանապարհը դեպի Բարձրավանդակ:

Բուն կռնչաց: Մխիթարը պատասխանեց նրան: Սև ժայռի հետևից դուրս եկավ մի ստվեր և անխոս նշան արեց, որ հետևեն իրեն: Սաքոն հույս ուներ այստեղ տեսնելու Դժոխք Հրայրին, բայց նա չէր: Ի՞նչ էր նշանակում դա: Եվ, հասնելով ուղեկցի հետևից, ձեռքը դրեց նրա ուսին:

— Ո՞վ ես դու, բարեկամ: Որտե՞ղ է այն մարդը, որին մենք այստեղ պիտի հանդիպեինք:

— Դժոխքը երկու օր առաջ սարերն է բարձրացել: Անհրաժեշտ էր: Ինձ է հանձնարարել, որ ընդունեմ ձեզ: Չխոսենք, գնանք, ուր որ է լույսը կբացվի:

Մխիթարն ինչ-որ բան դրեց Սաքոյի ափի մեջ:

— Ի՞նչ է սա:

— Թույն է: Երբ հայդուկը ճամփա է գնում առանց զենքի, գոնե այսպիսի մի սրվակ պետք է ունենա ծոցում: Թեկուզ ինքնասպանության համար, եթե դրա կարիքն առաջանա:

Սարգիսն առանց ուշադրություն դարձնելու սրվակին ու նրա խորհրդին, դրեց գրպանը: Կարո՞ղ էր գուշակել, թե այդ չնչին իրը փորձանքներ է բերելու իր գլխին...

Դեռ անկողին չէին մտել, երբ Ղզըլաղաջը լցվեց կրակոցներով: Ութ զինված չեթեներ հրամայեցին դուրս գալ խրճիթից: Գյուղապետ Ջագայիր աղան նրանց խուզարկեց և կապկպելով՝ լուսաբացի հետ ճամփա հանեց դեպի Մուշ:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

«Թուրքիան խավարի և բռնության երկիր է: Թուրքիայից ելնող ամեն ճանապարհ տանում է դեպի փրկություն»: Այս խոսքերը Սարգիս Ծովանյանը լսել է կրետացի բժշկից, Էրզախ կոմիսարի դիվային ծրագրի փորձարկման գիշերներին: «Վաղը ես թողնելու եմ Մեթերհեմը, շղթայակապ ճանապարհ եմ ընկնելու դեպի Կարին: Վստահ չեմ, թե ողջ-առողջ տեղ եմ հասնելու, կամ Կարինի դատարանը արդարացնելու է ինձ՝ իր երկրի աճումից ներողություն խնդրելով Մեթերհեմի պատճառած տառապանքների համար: Ոչ, վստահ չեմ: Երեկ, վերջին հարցաքննության ժամանակ, Մուշի դատախազը ենթադրելի մի արտահայտություն արեց՝ Կարինում դու Մեթերհեմը հիշելու ես պայծառ, ափսոսալի կարոտով: Մի՞թե նոր դատավճիռը կարող է ավելի դաժան լինել, քան 101 տարվա բանտարկությունը: Առավել դաժանը կախաղանն է: Եվ ինչի՞ց է բխում դատախազի «ճախազգացումը», մեղադրական ի՞նչ փաստեր ունի ձեռքի տակ: Բոլոր դեպքերում Մեթերհեմն աշխարհի ամենադաժան բանտն է և նրանից ելնող ամեն ճանապարհ տանում է դեպի փրկություն...»

Ծովասարի գլխին Արաբոյի աստղը մշուշոտվում էր ու պարզվում, մթնում էր ու պայծառանում: Սարգիս Ծովանյանը փորձում էր մեկնել երկնային ոչ մի համաստեղության չենթարկվող այդ աստղի տվայտանքը: Ինը հոգի էին բանտախցում, բոլորն էլ դատապարտված 101 տարով: Կարինի դատարանը Բ դռան հանձնաժողովով վերանայելու էր նրանց պատժաչափերը: Ինձնից ոմանք գիտեին, որ Մեթերհեմ են վերադառնալու գրեթե ազատ մարդկանց իրավունքով, ինքնակամ այցելուի նման: Քրեական այդ հանցագործները խավարի և բռնության իրենց երկրից գնել էին իրենց կյանքը: Ինձնեորոշը,

թվայնացրել է 1915.info կայքը

միակ քաղաքականը, Սարգիս Ծովականցն էր: Մեթերնեմի այդ վերջին՝ 1061-րդ գիշերը նրա համար ամենաստանջալին էր: Ցավի, կարոտախտի, մղձավանջային տեսիլքների շատ գիշերներ էր ապրել, բայց դա ամենասարսափելին չէր: Ի՞նչ էր ուզում ասել դատախազը: Չի բացառվում, որ նրա թղթապանակում մերկացնող-ապացուցող ոչ մի փաստ չլինի: Թուրքիան նենգ երկիր է, գուցե բոլորովին ա՛յլ բան է որոշված: Ասենք՝ գբնդակահարություն փախստյան փորձի համար: Կամ պարզապես՝ մահ: Չէ՞ որ մարդիկ մեռնում են նաև բանտերից դուրս, հանկարծահաս հիվանդություններով, և դրանում ոչ ոք մեղավոր չի ճանաչվում: Պաշտոնական չոր ու ժլատ հաղորդում ռուսական հյուպատոսարանին, ու վերջ: Դժվար թե Ռուսաստանի միապետը դրա համար պատերազմ հայտարարի Թուրքիային: Եվ ագռավների համար միևնույնն է, թե անհայտ մի կիրճում ում աչքերը կծվատեն, իր երկրի ազատության համար հոգին բոցավառած հայդուկի՞, թե ինչ-որ ձիագողի:

Ծովասարի գլխին Արաբոյի աստղը աբահչելի շողաց ու անցավ երկնքի ետև: Մեթերնեմի վրա բացվեց 1900 թվի նոյեմբերի 10-ի առավոտը: Ջյունախառն քամին ոռնում էր քաղաքի պատերի տակ, թռչում ցրտամած դաշտերով: Նրանց մեկ-մեկ դուրս էին բերում բանտախցերից, շղթաներ հագցնում, հանձնում բանտի առջև խոնված ձիավոր ոստիկաններին: Վերջինը դուրս եկավ Սաքոն: Հազարապետը նրա շղթաները հագցրեց անձամբ իր ձեռքով:

— Ես քեզ, համենայնդեպս, շղթաներ հագցրի, գյավուր:

— Շնորհավորում եմ հաջողությունդ, հազարապետ: Դեմքիդ սպին գրեթե չի երևում:

Սովորականից տասնապատիկ ուժեղ պահակախումբ էր կարգված: 126 լավ զինված հեծյալ ոստիկաններ երկշար օղակի մեջ էին առել ինը շղթայակապ կալանավորների: Նրանցից

թվայնացրել է 1915.info կայքը

ութը փախչելու չնչին մտադրություն անգամ չէին կարող ունենալ, նրանք գնում էին դեպի հավաստի փրկություն: Վտանգավոր մնում էր մեկը՝ նույնպես շղթայակապ հայդուկը, բայց երկու հոգին էլ բավական էին այդ վիճակում նրա ամեն ըմբոստություն զսպելու համար: Վախը դրսից էր՝ վրիժառու հայդուկներից, որոնք կարող էին փոթորկի նման վրա հասնել որևէ մառախլապատ կիրճում:

— Փախուստի ամեն մի փորձ կավարտվի գնդակահարությամբ: Ռատիկանականը իրավունք է տրված որևէ կրակոց լսելու դեպքում նախ ոչնչացնել բոլոր կալանավորներին:— Հազարապետի խոսքն ուղղված էր ոչ այնքան շղթայվածներին, որքան բանտի առաջ հավաքված ամբոխին: Ռատիկանատան երկրորդ հարկի պատշգամբից Մեհմեդ չաուշը որսաց Սաքոյի հայացքը: Նրանք մեղմ ծպտացին իրար և այդ ակնթարթի մեջ Սևքարեցու խոր երախտագիտությունը կար և ծպտյալ ֆիդայու քաջալերող, բարեմաղթ հրաժեշտը:

Ջյուն, քամի, մառախուղ: Պաղ, ծանր շղթաները զնգզնգացնելով նա ասես հազարավոր տարիներ գնում էր մշուշի միջով և ճանապարհի վերջը չկար, չէր երևում: Ծանր հատուկենտ հաչոցներով նրանց հանդիպում էին փոքր ու խեղճ գյուղեր, ուր գոնե կարող էին տաքացնել փայտացած ձեռքերը: Սակայն ռատիկաններն շտապում էին, նրանք ուզում էին օր առաջ հասնել Կարին, ազատվել ձնաբքից ու դարանակալ վտանգներից: Եվ քամու ամեն ոռնոցի հետ մտրակը ճչում էր շղթայակապ քայլողների գլխի վրա: Նախապես որոշված էին գիշերային հանգրվանները: Բոլորը՝ հայկական շեներում, որոնք պարտավոր էին ձրի կերակրել կալանավորներին ուղեկցող 126 ռատիկաններին: Նրանց դիմավորում էին սիրով ու պատրաստակամությամբ, խորոված ոչխարներ էին մատուցում՝ պայմանով, որ թույլ տան իրենց ձեռքով կերակրելու Սևքարեցի Սաքոյին:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրա ձեռքերն այնպես էին շղթայված, որ ինքը չէր կարող օգտվել խորովածից կամ տաք ճաշից, նրան պիտի ուրիշները կերակրեին: Այդ մարդկանց մեջ նա երբեմն տեսնում էր հին ծանոթների, և օրեր անց, Կարին հասնելուց հետո համոզվեց, որ Անդրանիկի մարդիկ իրեն ուղեկցում էին ամբողջ ճանապարհին: Ոստիկանների կաշառյալ թույլտվությամբ Սաքոյին սնունդ մատուցող շինականներից մի քանիսը հասցրել էին նրա ականջին շշնջալ Անդրանիկի հուսո և քաջալերանքի խոսքերը՝ դիմացիր, ամեն ինչ լավ կլինի... Ռուսական փոխհյուպատոսը խոստացել է ամեն գնով պաշտպանել քեզ... Մեծ Երկիրը մտահոգված է քո բախտով... Բարձրավանդակի ֆիդայիները սպասում են քեզ...

Ձեռքից արյուն էր ծորում: Շիկանալու պես ցրտից սառած շղթաները կպչում էին մաշկին և օղակների տակ բազուկների մաշկը քրքրվել էր, առաջացել էին տանջալի վերքեր: Մեթերեմից պատռտված կոշիկներով, իր ունեցած թեթև շորերով դուրս եկած Սևքարեցին Կարին չէր հասնի: Բայց գիշերային հանգրվաններում հոգում էին նրա վիճակի մասին: Հագցընում էին տաք գուլպաներ ու նոր տրեխներ, բրդյա շորեր: Այդ շորերից մի քանիսը հանգրվանը թողնելուց հետո դարձել էին ոստիկանական ավար:

... Նա արդեն կորցրել էր ժամանակի ու տարածության զգացումը, ցրտահար մարմինը հրաժարվում էր ենթարկվել ոգու պահանջին: Վերջապես մի իրիկնամուտի բքավոր մառախուղի մեջ ուրվագծվեց սև, հեռու ինչ-որ մոայլ զանգված: Կարինի ամրոցի աշտարակն էր: Տանջահար կալանավորներին վիճակված էր ևս մի քանի ժամ ենթարկվել ոսկորները թափանցող քամու խոշտանգումին: Բանտի բակում նրանք կիսակենդան թափվել էին ձյան վրա՝ այլևս անընդունակ շարժվելու: Ոստիկանների ստվար ջոկատից այժմ նրանց հսկում էին երեք-չորս

թվայնացրել է 1915.info կայքը

հոգի, մնացածները ցրվել էին տաք անկյուններ: Կալանավորների հանձնումը ձգձգվում էր բանտային ինչ-որ պաշտոնյայի բացակայության պատճառով: Երեք ասկյարներ հսկիչ ոստիկանի ուղեկցությամբ մոտեցան շղթայվածներին:

— Ո՞րն է:

— Սա:— Ոստիկանը մտրակի ծայրով հրեց Սաքոյի ուսը: Ասկյարներից տարեցը կռացավ, երախից գարշելի սխտորահոտ թափելով ճայեց կալանավորի դեմքին: Հետ քաշեց օձիքն ու տեսնելով արծաթե շղթայով խաչը՝ ճանկեց այն:

— Քո վզին ավելի հարմար բան եմ հագցնելու, ջանֆիդա, սա քեզ էլ պետք չէ:

Գերմարդկային ճիգով ներսում մնացած ուժի ծվենները կուտակելով՝ Սաքոն ծնկով հարվածեց իր վրա թեքված ասկյարի փորին: Հատուցումն անխուսափելի կլիներ, եթե ժամանած պաշտոնյայի հրամանով ոստիկաններն այդ պահին չհետվեին ներս տանելու կալանավորներին:

— Դու քսանհինգերորդն ես, որ կախվելու ես իմ ձեռքով, գյավուր: Պարանը վիզդ հագցնելիս ես քեզ կհիշեցնեմ սա...— վայրենի չարությամբ մռլտաց ասկյարը, որը, հավանաբար, բանտի դահիճն էր:

Սարգիս Ծովանյանին առանձնացրին մյուսներից, բանտի պաշտոնյան կամենում էր խոսել նրա հետ:

— Աշխարհի ծայրերն ուղղված քո բողոքներով դու քեզ հայտնի ես դարձրել Թուրքիայի բանտային համակարգի ամբողջ անձնակազմին: Նպատակդ անհայտության մեջ չմնանե՞լն է, թե՞ հույս ունես խուսանավելով փրկվել պատժից:

«— Սովորական հետաքրքրություն է,— մտածեց Սաքոն:— Այս շներից ամեն մեկը իր պարտքն է համարում վերջին դատից առաջ անաբեկել ինձ»:

թվայնացրել է 1915.info կայքը

Ցեղապետ Սլոն մի թուրք պաշտոնյայի ուղեկցությամբ մոտեցավ նրան: Ձեռքերն ու ոտքերն ազատված էին շղթաներից: Քայլում էր օրորվելով, այն ձիու նման, որը երկար ժամանակ կապված մնալուց կորցրել է տարածության զգացումը:

— Ահա և տեղ հասանք, ուխտավոր: Հիմա մենք բաժանվելու ենք և գուցե ամբողջ կյանքում այլևս չենք հանդիպի:— Ցեղապետն աչքի տակով պահանջող ու արհամարհական մի հայացք նետեց իրեն ուղեկցող պաշտոնյայի կողմը. վերջինս կաշառված էր այդ ծառայության համար, պարտավոր էր առանձին թողնել կալանավորներին:

Սաքոն խորին երախտագիտությամբ նայում էր մեթերճեմյան դժոխքի իր հրաշալի բարեկամին, որը հարազատ եղբոր գթասրտությամբ նույնիսկ այս վերջին ու ծանր պահին չէր լքում իրեն:

— Շուտով կգան, շղթաներդ կարձակեն,— շարունակեց ցեղապետը:— Հույս ունեմ, որ ռուսական իշխանությունը քո հարցում վերջնականապես կհաղթի այս երկրի օրինապահներին: Դու արդար ես անկախ այն բանից, թե ինչ ես արել Թուրքիայի դեմ: Նա, ով պայքարում է իր ժողովրդի ազատության համար, չի կարող արդար չլինել...

Ծովանյանը խեղդվում էր հուզմունքից, միայն կարողացավ ասել.

— Եղբայրս, շատ եմ ցավում, որ ինձ չվիճակվեց գոնե ինչ-որ չափով հատուցել այն ամենի դիմաց, ինչ դու արել ես ինձ համար բանտային մեր մոայլ կյանքի ընթացքում: Ինձ համար քույրդ ժողովուրդը դու ես, և ոչ թե Շարաֆ ցեղապետը կամ Դերիկի աղբյուրի մոտ դարանակալած ավազակը: Դու ես, Բաշեթ լեռան քույրդն է, այն կինն է, որը բոլորից թաքուն քարանձավում պահում-պահպանում էր հայ որբերին...

թվայնացրել է 1915.info կայքը

— Այս երկրում իմ ժողովուրդն էլ ապագա չունի, Սաքո: Գալու է ժամանակ, որ Թուրքիայի ձորերն ու կիրճերը դառնալու են քուրդ ժողովրդի գերեզմանները: Ես տեսնում եմ գալիքի այդ մռայլ օրերը...

* * *

Կարնո բանտը ներքին դաժանությամբ չէր զիջում Մեթերնեմին, բայց բանտախցերը համեմատաբար ընդարձակ էին, չոր և լուսավոր: Սրբատաշ քարով կառուցված այդ շինություն ուներ երեք բաժանմունք: Առաջինը ոստիկանատունն էր, որի նկուղային խցերում կալանվում էին մինչև մեկ ամսվա բանտարկության դատապարտվածները: Երկրորդ բաժանմունքը՝ Արիա Կոնլուխը, «ծառայում» էր մի քանի տարով այստեղ ընկած գողերին ու ավազակներին, իսկ պետական հանցագործներին, մարդասպաններին ու այլ ծանր մեղքի տեր կալանավորներին պահում էին Դաշխանա կոչվող երրորդ բաժանմունքում: Հսկիչներն այստեղ գործում էին առավել վայրագորեն. ծեծում, խլում էին կալանավորի մոտ նկատված դրամն ու արժեքավոր իրերը, օդափոխության էին հանում միայն կաշառքով, և Դաշխանայից ոչ մի բողոք չէր կարող դուրս գալ, այդպիսին էր բանտի չգրված օրենքը: Բանտախցերի միջով անցնում էր մի սակավաջուր առվակ, որը և՛ զուգարան էր, և՛ լվացքատեղի: Տանջալի ճամփորդությունից զարհուրելի հոգնած, խոշտանգող շղթաներից ի վերջո ազատված Սարգիս Ծովանյանը հայտնվեց Դաշխանայի ոչ մեծ բանտախցում, ուր խառնիխուռն տեղավորված էին վաթսունից ավելի բանտարկյալներ: Նա փռվեց իր կողմը նետված խսիրի կտորին և սուզվեց մեռելային խոր քնի մեջ:

... 1900 թվի դեկտեմբերի այդ օրերին Կարնո բանտի Դաշխանան լեփ-լեցուն էր ծանր հանցագործներով: Քաղաքական-

թվայնացրել է 1915.info կայքը

ներ գրեթե չկային: Մարդասպաններ էին, պետական դրամատան կողոպտիչներ, մաքսանենգներ՝ հավատ ու ազգություն կորցրած կալանավորներ, ովքեր օրն ի բուն թուղթ էին խաղում, հաճախ այն ավարտելով դանակահարություններով: Մեթերնեմից այստեղ բերված, լրացուցիչ դատավարության սպասող Սևքարեցի Սաքոն ինքն իրեն խեղդելով վիրավորանքներ էր կուլ տալիս: Մեղմորեն հետ էր հրում ժամացույցը պահանջող միաչքանի քրդին, թուրք մարդասպանին խնդրում դանակը հետ քաշել իր կրծքից, որովհետև նա շփոթում է, ի՛նքը չի նրա եղբորն սպանողը, կամ ոչ պակաս վտանգավոր հսկիչին էր հանդուգն, թե գրպաններում որևէ արժեքավոր բան չունի: Այդ սրիկաներից ամեն մեկի մեջ նա տեսնում էր հրահանգավորված տեռորիստին, և մոտալուտ ազատության հույսով այսպես զսպում էր իրեն: Բայց թղթախաղում տարված մեկը քաշեց, պոկեց նրա վզի բազմաչարչար արծաթե խաչը, և Սաքոն մոռացավ ամեն ինչ: Ավարառուն ջարդուփշուր մուրթով շպրտվեց թղթախաղով զբաղված իր ընկերների կույտի վրա: Կռիվը շաբունակվեց մեկը վեցի դեմ հարաբերությամբ: Սակայն երկար չտևեց: Մեծ ավազակ Կարա Մամոյին դուր եկավ հայդուկի ուժն ու քաջությունը, հրամայեց հանգիստ թողնել նրան: Միևչև բանտարկվելը Կարա Մամոն օրենքից փախած, սարերն ընկած մեղապարտ էր ու իր վիճակի համար հանցավոր էր գտնում ոչ թե իրեն, այլ սուլթանին և նրա իշխանավորներին: Դերսիմի լեռներում Մամոն իր ավազակներով գերի է վերցնում անգլիական հյուպատոսիս ու Երզնկայի հազարապետին և տանում բարանձավ՝ դատելու:

— Դու այդ ի՞նչ օրենքով պիտի մեզ դատես,— քմծիծաղում է հազարապետը:

— Կարա Մամոյի օրենքով, իսկ Կարա Մամոն ես եմ: Իմ

թվայնացրել է 1915.info կայքը

օրենքը պահանջում է, որ երկուսդ էլ հանեք շալվարներդ և ընտեք կազ փշի վրա:

Կաշառք, աղերսանք, ոչինչ չի օգնում: Նստեցեք, ասում է, և պատկերացրեք, թե ինչ վիճակում է թշվառ ժողովուրդը, սուլթանը երկրի ամբողջ ժողովրդի՛ն է նստեցրել կազ փշի վրա...

Մամոն իր ազդեցությամբ Կարնո բանտի երկրորդ դեմքն էր, առաջինը Ամո բեկն էր՝ 101 տարով բանտարկված Դաշխանացում, որը դրսում ընդամենը քյալաչի էր եղել: Նա յոթ հարյուր կալանավորների չթագադրված արքան էր, թղթախաղով մեծ հարստություն էր դիզել, տոկոսով պարտքեր էր տալիս անգամ հսկիչներին, ու սակայն երանությամբ էր հիշում ոչխարի գլուխ եփողի իր հին մասնագիտությունը: Ամո բեկը հարգում էր ուժն ու արդարությունը և, իմանալով, թե ինչի համար է նստած Սևքարեցին, նրան մի կողմ տարավ:

— Ես հայ ընկերներ շատ եմ ունեցել ու բոլորին սիրով եմ հիշում: Դու իրո՞ք չանճիդա ես:

Սաքոն նրան պատմեց իր «անմեղ» ուխտագնացության ու ձերբակալման մասին:

— Ուրեմն չանճիդա ես:— Ավելի շատ տեսողական, քան լսողական զգայարանին հավատալով եզրահանգեց Ամո բեկը:

— Դու հարցրեցիր և ես ամեն ինչ պատմեցի, բեկ, մնացածը քո գործն է:

— Ես կստիպեմ, որ այս բանտի կալանավորները հարգեն քեզ և կատարեն քո բոլոր ցանկությունները:

Բեկն իր խոսքի տերը եղավ, մինչև դատի օրը Սաքոյին այլևս ոչ ոք չանհանգստացրեց:

թվայնացրել է 1915.info կայքը

* * *

Կարինի ռուսական հյուպատոսի միջնորդագիրը Թուրքիայի կառավարությանը. «1898 թվի նոյեմբերի 15-ին Մուշի դատարանը 101 տարվա բանտարկության է դատապարտել ռուսահպատակ Սարգիս Սարիբեկի Ծովանյանին՝ նրան մեղադրելով Թուրքիայի դեմ քաղաքական գործունեությամբ հանդես գալու համար: Դատարանը ոտնահարել է օտարերկրացուն նրա երկրի հյուպատոսի (կամ վերջինիս կողմից լիազորված անձի) ներկայությամբ դատապարտելու միջազգային օրենքը: Դրանից բացի, Սարգիս Ծովանյանի դեմ չի հաստատված որևէ լուրջ մեղադրանք: Մեր պահանջով հիշյալ դատավարությունն ու վճիռը չեղյալ են հայտարարված, սակայն երկրիս հպատակը դեռևս մնում է Մեթերհեմում բանտարկված: Իմ երկիրը խիստ անհանգստացած է իր հպատակի ճակատագրով և պահանջում է լրացուցիչ դատավարություն՝ միջազգային օրենքի պահպանմամբ»:

Մուշ քաղաքի դատախազի բացատրագիրը Կարինի ռուսական հյուպատոսարանին. «Քաղաքական բանտարկյալ Սարգիս Ծովանյանի դատապարտման վայրի հեռավորությունը հյուպատոսական քաղաքից դատարանին իրավունք է տալիս նրա դեմ վճիռ կայացնել առանց հյուպատոսի (նրա կողմից լիազորված անձի) մասնակցության: Դատավարման ընթացքում Ծովանյանի հանցանքը լրիվ բացահայտված է, և անձամբ ինձ անհասկանալի է մնում դատավճիռը չեղյալ հայտարարելը: Տեղեկացնում ենք, որ ոստիկանությունն ի հայտ է բերել հակապետական-հայդուկային շարժմանը նրա ակտիվ մասնակցությունն ապացուցող անվիճելի փաստեր, և առաջացել է նոր դատավարման անհրաժեշտություն, անկախ ձեր պա-

թվայնացրել է 1915.info կայքը

հանջից: Նա պետք է դատվի առավել ծանր հանցանքի մեղադրանքով»:

Հյուպատոսը շփոթվեց. ի՞նչ նոր փաստեր կարող են լինել, Կարինի զինվորական գլխավոր քննիչն իր երկրի իրավապահպանության անունից գրեթե խոստովանեց, որ Ծովանյանը դատապարտվել է «ապահովության համար» սկզբունքով: Դատարանը չի հավատացել սուրբ Կարապետի ուխտավորի նրա առաքելությանը, բայց և չի ապացուցել Թուրքիայի դեմ նրա կողմից որևէ հանցանք: Եվ ահա՝ նոր փաստեր: Համենայնդեպս, լրացուցիչ դատավարությունը պետք է կայանա հյուպատոսական քաղաքում:

... Սևքարեցի Սաքոն ոչինչ չէր կարող իմանալ այս ամենի մասին, չէր կարող ենթադրել, որ Մուշի դատախազը օրը մի քանի անգամ չհրկիզվող պահարանից հանում է ճմռթված, դեղին թղթապանակը և հանույքով թերթում՝ մտքում շաղադրելով Կարինի դատարանի համար նախապատրաստվող իր շողշողուն ճառը:

Փետրվարի 27-ին սկսվեց Սարգիս Ծովանյանի կարինյան դատավարությունը: Ռուսական փոխհյուպատոսը պահանջեց հրապարակել այն ապացույցները, որոնց հիման վրա Ծովանյանը դատապարտվել է 101 տարվա ազատազրկման: Դատարանի նախագահը, «ռուսական միջամտությունից» ակնհայտորեն դժգոհ, սեղանին դրեց թույնի հախճապակե սրվակը:

— Ուրիշ ոչի՞նչ...

— Գործում կա նաև հարյուրապետ Ահմեդ չաուշի վկայությունը: Նա հայտնում է, որ մեղադրյալին տեսել է մի խմբի հետ զինված գրոհով Արաքսն անցնելիս: Հանգամանքների բերումով չաուշը հնարավորություն չի ունեցել կալանավորելու այդ խմբին, կամ լուծելու նրա ձեռքով սպանված իր ասկյարների վրեժը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Հարյուրապետը կանչվա՞ծ է դատարան:

— Ոչ: Նա սպանվել է հայդուկների ձեռքով, երեք ամիս առաջ:

Հպիրշ սուտը ցնցեց կալանավորին:

— Այդպիսի բան չի եղել, պարոն փոխհյուպատոս, դա ճերյուրանք է:

Դատարանի նախագահը, հայացքը Ռուսաստանի ներկայացուցչին ուղղելով, ինչեցրեց զանգը:

— Դուք խանգարում եք դատարանի աշխատանքը, ձեզ հուզող հարցերի պատասխանը կստանաք քննության ընթացքում:

— Խնդրում եմ արձանագրել իմ կասկածանքը հիշյալ վկայի ցուցմունքի վերաբերյալ:

Գետական մեղադրողի աթոռին նստած էր Մուշ քաղաքի դատախազը: Նրա դեմքը զայրույթից չէր ջղաձգվում, աչքերը թույն չէին թափում, ինչպես նախորդ դատավարության ժամանակ: Նա հանգիստ էր այն դահճի նման, որը մատը կացնի շեղբին քսելով՝ սպասում է ձևականությունների ավարտին: Դահլիճում կատարվող ամեն ինչին դատախազը նայում էր մի տեսակ վերևից, քմծիծաղ-արհամարհանքով: Դատարանի նախագահը կանչված էր քաղաքապետարան, մեղադրյալին լսելուց հետո ընդմիջում հայտարարեց մինչև հաջորդ օրը:

Ղզլաղաջի գյուղապետ Ջագայիրը, որը 1898 թվի հունիսի 14-ին Սարգիս Ծովանյանին ու նրա ընկերոջը ձերբակալել էր «հանցանքի վայրում»՝ Սասուն բարձրանալիս, իր ցուցմունքը համեմեց նոր փաստերով, որոնք, իբր, մոռացել էր հայտնել առաջին դատավարության ժամանակ:

— Թույլ տվեք հայտարարություն անել:— Ի վերջո խոսեց դատախազը:— Մենք անտեղի ժամանակ ենք վատնում, էֆենդի: Առաջարկում եմ այլևս ոչ մի վկայի չլսել: Սարգիս Ծովանե-

թվայնացրել է 1915.info կայքը

յանը թուրքական կառավարության դեմ պայքարող ֆիդայական շարժման նշանավոր գործիչ է, կազմակերպիչ: Տարիներ շարունակ զբաղվել է Ռուսաստանից Վան զենք տեղափոխելով, ղեկավարել է թուրքական օրենքի դեմ հայդուկախմբերի մի շարք օրինազանց գործողությունները, նրա ձեռքով սպանվել են հայրենիքի հանդեպ իրենց պարտականությունները կատարող բազմաթիվ թուրք զինվորներ ու սպաներ:

— Դուք կարո՞ղ եք ապացուցել այդ ամենը:— Փոխհյուպատոսն ապշած էր:

Ուշադրություն չդարձնելով նրա հարցումին, դատախազը շարունակեց.

— Էֆենդի, ես ընդունում եմ իմ մեղքը նախորդ դատավարության ժամանակ Ծովանյանի հանցանքի մեջ խորամուխ չլինելու համար, որի պատճառով նա և նրա երկրի ներկայացուցիչը այսքան գլխացավանք պատճառեցին մեզ...

Փոխհյուպատոսը զայրույթով կանգնեց տեղից:

— Պարոն նախագահ, ես պահանջում եմ հարգել հանգուցյալ հյուպատոսի և իմ հեղինակությունը: Տվյալ պահին դա իմ երկրի հեղինակությունն է:

Դատախազը ներողություն չխնդրեց:

— Հիմա ես կապացուցեմ իմ արտահայտության իրավացիությունը:

Նա կաշվե դեղին թղթապանակից հանեց ինչ-որ թղթեր՝ ճմռթված ու եզրերն արյունոտ, մոտեցավ դատավորական սեղանին և ցուցադրաբար գլուխ տալով դրանք հանձնեց դատավորին:

— Սրանք նամակներ են, էֆենդի, Մեթերհեմ բանտից Սարգիս Ծովանյանի՝ հայդուկային անվամբ Սևքարեցի Սաքոյի ձեռքով գրված նամակներ, որոնց մեջ հանգամանորեն արտահայտվում է նրա ով լինելը, գործած հանցանքների բնույթն

թվայնացրել է 1915.info կայքը

ու էությունը: Մնում է միայն թեթևակի տրամաբանությամբ դրանք առնչել մեզ հայտնի հակապետական իրադարձություններին: Հանցագործը արյունարբու Անդրանիկի զինակիցն է, մեր իշխանության դեմ զենք ճոճած վանեցի խռովարարների բարեկամը: Նամակները հասցեագրված են հայդուկապետ Աղբյուր Սերոբին, գտնվել են նրա ծոցում՝ Գելիգուզանում մեր քաջ զինվորների ձեռքով նրա սպանվելուց հետո:

Արյունը խուժեց Սաքոյի գլուխը: Ոչ, չէր կարող պաշտպանել Աղբյուրի սրբազան հիշատակը: Փորձեց հրաժարվել.

— Ես ոչ ոքի ոչ մի նամակ չեմ գրել, դատավոր էֆենդի, դատախազի ասածը զրպարտություն է:

Նամակների իսկությունը ճշտելու նպատակով դատաքննությունն ընդհատվեց դարձյալ մեկ օրով:

... Մարտի մեկին դատարանի նախագահը հրապարակեց վճիռը: Սարգիս Ծովանյանը հանցագործ ճանաչվեց Թուրքիայի դեմ տարիներ շարունակ քայքայիչ գործունեություն ծավալելու, ֆիդայական շարժմանն ակտիվորեն օժանդակելու և մասնակցելու համար ու դատապարտվեց մահապատժի՝ կախաղանի միջոցով:

Ռուսական փոխհյուպատոսը միջնորդական ձայն խնդրեց.

— Վաղուց ի վեր գործող միջազգային օրենքով հանցագործի պատիժը պետք է իրագործվի այն երկրի տարածքում, որի հպատակն է նա:

— Դրա համար պահանջվում է գերագույն ատյանի հրահանգը: Դատական նիստը հայտարարում եմ փակված:

Դահլիճը թողնելուց առաջ դատախազն ատոր քմծիծաղով կանգնեց ասկյարներով շրջապատված կալանավորի մոտ:

— Պատմությունը վերջացավ, գյավուր:

— Պատմությունը երբեք չի վերջանում: Խաթարվում, պղծվում է քեզ նմանների գոյությամբ, սակայն ծովի նման

թվայնացրել է 1915.info կայքը

սպեկոծվելով՝ աղբը դուրս է նետում իր միջից, մաքրվում ու շտուճակվում:

Ուժեղացված պահակախումբը Ծովանյանին տեղափոխում էր բանտ: Թուրք խաժամուժը, որ դատարանի շենքի առաջ խռնված նրա մահվան վճռին էր սպասում, վայրենի աղմուկով դիմավորեց պահակախմբին:

— Ե՞րբ եք կախելու:

— Մեզ տվեք նրա իրերը:

— Թողեք մենք իրականացնենք նրա մահապատիժը...

Դեղին շնաճանճերի ուշերեսությամբ խցկվում էին ասկյարների արանքը, փորձում հասնել շղթայակապ հայդուկին: Փողոցով նրան հեռվից ուղեկցում էին մի քանի վախվորած հայ պատանիներ: Մենախցի դռան մոտ հանեցին շղթաները:

— Հիմա ճստիր ու հանգիստ մտածիր, թե ի՞նչ է լինելու վերջին խոսքդ կախաղանից առաջ,— լպիրշորեն քոքոաց օճբաշին՝ դուռը շրխկացնելով նրա երեսին:

* * *

Վերջ: Այլևս ոչ մի հույս: Կախաղան: Մուշ քաղաքի դատախազը հիացրեց Կարինի դատարանին: Նենգաբար սպանված Աղբյուր Սերոբի ծոցից նրա ձեռքն ընկած իր նամակներում ասված էր այն ամենը, ինչ հարկավոր էր դատարանին իրեն մահապատժի ներկայացնելու համար: Բանտային «Անմեղ» ստորագրությամբ ուղարկված այդ նամակներում կար ամեն ինչ՝ թե՛ իր ազատագրական պայքարի գործիչ լինելու փաստը, թե՛ ուխտավորի սքեմի տակ Բարձրավանդակի ճանապարհը բռնելու նպատակը, թե՛ իր անձնական առնչությունը նշանավոր հայդուկների հետ: Ջեռագրից հրաժարվելու փորձը ձախողվեց անմիջապես. դատախազը վաղօրոք հոգացել էր

թվայնացրել է 1915.info կայքը

այդ մասին: Փոքր, չնչին մի հույս էր առկայծում՝ փոխհյուպատոսի պահանջը ըստ օրինաց կարգի նրա գործը Կովկասի քննչական մարմիններին հանձնելու համար: Դատախազը նենգորեն քրքջաց.

— Ձեր հանցագործ հպատակի ճակատագրով անտրամաբանորեն շատ եք մտահոգված, պարոն փոխհյուպատոս:

— Ես պարտավոր չեմ ձեզ զեկուցել իմ անձնական զգացմունքների մասին, մանավանդ որ դրանք գործում են ընդամենը ձե՛ր պատկերացմամբ: Իմ պահանջն օրինական է, եթե նույնիսկ բացառվի արդարանալու հնարավորությունը, միևնույն է, նա պետք է տեղափոխվի Կովկաս՝ ըստ միջազգային օրենքի իր պատիժը կրելու այն երկրում, որի հպատակն է:

Մահապատիժը պետք է իրականացվի երեք օրվա ընթացքում: Հյուպատոսարանի պահանջը կհասցնի՞ այդ կարճ ժամանակամիջոցում ընդունվել ու քննարկվել համապատասխան ատյանում: Հավանաբար, ոչ: Կա մեկ ուրիշ՝ առավել հին ու առավել հարգված համամարդկային օրենք: Եթե կախաղան հանելու ժամանակ պարանը կտրվում է, երկրորդ անգամ չեն կրկնում: Ինքը, որքան էլ տանջահար, մարմնեղ է և ուժեղ: Գուցե, համենայնդեպս, փորձի՞ զորեղ թափահարումով կտրել պարանը: Ոչ, մտածելն անգամ հիմարություն է, շնորհիվ դահճի հետ ունեցած անձնական ծանոթության, այդ բանը լիովին բացառվում է: Մահապարտի խցի բուսչափ պատուհանից նայում է Արաբոյի աստղը: Արաբո, երազելի նահատակ, ես էլ եմ ուզում աստղ դառնալ ու շողալ քեզ հետ մեր տխուր երկրի վրա: Գայի՝ ճակատիս արյան ծաղիկ, հանգչող մարմինս թողած եղբայր ֆիդայիների ձեռքերի վրա: Ափսոս, շա՜տ ափսոս:

Մահապատիժը պետք է ի կատար ածվի ոչ թե երեք օր հետո, այլ երեք օրվա ընթացքում: Նա ճգնում է պահպանել ժամանակի զգացողությունը: Հայացքի դեմ փոփոխվող պատ-

թվայնացրել է 1915.info կայքը

կերևներ եմ՝ Յրոնքի հրդեհը, Բողազքյասանի ձորի սև մառախուղը, Վանի կապարե լուսաբացը, Դերիկի պարսպի տակ ոռնացող վայրի խուժանը: Եվ այդ ամենի միջով զարհուրելի դաժանությամբ նրա աչքերին է ճայում Արաքսի շամբուտների վիրավոր օձը: Խաղաղվիր, ասում է ինքն իրեն, դու աշխարհի ոչ առաջին, ոչ էլ վերջին մահապարտն ես: Քո հավաճական վախճանը նահատակվելն էր, դու լավ գիտեիր դա: Փակիր աչքերդ և հիշիր անցյալը: Օր առ օր, պատկեր առ պատկեր: Ինքը մենակ չէ, ո՞վ հայտնվեց խցում:

— Ես եմ, հայդուկ, կրետացի բժիշկը:

— Քո թիկունքը դաշույն խրեցին: Դու իմ պատճառով զոհվեցիր, եղբայր:

— Ոչ, ես նահատակվեցի իմ ժողովրդի հազարամյա քաղաքակրթության թելադրանքով, ես չուզեցի դավաճանել վսեմ գաղափարի ճշմարտությանը:

— Եկել ես հրաժե՞շտ տալու:

— Եկել եմ ասելու, որ սարսափելի ոչինչ չկա: Մարմնական գոյությունից ոգեղենի անցման պահը երանելիորեն կարճ է տևում: Ես այնտեղ կլինեմ, ես կընդունեմ քեզ և կտանեմ ծերացած ճայերի ծովախորշը...

— Ոչ, բժիշկ, ինձ համար երանելին քամու հետ մեր լեռներում զրնգալն է: Տեսնես, խելագար ասորին դեռ ապրո՞ւմ է Մեթերհեմի դաժան խցում, թե՞ մեկնել է Ճերմակ մարգարիտների կոզի: Մեկնել է: Չէ՞ որ նրան խնդրեցին:

— Ի՞նչ բժիշկ, հայդուկ, ես Մըհեր չաուշի տանջարանի խոշտանգված պատանին եմ: Դու չիմացար, թե ես ով եմ, ես ձերոնց՝ ջանֆիդաների համար հաց էի տարել սարերը...

Այդ պահին ռուսական փոխհյուպատոսը կարդում էր Թուրքիայի բարձրագույն ատյանի պատասխանը: «Մեր երկրների հարգալից փոխհարաբերությունը պահանջում է կասկածի չեն-

թվայնացրել է 1915.info կայքը

թարկել քաղաքական բանտարկյալ Սարգիս Ծովականյանի հանդեպ կայացված վճիռը: Թուրքիայի դեմ նրա հանցանքը լիովին ապացուցված է և միտք չունի գործն ուղարկել Կովկասի քննչական մարմիններին»:

Առաստաղից ջուր է կաթում: Երևի այս բանտի գոյության առաջին օրից կաթում է ու պիտի շարունակվի մինչև մարդկային գոյության վախճանը: Ես կորցրեցի ժամանակի զգացումը, ես չեմ հիշում, թե երբվանից եմ մահապարտի այս խցում: Հաշտվել եմ այն մտքի հետ, որ շուտով հրաժեշտ եմ տալու կյանքին: Նույնիսկ շտապում եմ: Ես հիմա վստահ եմ, որ ֆիզիկական մահով ամեն ինչ չի վերջանում: Ես ուզում եմ լեռները գնալ: Այնպես, ինչպես բժիշկը գնաց ծերացած ճայերի ծովախորշ: Ինչպես, հավանաբար, ասորին է գնացել Սպիտակ մարգարիտների կղզի: Ամեն պահ սպասում եմ, որ դուռը դղրդալով բացվի և ինձ առաջնորդեն դեպի կախաղան: Ինչո՞ւ են ուշանում: Մահապարտի օձիքը պոկում են, որպեսզի չխանգարի պարանին: Ես իմ ձեռքով պոկել եմ իմ օձիքը, թող նրանց սև ձեռքը չկպչի ինձ: Եթե ձեռքերս ազատ լինեն, պարանն էլ եմ ինքս հագցնելու: Մարոն ի՞նչ էր ասում տասը տարի առաջ, Թիֆլիսի մեղմ ու փափուկ ձյան տակ. «... Վախենում եմ՝ համազգայնի ցավի, հույսի ու կործանման այս թոհուբոհի մեջ մենք այդպես էլ չարժանանանք իրար»: Որտե՞ղ է Մարոն, նրան հայտնի՞ է Կարինի դատարանի վճիռը...

Ռուսական փոխհյուպատոսի շտապ հառագիրը Պետերբուրգ: «Մեր երկրի հպատակ, Թուրքիայում քաղաքական բանտարկյալ Սարգիս Ծովականյանին հակաթուրքական գործողությունների մեղադրանքով Կարինի դատարանը ներկայացրել է մահապատժի՝ կախաղանի մրջոցով: Ես մասնակցել եմ դատավարությանը, ուր անհարգալից վերաբերմունք դրսևորվեց մեր երկրի միջազգային հեղինակության հանդեպ: Ծովականյա-

թվայնացրել է 1915.info կայքը

ևին ներկայացվող ծանր մեղադրանքը չի հիմնավորված զորավոր փաստերով, նա մահվան է դատապարտված կասկածների հիման վրա: Հարկ է, որ Ռուսական կայսրությունը շտապ մտահոգվի իր հպատակի ճակատագրով»:

... Ես մեռնում եմ ընդամենը երեսուն տարեկան հասակում՝ հագիվ տասը տարվա ազատագրական պայքարի գործչի կենսագրությամբ: Ինձ խոստացել էին, որ դեպի Բարձրավանդակ իմ առաքելությունն ավարտելուց հետո կարող եմ հիմնավորապես մնալ այնտեղ, մինչև նահատակվելս կամ մեծ պայքարի ներոսական ավարտը: Գիտեմ, չափազանց կարևոր էր այն գործը, որ ես անում էի: Եթե բռնվեի Արաքսի շամբուտներին չհասած, իմ դեմ մահվան նույնպիսի վճիռ կարձակեր ռուսական դատարանը: Վերջին տասը տարվա յուրաքանչյուր օրը ինձ համար կարող էր վերջինը լինել: Դժգոհելու, ափսոսալու բան չունեմ: Միայն կուզենայի, շա՜տ կուզենայի թաղվել այնտեղ՝ ըմբոստ բարձունքներում, և շիրիմս արծվի թառ լիներ, և ազատագրյալ երկրի արևը ամեն լուսաբացի փարվեր ինձ...

— Հեռագիր Ստամբուլից, պարոն փոխհյուպատոս,— սպան հանձնեց այն և պատվի առնելով դուրս եկավ: «Ռուսաստանի նովկասյան փոխարքային: Կարինի ռուսական հյուպատոսարանին: Հարգելով միջազգային օրենքը և ձեր՝ բարեկամ տերության միջամտությունը, գլխավոր ատյանը որոշել է ձեր երկրի հպատակ, Թուրքիայում հակապետական հանցագործության համար մահվան դատապարտված Սարգիս Ծովանյանի պատժի կիրառումը թողնել Ռուսաստանին՝ ի կատար ածելու մահապարտի հպատակության երկրում»:

Դարձյա՞լ թվում է: Ոչ, դուռը բաց է, տեսնում է միջանցքի գորշ պատը, նրա ֆոնին՝ ասկյարներ: Երկու ասկյար և... երկու ռուսական գինվոր: Ի՞նչ է նշանակում:

թվայնացրել է 1915.info կայքը

— Դուրս արի, մահապարտ: Իրերով:

Իրերով մահապարտ չի լինում: Մարոյի ծիծաղն ադամանդի պես շաղ է գալիս հեռավոր ձյան վրա:

— Ձեռքերդ:

Ռուս գինվորը, ինչո՞ւ ռուս գինվորը, շղթաներ է հագցնում: Պարզ է, երանք պարտավոր են ներկա գտնվել իրենց երկրի նպատակի մահապատժին: Միջանցքում տեսնում է թուրք դահճին, որի քսանհինգերորդն է լինելու: Նա ինչո՞ւ է այստեղ, այս պահին նա պիտի վայրենի հաճույքով պարանը նախապատրաստեր: Թուրքն ինչ-որ բան մոլտաց, Սաքոն չհասկացավ: Բանտի առաջ կառք է կանգնած, ռուսական փոքրիկ դրոշակով փայլփլուն կառք: Բաց դռան մոտ, օրենքի ծեսով, սպասում է փոխհյուպատոսը: Ռուս գինվորների արանքում շղթայակապ նեղված մահապարտը չի կարողանում պարզորոշ պատկերացնել իրավիճակը: Հյուպատոսարանի աստիճաններով վեր են տանում: Կայսեր մեծադիր նկարով, Ռուսաստանի գերբ ու դրոշով զարդարված վիթխարի սենյակում նստած են երկուսը. փոխհյուպատոսը և հյուպատոսարանի ռազմական ներկայացուցիչը:

— Մահապարտ Ծովանյան, մեզ հաջողվեց քո պատժի իրականացումը տեղափոխել հայրենիք:

Մանկության Արջաձորում, անվանատառերով գնդակը բոի մեջ առած, շքեղ ազատությամբ խշշաց վիթխարի կաղնին: Մոլեգին լեռներում ֆիդայական հրացաններ որոտացին: Տարիների խորքից մոր թավշյա ձայնը լսեց՝ տուն արի, զավա՛կս, ամբողջ կյանքում քեզ կարոտ մնացինք...

— Դա չի նշանակում,— շարունակեց փոխհյուպատոսը,— թե այնտեղ քեզ ծաղկեփնջերով են դիմավորելու: Բայց հայրենիքը մնում է հայրենիք...

թվայնացրել է 1915.info կայքը

— Անկախ այն բանից, թե ի՞նչ կլինի ինձ հետ հայրենիքում, հավիտյանս երախտապարտ եմ ձեզ, պարոն փոխհյուպատոս:

— Ամեն մի բարեհաջող իրավիճակ ենթակա է հանկարծակի և անցանկալի փոփոխության: Կես ժամ հետո մանապարտին տանող կառքը պետք է ճանապարհ ընկնի:— Խոսքն ուղղված էր ռազմական ներկայացուցչին:— Եվ՝ ուժեղացված պահակախմբով:

Իրիկնամուտ էր: Հեռավոր մի լեռան, երևի Ծովասարի գլխին առկայծում էր Արաբոյի աստղը: Ռուս-թուրքական պատերազմից հետո Կարինի հայ բնակչությունը աղետալիորեն նվազել էր, ռուսներին ցույց տված օգնության համար թուրքական վրեժից խուսափելով՝ հայերը տեղափոխվել էին համեմատաբար անվտանգ վայրեր: Սաքոն գիտեր դա և զարմացավ, հյուպատոսարանի առջև տեսնելով իրեն ճանապարհելու եկած հայերի մեծ բազմություն: Նրանք ողջունում էին հայդուկի փրկությունը և մաղթում նոր վերադարձ ազատագրական հողմերով շնչող լեռները: Մինչև Կարս, մինչև Ալեքսանդրապոլ ու մինչև Թիֆլիս բոլոր հայաբնակ վայրերում նա պիտի հանդիպեր ժողովրդի հարգալից ուրախությանը, ռուս գինվորների հետ վայելեր ի խորոց սրտի նրա մատուցած սերն ու հացը: Ալեքսանդրապոլում բազմությունը պահանջեց արձակել Սևքարեցու շղթաներն ու նրան հանձնել իրենց: Հեծյալ կազակներ երևացին: Ժողովուրդը խաղաղվեց միայն Սաքոյի խնդրանքից հետո: Թիֆլիսում, Օրթաճալայի բանտի առաջ, չանսալով գինվորների պահանջին, Հայրենասիրաց միությունը առնձնաձև ցույց կազմակերպեց: Բազմության միջից հնչում էին խրոխտ ձայներ՝

— Պայծառ հիշատակ հայրենիքի համար զոհված ֆիդայիներից...

թվայնացրել է 1915.info կայքը

— Շմոռանանք նահատակների սուրբ արյունը...

— Ազատություն Սեբաստեցի Սաքոյին...

— Վրեժ, վրեժ, վրեժ...

Երբ ժողովրդի միջով նրան բանտ էին տանում, տեսավ Մարոյին՝ մարմնեղեն կրակ, որ կոչ էր անում կռվի ու հերոսացման: Երեք տարի չէր տեսել: Ինչքա՜ն էր փոխվել Մարոն:

— Դիմացիր, Մեթերնեմի կալանավոր, քո առջև ազատություն է:

Շղթայակապ ձեռքերով Սաքոն ողջունեց աշխարհի ամենաթանկ մարդուն, հավաքված բազմությանը ու բանտ մտավ: 1901 թվի ապրիլի քսանչորսն էր:

— Ձեռնաշղթաները հանել,— կարգադրեց բանտապետը: Արդեն քանի օր նա հետաքրքրությամբ ապասում էր մահապարտ հայդուկին, որի մասին խոսում էր ամբողջ Թիֆլիսը:

Հաջորդ օրը Սաքոյի եղբայրը և Մարոն թույլտվություն ստացան տեսակցելու նրա հետ:

— Ամենաշատը մեկ շաբաթից այստեղ ձոր դատ կլինի, և դու կազատվես,— ասաց եղբայրը:— Կգնանք գյուղ, հող կմշակենք, կապրես-կմնաս մեզ հետ:

— Հողագործություն սովորելու համար շատ է ուշ, Առաքել: Իմը գենքն է, իմ ճակատագիրը ես վաղուց հանձնել եմ ազատության կռվին:

— Ուրեմն դեռ խելքի չե՞ս եկել...

Եղբայրը մենակ թողեց նրանց:

— Ահա և փրկվեցիր, Մեթերնեմի կալանավոր: Ամեն ինչ արված է, քեզ ոչ մի վտանգ չի սպառնում: Ի՛նչ ես անելու այսուհետև:

— Կամուսնանանք, Մարո, և միասին կշարունակենք պայքարը: Մի անգամ ես Անդրանիկ Զորավարին պատմել եմ քո մասին: Նա խոստացավ սրով օրհնել մեր միությունը:

թվայնացրել է 1915.info կայքը

— Իսկ ես քո մասին հաճախ էի զրուցում Թումանյանի հետ: Ես նրան ասել եմ, թե ով ես դու ինձ համար: Նա շատ օգնեց, որպեսզի ռազմական դատարանը նախապես լավ տրամադրվի քո նկատմամբ: Իսկ ամուսնության մասին խոսելը դեռ շուտ է, Սաքո: Գիտեմ, հասկանում եմ, որ անթիվ տառապանքներից հետո քեզ ընտանեկան ջերմ կյանք է հարկավոր: Ինձ էլ է հարկավոր այդ խաղաղ, երջանիկ կյանքը: Բայց, ինչպես դու ասացիր եղբորդ, մեր ճակատագիրը մեզ չի պատկանում:

— Դու ճիշտ ես, Մարո, թեև իմ ուզածը անվտանգ առանձնություն չէ, աշխարհի մի անկյունում աշխարհի ցավերից թաքնվելու ձգտում չէ, ես ուզում եմ, որ ամեն տեղ միասին լինենք՝ կրակի մեջ, ազգային երջանկության բարձունքին, թե նահատակության վիհերում...

— Իսկ ես վախենում եմ, որ հայրենիքի ցավի ու թոհուբոհի մեջ մենք այդպես էլ չհասնենք իրար: Հիշո՞ւմ ես, կըրկնում եմ տասը տարի առաջ ասածս: Բոլորը գիտեն, որ ես սիրում եմ քեզ և հպարտանում քեզանով: Առայժմ ավելին հնարավոր չէ: Բանտից կազատվես, կգնանք մեր տուն և ինձ կպատմես Մեթերհեմի քո տանջանքների մասին:

— Այո, շատ բան կա հիշելու: Ես քեզ կպատմեմ կրետացի բժշկի մասին, որը հիմա ծերացած ճայերի ծովախորշում է: Կպատմեմ ասորական բանակների գեներալի մասին, որ հիվանդ ուղեղի բոլոր ցնորքներով մղվում էր դեպի Ճերմակ մարգարիտների կղզին...

— Տեսակցությունն ավարտված է:

... 1901 թվի մայիսի 7-ին Սարգիս Ծովանյանին սև կառքով տարան Մետեխի բանտ՝ նոր դատավարության: Զինվորական դատարանը գործը լսում էր ըստ Կարինում ներկայացված մեղադրանքի և տեղի ռուսական հյուպատոսարանի պաշտոնական կարծիք-եզրակացության:

թվայնացրել է 1915.info կայքը

— 1898 թվի հունիսին ի՞նչ նպատակով եք անցել Թուրքիա:

— Ուխտագնացության:

— Առանց անցաթղթի՞:— Նախագահի դեմքին հեգնական ժպիտ երևաց:

— Ես չգիտեի, որ դա պարտադիր է:

— Ի՞նչ եք կարծում, թուրք քննիչները պարտավո՞ր էին նավատել ձեր անտեղյակությանը:

— Չգիտեմ, պարոն նախագահ...

— Իսկ ի՞նչ կասեք սպանված հայդուկապետի ծոցում գտնված ձեր նամակների մասին:

Ծովանյանի մարմինը տաքուպաղ արեց:

— Կարինի փոխհյուպատոսն իր եզրակացության մեջ գրում է, թե Մուշի դատախազի ներկայացրած այդ թղթերը ոչ մի հայդուկապետի գրպան էլ չեն մտել,—շարունակեց դատարանի նախագահը,— դրանք ստեղծվել են Մեթերհեմ բանտում, նույն դատախազի նախաձեռնությամբ, ու թեև ձեր ձեռքով, սակայն գրված են ֆիզիկական խոշտանգման սպառնալիքի տակ:

— Միանգամայն ճիշտ է, պարոն նախագահ:

— Միանգամա՞յն...— Հեգնական ժպիտը կրկին երևաց նախագահի դեմքին:

Սաքոն մտածեց՝ միայն խնդրանքով ու միջամտությամբ գործն այսպես չէր կարգավորվի, տեսնես որքա՞ն կաշառք են առացել և որտեղի՞ց: Նա չգիտեր, որ Հայրենասիրաց միությունը այդ նպատակով հատուկ հանգանակություն է կազմակերպել: Դատախազի ճառը համառոտ էր ու վճռական:

— Կարինի դատարանում մասնավոր կեղծ փաստի չարաշահմամբ վիրավորանք է հասցվել ռուսական կայսրությանը և տեղում այն ներկայացնող անձին: Դրանով արտահայտվում է դատարանի վերաբերմունքը մեր պետության նկատմամբ

թվայնացրել է 1915.info կայքը

և հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ է ծայրահեղորեն բարդացվել Ծովանյանի գործը: Կարինի դատավարությունը ես համարում եմ քաղաքական շանտաժ Ռուսաստանի և նրա հպատակի նկատմամբ: Պարոն նախագահ, ես պահանջում եմ հավատ ընծայել հյուպատոսարանի եզրակացությանը: Ծովանյանին վերագրվող լրտեսական և այլ մեղադրանքները մտացածին են: Նրան մեղադրում եմ միայն առանց համապատասխան փաստաթղթերի պետական սահմանն անցնելու համար և պահանջում դատապարտել երեք ամսվա բանտարկության:

Դատարանը կայացրեց նույն վճիռը: Եվ անդրադառնալով, որ նա արդեն երեք տարի բանտարկված է եղել Մեթերհեմում, որոշեց ազատ արձակել զինվորական դատարանի դահլիճից:

Բանտի բակում նրան սպասում էր Թիֆլիսի գրեթե ամբողջ հայ մտավորականությունը: Իհարկե՝ նաև Մարոն, գյուղի իր հարազատները: Բազմության առաջ Սաքոն տեսավ ծերացած, տանջահար մորը: Ձեռքերը կարկառած, դողացող ձայնով ընդառաջ էր գալիս որդուն: Խարխափելով էր գալիս: Սաքոն չգիտեր, որ մայրը կուրացել է...

* * *

Թափվո՞ւմ, թափվում է ձյունը հիվանդ քաղաքի վրա, պատերի տակ հեծկլտում է դատարկ փողոցների ցավահառաչ քամին: Դագաղակիր թափորը գլխահակ և լուռ, արդեն դուրս է եկել քաղաքից, մոտենում է գերեզմանոցին: Մեռած հայդուկի փոքր-ինչ բաց աչքերը ձյունամած երկնքի խորքում փնտրում են ո՛ւմ պատկերը: Դագաղի հետևից սև քողը դեմքին գնում է Մարոն: Դագաղակիրները նույն չորս հոգին են — Տարոն աշխարհի չորս ֆիդայիներ՝ ուժեղ ու զինավառ, սեփական պատանքները մեջքներին: Արցունքի փոխարեն ձյան փաթիլներ են, հառաչանքի փոխարեն՝ մորմոքաշունչ քամի:

թվայնացրել է 1915.info կայքը

Թարմ շիրմաթմբին ծաղկեպսակներ չիջան: Միայն հրացաններ որոտացին ի նշան հավերժական հրաժեշտի, և շիրմաթումբը պատվեց վառոդի ծխով: Մարոն հետ քաշեց դեմքի ան քողը և շիրիմը համբուրելով՝ Սաքոյին ու հեռավոր լեռներից իջած նրա եղբայրներին երդվեց շարունակել այն սուրբ գործը, որի համար սիրեցին իրար և ապրեցին այս աշխարհում: Հայդուկները վերադարձան ալեկոծ լեռնաշխարհ: Գիշեր եղավ, ու ձյունաթխպոտ երկնքից մենավոր մի աստղ ցոլաց հայդուկի շիրմի վրա. Արաբոյի աստղը:

Սաքոյի մահվան բոթը ցնցեց Ավետիք Իսահակյանին: Բանաստեղծն ու հայդուկը հանդիպել էին ընդամենը մեկ անգամ, Գյումրիում: Դրանից հետո Իսահակյանը շատ բան լսեց Սևքարեցի Սաքոյի գործունեության մասին, և ամեն լուր ընդունում էր բարեկամի հպարտությամբ: Եվ Սաքոյի մահվանից ջրեր անց Հայաստանում շուրթից-շուրթ էր անցնում Իսահակյանի՝ հոգու խորքից բխած բանաստեղծությունը: Ահա այն.

ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայրենի հողի լեռներու խիզախ
Ընբոստ, սանձարձակ մրրիկներն ոգոր
Հովվի ականջիդ հնչեցրին շատ վաղ
Վեհ ազատության երգերն անավոր:

Կանուխ թողեցիր եզներն ու գութան,
Եվ մրրկալից գլուխդ առար,
Քո բազմաչարչար եղբոր փրկության՝
Այս ազատաշունչ լեռները ընկար:

Սուրբ իրավունքի, արդար գայրույթի
Դրոշակը ձեռքիդ թռչում էիր դուն,
Օգնության կերթար բազուկդ երկաթի,
Ով որ հեծում էր, ով բռնաբարվում:

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ ազատախոս քո սազը անուշ
Լույս էր շավաղում մութ զնդաններում,
Ծպիտ էր ծաղկում, բողբոջում էր ցույս,
Ուր որ հասնում էր նժույգդ սիրուն:

Օրհասի առաջ, կուռ զնդաններում
Կրծքիդ չկախվեց գլուխդ երբեք,
Եվ ազատախոս ծով սրտիդ լեզուն՝
Սազդ մեղմանուշ՝ չատեց երբեք:

Շատերի նման դու շահիդ համար
Գլուխ չթեքիր ուրիշի առջև,
Այն լեռներու պես ճակատդ պայծառ՝
Երբեք էլ չիջավ ուռների ներքև:

Ազատության դու զինվոր անկուն,
Թիկունքդ չտեսավ երբեք թշնամին,
Գլուխդ դրիր չոր քարի վրան,
Աչքը չգցիր գովքին ու փայլին:

Երբ շուրջդ չնչին ու ստոր մարդիկ,
Հոխորտում էին ստով կեղծավոր,
Դու, զուլալ աղբյուր, դու՝ ոսկի աստղիկ,
Հեզ ժպտում էիր բարի աչքերով:

Դու սիրուն էիր, ինչպես արշալույս,
Եվ աչքերիդ մեջ հավատ մանկական.
Քո սիրտը սիրող, մաքուր ու քնքուշ,
Դու երազ էիր սուրբ ազատության:

Եվ մի՞թե մեռար, իմ անգին ընկեր,
Մեռնում են ինչպես մարդիկ անհամար,
Ոչ, դու չես մեռնի, ոչ, դու չես մեռել,
Ինչպես չի մեռնում սերն ու գաղափար:

թվայնացրել է 1915.info կայքը

Դու միշտ ապրում ես քո ժողովրդյան
Արյունոտ հոգում, ինչպես վառ եղած
Ինչպես արշալույս վեճ ազատության,
Շքեղ, անարատ, անմահ կմնաս...

1908 թ.

* * *

Հետո ո՞ւր գնաց, ի՞նչ արեց Մարոն:

... Գեորգ Կարաքեշիշովի տված կաշառքով 1899 թվի ուշ աշնանը Սամարղանդի գինվորական դատախազը բավարարվեց զենքը բռնագրավելով: Մարոն վերադարձավ Թիֆլիս և շարունակեց իր գործը: Սևքարեցի Սաքոյի հետ 1906 թվին ամուսնացան, տեղափոխվեցին Երևան: Ավա՜ղ, նրանց չափազանց կարճ համատեղ կյանք էր վիճակված: Լեռնային կոիվներում հայդուկի մարմնի մեջ խրված գնդակը տարիներ հետո նրան գերեզման տարավ, և Մարոն, իրենց կյանքի գործը սրբազան երդումով վերահաստատած, կրկին Թիֆլիսում էր: Հովհաննես Թումանյանը օգնում էր նրան առնչվելու քաղաքի հայ մեծատուների հետ, և հանգանակության գումարները հասնում էին աննախադեպ չափերի: Թիֆլիս — Ղազախ — Քարվանսարա — Դիլիջան — Երևան — Դավալու ուղեգծով զինատար ֆուրգոնը նրա ուղեկցությամբ հրացաններ ու փամփուշտներ էր տանում: Հայերեն, ռուսերեն, վրացերեն ու ադրբեջաներեն լեզուների տիրապետումը, բնածին համարձակությունն ու ծանր իրավիճակներից դուրս գալու ճնարամտությունը օգնում էին նրան: Բայց միշտ չէ, որ մահացու վտանգը շրջանցում էր խիզախ կնոջը: 1909 թվի վերջերին Դիլիջանի Ջարխեչ գյուղով անցնում էր դագաղակիր մի սայլ: Սևազգեստ կինը Երևան էր տեղափոխում Ղազախում սպանված ամուսնու մարմինը: Հան-

թվայնացրել է 1915.info կայքը

կարծ սայլը ընկրկեց. սոնու երկաթե գամը դուրս էր եկել տե-ղից ու թափքի մի կողմը պոկվել էր սայլից: Մինչ անցորդները կփորձեին օգնել միայնակ, վշտահար կնոջը, նրանց մոտեցան Դիլիջանից Քարվանսարա գնացող մի խումբ զինվորներ: Սայ-լը նորոգելու համար պետք է դագաղն իջեցնեին: Այն անբնա-կան ծանր էր...

— Վատ չի մտածված,— ասաց զինախմբի ավագը:— Ըն-դունեք ցավակցություններս ձեր ամուսնու մահվան առթիվ և թույլ տվեք ձեռնաշղթաներ հագցնել:

Հինգ տարի՝ Սամարղանդի ծանոթ բանտում: Միջանցքում հանդիպեց հարցաքննության տարվող մի մարդու և ճանաչեց նրան. անապատների ավազակ Ջումշուդն էր: Նա էլ ճանաչեց: Խոսեցին հայացքներով.

— Դու գտա՞ր, ինչ որ փնտրում էիր:

— Ոչ: Ինչպես տեսնում ես, ես ու դու աշխարհի տար-բեր կողմերից այն փնտրելով եկանք ու հանդիպեցինք այս-տեղ...

Հինգ տարի անց, երբ Մարո Ղարաքեշիշյանն ազատվեց բանտից, քիչ բան էր մնացել նրա երբեմնի շքեղ գեղեցկու-թյունից: Մազերը կիսով չափ ճերմակել էին, դեմքը պատվել էր կնճիռներով: Միայն աչքերն էին նույնը մնացել՝ ուժեղ և կրա-կոտ: Նրա մեջ պահպանվել էր ըմբոստ, մարտնչող ոգին, և վերադարձից ընդամենը օրեր հետո կրկին առաջվա զինա-տարն էր:

Երկու անգամ հաջողությամբ զենք հասցրեց Նորաշեն: Նրա անունը վաղուց հայտնի էր ֆիդայական աշխարհում: Սև-քարեցի Սաքոյի զենքի ընկերներն այնտեղ իմացան ու ողջու-նեցին, որ նա ազատվել է բանտից և շարունակում է իրագործել սրբազան երդումը: Վերադառնում էր Երևանով, որպեսզի այ-

թվայնացրել է 1915.info կայքը

ցելի Սաքոյի գերեզմանին: Այն կավաշեն տունը, որտեղ երկու տարի ապրել էին, դարձել էր խարխուլ հիշողություն:

Թիֆլիսում Մարոն առաջվա պես բնակվում էր հայրական տանը՝ փոքրիկ պատշգամբով, Քուռ գետի վրա կախված իրենց հին ու խաղաղ բնակարանում: Ծնողները ծերացել էին, հայրն առաջարկում էր թողնել ամեն ինչ, վերադառնալ Բարանայի գավառի իրենց հեռավոր գյուղը: Մարոն գիտեր, որ դա ծերացած թռչունի ներքին մղում է. թռչունները երբ ծերանում են, ճախրում են դեպի այն լեռները, ուր մի ժամանակ ծնվել են:

Մի երեկո դուռը բախեցին: Մարոյի առջև կանգնած էր բարձրահասակ, թիկնեղ մի տղամարդ: Եվրոպական ընտիր հագուստը չէր կարողանում թաքցնել մեծ կռիվների գիծվորին:

— Եթե չեմ սխալվում, դուք Մարո Ղարաքեշիշյա՞ն եք:

— Այո, ներս եկեք, խնդրեմ:

— Ես Սևքարեցի Սաքոյի զենքի ընկերներից եմ,— բազմոցին նստելով, ասաց անծանոթը:— Եկա Թիֆլիս և պարտքս համարեցի հանդիպել ձեզ:

Մարոն հուզմունքով ու հետաքրքրությամբ նայում էր եկվորին: Վերջինս չթողեց, որ հարցնեն իր անունը:

— Նիկոլ Դուման...

Անունն ամեն ինչ ասում էր: Մարոն լավ գիտեր Կովկասում ու Արևմտյան Հայաստանում առնակատորեն հնչող այդ անունը: Լսել էր, որ նա Պարսկաստանում է, կռվում է Եփրեմ խանի հրամանատարությամբ:

— Ինձ համար մեծ պատիվ է ձեր այս այցելությունը: Ես ամեն ինչ գիտեմ ձեր մասին: Սաքոն մահվանից առաջ անընդհատ հիշում էր ձեզ և շատ էր ուզում, որ կյանքից հեռանալու պահին իր կողքին լինեիք:

թվայնացրել է 1915.info կայքը

— Ցավոք, ես ողբերգական լուրը չափազանց ուշ իմացա... Ես չեմ եկել ձեզ հետ վերապրելու Սաքոյի մահվան տխրությունը, Մարո: Որպես ֆիդայի եկել եմ շնորհակալություն հայտնելու այն բանի համար, որ սրբորեն կատարում եք Սաքոյի շիրմին տված երդումը...

... 1914 թվի հոկտեմբերին Սևքար գյուղից դուրս եկավ մի հին, ճռնչացող սայլ: Ցնցոտիների մեջ խեղճացած սայլապանը կարտոֆիլ էր տանում Սևանի ափի գյուղերը: Սայլն անցավ Քարվանսարան, անցավ տխրահուշ Ջարխեչը, հասավ Դիլիջան: Թշվառ գյուղացու շորերում ծպտված Մարո Ղարաքեշիշյանը անճանաչելի էր: Լեռնանցքը հսկող զինվորները նրանից խորովելու կարտոֆիլ պահանջեցին և ոչինչ չկասկածեցին: Եթե կարտոֆիլի պարկերը շրջեին, կտեսնեին դրանց տակ թաքցված հրացաններն ու փամփուշտի արկղերը: Հանկարծ անտառափեշից դուրս եկավ մի ստվեր:

— Սայլը կանգնեցրու, չշարժվես:

Սովորական ավազակ էր, հրացանն ուղղել էր Մարոյին և ճանապարհի մեջտեղը ցցված՝ չգիտես ինչ էր պահանջում:

— Ես աղքատ գյուղացի եմ, աղա, ի՞նչ ես ուզում ինձանից: Կարտոֆիլ եմ տանում վաճառելու, սա էլ գյուղապետի տված թուղթը...

Ակնթարթային արագությամբ ծոցից հանած ատրճանակը ճայթեց ավազակի դեմքին: Նա երերաց ու թավալվեց եզների առաջ: Երկրորդ կրակոցը հնչեց անտառափեշից, որտեղ թաքնված երկրորդ ավազակին Մարոն չէր կարող նկատել: Ատրճանակն ընկավ ձեռքից: Մարմինը կողքի թեքվեց, և քունքից հորդացող արյունը ներկեց կարտոֆիլի պարկերը, իջավ, հասավ հրացաններին: Ոչ ցավ, ոչ հառաչ: Երկնքում շառաչում էին նահատակված հայդուկներ Արաբոյի, Սերոբի, Վա-

թվայնացրել է 1915.info կայքը

ևի Պետոյի, Մովսես Իշխանի, Սևքարեցի Սաքոյի, մյուս-մյուսների պղնձահունչ ոգիները: Մարոյին առան իրենց մեջ ու ղողանջելով գնացին դեպի ալեկոծ լեռները: Եվ հիմա էլ նրա ու Սաքոյի ոգիները ճախրում են Կարոտյալ Երկրի ամայի ու տխուր բուրձուքներում՝ որպես հավերժական երդում ու կանչ...

1987—1989.

Պերեդելկինո — Երևան

թվայնացրել է 1915.info կայքը

ՅԱՆԿ

Որպես առաջաբան 5
Մաս առաջին
Զենք և խաչ 11
Մաս երկրորդ
Արաբոյի աստղը 107
Մաս երրորդ
Երկիր Ավետյաց 221

թվայնացրել է 1915.info կայքը

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԻԳՆԱՏ ՀՄԱՅԱԿԻ ՄԱՄՅԱՆ

ՄԵԹԵՐՀԵՄ ԲԱՆՏԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

Վիպակ

Դպրոցական բարձր տարիքի համար

Литературно-художественное издание

ИГНАТ АМАЯКОВИЧ МАМЯН

УЗНИК ТЮРЬМЫ МЕТЕРХЕМ

Повесть

Для старшего школьного возраста

Художник Г. Мамян

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1989

Խմբագրության վարիչ՝ Գ. Ս. Օհանյան

Խմբագիր՝ Զ. Մ. Պազարյան

Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան

Գեղ. խմբագիր՝ Խ. Զ. Հակոբյան

Տեխ. խմբագիր՝ Տ. Վ. Ավետյան

Վերատուգող սրբագրիչ՝ Ա. Ս. Համզյան

ИБ № 270

Հանձնված է շարվածքի 17. 05. 89 թ.: Ստորագրված է տպագրության 16. 08. 89 թ.: ՎՖ 00702: Չափսը՝ $70\times108^{1}/_{32}$: Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ Նորք: Տպագրություն՝ բարձր: 14,7 պայմ. տպ. մամ., 14,86 պայմ. ներկ. թերթ., 12,8 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30 000: Պատվեր՝ 1265: Գինը՝ 65 կոպ.:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.